




846

L. III-5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7-8 1898

ՅՈՒԼԻՍ — ՕԳՈՍՏ.

1898 № 7-8

ՏԱՍՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

	երես	
1 ԱԴԵԼԵԱՆ, Ա.	941	Նոր հոգսի ցանկաց.
2 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼ.	967	Խրիմի ալքոմից (բանաստ.):
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	970	Խորատիւած կեանք, (վէպ, շար.):
4 ԱՓԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ	1002	Վլ. Բաւոր (բանաստ.):
5 ՄՈՒՐԱԴԵԱՆՅ, ՅԱԿՈԲ	1004	Սև ծովի ափերին III.
6 ԱՐԱՄ-ՉԱՐԸԳ	1019	Երկու գարուն (բանաստ.):
7 ԿԱՐԷՆԻ Ի.	1020	Ինքնակրթութիւնը և ընթերցումը:
8 ՎԱՆՅԵԱՆ, Գ., ԸՍՏ ՖԵՐԻՈՐԵԻ	1031	Կեանքի ծագումը:
9 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻ.	1052	Աղագեղին (բանաստ.):
10 ՉՈՊԱՆԵԱՆ, ԱՐՇԱԿ	1054	Հանր Հաշիկ: (Բնական. էալոգ):
11 ԱՂԲՈՒԼԵԱՆ, ՆԻԻ.	1073	Վ. Գ. Բէլլինսկի (Բնական. էալոգ):
12 ԿՈՒՍԻԿԵԱՆ, ԿԱՐ.	1094	Հրատարակող և Ս. Շահաղիզեան II:
13 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱՆԵՏԻԲ.	1105	Ինչ է արևոտը ըստ Տոլստոյի I:
14 ՋԷԼԻՆՍԿԻ, ՍՏԵՓԱՆ	1122	«Հալեթն-ուսերէն բառարան»:
15 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1131	Ժամանակակից Տետովիւն. — իշխ.
16	1140	Օտտո Բիւմարի
17 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1143	Գրէգորի գործի նոր ընթացքը:
18 ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՄԱԴԱԹ	1147	Գաւառ. նամակներ: Կոթի գիւղը: III.
19 ԽՄԲ.	1157	Ձանաղան լուրեր:


Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ

Типография М. Д. Ротшиана, Гол. пр., д. № 41.

1898



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7—8 1898

ՅՈՒԼԻՍ — ՕԳՈՍՏՈՍ

1898 № 7—8

ՏԱՍԵՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Ք Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ

Типография М. Д. Ротинянца Гол пр., л. № 44.

1898

84400

ДОПУЩЕНО ЦЕНЗУРОЮ

9440000

ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ЦЕНЗУРЫ

Доволнено цензурою. Тифлисъ, 11-го Августа 1898 г.

САНКТ-ПЕТЕРБУРГЪ

ВЪ ТИФЛИСѢ
У ПЕЧАТНИКА
ИЗДАТЕЛЬСТВО
1898

ՆՈՐ ՀՈԳՍԻ ՅԵՏԵՒԻՑ...

(ՊԱՏԿՆԸ)

Ա. ԱՂԵԼԵԱՆԻ

I

Ութսունական թւականների կիսին էր, Արտաշէս Յարումեանը, դեռ Ներսիսեան դպրոցի վեցերորդ դասաւան աշակերտ, ծրագիրներ էր կազմում իր ապագայ գործունէութեան համար: Այդ ժամանակ լրագրութեան մէջ բարձրացել էր այն հարցը, թէ ինտելիգենտ անձինք զիւր պիտի գնան այնտեղ գործելու նպատակով: Ապացուցանում էին, որ դա ինտելիգենտի բարոյական պարտականութիւնն է, որ դա պահանջում է կեանքի յառաջդիմութիւնը: Գիւղական ազգաբնակիւթիւնը, ասում էին այդ հարցի ջերմ պաշտպանները, ժողովրդի այն դասն է, որը ամենից շատ է աշխատում հասարակական և տէրունական բարդ մեքենան գործի դնելու, և չնայած դրան՝ գիւղացին ամենաանմխիթար զրութեան մէջ է գտնւում շնորհիւ իր տգիտութեան: Ինտելիգենտը պիտի պատառէ տգիտութեան վարագոյրը, լոյս տարածելով գիւղացու մռայլ կեանքի մէջ: Նա պարտական է գիւղացուն, որովհետեւ սրա աշխատանքի արդիւնքներից՝ առաջ եկած բոլոր բարիքները վայելում է փափուկ զիրքի մէջ օրօր վայելող ինտելիգենտը... Դէպի զիւղացին անտարբեր, անուշադիր գտնւելը նրա կողմից նշանակում է լինել նեղ ետսւէր, անպարտաճանաչ և անիրիզ՝...

Այս հետաքրքիր և նշանաւոր հարցը ամբողջապէս դրուել և ոգևորել էր Յարումեանին: Նա ինքը գիւղացի էր և հէնց զլիսա-

ւորապէս այդ պատճառով հրապարակաստութեան նիւթ դարձած ինդիրը նրա սրտին մօտիկ և փայփայուն առարկան էր: Յարումեանը ուշի ուշով հետեւում էր պարբերական մամուլին, ուսումնասիրելով այդ հարցին վերաբերող գրաւթները, որոնք լոյս էին տեսնում թէ մեր և թէ ռուսաց գրականութեան մէջ:

Օր օրի վրա գիւղին նւիրւելու միտքը խոր արմատներ էր ձգում նրա հոգու մէջ: Գիւղում գործելու անհրաժեշտութիւնը նրա համոզմունքն էր արդէն, իսկ այդ համոզմունքին գործնականապէս ծառայելու համար նա ունէր կամք, եռանդ և երիտասարդական ոգւորութիւն:

Սակայն դպրոցը աւարտելուն պէս Յարումեանը գիւղ չվազեց: Երկու տարի Թիֆլիսում մնաց, որպէս զի մօտազայ գործունէութեան համար փոքր իշատէ պատրաստականութիւն ձեռք բերէ և յագեցնէ իր մտաւոր զարգացման ծարաւը: Գիւղական գործիչը բաւականաչափ մտաւոր պաշար պիտի ունենայ—այս էր թելադրում նրա գիտակցութիւնը: Եւ Յարումեանը պտտելով Թիֆլիսի մի քանի երիտասարդական առողջ շրջաններում, կարողացաւ կազմակերպել իր համար մի մաքուր, պարզ, բայց ոչ լայն աշխարհացոյցութիւն: Աւարտելուց երկու տարի անցած, ամառւայ վերջերին նա պատրաստուում էր գիւղ գնալու:

—Յարումեան, իսկապէս վճռել ես նւիրւել գիւղին, հարցնում էին նրա ընկերները:

—Այո, տղերք, պատասխանում էր ամեն անգամ Յարումեանը կտրակի:

Բայց մի անգամ նա երկար և իմաստալից բացատրութիւն տւաւ իր վճռի մասին.

—Ձեզ վաղուց յայտնի է, ասաց նա, որ գիւղում գործելու միտքը վաղուց է գերել եմ միտքն ու հոգին: Ոչ ոք հիմք չունի կարծելու, թէ գիւղը ինտելիգենտ գործիչների կարօտ չէ: Եթէ ամենքից մոռացւած այդ աշխարհը զուրկ լինի ինտելիգենտ ոյժերից և նրա զարգացումը մնայ միայն ժամանակի խնամքին, այդպիսով գիւղացին հւր կ'երթայ... Պատմութիւնը և կեանքի յառաջդիմութիւնը շարժում են անհատները, որոնք իրանց հերթին կախումն ունեն այդ պատմութիւնից: Բայց հարցի այդ կէտը մի կողմ

Թողնենք. բաւական է, որ անհատը մի որոշ զաղափարի ծառայելու համար ունի խելք, քննադատական միտք և զաղափարին նւիրւելու եռանդ: Այս յատկութիւններով օժտւած անհատը այլ ևս չի յարմարուած պատմական բարդ և անիրաւ հանգամանքներին, այլ նա իր հոգեկան մտաւոր և բարոյական ամբողջ ոյժով կռւում է դոցա դէմ և բարօրութեան գիրկն է մղում ժամանակակից հասարակութիւնը: Այդպիսի անհատը կամ հերոսը կարողանում է տոգորել հասարակութիւնը նոյն զաղափարներով և զգացմունքներով, որոնցով վառւած են նրա ուղեղն ու հոգին: Գործիչներ անհրաժեշտ են կեանքի բոլոր խաւերում, իսկ գիւղերում առաւել ևս, որովհետեւ գիւղացին հասարակական անհաւասարութեան սանդուղքի ամենաստորին աստիճանն է հանդիսանում: Նրա մտաւոր և բարոյական զարգացման նպաստողը գիւղական ինտելլիգենտը պիտի լինի: Իսկ դա երկնքիցը չի վայր ընկնելու. ինտելլիգենտ անձինք իրանք պիտի ձգտեն, խօսելով հանգերձ, գիւղին նւիրւել: Թագաւորող աղքատութիւնն ու տգիտութիւնը անզօր են դարձրել գիւղացուն մտածելու իր ցաւերի մասին. նա անճարացած թօթափում է իր ձեռքը տիրող հանգամանքների վրա, հաշտւում դոցա հետ և մի կերպ քարշ տալիս իր ողորմելի գոյութիւնը... Նա տառապում է անվերջ. բայց այդ տառապումներին դիմադրելու ոյժից զուրկ է նա: Եթէ այդպիսի մի բան արտայայտւում է, այդ էլ ոչ թէ ընդհանուր ցաւին է ուղղած, այլ միմեանց փնասելուն, գիւղացին կռւում է գիւղացու հետ նրան խեղդելու, նրա ունեցածը խլելու նպատակով... Այստեղ ահա հարկաւոր է գործչի փրկարար և ներդաշնակութիւն սահմանող ոյժը, որը հանդէս գալով պիտի պատռէ տգիտութեան սև վարագոյրը, պիտի նպաստէ համայնական զգացմունքների ազնւացման և գիւղացոց մէջ վերակարգնէ համերաշխ յարաբերութիւններ... Մեր գիւղացի մի երիտասարդ, որը ոչ մի ուսում չի ստացել, բայց իր բնական խելքի և դիտելու զօրեղ ընդունակութեան շնորհիւ հասկանում է մեր աշխարհի դրութիւնը, անցեալներում ինձ գրում էր. «մարդ չկայ, մարդ. ամեն քայլափոխում աչք է ծակում աչդ դառն հանգամանքը, կրկին և կրկին անգամ հասկացնելով մարդուն դրա բարձր նշանակութիւնը, դրա անհրաժեշտութիւնը: Մարդու պակասութիւն է, իսկ գործեր,

դարմանելու ցաւեր — որքան կամենաք. զիւղացիին զրկած է իր մասին հոգացող մարդկանցից, նրա հետ ապրող և անմիջապէս նրան օգնութիւն հասցնող գործիչներէց:

— Ուրեմն, Յարութեան, զու գիւղում ընդմիշտ պիտի մնաս, հարցրեց ընկերներէց մէկը:

— Այո՛, դա իմ վճիռն է. ես իմ կոչումը դրանում եմ տեսնում, իսկ համապատասխան ոչժը զգում եմ, որ կայ մէջս: Այս նպատակը երբեմն ինձ այնքան է ոգևորել, որ ես նոյն իսկ զայրոցը չաւարտած կամեցիլ եմ թողնել ամեն ինչ և զիւղ վազել... Սակայն ամեն անգամ իմ գիտակցութիւնը ինձ թելադրել է ղեռ էլի սպասել, պատրաստականութիւն ձեռք բերելու նպատակով: Այժմ ես փոքրի շատէ հանգիստ խղճով կարող եմ զիւղ գնալ: Յետաձգելը, սպասելը այլ ես աւելորդ է. հմուտութիւն, փորձնականութիւն ձեռք կը բերեմ զիւղում, կեանքի հետ անմիջապէս շփելուց: Տղերք, վերջապէս դուք զիտէք, որ ինքս զիւղացի եմ, որ զիւղում գործելու պարտականութիւնը ամենից առաջ ինձ վրայ է դրած...

Նա այդ աւելացրեց թեթեւ ժպիտով, որ նշան էր նրա համեստութեան:

Յարութեանի ասածները նրա սրտի անկեղծ արտայայտութիւնն էր: Դա բոլորական ոգևորութեան արդիւնք չէր, որը յատուկ է զգայուն, բայց համոզմունքից և կամքից զուրկ մարդկանց, այլ հետեւանք էր տարիների ընթացքում նրա մէջ մարմին առած մի գաղափարի:

Ընկերներից Գարեգին Մուրադեանը, որը պատրաստուում էր արտասահման գնալ քաղաքատնտեսութիւն ուսումնասիրելու, ամենից շատ էր հետաքրքրւում Յարութեանի նպատակով.

— Տղա՛, ասաց նա միանգամ Յարութեանին, լաւ չէր լինիլ, որ դու ես արտասահման գալիր և ուսումնասիրէիր այնտեղ զիւղատնտեսութիւն: Եթէ դու զիւղ գնալիր գործելու իբրեւ զիւղատնտես, զիտե՞ս դա ինչ արժէք կունենար...

— Շատ լաւ կը լինէր, պատասխանեց Յարութեանը, բայց նախ ես միջոց չունեմ արտասահման գնալու, իսկ բարերարի գիմել չեմ կարող: Դուք զիտէք, որ մինչ օրս ապրել եմ հօրս չնչին օգնութեամբ և իմ սեփական աշխատանքով — մասնաւոր դասերով: Այդ

բոլորից յետոյ ես չեմ կարողանում հաշուել հարուստի դիմելու մոքի հետո: Դա ինձ համար նոյն իսկ զգւելի է: Բացի այդ, երկաթը տաք-տաք պիտի ծեծել... Ի՞նչով էք երաշխաւոր, որ արտասահման գնալով, բարձրագոյն ուսում ձեռք բերելով ես դարձեալ կը վերադառնամ գիւղ: Փամանակակից կեանքի բարդ և աննպաստ հանգամանքները կարող են ինձ ենթարկել իրանց ազդեցութեանը, աւերել ամեն ինչ, որ այժմ սուրբ է ինձ համար: Դոքա նոյն իսկ կարող են բոլորովին փոխել ինձ, այլ հոգսեր, այլ պահանջներ դնել իմ առաջ և այդպիսով կամաց-կամաց հեռացնել ինձ գիւղից, օտար դարձնել նրան ինձ համար:

—Ես կարծում եմ, պատասխանեց Մուրադեանը, որ եթէ դու զաղափարի և կամքի իսկական զինւոր լինես, այդ ամենը քեզ վրա ոչ մի ազդեցութիւն չպիտի գործեն և ամեն ինչ պիտի խոնարհի քո առաջ:

—Համաձայն եմ, սակայն ամենօրեայ դառն փորձը մի ներքին վախ ու կասկած է առաջացնում իմ մէջ. իդէալներով ոգևորւած ուսանողը հենց որ թողնում է համալսարանը և մոնում կեանքի ասպարէզը, կարճ միջոցում կատարելապէս կերպարանափոխուի է. նա հեշտութեամբ թոթափում է իրանից ամենը, ինչ որ վնհ էր, ազնիւ էր... Նրա իդէալները շուտով հրաժեշտ են տալիս իրանց անհաւատարիմ սիրահարին և, սուսառնելով դատարկ տարածութեան մէջ, գնում են մի այլ հոգի, մի այլ սիրտ որոնելու... Կեանքի նոր զաւակը իդէալի զոհաբեր պահանջներից թեթեացած՝ խրուում է լճացած կեանքի զարշահոտ ճահճի մէջ... Քանի որ իմ մէջ ես զգում եմ և եռանդ, և ցանկութիւն, և ոգևորութիւն—պիտի գործի կայեմ. գիւղին մեզ նմաններն էլ բաւական են: Բարձրագոյն դպրոց աւարտողները գիւղ չեն գնում. համալսարանից յետոյ նոցա կեանքը, նոցա պահանջները այլ կերպ են դասաւորւում, իսկ մենք հասարակ մարդիկ ենք. մենք կարող ենք...

—Առ այժմ գիւղում կատարելու մի գործ ունե՞ս աչքի առաջ, հարցրեց Մուրադեանը:

—Այո՛, մեր գիւղը այս սեպտեմբերից դպրոց պիտի բաց անէ ես կը լինեմ ուսուցիչ: Ինքս էի զիմեւ և գիւղական հասարակութիւնը ուրախութեամբ ընդունել է իմ առաջարկութիւնը: Դիւ-

զացիք զո՛հ են, որ զպրոցը իրանց մարդու ձեռքն են յանձնում և ոչ օտարի, որի վրա յոյս դնել չի կարելի և որը աջնպիսի եռանդով չի աշխատիլ, ինչպէս համագիւղացին: Այս ենթադրութիւնը, կարծում եմ, որոշ չափով իրաւացի է. օտարի համար շատ դժուարութիւններ է ներկայացնում աշակերտների կրթական և նոյն իսկ հասարակական գործերի մէջ մտնելը, որովհետեւ նա ծանօթ չէ գիւղացու ներքին կեանքին, տգատ մուտք չունի նրա ընտանիքի մէջ, ւտնի մարդ չէ: Այլ է համագիւղացի ուսուցիչը, աշակերտների և նրա մէջ զգացւում է մի վաղեմի, ընկերական և աղղակցական կապ, և իւրաքանչիւր տան դուռ բաց է նրա առաջ:

Ընկերներից մէկը առաջարկեց Յարումեանի ն. իրական գործի առիթով այդ երեկոյ մի խնջոյք սարքել:

— Գնան եղբայր, ասում էր Մախմուդեանը, որ հաշտապահի պաշտօն էր վարում Թիֆլիսում, գնան. մենք այստեղ հաշտապահական գրքերի առաջ չորած՝ մի բան չենք գտնաւում կամ գործ գլուխ բերելու. բայց քեզ համար հրաժեշտի մի ծաշ սարքել կարող ենք... Դրանով մենք քեզ աւելի կ'ոգևորենք, և մեզանից այդքանն էլ հերիք է...

— Իսկ առ այժմ, ասաց Մուրադեանը, գնանք դարեջուր խմելու: Ապագայում այսօրւայ մեր ամեն մի խօսքը, ամեն մի գործը լինելու է քաղցր և ակտորժելի յիշողութիւնների մի-մի զոհար: Կապենք այդ ամենը մի փոքրիկ սեղանի և մի քանի բաժակ գարեջրի հետ:

Խօսակցութիւնը տեղի էր ունենում ամառւայ վերջերին Թիֆլիսի այգիներից միւնում, ճաշից յետոյ: Նրանք նստեցին այգու պաւիլիոններից մէկի առաջ և բոլորելով շարած սեղաններից մէկի շուրջը, ակտորժելով դատարկեցին մի քանի բաժակ գարեջուր: Կարծէք դա մի նւիրական նշան էր, որը մի ընդհանուր նպատակի համար ամուր կապերով պիտի շղթայէր տղերանց: Նոքա լուռ էին՝ ընկզմաժ երիտասարդական վառ երեակայութեան աշխարհը: Իսկ այդ երեակայութիւնը կալեցրտակալի նման մինը միւսի յետեւից առաջ էր բերում նրանց հոգու մէջ զանազան պատկերներ, մինը միւսից պայծառ և հրապուրիչ: Այգում զբօսնող հասարակութիւնը չէր գրաւում նոցա ուշադրութիւնը: Միայն կնոջ սիրահար Սահա-

կեանն էր, որ այդ րոպէին իր աչքը մի ակնթարթ անգամ չէր հեռացնում անցուղարձ անող տիկիներէից և օրիորդներէից:

Կարճ միջոցից յետոյ նրանք վեր կացան և բաժանւեցան զանազան կողմեր: Երեկոյեան Մուրադեանի մօտն էին: Ընկերները հրաժեշտի խնջոյք էին տալիս Յարումեանին: Սեղանը բացւեց ոգևորւած կենացներով և ճառերով: Սկզբում մի թեթեւ արշաւանք զործեցին դէպի ընդհանուր հասարակական կենացները, իսկ յետոյ ամբողջապէս կանգ առան Յարումեանի վրա: Գինով լի բաժակները ձեռներին՝ ընկերները կրկին անգամ խմեցին գիւղին նւիրողի կենացը, երկարատեւ եռանդ, անշէջ ոգևորութիւն և անընկճելի կամք մաղթելով նրան, իսկ յետոյ մէկ-մէկ մօտենալով, համբուրեցան: Յարումեանը շատ էր զգածւած այդ ամենից: Նա իր բաժակը ձեռքն առաւ և շնորհակալութիւն յայտնելով ասաց.

— Տղերք, անչափ ուրախ եմ ձեր անկեղծ ու քաղցր բարեմաղթութիւններէից, որի համար և բերում եմ իմ խորին շնորհակալութիւնը: Այսօրւայ սեղանը, որի խորտիկները համարեա ամբողջովին գիւղացու թափած քրտնքի արդիւնքն են, այն կարմիր գինին, որը գիւղացու տնկած, մեծացրած և ջրած որթի ազնիւ ծուծն է, և վերջապէս ձեր ուրախ, կենսալի դէմքերը ներշնչում են իմ մէջ մի այնպիսի զգացմունք, որը աւելի ամուր շղթայով է կապում ինձ իմ նպատակի հետ: Ուրախ եմ և մաղթում եմ հաւատարիմ մնալ մեր իդէալներին, մինչև ծերութեան հասակներս մնալ հոգով երիտասարդ, չմոռանալ հասարակութեան շահերը, չմոռանալ գիւղացուն և վերջապէս միմեանց: Հասարակական շահերը պահանջում են, որ երիտասարդութեան մէջ լինի սերտ և որոշ իդէալների վրայ հիմնւած կապ. թող որոշ և հաստատ լինի այդ կապը:

Յարումեանը դատարկեց իր բաժակը: Ընկերները կեցցէ գոչեցին և պատեցին նրան մի ոգևորիչ երգով:

Ուշ երեկոյեան ուրախ տպաւորութեան տակ և սրբազան զգացմունքներով լցւած տղաքը ցրւեցին իրանց տները, իսկ հետևեալ առաւօտեան զնացին Յարումեանին դէպ զիւղ ճանապարհելու:

— Անպատճառ նամակ գրես, Յարումեան, ասաց Մուրադեանը միւս ընկերների հետ միասին:

— Իմ պարտքն է. միայն դուք չմոռանաք ամեն անգամ ձեր հասցէն փոխելուց ինձ տեղեկացնել. քաղաքի հետ ունեցած կապը գիւղական ծանր մթնոլորդի մէջ շունչ առնող մարդու համար կը ծառայի իբր թարմեցուցիչ սթափեցնող կաթիլներ: Նս անկասկած շատ բարդութիւնների եմ հանդիպելու կեանքի մէջ, որոնց մասին մտքերի փոխանակութիւնը անհրաժեշտ է լինելու: Մնաք բարեաւ...

— Բարի ճանապարհ, առողջութիւն և յաջողութիւն, ասացին տղերքը միաբերան: Համբուրելով Յարութեանի հետ, նրանք դուրս ելան վազոնից:

Շուտով գնացքը շարժեց. և մի րոպէում անհետացաւ կանգնած հասարակութեան հետամուտ աչքերից...

II

Գիւղ հասնելուն պէս Յարութեանը ուսումնարանով կացաւ և զործը տարաւ մինչև վերջը: Դրանում նրան աջակցում էր Եղիշէ Մարութեանը, որը գիւղի մէջ մի թարմ և ազնիւ ոյժ էր ներկայացնում Յարութեանի համար: Մարութեանը մի քանի տարի քաղաքներում պանդխտութիւն կրելուց յետոյ գիւղ էր վերադարձել և վճռել էր այլ ևս քաղաք չգնալ: Հողագործական աշխատանքը, գիւղի աղքատիկ կեանքը, առողջարար օդը, ջուրը և գեղեցիկ բնութիւնը նա տասնապատիկ գերադասում էր քաղաքի կեանքից, զործարանական կամ այլ միապաղաղ աշխատանքից, որը բանւորին դարձնում է աւտոմատ մեքենայ, բթացնելով նրա միտքը, զգացմունքները, ընդունակութիւնները, և այդպիսով մեծ խոչնդոտ հանդիսանում մարդու բազմակողմանի զարգացման: Այդ դրութիւնը Մարութեանը անւանում էր դժոխային, աւերիչ, դէպի կորուստ տանող կեանք, իսկ գիւղի ազատ և բազմակողմանի աշխատանքը — երջանկութիւն...

— Հողագործական աշխատանքը, ասում էր Մարութեանը, իր մէջ պարունակում է աշխատանքի համարեա բոլոր բաժինները, և հողագործը, գիւղացին՝ իր ուսերի վրայ առած լինելով այդ բոլոր բաժինները, ինքն է իր բոլոր պահանջներին լիութիւն տալիս: Այդպիսով նա զարգացնում է իր բոլոր ընդունակութիւնները, աշ-

խառանքի բաժանումը նրա օրգանների մէջ ընդարձակում: Է և նա դառնում է իր գլխի տէր, ուրիշներից անկախ մարդ:—Բայի աչդ անկախութիւնից բազմակողմանի աշխատանքը հոգեկան և բարոյական բաւականութիւնների անսպառ աղբիւր է: Իսկ ամեն օր մեքենայի կողքին ժամերով կանգնած մնալը ինքնասպանութիւն է, ինքնասպանութիւն...

Մարութեանը ընդունակ երիտասարդ էր: Պանդխտութեան մէջ նա զբաղւել էր իր քնակրթութեամբ և նոյնը շարունակում էր գիւղում: Նրա մէջ այդ պահանջի զարգացման նպաստել էր մի ուսուցիչ իւր ազդեցութեամբ և աշխատում նրանց բարոյական և մտաւոր կրթութեան օգտին: Մարութեանը գիւղի կեանքի և աշխատանքի բաժանման մասին կազմած աշխարհայեցողութեան համար պարտական էր այդ ուսուցչին:

Երկու տարի կար արդէն, ինչ նա շարունակում էր հաստատ մնալ իր վճռին՝ չհեռանալ գիւղից: Մարութեանը ուրախ էր ուսումնարանի բացման համար: Նրա խնդիրը նա էր յղացել, նա էր արծարծել գիւղացոյց մէջ և բաւական աշխատանքից յետոյ գործը չաջող ելքի հասցրել: Գիւղական մռայլ կեանքի մէջ բարեփոխումների մտցնելու համար նա ունէր ջերմ ցանկութիւններ, բայց անհամապատասխան ոյժ: Ահա թէ նա ինչու այնքան ուրախ էր Յարութեանի գալովը:

Աղքատ և հոգսերի մէջ թաղւած գիւղացիք այդչափ ուրախ էին դպրոցի գոյութեան համար: Նոքա այդ մի ծանր բեռ էին համարում, թէև միւս կողմից ընդունում էին ուսումնարանի անհրաժեշտութիւնը:

Իւր ուսուցչութեան առաջին տարում Յարութեանը ամբողջապէս նւիրւած էր գիւղական երեխաների մտաւոր և գլխաւորապէս բարոյական կրթութեանը: Գիւղի հասարակական գործերին մասնակցելը առ այժմ նա մի կողմ էր թողել և բաւականանում էր միայն դոցա ուսումնասիրութեամբ: Հեշտ չէր անփորձ երիտասարդի համար միանգամից երկու գործի կաշէլ: Երեխայոց բարոյական կրթութիւնը նա գերադասում էր ուրիշ գործերից, որ կար նրա առաջ, և մտադիր էր ամեն ինչ առ ժամանակ դրան զոհ բերել: Յարութեանը ամբողջապէս թաղւած էր աշխատանքի մէջ. դպրո-

ցում նա վարում էր գործնական աշխատանք, իսկ տանը զբաղւում մանկավարժութեան ուսումնասիրութեամբ: Աշակերտներին նա յաճախ զբօսանքի էր տանում, կազմում էր մանկական առաւօտներ, բացի դասամիջոցներից առանձին ժամեր էր նշանակում յատկապէս մի որոշ կարգի խաղերի համար: Այդ խաղերը պարունակում էին իրանց մէջ բարոյագիտական կողմեր և կատարւում էին ուսուցչի ղեկավարութեամբ: Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ գիւղական աշակերտը ընտանիքի մէջ աշխատելու, դասեր պատրաստելու համար չունի յարմար պայմաններ, Յարումեանը կէսօրից յետոյ երեխաներին կրկին ուսումնարան էր ժողովում և օգնում նրանց յաջորդ օրւան դասերը պատրաստելու: Այդ բոլորի ընթացքում նա ուշի ուշով դիտում էր աշակերտների վարքերը և ուսումնասիրում նրանց հոգու բարոյական կողմերը: Այդ դիտողութիւնները մխիթարական արդիւնքներ չէին տալիս Յարումեանին: Երիտասարդ ուսուցիչը մի քանի ամսւայ ընթացքում տեսաւ աշակերտների մէջ բարոյական շատ ակտիւ արմատացած: Ուսումնարանում նա հանդիպում էր այսպիսի դէպքերի.

Դասի ժամանակ է: Երեխաները գրաւոր աշխատանքով են զբաղւած: Նրանցից մէկը չի գրում, այլ ուղղակի նստած է տեղը, գրչակոթի ծայրը բերանն է առել և մերթ ընդ մերթ նայելով ուսուցչի երեսին, կամենում է անպատճառ իր վրայ դարձնել նրա ուշադրութիւնը:

—Այ տղան, Ատումեան, ի՞նչու չես գրում, հարցնում է ուսուցիչը:

—Վարժապետ, թանաք չունիմ:

—Ի՞նչու, մոռացել ես թանաքամանդ բերել:

—Ոչ, չեմ մոռացել. թանաք չկայ մէջը:

—Եթէ չկայ, ապա ի՞նչու ես բերել:

—Հէնց էնպէս...

—Թանաք ի՞նչու չես բերել. չգիտէիր որ այսօր գրաւոր աշխատութիւն կայ:

—Գիտէի, վարժապետ. հայրիկիս առացի, ասում է փող չունիմ. խանութպան Առաքելն էլ նիսիա չի տալիս. ասում է շահուբանը ես նիսիա չեմ տալ:

—Դէ լաւ, չունես-չունես, ընկերդ խո՞ւ ունի. նրանից օգտուիր:

—Ընկերս չի թողնում, վարժապետ, պատասխանում է Ատոմեանը ձայնը բարձրացնելով:

Եւ յանդուգն հայեացքով շարունակում է ընկերին նայել: Այս տղան երեւի ամօթից կարմրում է և հանդարտիկ բարձրանում տեղից:

—Սուտ է վարժապետ, արում է նա քթի տակ և ատելու թեամբ Ատոմեանին նայում: Սակայն նրա ձայնը մասնում է նրա յանցանքը:

—Սուտ չէ, սուտ չէ, կարում է նրա խօսքը Ատոմեանը. մի անգամ թաթախեցի, ձեռքիս էնպէս խփեց, որ թանաքը գրչից տետրակիս վրայ թափուեց: Սուտ է, չի թողնում...

—Սարգսեան, ասաց ուսուցիչը յանցաւորին, կը թողնես, որ ընկերդ այսօր թանաքիցդ գրէ. կը պահանջէ, որ մի անգամ էլ դու չես ունենալ, նա քեզ կը զիջէ իր թանաքը:

—Թողնում եմ, վարժապետ, պատասխանում է Սարգսեանը զլուխը կտխ գցած, մատը բերնին և կարծէք ա՛կամաց:

Երբ դասը վերջանում է և աշակերտները դէպի բակն են վազում, Սարգսեանն ու Ատոմեանը դասատան շէմքից դու չհեռացած, կռւի են կպչում:

—Ի՞նչու վարժապետին զանգաւուցիր, գոչում է Սարգսեանը Ատոմեանի վրայ:

—Շատ լաւ արեցի, քեզ ի՞նչ. պա ի՞նչու չէիր թողնում, որ թանաքիցդ գրեմ...

Եւ սկսում են հայհոյել, հարւածել միմեանց, մինչև որ ուսուցիչը մօտենում բաժանում է նրանց, խրատներ տալիս և պատժում:

Մի ուրիշ անգամ Ատոմեանը թանաք ունի, իսկ Սարգսեանը ոչ: Դարձեալ զրաւոր աշխատութեան Ժամանակ է և այս անգամ էլ Ատոմեանը չի թողնում, որ Սարգսեանը նրա թանաքից օգտուի:

—Ա՛յ տղա, գոչում է ուսուցիչը, մոռացմոր, որ անցեալ օրը դու Սարգսեանի թանաքից օգտուցիր. գոնէ փոխարէնը վերադարձրու:

Ատոմեանը ոչինչ չէ պատասխանում և լուռ կանգնած է իր տեղը:

—Ի՞նչու չես խօսում. կրկնում է ուսուցիչը:

—Հայրս ասում է չթողնես, որ ուրիշը քո թանաքից գրի, պատասխանում է աշակերտը համարձակ և կամենալով արդարացնել իրան:

—Թող գրի, ես քո հօր հետ դրա մասին կը խօսեմ:

Սարգսեանի դէմքը փայլում է վրէժխնդրութեան յաղթութեամբ և, դեպի քրքիշը բերնին, մրթմրթում է:

—Հը՛ր՛, չես թողնիլ. էգպէս կը գրեմ հա՛ա...

Առումեանը բարկանում, կատաղում է և երկու ընկերները սեղանի տակ բռնեցքով միմեանց կողք են հրում:

Ուսուցիչը նկատում է այդ և երկուսին էլ զուրս վսնդում զասարանից:

Սրա նման և այլ բարոյական ախտեր էր նկատում Յարումեանը աշակերտների մէջ. ստախօսութիւն, հայհոյանք, նեղ ետասիրութիւն, չար նախանձ, կեղծաւորութիւն, չարամտութիւն, նիւթական կամ բարոյական ոչ մի զոհաբերութիւն դէպի ընկերը և փոխադարձ օգնութեան բացակայութիւն: Ամենքն էլ ասէք փոքրիկ գայլեր լինէին...

Ի՞նչպէս պիտի ուղղել սրանց, սոսկումով մտածում էր Յարումեանը, տեսնելով որ իր աշխատանքը աննշան օգուտ է բերում տղաների բարոյական կրթութեանը: Եւ այդ օգուտը այն էր, որ աշակերտը, ուսուցչին պատկառելով, նրա ներկայութեամբ վարագործում էր իր բարոյական սնանկութիւնը: Տեղն ընկած ժամանակ նրա գայլային ինստինկտները իրանց ամբողջ ոյժով իսկոյն արտայայտւում էին: Ի՞նչ անել...:

Այդ հարցը շատ էր զբաղեցնում Յարումեանին, որովհետեւ աշակերտների, գիւղի նոր սերնդի բարոյական կրթութիւնը ամենից մօտ էր նրա սրտին: Ապագայում այդ տղայքը պիտի լինէին գիւղի իսկական հոգացողները, նոքա պիտի կազմէին գիւղի աջ դասը, որը իբրեւ պարարտ հող, շատ շուտ կը բուսցնէր գիւղական գործչի ցանած սերմերը: Եւ ահա ապագայի փայլուն յոյս կաղմող սերունդը աճում էր արդէն վարակւած անբարոյականութեան ախտերով: Որտեղից են մոռոք գործել այդ ամենը երեխայի մանուկ հոգու մէջ: Այս հարցը բաւականին ժամանակ զբաղեցնում էր Յա-

րումեանին: Նա տեսաւ այն հակառակ ոյժը, որը անխնայ կերպով քանդում, աւերում էր ամենը, ինչ որ երիտասարդ ուսուցիչը կառուցանում էր իր աշակերտների մասաղ սրտերի մէջ: Այդ հակառակ ոյժը երեսացոց ընտանիքն էր, բարոյական շատ թերութիւնների մէջ խրաժ ընտանիքը: Մինչդեռ ընտանիքի կոչումն է երեսացի կրթութեան գործում դպրոցի հետ ձեռք ձեռքի տւած ընթանալ, գիւղի ընտանիքը բոլորովին հակառակ էր գնում այդ կոչման: Վարժապետը ասում է մի խաբիր, մի հայոցի, մի գողանար, ընկերիդ հետ սիրով կաց, նրան օգնիր և այլն. բայց նոյն աշակերտի մօտ մայրը խաբում է հարեանուհուն, հայրը որդու ներկայութեամբ հայոցում իւր համագիւղացուն, իսկ տանը՝ թէ տղային և թէ մօրը: Ընտանիքի գլուխը տան մէջ շարունակ մի բան է կրկնում,—տնից բան մի բաց թողնէք, զոչաղ եղէք և ուրիշից որքան կարելի է, ինչպէս կարելի է շատ բան պոկէք... Պատահում է, որ որդին թեթեւ գողութիւններ է անում այգիներում. հայրը այգիսի դէպքերում կամ իրան չգիտցող է ձեւացնում և լռութեան յանձնում և կամ խրախուսում է որդուն այգիէս ղողաղ լինել...

Մի շարք այսպիսի հակամանկավարժական երևոյթներ տեսաւ Յարումեանը գիւղի ընտանիքներում: Բացի այդ, Մարութեանն էլ պատմում էր նրան իր արած դիտողութիւնները ծնողների թերութիւնների մասին: Նրա ասածները դիտողութիւններից դուրս բերած եզրակացութիւններ չէին, այլ ամբողջ պատմութիւններ: Եւ այդ ամենը ամենատիւր գոյներով նկարում էին այն անդունդը, որ կար դպրոցի և ընտանիքի մէջ: Վշտանում, կսկծում էր երիտասարդ ուսուցչի սիրտը, բայց վհատութեան և յուսահատութեան ախտը երբէք մուտք չէր գործում նրա հոգու մէջ: Դիմադրելու համար նա դեռ բաւականին ոյժ ունէր...

— Ուրեմն, Մարութեան, ասաց մի անգամ Արտաշէսը, գիւղի ուսուցչին վիճակւած է և ծնողներին կրթել, ես ուրիշ կիք չեմ գտնում հակառակ. դէպքում իմ արածը ինքնախաբէութեան նման բան է դուրս գալիս:

— Իհարկէ, վարժապետ. որ հանգամանքները այսպէս են, ինչ արած...

— Հէնց հարցն էլ դրանումն է, Մարութեան, թէ ինչ պիտի

անել. բայց հասկանալի և անհերքելի է այն, որ երեխայի բարոյական կրթութիւնը բախտի քմահաճոյքին չի կարելի թողնել: Տարրական դպրոցների կոչումը այն չէ, որ նոքա ծառայեն երեխայոց մտքի զարգացմանը, այլ այն, որ նոքա բարոյական ամուր հիմքեր հաստատեն երեխայի կազմակերպող հոգու մէջ: Խելքը զարգանալու համար շատ ժամանակ ունի, բայց բարոյական հիմունքները մարդու մէջ հաստատուում են մանկական հասակում: Իհարկէ, երջանիկ կը լինէինք, եթէ այդ գործին ամբողջապէս ծառայէր ընտանիքը, իսկ դպրոցը միայն կատարէր կոնսորիի դեր: Ասենք այդ այդպէս պիտի լինի: Բայց երբ մեր ընտանիքը ոչ միայն չի ծառայում այդ նպատակին այլ և ուղղակի ֆէսս է հասցնում նրան, դպրոցի պարտքն է այդ դէպքում երեխայոց կրթութիւնը իր վրայ վերցնել: Ահա ինչու ասում եմ, թէ ծնողներին ևս դպրոցը պիտի կրթէ:

—Շատ լաւ կը լինի, պատասխանեց Մարութեանը. բայց խելքս դրանից մի բան չի կորում. մարդիկ մեզ մօտ շատ են փչացել: Եթէ որդիքը անուղղելի են, ծնողները առաւել ևս: Ինձ այդպէս է թւում:

—Քող չուղղւեն, բայց ես կարծում եմ, որ կարելի է նրանց գոնէ ընտելացնել իրանց ծնողական պարտականութիւններին: Ծնողին կանչիր և աս. —բարեկամ, երեխայիդ մօտ սուտ մի խօսիլ, մի հայցոյիր, կաիւ մի՛ արա, որովհետեւ դու դրանով վարակում, բարոյական ֆէսս ես հասցնում որդուդ: Ծնողը անշուշտ կ'աշխատէ հասկացողի խորհուրդներին հետեւել: Այսպիսով միայն կարելի է երեխայոց բարոյական թերութիւնների դէմ կռւել:

—Մեր ազգականների շրջանում յարմար առիթին ես նկատողութիւններ անում եմ, ասաց Մարութեանը:

—Շատ լաւ է արածդ, բայց այս նպատակի համար ամենաուղիղ միջոցը ծնողական ժողովներն են, մի անգամ կը ժողովենք ողամարդկանց, իսկ միւս անգամ՝ կանանց: Ես նրանց հետ կը զրուցեմ այն ամենի մասին, ինչ որ տալիս են մեզ մանկավարժական կանոնները: Այդպիսի ժողովներ կարող ենք յաճախ կազմել և, յուսով եմ, որ ոգուտը շօշափելի կը լինի:

III

Այդ խօսակցութիւնից մի քանի օր յետոյ կայացաւ առաջին ծնողական ժողովը, որին մասնակցում էին աշակերտներից շատերի ծնողները: Ժողովը բաց արաւ վարժապետը հետեւեալ յառաջաբանով.

—Յարգելի ժողովականներ, այստեղ մենք ժողովուել ենք մեր աշակերտների մասին խորհրդակցելու: Ձեզ գուցէ յայտնի լինի, որ ուսումնարանի նպատակն է երեխաներին ոչ միայն գրել-կարդալ և գիտութիւն սովորեցնելը, այլ և նրանցից ապագայի համար լաւ մարդիկ պատրաստելը. ուսումնարանը բարոյական կրթութիւն պիտի տայ աշակերտներին ոչնչացնելով երեխաների կազմեղ բնաւորութեան վատ կողմերը և նրա հոգու մէջ ցանկնելով բարի սերմեր: Ուսումնարանի այդ գործը ուսուցչի վրան է դրած, սակայն շատ սխալած կը լինէք, եթէ կարծէք թէ դա միայն ուսուցչի պարտականութիւնն է. դա ձեր պարտականութիւնն էլ է, որովհետեւ ուսումնարանը և ընտանիքը, ուսուցչին ու ծնողը երեխայի կրթութեան մէջ համաձայն պիտի վարեն և մէկի արածը միւսի հակառակ չպիտի լինի: Ես լսել եմ, որ դուք հակառակ կարծիք ունէք այս խնդրի մասին, բայց կրկնում եմ, սխալւում էք. եթէ հօր և մօր պատճառով որդին վատ սովորութիւնների տէր է, վարժապետը դժարութեամբ կարող է նրան ուղղել, մանաւանդ եթէ ծնողները անհոգ գտնւին դէպի նոյն աշխատանքը, եթէ նրանք բոլորովին հակառակ դործեն... Երեխաների կրթութեան մասին հոգալը իմ և ձեր պարտականութիւնն է, բայց լծի ծանր կողմը իսկապէս ձեր ուսերի վրայ է դրած: Ընտանիքն էլ աշակերտի համար մի դպրոց է և այդ դպրոցի վրայ աւելի մեծ պատասխանատւութիւն է դրած:

—Ի՞նչպէս, ի՞նչպէս, վարժապետ, ընդհանուց ուսուցչի խօսքը ժողովականներից մինը, բարձրանալով տեղից,—էդ մինի հետ ես համաձայն չեմ. ինչպէս կարելի է, որ...

—Սո՛ւս կաց, լսեցին միահամուռ ձայներ, թող մարդը խօսքը վերջացնի...

—Ես համարեա վերջացրել եմ, թողէք խօսէ, դիմեց Յարուսեանը ժողովականներին:

— Ես էն էի ասում, շարունակեց կանգնած տղամարդը, թէ մենք ինչացու ենք, ինչ ենք հասկանում, որ լծի ծանր կողմը մեր վզին ես դնում. պա, վարժապետ, էլ դու ինչի համար ես. դու բոլորիցս էլ հասկացող ես:

— Ճշմարիտ է, պատասխանեց Յարումեանը, այդ գործի ծանրութիւնը գիւղում հանգամանքների շնորհիւ վարժապետի վրան է. դրած, բայց ես ասում եմ, որ այդ այդպէս չպիտի լինէր. որդու իւրաքանչիւր արարքին պատասխանատու է ծնողը: Քաղաքներում ուսուցիչները աշակերտի գործած մի որևէ յանցանքի համար իսկոյն ծնողին են կանչում պատասխանատուութեան: Այս ամենը ես ասում եմ, որ դուք էլ մտածէք ձեր որդոց մասին, ուշադիր լինէք դէպի նրանց կրթութիւնը, և ոչ թէ ձեռներդ ծալած մի կողմ նստէք...

— Իհարկէ, իհարկէ, լսեցին հաւանութեան ձայներ, մեր որդիների արարքների համար մենք ենք պատասխանատու:

— Վարժապետը երեխաների վատ սովորութիւնների մէջ մեղաւոր չէ, շարունակեց Յարումեանը, այլ մեղաւորը ծնողն է. եթէ ուսուցիչը յաճախ գործ է դնում իր միջոցները աշակերտին ուղղելու և նրան այդ չի յաջողում, դրա պատճառը գլխաւորապէս այն է, որ ծնողը տան մէջ իր որդու հետ չի վարւում այնպէս, ինչպէս վարժապետը: Ես ձեզ հրաւիրել եմ յայտնելու, որ ուսումնարանը և դուք այս գործում համաձայն պիտի շարժւէք: Ինչ որ ես եմ խրատում, ինչպէս որ ես եմ վարւում երեխաների հետ, ինչ որ ես եմ պահանջում նրանցից, նոյնն էլ դուք պիտի կատարէք: Ձեր որդիքը քարոյական շատ արատներ ունեն, որոնց սրբելը մեր սրբազան պարտականութիւնն է: Միասին խորհրդակցենք, թէ որոնք են այդ արատները, որոնք են դրանց պատճառները, ինչ միջոցներ պիտի գործի առնեն և թէ ձեր մասնակցութիւնը կրթական գործում ինչով պիտի արտայայտւի:

Այնուհետ Յարումեանը պատմեց իր արած դիտողութիւնները աշակերտների վարք ու բարքի մասին, բացատրեց թէ ինչ հանգամանքների հետեւանքներ են դրանք, և յետոյ դարձաւ ծնողներին նոցա կարծիքը իմանալու:

— Այդ բոլորի պատճառը, վերջացրեց իր խօսքը Յարումեանը.

այն է, որ ինքներդ խոշոր թերութիւններ ունէք, և որդին ինչ որ հօրից տեսնէ, այն էլ կը սովորէ. ուղղեցէք ձեզ, ձեր թերութիւնները, և ձեր որդիքը նոյնպէս կ'ուղղուին: Այժմ ցանկալի է ձեր կարծիքը իմանալ. ի՞նչ կ'ասէք դուք այս հարցի մասին:

—Մեղաւորը մենք ենք, ասաց մէկը:

—Մենք ինչ որ գալիս է բերաններս՝ մեր երեխայոց մօտ խօսում ենք, ասաց միւսը:

—Ես մի տղամարդ գիտեմ, որը ծիծաղի համար որդուն ասում էր՝—մայրիկին հայհոյիր, քեզ չամիչ կը տամ:

—Մեղքս ինչ թագցնեմ, ասաց մզկսի Յարութիւնը. որդուս սիրելուց նրան հայոցել եմ, ասել եմ գնա քրոջիցդ էս ինչ բանը գողացիր բեր: Պատահել է, որ մայրը մի բան երեխայից թագցրել է, իսկ երեխային սիրելով կռնից քռնել եմ և ասել՝ գնանք, գոնենք՝ գողանանք... Ո՛վ գիտէ էլ ինչքան մեղքեր ենք գործում մեր որդոց առաջ. նրանք էլ տեսնում, լսում են և մեզանից օրինակ վերցնում: Խեղճ վարժապետը ինչ անի...

—Մի բան, որ սաստիկ աչքի է ընկնում մեր աշակերտների մէջ, խօսեց կրկին Յարութեանը, դա այն է, որ նրանք միմեանց օգնել չեն կամենում: Մէկը միւսին նիւթական մի շնչին ղոհողութիւն չի անիլ, բայց իրաւունք կը համարէ ուրիշից պահանջել, ստանալ, գողանալ կամ զօռով խլել: Օրինակներ շատ եմ տեսել: Սաստիկ եսասէրներ են. ապրում են միայն իրանց համար և իրանց օգտի համար պատրաստ են ընկերին ամեն տեսակ ֆրասներ հասցընել:

Վարժապետի վերջին խօսքերը ժողովականների մէջ կենդանի գրոյց առաջացրեց: Ամեն ոք շտապում էր իր դիտողութիւնները կամ սխալները իր հարեանին յայտնել: Այդ ամենի մէջ ոմանք մեղադրում էին իրանց, իսկ ոմանք արդարացնում ծնողներին:

—Աշակերտների նեղ եսասիրութիւնը, խօսեց այս անգամ Մարութեանը, ծնունդ է ծնողների եսասիրութեան. մեր գիւղացիներից իւրաքանչիւրը մոռածում է միայն իր անձնական շահերի մասին, և այն ամենը, որ չի ծառայում այդ նպատակին, նա օտնատակ է տալիս: Հարեան հարեանի մի թիթի օղնութիւն չի անիլ. օջախից կրակ տանելու, կժից ջուր վերցնելու համար հա-

րեանը հարեանի հետ ահագին ղալմաղալ է սարքում, իսկ երեխաները ամեն օր տեսնում են այդ. ի հարկէ կը փչանան: Մեր մարդիկը պատրաստ են իրանց շահի համար միմեանց միս ուտել, միմեանց խեղտել, ոտքի տակ տալ, առանց մտածելու, թէ այդ շահը ինչպիսի աղբիւրից է բղխում... Ասում են զոչաղ սղան նա է, ով ուրիշի ունեցածը կարողանում է մի կերպ դէպի իր տունը քաշել... Երեխան այս ամենից ինչ լաւ օրինակ պիտի վերցնի: Պարզ է, որ մեղաւորը ծնողներն են:

—Ի՛հ, Եղիշէ, ասաց ժողովականներից մինը վիրաւորաժ եղանակով, դու էլ էնպէս բաներ ես խօսում որ... Մեր մարդիկը էդքան էլ փչացած չեն:

Այդ մարդու բողոքին ձայնակցող չգտնեց: Երկար զրոյցներից յետոյ, երբ աշակերտների մի շարք թերութիւնները պարզեցին ծնողների կեանքով, Յարութեանը բացաւրեց, թէ ինչպէս պիտի վարւէ իւրաքանչիւր հայր իր որդու հետ, որպէս զի ուսուցչի գործը չկաղի և երեխայոց բարոյական կրթութիւնը չտուժէ: Այնուհետ ամենքը ցրւեցան ժողովից, օրհնելով վարժապետին:

—Ապրի, երեխայոց մասին մեզանից շատ է հոգս անում, ասում էր մէկը ճանապարհին:

—Լաւ է, ի հարկէ, բայց դէ մեզ հարցուր թէ կարողանալու ենք էնպէս վարւել, ինչպէս վարժապետն էր ասում. չենք կարողանալու. նրա խորհուրդները լսեցինք, իմացանք, բայց դէ շուտով ամեն ինչ մոռանալու ենք և էլի մեր իմացածը, մեր սովորութիւնը շարունակելու. ինչու, որովհետեւ սովորութիւն է, ձեռք քաշելը դժւար է:

—Մենակ սովորութիւնն է, ասաց ուրիշը. ով ժամանակ ունի, ում հոգսերն են թողնում, որ երեխաների մասին էնքան միտք անէ: Յաւն ու հոգսը մարդու միտքը իսկի խաղաղ են թողնում, որ երեխայի հետ գլուխ դնեն... Երեկոյեան զալիս ես տուն կամ յոգնած, կամ սիրտը նեղ մի որ և է հոգսի պատճառով: Երեխաներդ աչքովդ են ընկնում, ուրախանում ես մի քիչ. բայց որ դրանք էլ սկսում են իրանց չարութիւնները, լացը, նեղացած սիրտդ էլ չի համբերում. կամ հաչոյում ես, կամ ծեծում. բարկութիւնդ նրանց գլխին ես թափում... Հոգսերի, կարիքի տակ թաղւած

մարդու համար դժար բան է, որ ամեն մի ասածդ, խօսածդ և շարժածդ առաջուց մտածած լինի...

— Անհասկացող ենք, անհասկացող, փորձեց հերքել այդ կարծիքը մի ուրիշը, վատ ենք սովորել. մեր հայրերը մեզ էսպէս են կրթել, մենք էլ նրանց ճանապարհովն ենք գնում: Եթէ աշխատենք, ուշք դարձնենք, կարող ենք մեզ մի քիչ ուղղել. հայհոյտնք չին, — չեմ ասիլ. կռից թակ մահակից հեռու կը կենամ. իմ կամքը չի. չենք ուզում, ուշք չենք դարձնում — այ լինէ...

— Է՛հ, մեծ-մեծ ես խօսում, պատասխանեց նախորդ խօսողը, հեշտ է ասել սիրով կը կենամ, թակ մահակ չեմ անիլ, չեմ հայհոյիլ. իսկ կատարելը. գիտես էս դիւղի աղքատութիւնը լինէքան վաստացրել է մեր մարդկանց... Առաջ որ հողներս շատ էր, եկամուտներս առատ և ծախսներս քիչ, ապրուստը հեշտ էր. և էն ժամանակ մարդկանց սրտերը պարզ էին, մաքուր, հարեան հարեանի հետ սիրով էր, զիւղացին իր զիւղացուն ձեռք հասցնող. չար նախանձ, թշնամութիւն, իրար ոտքի տակ քանդել և ուրիշի ունեցածի վրայ ծուռ աչքով նայելը չկար: Իսկ հիմա, մի հարեան միւսի հետ մի կուժ ջրի, մի հատ ձի համար արիւն կ'անի: Ի՞նչու, որովհետեւ ժամանակը էսպէս է. ապրուստը դժարացել է, հանգամանքները չեն թողնում, որ քո ցանկութեան համեմատ շարժես...

Ամենքը հրապարակ հասան և դէս ու դէն ցրւելով՝ գնացին իրանց առօրեայ հոգսերի յետևից...

IV

Առաջին ուսումնական տարին վերջանալու մօտ էր: Երեսնաների կրթութեան յաջող ընթացքի վրայ ծնողական ժողովը ունեցաւ իր, թէև աննշան, ազդեցութիւնը: Բայց այդ ազդեցութիւնը տևողական չէր. ուսուցչի ասածները շուտով կորցրին իրանց զօրութիւնը, և կրթական գործը նորից ենթարկւեց փչացած ընտանիքի աւերիչ ազդեցութեանը:

«Երեսնաները վարակւած են բարոյական ամեն տեսակ ախտերով, բայց դորա արմատախիլ անելու համար միջոցները անզօր են» — ահա այն դառն ճշմարտութիւնը, որ բորբոքելով Յարումեանի միտքը, հոգեկան տագնապ էր յառաջացրել նրա մէջ: Սակայն այդ

անմխիթար և անելանելի դրութիւնը երիտասարդ ուսուցչին չէր վհատեցնում. նա գիտէր, որ միանգամից անկարելի է դարերով ամատացած սովորութիւնները, հայեացքները տեղհան անել. նա հասկանում էր, որ դրա համար հարկաւոր է ժամանակ և այն էլ երկար ժամանակ... Յարումեանը մի անգամ էր միայն ծնողական ժողով գումարել, բայց միթէ այդ բաւական է մեր ժամանակներում մի որ և է ճշմարիտ խօսք մարդկանց ուղեղների և սրտերի մէջ հալելու համար. հարկաւոր է անդադար կրկնել, մինչև որ այդ խօսքը իր համար մի օթեան կը գտնէ մարդկանց մէջ: Իսկ տգիտութեան մէջ խարխափող գիւղացու համար դա առաւել ևս հարկաւոր է: Յարումեանը պատրաստ էր ամեն սիրով վարել գիւղացիներին դաստիարակելու գործը, նա յօժար էր մոռնել ամեն մի ընտանիք, բացատրել, սովորեցնել կարևոր գիտելիքներ և պատրաստ էր յաճախ ծնողական ժողովներ կազմել, որպէս զի այդպիսով սերտ կապ հաստատէ դպրոցի և ընտանիքի մէջ. բայց այդ ամենի հետ միասին մի անախորժ կասկած մղմուղի նման ուտում էր նրա հոգին, աւերելով ամեն ինչ, որ նկարում էր լաւատեսութեամբ տոգորւած նրա երեւակայութիւնը: Արդեօք այդ աշխատանքը նրան կը տանէր դէպի նպատակ, թէ ամեն ինչ կապարէ գնդակի նման քարի զիպչելով պիտի յետ մղւի և թաղւի հողի մէջ:

—Երեխաները սովորում են գրել կարդալ, ասաց մի օր Յարումեանը իր խորհրդակից Մարութեանին,—նրանց մտքի պաշարը աւելանում է, բայց զգացմունքները մնում են նոյն ապականւած դրութեան մէջ: Խնչու. որովհետեւ նրանք ամբողջապէս կախւած են իրանց ընտանիքից և այն բոլոր պայմաններից, որոնցով շրջապատւած են: Դրա դէմ կուեւլու համար ես մի միջոց էի տեսնում. ընտանիքի մոտակայ և բարոյական մակերևոյթը բարձրացնել. բայց այժմ տեսնում եմ, որ լոկ խօսքով անկարելի է այդ իրագործել. ընտանիքի ներկայ դրութիւնն էլ ծնունդ է մի շարք բարի հանգամանքների. սոցա պիտի որոնել...

—Բաւական է, որ ծնողական ժողովները օգտակար են, պատասխանեց Մարութեանը. ի՞նչ արած, որ նոցա բերած պտուղները դեռ տասնեակ տարիներից յետոյ պիտի հասնեն: Դրանից աւելի ինչ կարելի է անել: Դու սկսածդ շարունակիր. ամեն ինչ կամաց-կամաց գլուխ կը գայ:

Ես այդպէս չեմ կարողանում նայել գործի վրայ, ասաց Յարուսեանը. ես գիտեմ, որ ոչ մի միջոց միանգամից ցանկալի դրութիւն չի ստեղծում հասարակական կեանքի համար, բայց հէնց այդ պատճառով էլ անհրաժեշտ է ընտրել արմատական միջոց, ամենաուղիղը, որպէս զի առաջադիմութեան գործը ամենակարճ ճանապարհով ընթանայ, միջոց, որը նպատակի իրագործման ամենաառաջին գրաւականը լինի:

— Ի՞նչ ասեմ, պատասխանեց Մարութեանը ուսերը շարժելով. եթէ կայ գոյր, ես ամենայն ուրախութեամբ պատրաստ եմ աջակցելու գործիդ. իսկ եթէ չկայ, շարունակիր սկսածդ:

— Այսպէս շարունակել անկարող եմ, Մարութեան. քեզ խոմ չայտնի է, թէ ինչ հայեացքներ ունեւ ես դպրոցի վերաբերեալ. կամ պիտի ոչինչ չանել և կամ պիտի գործին նւիրել այնպէս, ինչպէս թելադրում են քո համոզմունքները, քո սկզբունքներն ու խիղճը: Ուսումնարանը աչքի առաջ դնել և նրանով հրձուել, նիւթական քաւականաչափ գուհար նրա վրայ կենտրոնացնել և այդ ամենը միայն նրա համար, որ երէխաները գրել կարդալ սովորեն, հաւատացնում եմ դա ինքնախաբէութիւն է: Ուսումնարանի հետ ուրիշ շատ գործեր պիտի կապել...

Մտածենք, եղբայր, ի՞նչ ասեմ, պատասխանեց Մարութեանը մտախոհ դէմքով. արդար ես խօսում, գտնենք ուղիղ, էական միջոցներ...

Եւ նրանք մտածում էին այդ մասին: Իսկ առ այժմ Յարուսեանը մի ծրագիր ունէր, որ կարօտ էր շուտափոյթ իրագործման: Նա մտադիր էր դպրոցը երկսեռ դարձնել և առաջիկայ տարւանից աղջիկներ ևս ընդունել ուսումնարանում:

— Փորձենք, ասաց Մարութեանը, գիտեմ որ շատ հակառակորդներ կը գտնուեն:

Եւ նրանք այդ հարցը արծարծում էին իրանց ազգականների շրջաններում, մինչև ժողովը կը կայանար:

Ահա հասաւ Սեպտեմբերը: Աշակերտների ընդունելութիւնների ժամանակը մօտեցել էր: Յարուսեանը այդ միջոցներում դարձեալ ծնողական ժողով գումարեց ծնողների պարտականութիւնների մասին նորից զրուցելու և խորհրդակցելու օրիորդաց դպրոցի բացման

մասին: Այս լուրի դէմ պառաւները վաղօրօք արդէն ահագին աղմուկ էին բարձրացրել:

— Էդ էր պակաս, ասում էր նրանցից իւրաքանչիւրը, դա էլ որ մտցնէք էս գիւղը, երկնքից ձեր գլխին կարմիր խնձորներ կը թափւեն... Յետոյ էլ զարմանում են, թէ էսքան ցաւ ու պատիժ որսեղից է...

Տղամարդկանց մեծամասնութիւնը նոյնպէս շաղախւած էր հնամաշ հասկացողութիւնների խմորով. բայց նրանց մէջ կային և այնպիսիները, որոնք դէմ էին բոլորովին այլ պատճառներով:

Այս տիղամ ևս ժողովին շատ մարդ էր եկել: Ուսուցիչը կըրթական մի քանի զրոյցներ անելուց յետոյ անցաւ օրիորդների ուսման հարցին և վերջացրեց իր ճառը հետեւեալով.

— Բոլոր լուսաւոր երկիրներում կրնն էլ մինչև մի որոշ սահման տղամարդու հաւասար ուսում է առնում: Դա անհրաժեշտ է, որովհետև մայրը կրթւած, հասկացող և ուսումնաւոր կին պիտի լինի, որ կարողանայ պիտանի զաւակներ ընծայել: Միայն խաւար երկիրներում կնոջը զրկում են ուսում առնելու իրաւունքից: Ի՞նչ փաստ, եթէ ձեր աղջիկներն էլ գրել-կարդալ սովորեն, ես միայն օգուտ եմ տեսնում: Մի խելօք մարդ ասել է. տւէք մեզ օրինակելի մայրեր— և մենք կը տանք օրինակելի զաւակներ: Ձեր աղջիկներին ուսում տալով դուք նրան միջոց կը տաք ձգտելու իրանց իսկական կոչմանը:

— Ես կարծում եմ, որ վարժապետի առաջարկութիւնը մի օգտակար, խելացի և ժամանակին յարմար բան է, ասաց Մարութեանը. բնդունենք, որ ես տղայ չունեմ, այլ միայն աղջիկ. ինչու իմ աղջիկը կարդալ չիմանայ, որ ուրիշների տղայոց պէս կարողանայ ինձ համար գիրք կարդալ, գիր գրի.— Կամ հէնց այս օրինակը վերցնենք. ես պսակւած կամ նշանւած տղայ եմ. օտարութիւն եմ գնացել և ուզում եմ նշանածիս նամակ գրել. ինչպէս անեմ, եթէ նա գրել կարդալը չգիտէ. օտարը պիտի նշանածիս սըրտինը ինձ յաղորդի և իմ սրտինը նրա մօտ կարդայ: Ի՞նչու...

— Օհօ, Օհօ, էդ ինչ թազա բաներ ես խօսում, Նդիշէ, լսեց այս ու այն կողմից: Ամենքը իրանց երեսները զարմանքով Մարութեանի կողմը դարձրին:

—Վարժապետ, դու զուր ես էդ բանի մասին խօսք բացանում, ասաց ժողովականներից մէկը, որը կամեցաւ հեռանալ ժողովից:

Հարցի ամենաթունդ հակառակորդն էր երևում:

—Մի գնաք մի գնաք, խնդրեմ, ասաց Յարութեանը, նստեցէք, որ ամենքին լսենք:

Հեռանալու պատրաստուողը նորից նստեց իր տեղը և աւելացրեց.

—Ես իմ աղջկան ուսումնարան չեմ ուղարկիլ:

—Ով ասելիք ունի, թող յայտնի, դիմեց ուսուցիչը ժողովականներին:

—Վարժապետ, ասաց տիրացու Մօսին, ես իմ կարճ խելքով տեսնում եմ, որ աղջկայ ուսում տալը աւելորդ է և փնասակար: Երեխաները կը փչանան, կը դառնան համարձակ, երես առած. էլ նրանցում ամօթ, պատկառանք չի մնալ, մեծերի պատիւը չեն ճանաչիլ, տղամարդկանց գլուխը կը բարձրանան... Ձէ, մինչև հիմա որ առանց դրան եօլա ենք գնացել, հիմա էլ եօլա կը գնանք:

—Ուղիղ է, ուղիղ, լսեցին հաւանութեան ձայներ:

—Դու ինքդ ասում ես, շարունակեց տիրացուն, որ մեր տղայքը փչացել են. հիմա աղջկերանց բերում ես նրանց հետ նըստացնես դաս տալու... Ձէ, չէ, ամօթ է. խաբատակչութիւններ դուրս կը գան... Պիտի մոքով կոյր լինենք, որ էլ պիտի մի գործ բռնենք:

—Աղջկերանց ուսումնարանը առանձին կ'անենք, պատասխանեց Մարութեանը տիրացուի խօսքերից փոքր ինչ զայրացած:

—Ձէ, եղբայր, գոչում էին շատերը, աղջկերքը համարձակ կը դառնան և ոչ մեծ կը ճանաչեն, ոչ փոքր...

—Մենակ դա՞ է, մէջ մտաւ գիւղի աղքատներից մէկը. պա մենք իսկի կարող ենք համ տղայոց ուսում տանք, համ աղջկերանց, ծախսներս երկուտակ է զառնում: Եւ աղջկայ ծախսը ամեն կերպ աւելի կը նստի, քան տղայինը. տղային կարող ես ոտաբորիկ կա՛ր տրխով, գլուխբաց, շորերը պատուած ուղարկել ուսումնարան, իսկ աղջկան չես կարող, որովհետեւ աղջիկ խիզան է...

Աղքատի ասածը ժողովականների մէջ մի խուլ աղմուկ առաջացրեց, որը ամբողջապէս հաւանութեան նշան էր:

—Տարեկան վեց մանէթ ուսումնավարձ եմ տալիս տղիս հա-

մար, շարունակեց յոյն աղքատը, հլա ուրիշ ծախքերը դէն դրած. եթէ եկող տարի աղջկերանցս էլ ուղարկեմ, էն ժամանակ տասնի ութ պիտի տամ: Ես դա չեմ կարող. որ աղքատի ոչ ժը կը պատի: Զենք կարող. որ ուղենք էլ, մեր զօրից վեր է:

Յարումեանը իր նոր ճառով կրկին փորձեց համոզել գիւղացիներին, ըստ իր խօսքի: Ամենքը զանազան պատճառներով հակառակ էին աղջկերանց ուսման:

Գտնուեց մէկը, որ ասաց.

— Վարժապետ, ասածդ շատ լաւ է, շնորհակալ եմ, բայց չենք կարող մեր աղջիկ խիղաններին էլ ուսում տալ. չենք կարող, որովհետեւ ապրուստներս դժւարացել է: Առանց էն էլ աղջիկ խիղան պահելը դժւար է, որ ուսում էլ տանք, էդ ուր կ'երթայ:

Յարումեանը չգիտէր ինչ պատասխանել: Գիւղացոց պահպանողական կարծիքի և տգիտութեան դէմ նա կարող էր դեռ կռուել և ջարդել դոցա շղթաները. բայց երբ մէջ տեղ էին բերում բոլորովին այլ պատճառներ, երբ նրանք իրանց ասածները հիմնում էին և անտեսական պայմանների վրայ, դրա առաջ մնում էր առժամանակ խոնարհելը:

Յարումեանը ժողովի վերջում անձարացած կրկին անգամ կանգ առաւ ողջոց վրայ, յիշեցրեց ծնողներին իրանց պարտականութիւնները և առաջարկեց մի քանի շաբթից յետոյ ծնողական ժողով գումարել:

Ոչ ոք դրա դէմ ոչինչ չասաց: Միայն գիւղացիներից մէկը, որ մօտ էր կանգնած Յարումեանին և մինչև այդ դեռ մի խօսք էլ չէր արտասանել, կամացուկ, ժպիտը երեսին ասաց.

— Վարժապետ, դրա համար էլի պիտի ժողովւենք: Կէր օրհնած, ինչ հարկաւոր է. ինչու զուր նեղութիւն ես քաշում: Աշակերտներին լաւ կարգացրու՝ պրծնի գնաց... Ի՛նչ ինչ որ ասել ես, գիտենք էլի: Որ միւսնոյն բանը շատ լսե՛ք, ինչ դուրս կը գայ. մենակ լսելով բան կը լինի: Պիտի լսածներս կատարենք. դէ որ չենք կատարելու կամ չենք կարողանալու կատարել, էլ ինչ օգուտ էդ բանը շուտ-շուտ կրկնելու: Մենք աղքատութիւնից է, թէ ինչից է, վատացել ենք, սէրով չենք, միմեանց ֆիստ տալու համար ենք ապրում: Դրա պատճառով մեր տղերքն էլ վատ են: Հիմա դու որ մե-

զանից մէկին շարունակ ասես սուտ մի խօսար, մի գողանար, մի հայհոյիր, բան է դառնալի՜ն։ Ո՛չ. առաջինը ես. չեմ կարող սովորութիւնս թողնել։ Մեր գիւղում մի ժամանակ գողութիւնը շատ տարածւել էր։ Հիմա էլ պակաս չի. այգիներում էլ բան չեն թողնում։ Հանդուցեալ մէլիք Գրիգորը շատ թունդ մարդ էր. հէնց որ մէլիք դառաւ, բռնած գողին ինչքան ասես թակում էր, թակում ջանը կապտացնում էր։ Բայց ի՞նչ օգուտ. դրանով գողութիւնը չվերացաւ։ Հիմա էլ օր չի լինում, որ չլսենք, թէ էս ինչ մարդու այգուց բան են գողացել։ Դու ծնողներին չես կարող դադանակով խրատ տալ. դադանակն էլ, տեսար, որ չի օգնում. մենակ խօսքը ինչ զօրութիւն պիտի ունենայ։ Մենք արմատից ենք հիւանդ, վարժապետ. աղքատ ենք, ապրուստներս դժարացել է. ճար ունես սրահամար՝ արա, թէ չէ գլուխդ փաթաթիր գնա ուսումնարան, երեսաններին լաւ կարդացուր, խրատիր, թակիր, առանց հացի թող, ինչ որ խելքդ կորում է՝ արա։ Մեզանից ի՞նչ ես պահանջում, մենք ինչացու ենք...

Եւ հանդարտութեամբ, հոգսախառն ժպիտը երեսին շրջեց գլուխը և հեռացաւ։

Յարումեանը տուն վերադարձաւ բոլորովին յուսահատ։ Գիւղացոյ սառն, անտարբեր վերաբերմունքը դէպի նրա առաջարկութիւնները և մանաւանդ վերջին խօսողի ասածները սրի նման խոցել էին նրա զգացուն սիրտը։ Տխուր տպաւորութիւնները և գործի անյաջող ելքը ծանր քարի նման ճնշում էին խելճ երիտասարդի կուրծքը։ Յուսահատ մտքերը ամբողջովին պաշարեցին նրան. պեսսիմիստական մաշող տրամադրութիւնը սե-սե ամպերի պէս մթնացրեց նրա հոգին։ Նրա մտքով անցաւ թօթափել ամեն ինչի վրայ իր ձեռքը, թողնել գիւղը, սիրած գործը և հեռանալ, բայց քիչ ժամանակից չեռոյց նա սթափուեց յուսահատ մտքերի շշմեցուցիչ ազդեցութիւնից և տեսաւ, որ իր նման կը վարւէր միայն թոյլ, փոքրոգի մարդը։ Հոգեկան փոթորիկը կամաց-կամաց հանդարտեց, անցաւ. յուսոյ և հաւատի պայծառ լոյսը նորից թափանցեց նրա հոգու մէջ և Յարումեանը իր մէջ նոր ոյժ զգաց՝ տիրող հանգամանքների դէմ կռւելու համար նոր միջոցներ որոնելու։

—Միտքը մարդկային առաջադիմութեան գլխաւոր ֆակտոր-

ներից մինն է, ասաց նա մի օր Մարութեանին, մի բան, որ եացածը էի դասում բարոյականութիւնից իբր առաջադիմութեան ֆակտոր: Բարոյականութիւնը իր արշարժութեամբ անկարող է մարդկային միտքը զարգացնել, նա անզօր է տնտեսական կեանքի առաջադիմութեանն էլ զարկ տալ: Այս մէկ, միւս կողմից ես տեսնում եմ, որ մեր գիւղացիք ընկած են բարոյապէս և որ այդ անկումը հետեանք է մեծ մասամբ տնտեսական դրութեան և իշխող տգիտութեան: Բարոյական անկումը ես ցանկանում էի վերականգնել, և զրահամար իբր միջոց գործ էի ածում բարոյագիտական խորհուրդներ, խրատներ և այլն: Ընկած վարքերը ես ձգտում էի ազնւացնել բարոյագիտութեան միջոցով. բայց ես այստեղ էլ սխալւած եմ եղել: Այդ միջոցը յայտնի հանգամանքներում ապացուցանում է իր անզօրութիւնը: Թրինակ բեզ՝ մեր գիւղը և իմ գործունէութիւնը: Այդ փորձը ինձ բերում է այն եզրակացութեան, որ մեր առաջին ջանքը բարոյական ազնիւ բարքեր հաստատելու համար պիտի ուղղւած լինի մտքի բարձրացնելու և գիւղի տնտեսական դրութիւնը զարգացնելու հոգսին: Այնուհետեւ միայն բարոյական քարոզները կ'ունենան ցանկալի ազդեցութիւն:

(Շարունակելի)

ԽՐԻՄԻ ԱԼՔՈՄԻՑ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՏՈՒՐԵԱՆԻ

I

ԱԼԵԿՍԱՆԴՐ

Ասան ինձ, այ ծով, ինչ ես վրդոված
Սյդպէս աղմկում դու օր և գիշեր.
Եւ խոր յատակից՝ մռայլ, պղտորած
Եզերք թաւալում գոռ-գոռ ալիքներ:

Արդեօք բիւրաւոր, անմեղ զոհերիդ
Դառն յիշատակն է քո կուրծքը յուզում,
Թէ այդ աղմուկը սև ալիքներիդ
Կեանքից նորանոր զոհեր է ուզում...

Նստած եմ ավիդ ախոյր ու տրտնւմ
Եւ շատ հարցեր են ծնւում իմ սրտում.
Քայց դու յուզւում ես, յուզւում, կատաղում
Եւ իմ հարցերն էլ քո կրծքում թաղւում...

II

Գ Ի Չ Ե Ր

Պարզ երկնքում լի աստղերով
Մեղմ սահում էր վառ լուսին,

Նայում ներքև և վառ սիրով
Ժըպտում ծովի երեսին:

Ծովն էլ լռիկ վեր էր նայում,
Նայում սիրուն լուսնեակին,
Եւ ծփալով՝ մեղմ փայփայում
Լուսնի ժպիտն իւր կըրծքին...

Գիշերային աչդ լուռ ժամին,
Հսկայ մի ժայռ ուղքիս տակ,
Կանգնած էի ծովի ափին
Ես մտախոհ, մեն-մենակ:

Եւ նայելով մերթ դէսի վեր,
Եւ մերթ ծովի երեսին,
Օրհնում էի ես կեանք ու սէր,
Գիշեր, երկինք, ծով, լուսին...

III

ՓՈԹՈՐԿԻՅ ՅԵՏՈՅ

Սրտամաշ ժամերն անցան, վերջապէս,
Ա՛խ, ինչպէս պայծառ շողում է արև.
Մռայլ ամպերը, յաղթած զօրքի պէս,
Փախել, ցրել են սարերի ետև:
Եւ շուրջս դարձեալ ազատ, համարձակ,
Հարաւի փարթամ բնութեան գրկում
Եռում է կեանքը: Ահա ներդաշնակ
Հիւսում է տաղեր ծառերի խորքում
Նրգիչ-բլբուլը. նորան ձայնակից
Անթիւ թռչուններ, ասես, մրցելով,
Այս ու այն ծառից, թփերի տակից
Օղն են թնդացնում գողարիկ երգերով:
Եւ վարդի թուփեր, ծառ, ծաղիկ ու խոտ,

Քոթորկից յետոյ, կեանք առած նորից,
 Փայլում են ուրախ, սփռում անուշ հոտ,
 Անուշ զովութիւն փչում է ծովից...
 Եւ այդ ընդհանուր սթափմունքի մէջ
 Կարծես, լսում եմ մի ձայն յուսատու.
 «Հէգ ազգի երգիչ, վիշտը չէ անվերջ,
 Արեւ, լոյս օրեր կը տեսնես և՛ դու...»

IV

ԵՐԿԱՐ ԺԱՍԵՐ ՆԱՅՈՒՄ ԵՄ ՔԵՁ...

Երկար ժամեր նայում եմ քեզ,
 Ո՛վ չարացած, պղտոր ծով,
 Ինչպէս յուզումս, փըրփրում ես,
 Դու լերկ ժայռեր լիզելով:

Ե՛ւ գոռում ես, և՛ խուլ հեծում,
 Ե՛ւ զայրանում, և՛ լալիս.
 Բայց լուռ ժայռեր քեզ չեն լսում,
 Քեզ արձագանք չեն տալիս:

Օ՛, նոքա մութ, խուլ, անբարբառ
 Քեզ նայում են սառն, անփոյթ.
 Նոցա խորթ է, նոցա օտար
 Վիշտ, տառապանք ու զայրոյթ...

Գուրզուֆ, 5—12 օգոստոսի 1896 թ.

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ Է Պ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԻ ՀԻԱՍԹԱՓՈԻՄՆԵՐ

(Շարունակութիւն ¹)

XXII

Կրկին յուսահատութեան և դառն աղքատութեան օրեր եկան Ոսկերչեանի համար: Ապրուստի միջոց չկար: Պարտք պարտքի վրայ էր բարդւում: Գրքերի վաճառումը, որ սկզբումը յաջող էր գնում, կանգ առաւ: Մեղաւոր էր մասամբ ինքը: Չէր աշխատում, որ գըրքերը տարածեն: Գրավաճառանոց մտնում էր շատ սակաւ, որովհետեւ հպարտութիւնը թոյլ չէր տալիս «կոպէկանոց» հաշիւների համար օրը մի անգամ խանութ մտնել և գրավաճառներին ձանձրացնել: Բայց և այնպէս, կարիքը ստիպում էր նորան երբեմն գնալ և վերահասու լինել իւր գրքերի վաճառման գործին:

Անբաւարար սնունդը, ամեն տեսակ զրկանքները և, որ զլխաւորն է, բարոյական անգոհութիւնը կամաց կամաց քայքայում էին նորա կազմաճքը և առողջութիւնը:

¹) Տես «Մուրճ» 1897 թ. № 1—12 և 1898 թ. № 2—3, 4, 5:

Աղքատութեան և անյաջողութիւնների դրոշմը պարզ երևում էր նորա բոլոր էութեան վրայ: Մարմնի և հոգեկան ոյժերի բնական աճումը ոչ միայն կանգ էր առել, այլ կարծես նոյն իսկ ետ էր գնում:

Նորա իւրաքանչիւր խօսքը, որ արասանում էր զանգատ էր և տրտունջ: Նա տեղի էր ամենքից, մանաւանդ իրանից: Նա ասում էր իրան իւր թոյլ և բեկուն բնաւորութեան համար: Այդ զգացմունքը նորա մէջ աւելի մեծանում էր, երբ նա իրան համեմատում էր Սեռմեանի, Ազատեանի նման անձանց հետ: «Այդ մարդիկ, մտածում էր նա, ինչո՞ւ են ինձանից առաւել? Ոչ աւելի մեծ ուսում ունին, ոչ աւելի ընդունակ են, ոչ աւելի ազնիւ: Ինչու տւրեմն այդպիսիները մնում են կանգուն, իսկ ես, բարձրանալու փոխարէն, օրըստօրէ ընկնում եմ?...»

Այսպէս նա մտածում էր, բայց երբէք չէր կարողանում հասկանալ, թէ ինչու՞ն է կայանում իւր կեանքի ամբողջ տրագիզիան:

Աղքատութիւնը մի կողմ: Ոսկերչեանը զուրկ էր և բարոյական մխիթարութիւնից: Սկզբումը, քանի որ նա դեռ նոր էր ու դնում զրական ասպարիզի վրայ, նորա մասին խօսում էին ընթերցող հասարակութեան մէջ, նորանով հետաքրքրւում էին: Այժմ ամենքը սառել էին: Ոչոք նորա վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Մի խօսքով, Ոսկերչեանը հասել էր այն շրջանին, երբ ամեն մի գրագէտ, առաջի քայլն անելուց յետոյ, մի պահ կանգ է առնում իւր զարգացման ճանապարհի վրայ: Դա հասարակութեան ճնշող անտարբերութեան և սեփական զգացումների տեղատուութեան ժամանակն է: Այս միջոցին է կատարւում տաղանդի փորձութիւնը. լուութեան մէջ զօրեղը նոր ոյժ է հաւաքում ապագայ ստեղծագործութեան համար, իսկ թոյլը մոռացւում և ընկնում է վերջնականապէս:

Երբէք Ոսկերչեանը այնքան մենակութիւն չէր քաշել, որքան այս ձմեռ: Գարեգինը զաւառումն էր, նախկին ընկերներից շատերը համալսարաններում ուսանում էին: Աշխէնին գրեթէ երբէք չէր տեսնում: Զառիկեանների տունը այլ ևս հետաքրքրութիւն չէր ներկայացնում: Իսկ Ֆալչեանի թոքախորդ դարնան սկզբներում այնչափ աստիկացաւ, որ ազգականներից մէկը համարեա մահւան մահճի մէջ

նորան տարաւ հայրենիք: Ամառը մօտենում էր, և Ոսկերչեանը իրան միտթարում էր այն մտքով, թէ ահա շուտով կը գայ Գարեգինը, նորան կը պատմի իւր կրած նեղութիւնները և սիրտը կը թեթեանայ:

Բայց մինչ այդ, նորան վիճակած էր դեռ ևս շատ դժւար օրեր տեսնել:

Մի անգամ իրիկնադէմին նստած էր նա գրավաճառանոցի մօտ նստարանի վրայ: Երեսին նայողը, եթէ նոյն իսկ անձանօթ լինէր, անշուշտ պիտի մտածէր, որ մի ինչ որ ծանր հոգս կամ ծածուկ վիշտ կորացրել է այդ երիտասարդի գլուխը:

Այդ միջոցին գրախանութից դուրս եկաւ մի երիտասարդ և, նկատելով Ոսկերչեանին, քայլերը ուղղեց դէպի նորա կողմը: Դա Մոսկւայի համալսարանի ուսանող էր, երկրորդ կուրսի բնագէտ, Ոսկերչեանի նախկին դասընկերներից: Ինքը միջահասակ, վտիտ և թխադէմ, իւր կորուկ դիմագծերով և վառվռուն աչքերի արտայայտութեամբ իսկոյն և եթ ահնջայանի էր կացուցանում իւր տաք և հրապուրուող բնաւորութիւնը: Հագնւած էր մաքուր Գլխարկը միայն ուսանողական էր:

Ընկերները միմեանց սիրով բարեկեցին, ուսանողը նստեց, և սկսեցին զրոյց անել: Վերջինը պատմում էր ուսանողական կեանքից, աշխատելով պարզ նկարագրել նորա բոլոր գրաւիչ կողմերը, պատկառանքով չիշում էր մի քանի պրոֆեսորների անունները և նոցա գասախօսութիւնները զովաբանում, խօսում էր իւր ունեցած հասարակական իդէալներից և ապագայ գործունէութեան ծրագիրներն էր բաց անում խօսակցի առջև: Ինչ վարդագոյն յոյսեր և որքան ջերմ հաւատ դէպի գիտութիւնը և հրապարակական փրկարար խօսքը!... Բայց միևնոյն ժամանակ ինչ ողբալի հակապատկեր այս երիտասարդ էնթուզիաստի և այն հիասթափւած երիտասարդի մէջ!

Խօսակցութեան առաջին րոպէներում Ոսկերչեանը ուրախ էր կամ գոնէ այդպէս էր ձեւանում: Բայց քիչ յետոյ ժպիտը դէմքի վրայից հեռացաւ, և յօնքերը իրար մօտեցան: Նորա բարկութիւնը գալիս էր, որ ընկերը իրանով չէ հետաքրքրւում: Միթէ նա այնքան ընկել է, որ նորա վիճակը ոչոքի ուշադրութեան աչլ ևս չպիտի արժանանայ?

Պատե՛հ ըռպէից օգտուելով, Ոսկերչեանը հարցրեց.

—Այս ինչ գիրք ես գնել?

Բաւարարութիւն տալով այս հարցին, ուսանողը բաց արաւ թղթեայ փաթթոցը և գիրքը ցոյց տւեց նորան:

Ոսկերչեանը առաւ, թերթեց, նայեց սկիզբը և վերջը և առանց մի խօսք ասելու վերադարձրեց ընկերոջը: Քիչ յետոյ միայն ասաց.

—Ես կարծեցի, իմ հեղինակութիւնն ես գնել: Դիրքը նոյնն է...

—Ինչ հեղինակութիւն? Զարմացած հարցրեց ուսանողը:

—Իմ «Բանաստեղծութիւնները»: Ձէ որ ես տպել եմ?...

—Միթէ? Ես չգիտէի,—ասաց նա, միանգամայն անտարբեր:

—Այնքան քննադատեցին լրագիրները, և դու չգիտես? Դու ուրեմն չէիր հետևում մեր լրագրութեան?

—Ինչպէս չէ: Միշտ կարդում էի:

—Զարմանալի է, որ աչքիցդ վրիպել են այդ յօդածները:

—Այո, այո, հիմա, կարծեմ, յիշեցի: Ազատեանն էր քննադատել, այնպէս չէ?

—«Ճառագագթի» մէջ Ազատեանն էր գրել, իսկ միւս թերթերում...

—Հա՛, հիմա յիշում եմ... Բայց ես չէի կարդում: Ինձ առհասարակ պօէզան ամենևին չէ հետաքրքրում:

—Այո?

—Այո:

Երկուսն էլ լռեցին: Ոսկերչեանը, կարծես վիրաւորւած, գլուխը կախեց: Ուսանողը հարկ տեսաւ յայտնելու իւր հայեացքը, որ ունէր բանաստեղծութեան մասին:

—Ես սկզբունքով դեմ եմ բանաստեղծութեան,—այսպէս սկսեց նա: Իրականութեան այդ ճիւղը համարում եմ միանգամայն անօգուտ և աւելորդ, և, իմ կարծիքով, նա պիտի վնասուի գրականութիւնից: Եւ նա արդէն իւր վերջին հոգեւարքի մէջ է: Միթէ ինքդ չես տեսնում, թէ հիմա Եւրոպայում որքան ընկել է պօէզիան? Նա չունի այնտեղ գոնէ մի հատ տաղանդաւոր ներկայացուցիչ: Առաջ էր, որ պօէտներին աստուածացնում էին, իսկ այժմ՝ նոքա համահաւասար են արհամարուած գրչակներին...

—Պօէզիան վերջ չունի, ինչպէս մարդկային զգացմունքը չունի վերջ! արտասանեց Ոսկերչեանը այնպիսի եղանակով, կարծես նորա պատիւը վիրաւորեցին: Դու սխալեալ ես, սիրելիս: Եւ գիտութեան երկրպագուն ու գեղարւեստի սիրահարը թունդ վէճի բռնեցին: Ուսանողը աշխատում էր ստորացնել գեղարւեստը, խլում էր նորանից որ և է կուլտուրական դեր և մարդկային ազգի փրկութիւնը ակնկալում էր գիտութիւնից: Բայց ոչ Պիսարեի գեղարւեստական հայեացքները, ոչ Լոմբրոզոյի շէնճար և Խելագարութիւնը և ոչ ուրիշ մի առարկութիւն չկարողան խախտել Ոսկերչեանի համոզմունքի յենակէտը:

—Պօէզիան,—խօսեց կրկին ուսանողը, որը, ըստ երևութիւն, ցանկանում էր անպատճառ համոզել խիստ տրամաբանական հիմունքներով, պօէզիան սերտ կապած է ոգևորութեան հետ. ոգևորութիւնը խելագարութեան արտայայտութիւններից մէկն է. հետեւաբար բանաստեղծութիւնը, իբրեւ հիւանդ հոգու ծնունդ, չը պէտք է ունենայ իւր profession de foi-ն: Ես ժխտում եմ այն, ինչ որ չէ նպաստում մարդկային մտքի զարգացման, ինչ որ...

—Ասա, խնդրեմ. ինչ ես տեսլ այս փողպատիդ? հարցում արալանկարծ Ոսկերչեանը, ընդհատելով իւր ընկերոջը և բռնելով նորա շքեղ փողպատի ծայրից, որ զարդարում էր կուրծքը:

Ուսանողը զարմացաւ այս տարօրինակ վարմունքի վրայ, չը հասկացաւ նորա դառը հեզութիւնը, որ գրեթէ արհամարանքի էր հաւասար, ներքուստ վիրաւորած, բայց շինծու ժպիտով պատասխանեց.

—Ձեմ յիշում: Ենթադրեմք, մի մանէթ եմ տեսլ: Բայց ինչի համար ես հարցնում?

—Մի մանէթ!... գոչեց Ոսկերչեանը, վերկենալով տեղիցը, իւր վրդովմունքը ցուցնելու անկարող: Մի մանէթ, ասում ես? Իսկ իմ գիրքը—միայն դրա կէսը արժէ!... Մնաս բարով!

Այդ ասելով, նա արագ քայլերով հեռացաւ, թողնելով իւր խօսակցին շարած դրութեան մէջ: Այս բոլորը այն աստիճան օտարոտի էր, որ ուսանողը ակամայ մտածեց, մի գուցէ Ոսկերչեանի ուղեղը վնասւած է:

Բանը այն է, որ այս հիասթափւած երիտասարդի կասկածա-

մտութիւնը ծայրայեղ աստիճանի էր հասել և դեռ օրէցօր աճում էր: Ինչպէս հին հիւանդութիւնը, շարունակ կրկնելով, աւելի և աւելի վտանգաւոր է դառնում, այնպէս և մեր հոգեկան ախտը, քարրերաբար նորոգելով, աւելի և աւելի մռայլ կերպարանք է ստանում:

Եւ ահա ինչու իւր ընկերոջ անկեղծ խօսքերի մէջ նա տեսաւ ետին նպատակ: Նորան թւաց, որ ընկերը խնայում էր մի յիսուն կոպէկ տալ իւր գրքին, և այդ ամօթալի ժլատութիւնը քողարկելու համար էր, որ նա մի արշաւանք էր սկսել պոէզիայի դէմ և բանաստեղծութիւնը հիւանդ հոգու ծնունդ էր հաշակում:

Բայց հանելուկը աւելի կը պարզուի, եթէ ես այստեղ յայտնեմ, որ Ոսկերչեանը այդ ամբողջ օրը քաղցած էր և ընկերոջ տեսելու լուրէին ինքն իրան մտածեց, որ երկուցեան անպատճառ հացի և ծխախոտի փող կ'ունենայ:

XXIII

Ուսանողից բաժանելուց յետոյ, նա շտապեց դէպի իւր բնակարանը: Ղա մի սենեակ էր, որի համար վճարում էր չորս մանէթ: Կարելի է երեւակայել, թէ ինչպիսի տան մէջ և ինչպիսի սենեակ պիտի լինէր չորս մանէթանոց կացարանը:

Երբ կամենում էր ներս մտնել, նորա առաջը կտրեց տանտիկինը և հարցրեց այնպէս բարկացած, կարծես սպասում էր, որ բացասական պատասխան պիտի լսէր.

— Զ'ը, հիտդ փուղ բերիլ իս?

— Ա'խ, որտեղից է փող, որ պահանջում էք? խօսեց Ոսկերչեանը սրտնեղութեամբ և մտաւ սենեակը:

Պառաւ կինը աւելի ևս չարացաւ, սկսեց սպառնալ դատարանի անունով և պահանջում էր, որ նա վաղը և եթ թողնի իւր սենեակը:

Այն միջոցին, երբ տանտիկինը՝ դրան շեմքին կանգնած՝ շարունակ վրայ էր տալիս, Ոսկերչեանը նստած էր սեղանի մօտ, գլուխը ձեռքին կրթնած, և լսում էր պառաւին այնպիսի անտարբերութեամբ, կարծես ներկայ էր մի շատ սովորական տեսարանի:

Կնոջ պահանջը արդար էր, որովհետեւ, ինքը չքաւոր լինելով,

իւր կենողների ամսավճարներովն էր իւր ապրուստը հայթհայթում, երկու ամսւայ վարձը դեռ չէր ստացել Ոսկերչեանից և այնքան սպասել էր, որ համբերութիւնը հատել էր: Այդ է պատճառը, որ նորա կենողը լուռ էր մնում վիրաւորիչ նախատինքի առաջ և մոքումը ժլատ ասպետի որդու բացականչութիւնն էր կրկնում:

— О, бѣдность, бѣдность! Какъ унижаетъ сердце намъ она!

Տանտիկինը խօսեց, խօսեց ու քաշեց իւր սենեակը:

Կէս ժամի չափ Ոսկերչեանը մնաց միւսնոյն դիրքի մէջ՝ անշարժ, ինչպէս քարացած Նիորէ:

Վիշոք առժամանակ կտրում է մարդու ախորժակը: Բայց այդ երկար չէ տևում: Ստամոքսը, ինչպէս յայտնի է, շատ համբերել չը գիտէ: Եւ Ոսկերչեանը տեսաւ, որ քաղցը արդէն սկսում է նեղացնել: Հանեց պորտմոնէն, բոլոր արանքները նայեց, թափահարեց, բան չը դուրս եկաւ: Քանիեւորդ անգամն էր կատարում այս միւսնոյն գործողութիւնը այդ օր, այդ էլ միայն ինքը գիտէր և Աստած: Յետոյ նա բոլոր գրպանները խուզարկեց, շուռ տուց—այդ էլ անօգուտ. մի հատ սև կոպէլ չը կամեցաւ ձայն հանել և քաղցածի սիրտը շահել:

Ոսկերչեանը իւր մտքերի կապը կորցրել էր, ուղեղը ամենախառն ու շփոթ դրութեան մէջ էր: Եթէ կար լուրջ հոգածելու մի առարկայ, այդ բուսական պահանջն էր, որին հարկաւոր էր բաւականութիւն տալ: Նորա բոլոր էութեան վրայ կարծես գրած էր այդ երեկոյ. «Ես ուտել եմ ուզում»:

Թէ՛քը կարող էր, գուցէ, սակաւ փարատել քաղցածութիւնը. բայց շաքար չըկար:

Ո՛չ, այդ էլ աւելորդ է: Նա ուտել է կամենում և ուրիշ ոչինչ: Գոնէ մի չորացած հացի կտոր լինէր! Սեղանի արկղի մէջ կարող է մնացած լինել. հարկաւոր է տեսնել:

Ո՛չ. չըկայ:

Քիչ ցետոյ միտն եկաւ ծխախոտը, և, ինչպէս առաջ հացի համար էր դէս ու դէն ընկել, այնպէս էլ այժմ սենեկի անկիւններումն էր փնտրում պապիրոսի մնացորդներ:

Բայց իզո՛ւր:

«Ինչ անեմ ես? հարց էր տալիս նա ինքն իրան: «Այս դրու-
թիւնը անտանելի է: Ում գիմեմ? Ումնից պարտք վերցնեմ? Էլ ո՞վ
մնաց, որից պարտք առած չըլինեմ?... Ախ, ինչ անեմ ես? Յան-
կարծ կարծես մի յաջողակ միտք յղացաւ գլխումը, թւաց նորան,
որ ճանապարհորդական պայուսակի մէջ փող պիտի լինի. այնտեղ
նա երբեմն շահանոցներ էր ձգում սե օրերի համար: Բայց բոլորո-
վին պատարկ էր պայուսակը. և միջին եղած դրամը վաղուց մոխրած:

Երանի կարելի լինէր մի բան գրաւ դնել, բայց գրաւ դնելու
ուրիշ չուէր:

Ինչ լաւ էր պատահել ընկերը, այն ուսանողը: Բայց նորան
ձեռքից թողեց: «Ինչու նորանից չըվերցրի? նախատում էր նա
ինքն իրան. «Ինչ անտեղի հպարտութիւն էր իմ կողմից. նա ինձ
կարող էր օգնել, բայց ես—չօգտւեցի, չուզեցի օգտւել ընկերոջս
ծառայութիւնից: Այս մոռածմունքը թելադրում էր նորան անելա-
նելի դրութիւնը: Բայց չոյն րուպէին պատուի զգացմունքը և ինք-
նասիրութիւնը զարթնում էին նորա հոգու մէջ, և նա իրան այլ
ևս չէր մեղադրում, որ այնպիսի կոպտութիւն թոյլ տւեց իրան
նորա վերաբերմամբ: «Նա սովեստութիւն էր անում, որպէսզի իմ
զիրքը չըդնէր: Այդպիսի ընկեր ես չեմ ճանաչում: Նորա օգնու-
թիւնը ինձ հարկաւոր չէ: Աւելի լաւ է—քաղցած մեռնելը!...»

Երկար ժամանակ նա դադար չուէր: Սիրտը կարծես կամաց
կամաց հալւում էր, ինչպէս շաքարը թէյի մէջ: Կարծես անհամ-
բերութեամբ սպասում էր մի բանի, բայց ինքն էլ չըգիտէր ինչի:
Մենակութիւնը գնալով անտանելի էր դառնում: Նա կրում էր այն
զգացմունքը, ինչ կը կրէր բանտարկեալը, որին մոռացել են իւր
ժամանակին ազատել:

Նա դուրս եկաւ, չափովեց փողոցները և, մի ժամ աննպատակ
շրջելուց յետոյ, տեսաւ, որ կանգնած է Միքայէլեան կամուրջի վրայ:

Կանգ առաւ, կրթնեց երկաթապատին և սկսեց ներքև նայել:
Գետի ջուրը բաւական բարձր էր, ծածկել էր բոլոր կղզեակներն ու
ձանձաղուտները, և խփւելով կամուրջի վրիթխարի ջնարաններին,
աղմուկով հոսում էր:

Կը լինէր, երևի, կէս գիշեր: Կառքերի անց ու դարձը սակաւ
էր, ինչպէս և անցւորների երթևեկութիւնը:

Ոսկերչեանը երբեմն բարձրացնում էր գլուխը և աչքերը դարձնում դէպի երկինք: Այնքան մաքուր էր երկնականարը, ինչպէս նա լինում է միայն յորդառատ անձրևից յետոյ: Անթիւ անհամար աստղերից և ոչ մէկը չէր շողշողում գետի պղտոր մակերևոյթի վրայ: Ներքև կամուրջի տակ բոլորը խորհրդաւոր էր և սարսափելի. իսկ այն, ինչ որ հանդիսաւոր կերպով փուած էր վերև, որքան փառահեղ և գեղեցիկ էր:

Այն ինչ ոյժ էր, որ գիշերւայ կիսին մղեց նորան այնտեղ?

Ոսկերչեանը հազիւհազ, աղօտ կերպով այդ կարողանում էր հասկանալ: Արդեօք ինքնասպանութեան դիտաւորութիւն? Բայց նա տեսաւ, որ դորա համար ոչ միայն կամքն է պահասում, այլ նոյն իսկ ցանկութիւն էլ չունի մի այդպիսի քայլ անելու: Մեռնել? Եւ ինչի համար? Ո՞վ կարող է հաստատ ասել, թէ ինչ է սպասում նորան ասպագայում? Արդարև, կեանքը խորտակեց նորա ամենափայլուն յոյսերը, նորա իղձերից ոչ մէկը չիրագործւեց, ոչ մեծ արտիստ, ոչ մեծ գրող նա չլսիտի դառնայ, նորա սրտի ամենազգայուն տեղերը վիրաւորւած են, բայց այսու հանդերձ ինչը պիտի խանգարի նորան լինել ազնիւ մարդ և հասարակութեան անդամ? Միթէ մարդ իւր անձնական բախտաւորութիւնը փառասիրական ձգտումներից միայն պիտի ակնկալի? Ո՛չ, դորանից դուրս էլ կարող է լինել երջանկութիւն:

Յամենայն դէպս հարկաւոր է փորձել:

Այս մտքերը մի կողմից, միւս կողմից դրսի թարմ և կազդուրիչ օդը սթափեցուցիչ նշանակութիւն ունեցան Ոսկերչեանի համար: Նա ժպտաց, երբ մի անգամ էլ իւր շուրջը նայելով, տեսաւ, որ գիշերւայ կիսին կանգնած է մենակ Միքայէլեան կամուրջի վրայ, և հարցը ինքն ըստ ինքեան ծագեց նորա գլխումը.

—Այս ժամանակին ես ինչ եմ շինում այստեղ?

Երբ այնտեղից Ոսկերչեանը վերադարձաւ տուն, վճռեց, հետեւեալ օրւանից, իւր բոլոր ոյժերը լարել և հոգալ իւր ապրուստի մասին:

Ստում են, մարդը ինքը իւր բախտի տէրն է: Եթէ այդ ճշմարիտ է, ուրեմն Ոսկերչեանի թշուառութիւնը այնքան էլ մեծ չէ: Միայն հարկաւոր է ընտրել գործունէութեան մի նոր ասպարէզ:

XXIV

Ամառուայ սկզբին, մի կիւրակէ օր առաւօտեան տիկին Զառիկեանը և Աշխէնը՝ կառք նստած՝ շտապում էին դէպի կայարան, որպէս զի վաղօրօք հասնէին Թիֆլիս ժամանող գնացքին։

Երբ կայարանի դահլիճից դուրս եկան տախտակամածի վրայ, հեռւից արդէն լսում էր սուլոցը, և շուտով երևաց վագոնների շարքը։

Մայր և աղջիկ սրտատրոփ սպասում էին։ Քանի մօտենում էր գնացքը, այնքան աւելի մեծանում էր հասարակութեան իրարանցումը տախտակամածի վրայ։ Ահա և վիթխարի մարդատարը, կարծես յոգնածութիւնից ծանր տնքալով ու հեալով, անցաւ սրնութաց և ետ տարաւ իւր հետ զուգահեռաբար կայարանի բազմութեան հոսանքը։

Մայրիկը և Աշխէնը աչքները չէին հեռացնում վագոնների պատուհաններից, որոնց միջից գլուխները հանած՝ նայում էին եկւորները։

—Մարիամը, Մարիամը! Տեսար? Գոչեց Աշխէնը և վազէվազ առաջ գնաց, շարունակ ետ ետ նայելով և ձեռքի նշանով կանչելով մօրը։

Սիրելիները իրար տեսան և գրկախառնեցին՝ Գարեգինը մօր հետ, Մարիամը Աշխէնի հետ։ Համբոյճների չփչփոցը կայարանը բռնեց։ Մի տարուայ կարօտը կարծես մի բոպէի մէջ կամենում էին առնել։ Մայրիկը ուրախութիւնից լալիս էր։ Աշխէնը և Մարիամը ջրակալած աչքերով բարձր ծիծաղում, խօսում էին, խօսքը իրար բերնից խլում։

—Իմ թոռս, իսկ իմ թոռս ուր է? Մի տեսնեմ, — խօսում էր մայրիկը, դէս ու դէն նայելով։

—Ահա, այս էլ քո թոռը, — ասաց Գարեգինը մանկանը վերցնելով դայեակի ձեռքից և մօր գիրկը տալով։

Դա մի առողջ և սիրուն երեխայ էր, իւր շուշանակագոյն երեսով մօր հատուկտորը։ Աչքերը միայն Գարեգինի աչքերն էին՝ սև ու խելացի։

Իւր տատի և հօրաքրոջ ձեռքին բաւական չարչարեց խղճուկը,

որովհետև այնքան պաշպեցին նորա աչքերը, այտերը և շրթունքը, այնքան իրար ձեռքից խլեցին ու առան, որ նա սկսեց ճչալ ու բողոքել: Մինչ այս մինչ այն, Գարեգինը արդէն վարձել էր կառքեր, տեղաւորել էր մէկի մէջ իրեղէնները և, երբ ամեն բան պատրաստ էր, ուղևորեցին դէպի իրանց բնակատեղի:

Զառիկեանների տունը նորից կենդանութիւն ստացաւ:

Մարիամը բոլոր սենեակները մի առ մի ոտի տակն առաւ: Նորա և Աշխէնի ուրախ քրքիջը բռնել էր դահլիճը: Մայրիկը տասը տարով ջահելացել էր. թեկերը կշտեց ու մտաւ խոհանոց: Գարեգինը լւացւելու գնաց: Փոքրիկ երւանդը գեղեցիկ մանկան զլխի շուրջն էր պտտում, համբուրում էր, համբուրում և չէր կշտանում:

Աշխէնը սրտումը նեղացած էր իւր ամուսնու վրայ այն պատճառով, որ նա չուզեց գնալ կաշարան Գարեգինին հանդիպելու, և այժմ էլ չէր գալիս այցելութեան, կարծես սպասում էր, որ իւր ետեւից մարդ ուղարկեն: Նա վճռեց ինքը անձամբ գնալ, մի լաւ կշտամբել ամուսնուն և իւր հետ բերել: Բայց հարկաւոր էր յայտնել, որ մի կէս ժամով գնում է տուն:

Երբ նա մտաւ խոհանոց, տեսաւ, որ Գարեգինը նոյնպէս այնտեղ է և զլուխը սանրելով զրոյց է անում մօր հետ: Նորան տեսնելուն պէս, երկուսն էլ ժպտացին, և մայրիկը ասաց.

—Ախի, քո բամբասանքն էինք անում:—Շը, այդ ուր?

—Տուն եմ գնում, մայրիկ. ես շուտով կը գամ:

—Դէ մեր փեսին էլ հետդ բերես:

—Շատ լաւ, շատ լաւ:

—Եթէ սկեսուրդ գայ, նրան էլ...

Աշխէնը հեռացաւ, և մայր ու որդի շարունակեցին իրանց ընդհատած խօսակցութիւնը:

Մայրիկը պատմում էր Աշխէնի նոր կեանքիցը նոր ընտանիքի մէջ, և բոլորը, ինչ որ նա ասում էր, նորութիւն էր Գարեգինի համար: Ուրեմն բանից զուրս է գալիս, որ Ազատեանի մայրը, ինքը մի տգէտ պառաւ, մի շատախօս ու կռարար կին լինելով, իրաւունքներ է կամենում բանեցնել Աշխէնի նման կրթւած, ազատ մտածող հարսի վրայ: Ահա որտեղից է ծագում Ազատեանի տանը ընտանեկան անհամաձայնութիւնների պատճառը:

—Ախտոս!... Շատ ցաւալի է, ճշմարիտ! Բացականչում էր Գա-
թիգինը, մայրիկի պատմածները լսելով:

—Թէպէտ մեր Աշխէնը ուրիշի խօսքի տակը մնացողը չէ և
լաւ էլ իւր սկեսրի հախիցը դալիս է, բայց, էհ, ինչ օգուտ, որ
ընտանիքի մէջ, բան ու դորժը թողած, միշտ իրար միս պիտի
ուտեն, էլ ինչ օր պիտի տեսնի հարսը իւր մարդու տանը? Գա հօ
կեանք չէ, նահատակութիւն է: Է՛հ, որդիս, ես որ այնքան հարց
ու փորձ էի անում մեր փեսի ծնողներից, ազգականներից, դու ինձ
ասում էիր. «Ի՞նչ բան ունիս, մայրիկ, նորա ծնողների և ազգա-
կանների հետ. դու ասա—տղան լաւ լինի»:

Մայրիկը Ազատեանի մասին ոչ լաւ էր ասում, ոչ վատը, բայց
նորա մի քանի ակնարկներից Գարեգինը եզրակացրեց, որ իւր քոյրը
իւր ամուսնական կեանքից շատ էլ գոհ չպիտի լինի:

Այդ միջոցին լսեց Աշխէնի ձայնը: Գարեգինը խսկոյն հեռա-
ցաւ խոհանոցից և քրոջը հանդիպեց դահլիճում:

—Սմբատը, երեւի, զբաղւած է, հա՛, Աշխէն? հարցրեց եղբայրը
առանց հեզնութեան կամ ետին մտքի:

—Ես չգիտեմ, ճշմարիտ... Զարմանալի մարդ է...

Աշխէնը ցանկանում էր հանգիստ ձեռնալ, բայց նորա ձայնը
և դէմքի արտայայտութիւնը մատնում էին ներքին վրդովմունքը և
անբաւականութիւնը:

—Ի հարկէ, ճաշին այստեղ կը լինի?

—Անպատճառ!

—Շատ լաւ: Դէ այժմ նստիր, նստիր Աշխէն, մի քիչ խօ-
սենք դէսից դէնից: Է՛հ, ասա տեսեմ, հօ առողջ ես? Կատարեալ
առողջ?

—Ինչպէս տեսնում ես:

—Շատ գեղեցիկ: Բայց ինձ թւաց, թէ մի փոքր նիհարել ես:

—Միթէ? Իսկ դու լցւել ես, Գարեգին:

—Այն քաղաքի օդը և ջուրը ինձ վրայ դալիս են... Է՛հ, յե-
տոյ? Մի ասա, տեսեմ, ինչպէս է անցնում ժամանակդ? Ի հարկէ,
միշտ ուրախ, միշտ...

—Ոչ այնքան...

—Միթէ? Այո, ի հարկ է, այդ հասկանալի է: Դպրոցում շատ

լաւ էր մեզ համար: Հէնց միայն այն գիտակցութիւնը, որ հարիւրից աւելի անձնականներ քեզ սիրում են, ինչքան մեծ բախտաւորութիւն է մանկավարժանի համար! Եւ արդեօք չես ամառսում, որ այդ ասպարէզը թողիր?

— Ես — թողնեմ այդ ասպարէզը? Հա, հա, հա: Երբէք, երբէք, Գարեգին!

— Ուրեմն պիտի շարունակես դարձեալ?

— Միթէ դեռ կատկածում ես? Առաջիկայ սեպտեմբերից ես կրկին վարժուհի եմ! Ինչու ժպտացիր? Ձեռն հաւատում? Այ, կը տեսնես:

— Յետոյ, Սմբատը ինչ է մտածում այդ մասին?

— Ինչ ուզում է, մտածի: Եթէ ես կամենամ, միթէ նա ինձ կարող է խանգարել? Ել ուր կը մնան նորա աւանդականների հաւասար իրաւունքները? Դու ահշուշտ չիշում ես այդ յօդաձը, որ տպեց «Ճառագայթի» մէջ մեր նշանակուց յետոյ?

— Ես այդ մտքով չստացի: Ուրիշ հանգամանք կարող է խանգարել...

— Ո՛չ, Գարեգին, այդ ինձ մի՛ սաիր: Ես սիրում եմ մանկավարժութիւնը և ինձ պիտի նւիրեմ այդ ազնիւ գործին:

— Բայց դու քեզ մի բոսէ երեւակայիր, Աշխէն, Մարիամի ներկայ գրութեան մէջ: Ինչպէս կը լինի այն ժամանակ? Ինչ ես կարծում? Ես թոյլ կը տամ, որ այժմ, երբ Մարիամը արդէն մայր է դարձել, զնայ և վարժուհու պաշտօն վարի? Կամ հէնց նա ինքը այդ բանը կ'անի? Ձեմ կարծում: Եւ ինչ հարկ կայ, երբ ինքը մայրը մի տեսակ վարժուհի է խը ընտանիքի մէջ, իսկ որդիքը — նորա սիրասուն աշակերտները և աշակերտուհիները...

Աշխէնը ծիծաղելով զոչեց.

— Մ՛հ, Գարեգին, քանի դնում է, դու ետադիմում ես! Ուրեմն բո՛ւ կարծիքով, կինը միայն մայր կարող է լինել և ուրիշ ոչինչ?

— Ո՛չ, ո՛չ: Բայց ես ստում եմ, թէ մայրը միայն մայր կարող է լինել, և ուրիշ բան չպէտք է լինի: Այդ համոզմունքը ամբողջաւորմէ մէջ նոյն այն օրը, երբ Մարիամը դարձաւ մայր!

Քրոջ և եղբոր վէճը տաքացաւ: Սակայն Գարեգինը շուտով մի քանի զիջումներ արեւ իւր կարծիքներից և կամաց կամաց, ան-

նկատելի կերպով, խօսակցութեան առարկան փոխեց: Նա մի քանի հարցեր տուեց Աշխէնին սկեսրի մասին, և քոյրը զւարճալի կերպով ներկայացրեց երբօր առաջ իւր ամուսնու մօր բարոյական և մտաւոր պատկերը:

Տղէտ վերին աստիճանի և նախապաշարած, նեղսիրտ և մանրակրկիտ, նախանձոտ և նենգամիտ—ահա սկեսուրը իւր հարսի նկարագրութեամբ:

—Նա կամենում է ինձ դարձնել մի անլեզու արարած, մի ստրուկ, որ կամք չունի: Եւ զորա համար ինչեր չէ անում! Որդուն զրգռում է իմ գէմ: Ծառային ստիպում է ինձ ականջ չդնել: Քանկում է արածս կարգադրութիւնները: Սրերով խռով է մնում ինձ հետ, երբ հիւրերի առաջ իրան չեմ մատուցանում այն ջարդանքը և պատիւը, որ նա իւր խելքը կտրածի պէս է հասկանում: Ամենահարկաւոր բաներ էլ որ առնում եմ ինձ համար, նա պիտի փնթփնթաց և քիթը կախ անի... Մի խօսքով—դա մի պատիժ է, որ Աստուծ ինձ տուել է ինձ չարչարելու համար: Գու չես կարող երեւակայել, Գարեգին: Սրն ի բուն կռիւ, անհամաձայնութիւն... Անտանելի է!

Գարեգինը հետաքրքրեց իմանալու, թէ ինչ դեր է կատարում ինքը Աղատեանը, իւր փեսան, մօր և կնոջ մշտական չնդհարումների ժամանակ:

—Ի՞նչ դեր պիտի կատարի,—հեզեց Աշխէնը. ասում է «չարմարեցէք իրար: Երբեմն ինձ է մեղադրում, երբեմն մօրը: Ինձ ասում է, թէ ես պէտք է աւելի ներողամիտ լինեմ, որովհետեւ նա տղէտ կին է, և այլն, այսպիսի բաներ:

«Ահա ուրեմն—մտածում էր Գարեգինը—ինչ մնաց Աշխէնի անցեալ տարւոյ հրապոյրներին—հեզնութիւն! Մի հեզնութիւն, որ ոչինչ լաւ բան չէ խոստանում ապագայի համար...»

Այս միջոցին եկաւ Մարիամը և տխուր ձայնով ասաց.

—Գարեգին, երեսան շատ անհանգիստ է:

—Ի՞նչ է որ? հարցրեց ամուսինը, վերկենալով:

—Զրդիտեմ, բոլոր ժամանակ ծչում է, ծիծ է բռնում...

—Զարմանալի է. ինչո՞ւ պէտք է այդպէս լինի: Ինքը ասողջ երեխայ...

—Երևի ճանապարհին շատ է նեղացել,—նկատեց Աշխէնը. քանի վերստ ճանապարհ է եկել!

Երեքն էլ զնացին ննջարան մանկանը տեսնելու:

Վերջապէս, եկաւ Ազատեանը:

Իսկոյն այստեղ հարկաւոր է բացատրել նորա զիտաւորեալ սառնութիւնը, որ նա ակնյայտնի կերպով ցոյց տւեց Զատիկեանների վերաբերմամբ: Դա հին հաշիւ էր, որ նա այժմ տեսնում էր Գարեգինի հետ: Անցեալ տարի, երբ նա առաջարկութիւն էր արել Աշխէնի համար, մայր ու որդի դեռ տատանւում էին, դեռ նաղ էին անում: Մօրը կարելի էր ներել. նա տգէտ կին է: Իսկ Գարեգինը, նա հօ լաւ ճանաչում էր Ազատեանին? Նա ինչու վարանում էր? Ազատեանը Զատիկեաններին լայեղ չէր? Ազատեանը արժանի երիտասարդ չէր? Այն ժամանակ հարկաւոր էր համբերել, և նա համբերում էր և լռեցնում իւր մէջ վիրաւորւած ինքնասիրութեան ձայնը: Այժմ հանգամանքները փոխւել են:

Հիմա Աշխէնի տէրը ինքն է, և ոչ ոք չէ կարող արդելել, որ նա օրը տասը անգամ սեղմի նորան իւր կրծքին: Հիմա կարելի է հատուցանել հին վիրաւորանքի փոխարէն: Առաջ Զատիկեաններն էին իրանց մեծ բանի տեղ դնում, այժմ Ազատեանը իրան մեծ բանի տեղ կը դնի:

Բայց չնայած այս նեղսիրտ քաղաքականութեան, որ նա կամենում էր մտցնել բարեկամութեան մէջ, Գարեգինը, իւր քրոջ ամուսնուն տեսնելուն պէս, ուրախ առաջ վազեց և, համարեա զրկի մէջ սեղմելով նորան, սկսեց համբուրել հետը:

Մի այսպիսի սիրալիր, հղբայրական ողջագուրանքի առաջ օդը ցնդեց Ազատեանի փքւած, շինծու հպարտութիւնը:

—Ես ներողութիւն եմ խնդրում, որ այսքան ուշացայ,—սկսեց արդարանալ Գարեգինի փեսան,—ես կարող էի և մի քիչ առաջ...

—Դատարկ բան է,—ընդհատեց նորան Գարեգինը. դու ասան տեսնեմ, ինչպէս է առողջութիւնդ? Գործերդ ինչպէս են դնում? Սեռմեանի հետ կրկին բռնեցիք, հա?

—Առողջութիւնս—ինչպէս տեսնում ես: Տիկինը ինչպէս է?...

Օհօ, այն ով է ճշում? Ժառանգդ է, այո? Շնորհաւորում եմ, Գարեգին, շնորհաւորում եմ: Ի՞նչ առողջ էլ ձայն ունի!

— Ա՛, Սմբատը վերջապէս բարեհաճել է շնորհ բերել, — խօսեց Աշխէնը, ներս մտնելով դահլիճ: Այս որտեղ էիր? Ինչու այսքան ուշացար? Զարմանալի մարդ ես, Սմբատ!...

— Զարմանալին դու ես, Աշխէն, միթէ չըզխտես, որ մինչև ժամը 12 կամ մէկը զբաղւած եմ լինում...

— Կ'ուզէի մի իմանալ զբաղմունքիդ անունը, — նկատեց Աշխէնը ակներև հեգնութեամբ և երեսը դարձնելով իւր ամուսնուց:

Զնչին պատճառով վէճ պիտի ծագէր ամուսինների մէջ, բայց Գարեգինը, մէջ մտնելով, հաշտեցրեց երկուսին էլ:

Այդ ժամանակ երևաց մայրիկը: Ազատեանը նորա աչքը լոյս արաւ:

— Իսկ մօրդ ինչու չըբերիր? հարցրեց Ազատեանի զոքանչը: Ինչ կը լինէր, որ գար? Մենակ ինչ է շինելու տանը? Հօ մենք օտար-ներ չենք...

— Ինչ ես ասում, մայրիկ? ասաց Աշխէնը ուրախ կատակով, բայց ոչ առանց հեգնութեան: Իմ սկեսուրը ինչի համար կը թեթեւացնի իւր ծանր տեղը? Առաջ Գարեգինը պարտաւոր է գնալ նորան տեսնել և յետոյ...

— Մայրս փոքր ինչ տկար էր, ապա թէ ոչ՝ կը գար, — պատասխանեց Ազատեանը իւր զոքանջի տւած հարցին:

Այս խօսակցութեան ժամանակ Գարեգինը հեռացաւ և քիչ յետոյ կրկին եկաւ իւր կնոջ հետ: Ազատեանը մի երկու քայլ առաջ գնաց և բարեկեց տիկնոջը:

Մարիամի դէմքը այժմ հոգեկան հանգստութիւն էր արտայայտում: Երեխային քնացնելուց յետոյ, մայրը միամուկ էր:

— Տիկին Մարիամ, ինչպէս հաւանեցիք գաւառական կեանքը? հարցրեց Ազատեանը, ցանկանալով մի խօսք ասած լինել Գարեգինի կնոջը:

— Ոչ, ինչ, տանելի էր, — պատասխանեց Մարիամը:

— Հօ չէիք ձանձրանում?

— Ո՛չ, ինչու? Մենք ունէինք մի համակրելի շրջան, և դա փոքրիկ մխիթարութիւն էր զաւառական միօրինակ կեանքում: Գարեգինի պաշտօնակիցները շարունակ մեր տունը յաճախում էին, տեսչի ընտանիքի հետ նոյնպէս շատ մօտ էինք: Տեսչի կինը... դուք ծանօթ էք տեսչի հետ?

—Այո՛, բայց ոչ այնքան մօտ:

—Տեսուչը ինքը, իհարկէ, լսած կը լինէք, շատ խելօք և դործունեայ երիտասարդ է, բայց կինը, օ, նա ամեն տեսակ գովասանքից բարձր է: Միայն գիմնադիական կրթութիւն ունի, բայց այնքան կարգացած է, այնքան տեղեկութիւններ ունի գիտութիւններէից, որ առանց ամաւելու կարող է երկար վիճել համալսարանականի հետ և երբեմն նոյն խալ չաղթիլ:

— Ինչ էք ասում, տիկին? Այդքան հրապուրւած էք?

—Այո՛, ես հիւսցած էի: Նորա թարգմանութեամբ այս նորերս մի մանկական գրքոյկ լոյս տեսաւ, կարդացել էք?

— Ես կարդացել եմ, — մէջ մտաւ Աշխէնը:

—Աշխէնը ինձ ասաց այդ մասին, հաւանել էր: Վճռադաշտ թիւ խմբագրատանը մի օրինակ ստացւած է, բայց դեռ միջոց չեմ ունեցել կարդալու:

—Նա շատ սիրում է մանկական դրականութիւնը, այնպէս որ ինձ էլ վարակեց այդ սիրով:

Այդ րոպէին եկաւ մայրիկը և կանչեց ճաշելու:

Շուտով ամենիւր հաւաքւեցին սեղանի շուրջը, և մի երջանիկ, ուրախ շրջան կալմեց:

Խօսք բացւեց այն հիմնարկութեան մասին, որտեղ ծառայում էր Գարեգինը, և սա, գինու երրորդ բաժակը գցելուց յետոյ, սրեց բեխերը և սխեց պատմել հետեւեալը:

—Այն տեղը, ուր մենք էինք այս տարի, ես և Մարիամը, նոր կիկլոպների երկիր է, որոնք, եթէ նոմերի խօսքով ասեմ, չըղիտեն ոչ օրէնք, ոչ արդարութիւն: Բայց տարբերութիւնը միայն մի բանի մէջ է. նոմերի կիկլոպները պահանջ չէին զգում քաղաքակրթութեւում, մինչդեռ այս նոր կիկլոպները մեծ ձգտում են ցոյց տալիս լուսաւորւելու և քաղաքակիրթ մարդկանց շարքն ընկնելու:

Աշխէնը ծիծաղելով նայեց Մարիամին և ասաց.

—Այս երբւանից է Գարեգինը այսպէս զարձախօս զարձիկ?

—Ահա այդ երկրում, — շարունակեց պատմողը, — կիկլոպները իրանց համար հաստատել են մի հիմնարկութիւն, որպէս զի այնտեղ կրթեն իրանց մանուկներին: Եւ կայ այնտեղ մի բուռը հասարակութիւն, որը սիրով յանձն է առել երեխաների կրթութեան դործը:

—Հրաշալի է, Գարեգին,—գոչեց Աղատեանը հրճանքով. շարունակիր:

—Բայց այդ ասուածապահ հիմնարկութեան դժբախտութիւնը այն է, որ նա խճճւած է ինտրիգներէ մի այնպիսի սոսիալի ցանցի մէջ, որ այդ ցանցի ոչ սկիզբն է երևում, ոչ վերջը:

—Բաւաժ՝ Գարեգինի կենացը! գոչեց Աղատեանը և սրտայեց քրտակր:

—Տեսնում էք? Գարեգինը կարգին երդիծաբան է դարձել!

—Ինչպէս ասացի, այդ կրթարանը խճճւած է ինտրիգների, կամ, հայերէն ասեմ, բանաստեղծութիւնների ցանցի մէջ: Յանցի թեւերը ձգւած են այնպիսի հնարապիտութեամբ և այն աստիճաններբութիւն ունին, որ միայն սրառես աչքը կարող է նկատել, թէ ինչպէս, հեռախօսի թելերի նման, մի տեղից մտնում են, մի այլ տեղից դուրս գալիս: Է՛հ, փառք Սրարչին, ես իմ աչքերից գանգատւելու տեղիք չունիմ, ուստի և, առանց արհեստական միջոցների գիմելու, ես պարզ տեսնում էի ինտրիգների ամբողջ ցանցը:

Գարեգինը ընդհատեց իւր խօսքը, և այդ բոլորը յարուցեց Աշխէնի կողմից, որը, գիմելով մօրը, նկատեց.

—Մայրիկ, մի՛ խանդարիր, խնդրում եմ: Դու շարունակ «համեցէք» «համեցէք» ես անում, զանգատուում ես, որ քիչ ենք ուտում, և այդպիսով խանդարում ես մեզ...

—Ինչ անեմ, որդիքս, խօսում էք և ուտելը մոռանում:

—Մայրիկը ճիշտ է ասում: Ես ճանապարհ եկած մարդ եմ, յոգնած եմ: Շարունակութիւնը հետևեալ համարում:

—Լաւ, խնդրեմ, այդ նազը թողնես: Պատմիր, լսում ենք:

Գարեգինը չըհակառակեց իւր քրոջ խնդիրքին, որ հաւասար էր պահանջի, և շարունակեց իւր սկսած պատմութիւնը: Որքան երգիծական կողմեր մի գաւառական քաղաքի հասարակութեան բարքու վարքի մէջ! Ինչպիսի ճահիճ, որի բոլոր կեղտերը դուրս են պրծնում յատակից միայն այն ժամանակ, երբ ջուրը պղտորում է! Սրտաքուստ՝ ծիծաղելով, բայց միեւնոյն ժամանակ ներքին ցաւով էր շեշտում Գարեգինը գաւառական կեանքի բացասական կողմերը: Եւ ունկնդիրը կամայ ակամայ հարց էր տալիս ինքն իրան. «միթէ, ճշմարիտ, այս լուսաւորութեան փայլի տակ, որ այնքան շլացուցիչ

է մեզ համար, դեռ ևս անձեռմխելի են մնացել հալի դարաւոր արատները?...

Ամենագոհ և ուրախ տրամադրութեան մէջ վեր կացան ճաշի սեղանից և, սև կաշիէ ընդունելուց յետոյ, որը մատուցեց դահլիճում, ամենքը պահանջ զգացին թեք ընկած մի քիչ հանգստանալու, որովհետև ոչ ոք չէր կարող չըխոստովանել, որ մայրիկի եփած կերակուրները շատ համով էին, և որ ամեն մէկը կերաւ աւելիք քան ստամոքսը կարող է տանել:

Առաջին օրերը Գարեգինը իւր կնոջ հետ զբաղւած էին այցելութիւններով: Բացի այդ, շատ տեղերից հրաւերներ էին ստանում, և մերժել մէկն ու մէկի հրաւերը անկարելի էր: Ամենից առաջ եղան Մարիամի հօրանց տանը ճաշի, յետոյ Աղատեանի մօտ և այլն:

Իւր բարեկամի գալու մասին Ոսկերչեանը իմացել էր, բայց հաղի շորը այնքան հնացել, ձեռքից գնացել էր, որ չընայած իւր սաստիկ ցանկութեան, ամաչում էր լինել Զառիկեանների տանը: Նա յոյս ունէր, որ փողոցում կը հանդիպի Գարեգինին, և, իրաւ, մի օր նոքա իրար պատահեցին:

— Սրտաշէս, — գոչեց Զառիկեանը, կանգ առնելով, — այս դու ես? Ինչքան նիհարել ես! Ոսկորդ ու կաշիդ է մնում: Սա քեզ հեռւից մինչև անգամ չըճանաչեցի: Դու հօ հիւանդ չես?

Ոսկերչեանի դէմքին մեղամաղձոտ ժպիտ երևաց, նա թոյլ ձայնով պատասխանեց.

— Ոչ հիւանդ եմ և ոչ առողջ: Սա ինքս էլ չըզիտեմ, թէ ինչ եմ:

Սրտաշէսի յուսահատութեան ձայնը Գարեգինի հետաքրքրութիւնը շարժեց, և նա ցանկացաւ դորա պատճառն իմանալ:

Ոսկերչեանը սկսեց խօսել կեանքի ունայնութիւնից, իւր կրած հիասթափումներից. զանդատում էր հասարակութեան անտարբերութիւնից. ցաւ էր յայտնում, որ ինքը ոչ ապրել է կարողանում, ոչ էլ այնքան կամքի ոյժ ունի, որ միանգամից վերջ տայ իւր անպէտք գոյութեանը:

— Է՛հ, բարեկամ, — արտասանեց Զառիկեանը ավստանքով, —

դու կեանքից և հասարակութիւնից ես հիասթափուել, իսկ ես քեզ-
նից հիասթափուեցի!... Ուրեմն դու այդ աստիճան փոքրոգի ես
եղել? Հիասթափուել և ծերանալ հոգով համարեա կեանքի շէմքի՞ն,
ծաղիկ հասակում, այն տարիներում, երբ մեր արիւնը պիտի եռ
գայ, մեր աչքերը փայլիլեն ոգևորութեամբ, մեր բոլոր էութիւնը
բորբոքւի գործունէութեան համար? Զայրոյթս գալիս է քեզ վրայ,
Արտաշէս, ազնիւ խօսք եմ ասում! Դու այդ ինչ ես դարձել? Ինչի
ես նման? Ափսոս իմ յոյսեր!

Ոսկերչեանը գլուխը կախել էր իւր բարեկամի արդար կշտամ-
բանքի առաջ և ոչինչ էէր խօսում:

— Եւ ինչի համար ես այդպէս վհատել, ասա խնդրեմ? Մի
գուցէ նորա համար, որ քեզ գզեցին լրագիրների մէջ? Մի քանի
գրչակներ քեզ կարողացան այդ օրին հասցնել? Ընօթ է, Ասուած
վկայ, ամօթ է, Արտաշէս!

— Ա՛խ, Գարեգին, — մրմնջաց Ոսկերչեանը համարեա լալաղին
ձայնով, — դու ինձ չես խղճում: Հաւատա՛ ինձ, որ մի ցաւը մարդ
չի սպանիլ: Դու չգիտես, թէ ես ինչ օրեր եմ քաշել!

Զառիկեանը հասկացաւ նորա ակեարկը և մի անգամ էլ տըն-
տղեց նորա հագուստը ոտից մինչև գլուխ. մի անգամ էլ ուշի ուշով
զննեց նորա փոքրացած, տգեղացած մարմինը, ճակտի վաղաժամ
կնճիռները և յոգնած, մարած հայեացքը:

Երկուսն էլ լուռ քայլում էին պրոսպեկտի ծառուղիով: Զա-
ռիկեանը մտածում էր. «տրան կարելի է փրկել, քանի դեռ ուշ է: Եւ
Մարդ ունենայ և բնական իսկութիւն, և ընդունակութիւն, և ազնիւ
ձգտումներ, ու յանկարծ մի այսպիսի զրութեան հասնի! Սարսա-
փելի է! Ուրիշ բան չէ, գոնէ հասարակութեան օգտաւէտ անգամ-
ներից մէկը կարող էր լինել. բայց ահա կորչում է, կարծես հեռա-
նում է աշխարհից: Այո, սորան պէտք է փրկել!»:

Եւ այսպիսի մտածողութեան հետեանքն էր այն, որ նա ասաց.

— Արտաշէս, կ'ուզես ինձ հետ ծառայել մեր դպրոցում?

— Յաւիտեան պարտաւոր կը դարձնես ինձ, եթէ այդ կարողա-
նաս յաջողեցնել, — յուզմունքով պատասխանեց Ոսկերչեանը:

— Ինձ յանձնարարւած է վարձել մեր դպրանոցի համար մի
վերակացու: Կ'ընդունես այդ պաշտօնը?

—Ամենայն յօժարութեամբ:

—Գուցէ դորա հետ և մի քանի դասեր:

—Աւելի լաւ:

—Ուրեմն համաձայն ես?

—Այո:

—Զեռքդ տո՛ւր:

Եւ բարեկամները ձեռք ձեռքի զարկեցին:

Բայց Գարեգինը միևնոյն ժամանակ իւր բարոյական պարտքը համարեց ծանօթացնել նորան իրերի իսկական գրութեան հետ:

—Այն հաստատութիւնը, — ասաց նա, — որի յարկի տակ դու պիտի ծառայես ինձ հետ, շարունակ ենթակայ է եղել փոթորիկների: Իմացիր ուրեմն, դու պիտի գնաս բնակեւելու մի հրաբուխի վրայ, որը թէպէտ և այժմ հանգած է թւում, բայց մի քանի նշաններից երեւում է, որ գիւրաւ կարող է վերստին բռնկուել:

—Ոչինչ, — գոչեց Արտաշէսը վճռողաբար. թող ես էլ զոհ գնամ այն հրաբուխին, որը սպառնում է և քեզ նման բարեկամիս!

—Շատ լաւ: Ուրեմն ամեն բան վերջացած է: Յետեւութիւն: Մենք զարձեւալ կը տեսնենք: Արի, արի մեզ մօտ: Գու մեզ բոլորովին մոռացար:

—Կը դամ անպատճառ, — արտասանեց Ոսկերչեանը և, նոր բախտաւորութեան յուսով լցւած, շտապեց դէպի տուն:

Ուրեմն կրկին յոյսեր...

XXV

Ուսումնական տարւայ սկզբում Ոսկերչեանը արդէն այն քաղաքումն էր, որտեղ պիտի ծառայէր այնուհետեւ: Տեղի գիրքը, գրական փողոցները, հրապարակը, հիւրանոցներից ամենամատչելին, մի քանի հասցէներ — այս բոլորը նորան վաղօրօք չայտնի էր Զոռիկեանի նկարագրութեամբ:

Նորա շորերը, ինչ ասել կ'ուզէ, նոր էին այժմ, և այն հագուստով պարզերես կարելի էր ներկայանալ ում կամենայ:

Տեղ հասնելու օրը, երեկոյեան ժամը 6 ին Ոսկերչեանը գնաց ներկայանալու թեմական դպրոցի տեսչին: Նորա սրտի բաբախումը արագացաւ, երբ դրան վրայ կարդաց տեսչի աղգանունը — Շահնաբաթեան — և զանգը քաշեց:

Երբ ճառան բաց արաւ դուռը, Ոսկերչեանը հարցրեց, թէ
տոնն է տեսուչը և ընդունում է արդեօք: Ծառան բարձրացաւ վե-
րև և մի րոպէից յետոյ պատասխան բերեց.

—Խնդրում է,—ասաց նա և տեղ տեց, որ այցելուն առաջ
ընկնի:

Ոսկերչեանը մտաւ դահլիճ, ուր ոչ ոք չըկար: Հեռու տնեակ-
ներից լսւում էին մանկական ձայներ:

Մինչև տեսչի գալը՝ այցելուն կանգնած դիտում էր իւր շուրջը:
Դահլիճի պատերը զարդարւած էին մի քանի երևելի անձանց
պատկերներով, գեղեցիկ շրջանակների մէջ: Մի անկիւնը ամբողջա-
պէս բռնել էր յ սշնամուրը: Առաստաղից կախած փոքրիկ, բաց
սիրուն ջանը յօլացել էր մաքուր հայելանման պարքէտի վրայ:
Առանձնասենեակի դրան փեղկերը բաց էին, և կիսով չափ երևում
էր գրքերի պահարանը: Ոսկերչեանը յուզւած դուրսեան մէջ էր,
բաց էլ աւելի շփոթեց, տեսնելով իւր առջև մի իսկական տղա-
մարդ, առնական հասակով և առողջ կազմւածքով, որի դուրս ըն-
կած մեծ ձակատը, վառվռուն աչքերը, արծւի քիթը և փառաւոր
մօրուքը աչք էին զարնում ամենից առաջ: Նորա պայծառ, ուրախ
դէմքի վրայ իսկոյն կարելի էր կարգաւ նորա բնաւորութեան մի
քանի գծերը—խիտ, եռանդոտ և բարի:

—Պատիւ ունիմ ներկայանալու, Արտաշէս Ոսկերչեան,—ասաց
նորեկը, զլիս խոնարհ շարժումով ողջունելով տեսչին:

Շահնաբաթեանը բարեկեց իւր այցելուին և խնդրեց նստել:
Նստեց և ինքը:

—Ձեր մասին, խօսեց տեսուչը,—ինձ գրել էր պ. Զատիկեանը:
Յուսով եմ, որ դուք կ'արդարացնէք այն յոյսը, որ ես գրել եմ ձեզ
վրայ, իմ ամենաընդունալից ուսուցիչներից մէկի խօսքով:

—Կ'աշխատեմ արդարացնել ձեր յոյսերը,—պատասխանեց Ոս-
կերչեանը:

—Վերականգնի գործը, ինչպէս ես եմ հասկանում՝ այդ պաշ-
տօնը, աւելի հեշտ չէ, քան ուսուցչինը: Լաւ վերականգուն միկենոյն
ժամանակ և դաստիարակ է: Նա պիտի ունենայ նախ և առաջ հա-
բուստ սիրտ, որպէս զի կարողանայ տեղաւորել իւր մէջ հարիւրաւոր
աշակերտների սէրը: Ով չէ կարող, ով ընդունակ չէ սիրելու իրան

յանձնւած սաներին, նա չըպէտք է լինի ոչ վերակացու, ոչ դաստիարակ:

—Այո, իհարկէ, ես էլ կարծում եմ...

—Բայց այդ չէ նշանակում, պ. Ոսկերչեան, որ ես պահանջում եմ թոյլ տալ աշակերտներին անել այն ինչ կամենում են: Դուք պիտի լինիք անպայման կարգապահ և, երբ հարկը պահանջում է, նաև խիստ, մինչև անգամ անդրդուելի: Սակայն չըպէտք է մոռանալ, որ ամեն բանի մէջ կայ չափ ու սահման: Այս էլ հարկաւոր է նկատել, որ դաստիարակը պիտի լինի նաև սրտազէտ, մորդ ճանաչելու հոռուութիւն պիտի ունենայ, որպէս զի իմանայ իւրաքանչիւր աշակերտի հետ ինչպէս վարւել: Դուք պիտի սովորէք յարգել սաների անհատականութիւնը: Դա շատ կարևոր է: Անցեալ տարի մենք ունէինք մի վերակացու, որը մի կատարեալ ժանտախտ էր մեր դպրոցի համար, և, թէ ինչ դեր էր կատարում, այդ մասին ձեզ կարող են պատմել մեր ուսուցիչները: Ես նորան ստիպւած էի հեռացնել: Դուք հրաւիրւած էք նորա տեղը:

Ոսկերչեանը ցանկացաւ իմանալ, կ'ունենայ արդեօք նաև դասեր, ինչպէս յուսադրել էր Զառիկեանը: Տեսուչը յայտնեց, որ հաւանական է լինի նաև դաս. բայց այդ դեռ որոշւած չէ:

—Պարոն տեսուչ,—ասաց ապագայ դաստիարակը մեկնելուց առաջ, ես մի խոնարհ խնդիրք ունիմ:

—Յայտնեցէք:

—Ինձ հարկաւոր է... ես կարիքի մէջ եմ... Եթէ կարողանայի ստանալ նախաձեռն, ես շատ ուրախ... ուրախ կը լինէի:

—Դուք աւանս էք կամենում, այո՞ Շատ լաւ, ես կ'ասեմ դանձապահին, և դուք կը ստանաք: Վաղը կ'իւրակի է: Երկուշաբթի կը սկսին վերաքննութիւնները. այդ օր դուք, անկասկած դպրոցում կը լինիք...

—Այո, անշուշտ:

—Երկուշաբթի կը ստանաք, որքան հարկաւոր է:

Ոսկերչեանը շնորհակալութիւն առաւ և գնաց: Պքանչելի մարդու տպաւորութիւն էր գործել Շահնաբաթեանը նորա վրայ: Նա իրան բախտաւոր էր համարում, որ պիտի ծառայէր մի այնպիսի տեսչի ձեռքի տակ: Շատ բաներ էր պատմել նորան Գարեգինը այդ

նշանաւոր գործիչի մասին, և այն, ինչ միայն լսել էր, այժմ աչքովը տեսաւ և հաւատաց: Եւ մի այսպիսի անձնաւորութիւն, — մտածում էր Ոսկերչեանը, — դեռ թշնամիներ էլ ունի ոչ միայն հասարակութեան, այլ և մամուլի մէջ: Ինչի համար Վեփմանակի լրագիրը օգուտ է քաղում ամեն մի հանգամանքից՝ քար չպրտելու այս պատկառելի մանկավարժի վրայն:

Երկուշաբթի օր Ոսկերչեանը առաջին անգամ եղաւ դպրանոցում և ծանօթացաւ իւր բոլոր պաշտօնակիցներին հետ: Ստացաւ նոյնպէս իւր ուղիւ կէսը, իբրեւ աւանս: Ուսուցիչներին մէկը առաջարկեց նորան մի սենեակ իւր բնակարանում: Ոսկերչեանը ուրախութեամբ համաձայնեց այդ առաջարկութեան, մանաւանդ որ ամսավճարը շատ չափաւոր պիտի լինէր: Նոյն օրը նա տեղափոխեց իւր պաշտօնակցի մօտ: Բնակարանը նորա սրտովը եղաւ: Պատշգամբի առաջ բարձրանում էին խնձորենի և տանձենիներ, և գրեթէ օրնիբուն ախորժելի սուերի մէջ պարուրւած էր լինում պատըշգամբը: Երբ Ոսկերչեանը առաջին անգամ տեսաւ այդ բնակարանը և իմացաւ, որ իւր սենեակը ուղիղ դէպի այն փոքրիկ ծառաստանն է նայում, հրճանքով բացականչեց.

— Այստեղ կարելի է բոլորովին նոր կեանքով ապրել և վերածնւել հոգով!

Կացարանի հրապոյրը աւելացաւ մանաւանդ այն պատճառով, որ, երբ պատշգամբում կանգնած՝ նայում էր դէպի պարտէզը, ծառերի տակ նորա աչքին ընկաւ մի սպիտակազգեստ օրիորդ, որի երկայն սև մազերը, ծով ծով աչքերը, խիա յօնքերը և խնձորի նման կարմիր այտերը՝ նետերի պէս դիպան Ոսկերչեանի սրտին...

Երեկոցեան հարեան տներինց սկսեցին լսել թառի ձայներ, և զորա հետ միասին հնչում էին զանազան թրքական եղանակներ:

Ոսկերչեանի հարցին, թէ արդեօք շարունակ պիտի բախտ ունենայ այն երաժշտութեամբ զւարճանալու, պաշտօնակիցը պատասխանեց, թէ այո, որովհետեւ քաղաքումը սաստիկ տարածւած է թառի գործածութիւնը: Գիշերը երկար ժամանակ Ոսկերչեանը նստած էր պատշգամբում՝ խորասուզւած նոր երազների աշխարհում: Թեթև հոգով պատահաբար շարժում էր ծառերի տերևները, և լուսնի շողերը սփռել էին չորս կողմ լուսոյ և սուերի կախար-

դտկան ցանցեր: Այն ողբալի վիճակից յետոյ հասնել մի աշնայիսի նախանձելի դրութեան, — դա փոքրիկ երջանկու թիւն չէր Ոսկերչեանի նման թշուաւ երիտասարդի համար, և տա, համեմատելով իւր նախկին դրութիւնը ներկայի հետ, կամացուկ լալիս էր ուրախութիւնից, և նորա արտասուքը քաղցր զգացումների արտասուք էր: Իսկ այդ զիշերուայ քունը որքան հանգիստ էր!...

Վեր կացաւ նա առաւօտեան կանուխ և, թէջը ըմպելուց յետոյ, շարտեց դէպի ուսումնարան:

Այդ օրը եկել էր և Ջառիկեանը և դպրոցի բաղում հանդիպեց Ոսկերչեանին: Կարելի է երևակայել վերջինիս զգացմունքը, երբ սա մի օտար քաղաքում, օտար հասարակութեան մէջ տեսաւ վերջապէս իւր նախկին բարեկամին:

— Օհ, Վարեդինը! դուցեց Արտաշէսը և թուաւ նորա մօտ:

— Բարեւ, բարեւ, Արտաշէս, ինչպէս ես? Հաւանում ես? .

— Եթէ իմանաս, որքան ուրախ եմ այստեղ գալուս համար!...

— Երեւի, հարցաքննութիւնները արդէն սկսած են, որ այսօր քան լուս է?

— Այո, մի տասը բոսէ չկայ:

— Ես ուրեմն շտապեմ... Հա, որտեղ է բնակարանդ?

Ոսկերչեանը բաւարարութիւն տւեց այդ հարցին և ինքն էլ ցանկացաւ իմանալ իւր բարեկամի հասցէն:

— Այդ ստելորդ է, — պատասխանեց Ջառիկեանը. այսօր մեզ մօտ կը լինիս ճաշին, միասին կը դնանք:

Այդ ասելով, նա սկսեց բարձրանալ վերեւ: Ուսուցչական սենեակում ոչոք չկար: Տեսչի կաբինետում — նոյնպէս: Բայց այն բոսէին, երբ նա կամենում էր անցնել դասարանները, նորա հանդէպ երևաց ինքը տեսուչը: Երկուսն էլ իրար սիրով բարեկցին: Տեսուչը շարունակեց առաջ քայլել դէպի իւր առանձնատանեակը և խնդրեց Ջառիկեանին իւր մօտ գնալ:

— Նախ և առաջ, ասացէք ինձ, պարոն Շահնաբաթեան, ես հօ այժմ աղատ եմ? Իմ առարկայից հարցաքննութիւնները...

— Ձերը վաղն է նշանակւած: Կարող էք հանգիստ լինել: Ես կամենում եմ ձեզ հաղորդել մի քանի դէպքեր, որ տեղի ունեցան այստեղ ամառը:

—Ինչ դէպքեր? հետաքրքրութեամբ հարցրեց Զառիկեանը:

—Նստեցէք խնդրեմ:

Տեսուչ և ուսուցիչ նստեցին սեղանի մօտ իրար դիմաց, և առաջինը վրդովւած պատմում էր հեռեկալը: Խօսքը վերաբերում էր երկու արձակւած ուսուցիչներին, որոնցից մէկը նաև վերակադու էր, և չորս՝ նոյն դպրոցից արտաքսւած աշակերտներին: Բանից երևում էր, որ առաջին երկու պարոնները, իրանց ձեռքի գործիք դարձնելով վերոյիշեալ սաներին, ամառւայ ընթացքում մի ամբողջ գաւազրութիւն են եղել կազմած նախկին պաշտօնակիցների և գլխաւորաբար տեսչի դէմ: Ել խանութներին մէջ իրանց գլխի շուրջը հաւաքել զանազան մութ մարդկանց խմբախներ, էլ անստորագիր նամակներ ուղարկել Շահնարաթեանի հասցեով, օժտելով այն գրութիւնները այլ և այլ սպասնալիքներով, էլ կապկաջին ծամածուծութիւններ անել և փողոցային չիշոցներ ու երկրի մի խօսքեր ուղղել տեսչի և նորա կնոջ ետեւից, էլ շարադրել խաչտառակ պարսաւագրութիւն և ժողովրդի մէջ տարածել, ամեն բան, ամեն բան, ինչ կարող էին թոյլ տալ իրանց կողմից և միանգամայն փծացած, աղաւաղած բնաւորութիւնները, նոքա կատարել են և դեռ շարունակում են կատարել:

—Միթէ այդ բոլորը ճիշտ է, միթէ այդ բոլորը ճիշտ է? հէնց այն է, որ զարմացած կրկնում էր Զառիկեանը:

—Պուցէ դուք իրական ապացոյց էք ուզում, որ հաւատաք՞ Ահաւասիկ! Նայեցէք!:

Այդ ասելով, Շահնարաթեանը հանեց ծոցի գրպանից մի ծալ-ծըլւած բրոշխիւ և դրեց խօսակցի առաջ:

—Կարդացէք, խնդրեմ, և տեսէք, թէ ինչ բաների ընդունակ են այդ պարոնները! Մարդ պէտք է լինի բարոյական հրէշ, որպէս զի կարողանայ հնարել այնքան ստեր և զրպարտութիւններ, որոնցով լիքն է այս ամօթալի գրքոյկը! Մինչդեռ տեսուչը տաքացած խօսում էր այս ողով, Զառիկեանը թերթում էր պապուկիլը, և նորա դէմքը այդ միջոցին արտայայտում էր—նողկանք:

—Փն, մարդու զգւանք է դալիս!—բացականչեց Գարեգինը և դրքոյկը նետեց մի կողմ—Նե ով է սորա հեղինակը?

—Այդ երկու հրէշներից մէկն ու մէկը!

—Աւելի ստոր վրէժխնդրութիւն ղժար է երևակայել!

—Ես պիտի պահեմ այս պապիւնը, պիտի պահեմ! Սա մի զոկումնեւ է! Սա պէտք է մնայ, իբր ապացոյց, որպէս զի իմանան տպագայում, թէ ինչպիսի մթնոլորտի մէջ էին գործում մի ժամանակ մեզ նման մարդիկ! Սա մի անգնահատելի գանձ է մեր քաղաքակրթութեան պատմաբանի համար!

Այդ խօսքի վրայ պատի ժամացոյցը զարկեց իններորդ ժամը: Քիչ յետոյ տեսուչը գնաց վերահասու լինելու հարցաքննութիւններին, իսկ Զառիկեանը իջաւ բակը և, Արտաշէսի թէն առնելով, սկսեց շրջել աջնտեղ և զրոյց անել հետը: Ոսկերչեանի խօսքերից երևում էր, որ նա շատ զոհ է իւր վիճակից, որ նորա վրայ խիստ լաւ տպաւորութիւն են գործում տեսուչը և ուսուցիչները. ասում էր, թէ անչափ սիրեց մանկավարժական ասպարէզը, թէ իրան մի առանձին բաւականութիւն են պատճառում աշակերտների վազվզելը, խաղերը, աղմուկը. իւր հիացքն էր յայտնում դպրանոցի բարեկարգութեան վրայ: Գարեգինը նկատեց, որ քաղաքի հասարակութիւնը պիտի պարծենայ, որ ունի Շահնաբութեանի նման տեսուչ, որովհետեւ սորա օրով և սորա նախաձեռնութեամբ են կատարել բոլոր բարեփոխութիւնները, և ապա մի առ մի թւեց, թէ ինչումն էին կայանում այդ բարեփոխութիւնները:

—Բայց ուր է այն հրաբուխը, որի համար ինձ զգուշացնում էիր մեր Թիֆլիսում եղած ժամանակ? Ինձ թւում է, ընդհակառակը, այստեղ ամեն բան խաղաղ է...

Զառիկեանը Արտաշէսի այս միամիտ նկատողութեան վրայ ժլպտաց, ասելով.

—Աստուած տայ, այդպէս լինի:

Այդ նիւթի մասին այլ ևս նա ոչինչ չըխօսեց, տեսչի պատմածներից ոչ մէկը չըհաղորդեց նորան, չըկամեցաւ սկզբից և եթ իւր բարեկամի սիրտը պղտորել չարագուշակ լուրերով: Նա գնաց տուն, խոստանալով, մի երկու ժամից յետոյ, կրկին վերադառնալ:

Ոսկերչեանը ճաշին Զառիկեանի տանն էր: Վաղուց, շատ վաղուց է, որ նա այդ ընտանիքի հետ մի սեղանի չէր նստել: Հասկանալի է, թէ որքան նա պիտի քաշէր, մանաւանդ տիկին Մա-

քիամի ներկայութեամբ, և միևնույն ժամանակ որքան ուրախ պիտի չինէր վերականգնած նախկին բարեկամութեան համար:

Սեպտեմբերի 12-ին, երբ արդէն վերջացել էին բոլոր վերաքննութիւնները և նոր աշակերտների ընդունելութիւնը, և հետեալ օրը պիտի սկսէր ուսումը, նորին սրբազնութիւնը եկաւ զպրանոցը այցելելու:

Քննակալ հովիւը մի վիթխարի, չաղթանդամ ծերունի էր, ինչպէս լինում են մեծ մասամբ մեր հայ եպիսկոպոսները: Վեղարը ծածկել էր նորա ամբողջ գլուխը և ազատ էր թողել ճակատի վրայ միայն երկու խոշոր, դուրս պրծած կնճիոնների տեղ: Թաւամազ, սև ու կախ ընկած ջոնքերի տակ դադար էին առել ահագին մեծութեան աչքերը՝ մռայլ և պղտոր, ինչպէս մրկաշուշո ծովը: չընտշած առնական ջոնքերի սևութեան, մօրուքը անխառն սպիտակ էր և գրեթէ մինչև գոտին էր հասած:

Անմեկնիկի սարսուռ բերեց Ոսկերչեանի վրայ այս հուժկու ծերունին, երբ նա, մոնելով ուսուցչանոցը, կանգնեց զրան մօտ և գլխի ծանր շարժածքով ընդհանուր ողջոյն չղեց աջ ու ձախ ամենքին: Մի քանի պատշաճ խօսքով բարեմաղթութիւններ արաւ ուսումնական հաստատութեանը, տեսչին ու ուսուցիչներին պատուիրեց խաղաղասիրութեամբ առաջ տանել գարոցի գործերը, աստուածային ահ ու երկիւղ ներշնչել սանիկներին, ուղիղ ճանապարհից չըջնդակել և խստիւ հետեւել ուսումնարանի նախադժեւած կարգ ու կանոնին: Յետոյ նա անցաւ դասարանները և, մի հինգ րոպէ տեսչի առանձնասենեակում հանդատանալուց յետոյ, հրաժեշտ աւելցր:

Ոսկերչեանը զարմացաւ այն սառնութեան վրայ, որ նկատելի էր տեսչի և սրբազանի յարաբերութեան մէջ, և իւր այդ զգացումը նա չափանեց Զառիկեանին: Եւ ահա ինչ բացատրութիւն տւեց Պարեգինը այդ առիթով.

—Այդ երկու անձանց մէջ կայ միայն մի ընդհանուր գիծ՝ երկուսն էլ Փանաթիկոսներ են՝ մէկը զիտութեան, միւսը՝ կրօնի, և երկուսն էլ կամակոր, անընկճելի են իրանց համոզմունքների մէջ: Դորանից դուրս, ամեն բանով նոքա հակառակ ծայրեր են: Մէկը մարդկութեան փրկութիւնը տեսնում է գիտութեան և առհասարակ յառաջագիւժ գաղափարների անընդհատ նւաճումների մէջ, միւսը

ծիծաղում է քթի տակ, երբ այդպիսի փրկարար դեր են յատկացում գիտութեան: Մէկը իւր դաստիարակչական սխտեմը հիմնել է անհատականութեան յարգանքի վրայ, միւսը դորա մէջ տեսնում է բարձր ու վարքի անկման ամենամեծ վտանգը: Մէկը՝ ոխերիմ թշնամի զանազան նախապաշարմունքների, միւսը իւր բոլոր էութեամբ մի մարմնացած նախապաշարմունք: Հասկանալի է, թէ ինչու զոքա իբար հանդուրժել անկարող են:

— Իսկ ընդհարումներ եղել են? հարցրեց Ոսկերչեանը:

— Այդ երկուսի մէջ! Քանի քանի անգամ! Բարեբախտաբար, հողաբարձութիւնը տեսչի հետ համերաշխ է, և այդ մի քիչ սանձահարում է նորա հակառակորդին, ու մաքառումը սուր կերպարանք չէ ստանում: Եթէ այդ հանգամանքը չլինէր, օ, քար քարի վրայ չէր մնալ...

— Ահա ուրեմն որտեղ է թագնւած քո ասած հրաբուլը! գոչեց Ոսկերչեանը, զլուխը թափահարելով: Այդօր միայն նա զգաց, որ իւր ոտի տակ հողը այնքան էլ հաստատ չէ:

Իսկ և այդ անախորժ կասկածը երջանիկ վիճակի յարատեւութեան մասին շուտով մոռացւեց:

Ուսումը սկսւած էր: Ոսկերչեանը ունէր նաև զասեր, և դորա համար նա անչափ ուրախ էր. որովհետև ուսուցչական պաշտօնի հետ միացած էր մտաւոր աշխատանքը: Այժմ նա զգում էր, թէ որքան մեծ հոգեկան գոհացում է ստանում մարդ, երբ տեսնում է, որ իւր գոյութեան, իւր կեանքի մի մասով ապրում է ուրիշների համար, և այն՝ մի մատաղ սերնդի համար! Ներկայի հետ համեմատած՝ ինչ զարհուրելի էգոիզմ, ինչ ոստրէի մենակեցութիւն—անցեալի մէջ!...

Դա առնական հասակի յեղափոխութիւն էր, որ կատարւում էր Ոսկերչեանի հոգումը:

Լաւ եղանակներին, երբ նա ազատ էր լինում, իւր պաշտօնակիցներից մէկն ու մէկի հետ կամ, առելի ջանախ, մեն մենակ շրջում էր մօտակայ սար ու ձորում—կենդանարձր գրօսանք: Պարտէզն էր իջնում երբեմն և երբեք չէր կորցնում իւր յոյսը, որ մի գեղեցիկ օր կը ծանօթանայ վերջապէս այն ռուսաց հիւրի՝ հետ:

Մահերմութիւն էր հաստատուում նորա և իւր պաշտօնակցի մէջ, որի գիշերօթիկն էր նա: Փոքրիկ զւարճութիւն չէր երկուսի համար, ճաշերից յետոյ, նստել միասին պատշգամբումը և ծառերի անուշ շւաքի տակ նարդի խիել: Իսկ երբ պատահում էր, որ այդ ժամանակ այս կամ այն ծիւղի վրայից գետին էր կաթում հասած խնձորը կամ տանձը, ինչ ուրախ բացականչութիւն էր ելնում երկուսի բերնից!

Քունը և ակորժակը բոլորովին կանոնաւորել էին: Քնում էր մեռածի պէս, ուտում էր, զինչպէս գազանն: Կորցրած ոյժերը կամաց կամաց վերադառնում էին:

Ոսկերչեանը կազդուրւում էր հոգով և մարմնով:

Միայն մի հոգս էր մնացել—պարտքերը: Դա նորա համար մի քարոյական ծանրութիւն էր, որ ճնշում էր նորա սիրտը և ուղեղը: Սակայն այսուհետև հնարաւորութիւն կայ կամաց կամաց դորանից էլ ազատւելու:

Դէպի անցեալի երազները, իրաւ է, նա սառած էր: Բայց ժամանակով, յոյս ունէր, կարելի էր վերադառնալ նախկին գրականական պարապմունքներին և նոյն իսկ մասնակցել սիրողների հետ թատրոնական ներկայացումներին:

Բայց շուտով ամեն ինչ փոխւեց, տակն ու վրայ եղաւ, և կեանքի նոր մրրիկը վրայ հասաւ, ու օդը ցնդեցին Ոսկերչեանի ծրագիրները և յոյսերը...

Սա համոզւեց, որ տիրող խաղաղութիւնը առերևոյթ էր միայն. դա փոթորիկի նախընթաց լուսթիւն էր:

Ուտումը սկսեւուց անցել էր հազիւ մի երկու շաբաթ:

Մի օր, մեծ զսասամիջոցին, Շահնաբաթեանը եկաւ ուտուցչանոց և յայտարարեց, որ երեկոցեան պիտի գումարւի մանկավարժական ժողովի արտակարգ նիստ՝ կարգալու համար մի թուղթ, որ ստացւել է սրբազնութիւնից:

Նշանակած ժամին բոլոր ուսուցիչների ներկայութեամբ նախագահը քաց արաւ նիստը և անմիջապէս կարդաց վերև չիշած գրութիւնը: Սրբազանը առաջարկում էր կրկին ընդունել հեռացրած ուսուցիչներին և աշակերտներին:

Նիստը երկար չտևեց: Վիճաբանութիւններ չեղան: Խօսքը

միայն պատասխանը ձևակերպելու մասին էր. ամենքի համար բոլորովին պարզ էր, որ անհնար է այդ առաջարկութիւնը ընդունել:

Հետեւալ օրը ժողովի վճիռը ուղարկեց, ուր հարկն է: Տեսչի հակառակորդները, տեղեկանալով այդ մասին, կատաղեցին և իրար անցան...

Դարձեալ սկսեցին պատուել քաղաքի ամենասուտար և անկիրթ խաւերի մէջ հաղար ու մէկ հրէշաւոր լուրեր, որոնց նպատակն էր վայր գցել տեսչի և ուսուցչական խմբի պատիւը և ներկայացնել նոցա, իբրեւ ֆրաստիար տարրեր: Վա անստուած է, նա չէ ընդունում սատանայի գոյութիւնը. այս մէկը սխալներ է գտնում ս. զբքի մէջ, այն միւսը վիրաւորում է հոգեորականների պատիւը... և այլն և այլն: Եւ ամենից ցաւալին այն էր, որ սաներից մի քանիսը, բարեբախտաբար միայն մի քանիսը, մասնակից էին այս խլրառումներին...

Կրկին թուղթ եկաւ սրբազանից, այս անգամ գրած աւելի խիստ ոճով: Դա առաջադրութիւն էր—անորոշման ընդունել վերոյիշեալ անձանց:

Եւ մանկավարժական, էլ բարոյական, էլ ոչ մի հիմք չմնաց, որին չցենէր ժողովը իւր մերժումը պատճառարանելու. համար: Աչինջ չօգնեց:

Մնաց միայն մի հատ եւք—ներկայացնել սրբազանին միահամուռ հրաժարական:

Եւ այդ կատարեց:

Ամբողջ կէս ամիս շարունակում էին գրաւոր բանակցութիւնները, և թէ որքան հոգեկան անհանգստութիւններ կրեցին տեսուչը և ուսուցիչները, այդ գիտէին միայն իրանք և վերեւ—Աստուած:

Ամեն բան վերջացած էր: Դպրոցի համար կազմեց ժամանակաւոր վարչութիւն, իսկ նախկին խումբը ցրիւ. եկաւ զանազան տեղեր:

Զառիկեանը և Շահնարաթեանը իրանց ընտանիքներով ուղեւորեցին Թիֆլիս, որտեղ կարգացին մի լրագրի մէջ զպրոցական

անցքերի խեղաթելւած նկարագիրը, որի մէջ Շահնաբաթեանը
խոր խմբի հետ ամենագուհիկ ծագրի էին մատնւած:

Իսկ Սոկերահանը...

Բայց բաւական է: Այստեղ ընդհատում համ իմ պատմութիւնը:
Աւանց այն էլ ես շատ զբաղեցրի ընթերցողիս մի հասարակ մահ-
կանացուի կեանքով: Թողնեմք արդի և մի առժամանակ անչաչտա-
նայ կեանքի ծովի մէջ:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

(Շարունակելի)

ՎԻՐԱԻՈՐ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅՆԱՆԻ

Երանի՛ քեզ, ազատ քամի, որ խաղում ես ջինջ եթերում:
Երանի՛ քեզ, անհոգ քամի, որ ազատ ես ցաւ ու վէրքից —
Մերթ իջնում ես խոր անկունդը, մե'րթ սլանում ժայռը զրկում,
Մերթ ծովի բիրտ ալիքները տատանում ես, խառնում խորքից:

Դու թռչում ես դէպ արեմուտք, ուր կայ մի կին, մի կին —
կախարդ,
Նա խաղում է մարդու կեանքով, հաւատ ու յոյս մոխիր դարձնում,
Երբ կը տեսնես, կը ճանաչես — աջնպէս դռուդ, աջնպէս հսկարու
Կին չէ եղել և չի լինիլ երբեքից մեր աշխարհում:

Աստ՛ նրան, որ տկարիս պատերազմի դաշտ վիճակեց,
Բայց այդ դաշտը շատ-շատ մեծ է, զինւորները դէս-դէն ցրւած,
Աստ՛, որ ես ընկեր չունեմ, կեանքը եղած ոյժն էլ խլեց,
Եւ այժմ անգոր, անբախտ եմ ես, հալածական եղած, ատւած:

Աստ՛, որ շատ երազեցի նրան՝ անկեղծ ընկեր դարձնել,
Որպէս զի այս կուի դաշտում երբ յոյսերըս ցնորք թւան,
Կարողանամ նրա կրծքին հոգնած զլսիս հանգիստ շնորհել
Եւ զարդարել նոր յոյսերով վհատ հոգիս աստանդական:

Պատմի'ր նրան, որ ընկած եմ կուի դաշտում՝ սրտումս վէրք,
Սե արիւնը կաթ-կաթ ծորում, մահ է սպառնում անժամանակ,

Շուրջս դատարկ, ձեն-ձուն չկայ, և աստղերն են հիւսում մահերդ,
 Աւ լուսինն է գունատ դէմքով մահւան աղօթք կարդում մենակ:

Բայց եթէ նա յանդինաբար բօթիւ վերան անիւթ ժպտաց,
 Որպէս տրաւ, երբ ցանկացայ սիրոս սրտին ընկեր դարձնել,
 Ո՛ր, չը կանգնես, ազնա քամի. տո՛ւր նրան մի ուժգին հարւած
 Աւ յետ դարձիր իմ տանջալից մահւան ժամին վկայ լինել:

13 օգոստոսի 1898 թ.

Մաշտաղա.

ՄԵԻ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ

(Յիշողութիւններ ու տեղեկութիւններ թիւրքաւայ գաղթականների կեանքից ու աշխարհից)

ՅԱԿՈԲ ՄՈՒՐԱԳԵՆՆԻ

(Շարունակութիւն 1)

II

Տրապիզոնի սանջակի հալ գիւղերից անցնենք Ջանիկի սանջակը («ձը-նիկ») և ամենից առաջ Չարշախայի գաւառակը, թէ Նրա համար, որ ալդանդ է եղել գլխաւորապէս կենտրոնացած համէնցիների մեծ բաղմութիւնը և թէ նրա համար, որ ալդոնդից են գլխաւորապէս գաղթել ամենքից առաջ և ամենքից աւելի գէպի Ան ծովի Ասլիասեան ավերը:

Չարշամբալի գաւառակը Ան ծովի ավերի հալ գաղթականների մեծ մասի բնագաւառն է. կազմում է մի առանձին կաղա՝ Ախլալէթի Ջանիկի սանջակի մի մասը: Ալդ գաւառակը ձգւում է Ան ծովի ավերին, բռնելով Չարշամբա քաղաքի չորս կողմը, որ ծովից մօտ 4 ժամի ճանապարհ հեռու է: Դիրքը ընդհանրապէս ցածր-գաշտալին է, մանաւանդ ծովափի մասում, որից սկսած մինչև 40 միլստ տարածւում է երկրի խորքը. ալդ սանջակից զուրս գաւառակի մակերևոյթը աւելի բարձրաւանդակի ձև է տաւում, աստիճանաբար բարձրանալով և կազմելով առանձին-առանձին բարձրութիւններ, որոնք հետզհետէ բարձրանում են և իրար չեն ծածկում, ալդանդ որ դրանց վրայ գտնւած գիւղերը միշտ նաւում են ծովին: Ցածր-գաշտալին մասը ձգւում է ծովի ավերի երկաւնութիւնով, հասնելով մինչև Սրգուրի ու Թերմէի կողմերը. ալդ բոլոր տարածութեան վրայ տիրում է

1) Տե՛ս Մարտ 1898 թ. № 6:

ճանճալին տաք ու խոնաւ կլիման թանձր աճողները ու ճոխ բուսակա-
նութեան հետ Ազոտիզ բնակում են մեծ մասով դաղթական չերքէզներ,
որոնք տարածւած են ամբողջ դաշտալին ավերում: Մի քանի հազ դիւզեր
էլ կան, ինչպէս՝ Ազշալինէյ, Ախալի, Ջալար, Գեղջարեոյ և ուրիշ շատ
փոքր գիւղեր, դրանց մէջ գիրքով միւսներէն մի քիչ աւելի բարձրն է:
Գեղջարեոյը՝ Կաշտալին մասի հողերը կազմութիւնով խիտ կաւալին են,
բաւց և շատ արգաւանդ: Բերքերն են՝ սիմինար, թութուն ու ցորեն, ամե-
նից աւելի և ամենից լաւ հասնում է սիմինարը, ցորենը համարեա չի լի-
նում, իսկ թութունն էլ աչքքան լաւ չի լինում: Բնակիչների տճիւղ շատ
քիչ ու կամայ է լինում:

Վեռնալին մասը, որ սկսում է ավերից 40 վերտո հեռու, մեծ մա-
սով բլուրներից ու պառակներից է կազմւած: Այս մասի հողերը թէև աւելի
քարքարոտ ու չը բերող են, բայց կլիման զով է ու բարեխառն, ջրերն էլ
պաղ ու անուշահամ: Յորենն ու թութունն էլ աղետող աւելի լաւ են լի-
նում, քան դաշտալին մասում: իսկ աւելի բարձրերը որանք էլ չեն լի-
նում: Այնտեղ միայն վարսակն ու հաճարն է հասնում: Վարսակը դաւա-
ռակի լեռնալին մասի հազ դիւզացիների արտահանած գլխաւոր բերքն է
եղել, որտեղ նա թէ աջող բուսել է, և թէ աւատ բերք աւել, Վեռնալին
մասի հազ գիւղացու չուրը միայն դրա վրա է եղել: Եթէ վարսակը չը լի-
նէր, նա ուտելուց հաց էլ չը պիտի գտնէր, որովհետեւ թէև սիմինդը ցա-
նել են, բայց լաւ չէ եղել, քիչ է աւել, ցորենը հօ դրանից էլ քիչ: Նրա
ճաւը միայն վարսակն է եղել, ուղիղ է՝ նա վարսակ չէ կերել, բայց նրա-
նով է իր հացը ճարել: Կրա համար լեռնալին մասի հազ գիւղերում վար-
սակի արդիւնաբերութիւնը մեծ տեղ է բռնել, մի տուն մօտաւորապէս 40
կօղ է ցանկ (կօղը՝ 24 օխա է), կօղը ծախւելիս է եղել մինչև 10 զուրուչի-
երբեմն էլ մինչև 12-ի է դնացել:

Թութունը ամեն տեղ չէ եղել և ամեն տուն էլ չէ ցանկել, արտահա-
նելիս են եղել շատ քիչ, մօտ 50-60 լիտր սան դլուխ: Արա պառճաւը
մէկ որ՝ հողն է եղել, լաւ տեղ պիտի լինէր, որ վար, մէկ էլ որ՝ թու-
թունի առևաուրը վերջին տարիները, դաղթելուց քիչ առաջ, արդէն ընկել
էր մենալաճառութեան պառճաւով:

Յանելիս են եղել նոյնպէս և կանեփ, աւելի շատ, քան թէ հիմա են
ցանում իրանց նոր տեղերում: Գեռ ալսօր էլ իմ տեսած դաղթականները,
չապիկը և առհասարակ ամբողջ ներքին հաղուտը իրանց ձեռքով մշա-
կած ու գործած կանեփից են հանում: Արանիից են գործում նոյնպէս իրանց
բոլոր թաշկինակներն ու սրբիչները, նաև դօախներն ու տրիսի չւանը,
ինչ ասել կ'ուզի՝ որ հայրենիքում, ուր աւելի զարգացած էր կանեփի մշա-
կութիւնը և թէ պայմաններն աւելի ներում էին, էլ աւելի առաջ դնա-
ցած կը լինէր կտաւագործութիւնը:

Չը նախելով տնտեսական ծանր վիճակին, քաշած նեղ օրերին, լեռնալին մասի հազ գիւղացին չալանի է եղել իր առողջութիւնով ու քաջութիւնով: Նրանց մէջ քիչ չեն եղել ծերեր, կարիճներ ու «փահլեամներ»: Նրանք՝ չը նախելով քաշած զրկանքներին ու նեղութիւններին, միշտ աճել ու բազմացել են: Դեռ արօր էլ աս է քաշում դաղթական հալը Ան ծովի օտար ափերում ընկած, չիչելով ու ողբալով իր հայրենիքի հովասուն լեռները, նրա մեղմ ու բարեխառն օդը, քաղցրահամ ու պաղ ջրերը, հայրենի համով հացը, թողած սիրելիներին ու պերզմանները...

Ան ծովի ափերի հազ դաղթականների մեծ մասը, ինչպէս վերին էլ ատեցի, Չարշամբալի գաւառակից է, զլխաւորապէս, և մեծ մասով նրա լեռնալին մասի հազ գիւղերից: Դրանք են. Բրիդէրէ, Կաթաջաուզ, Աղուջ, Կուրջուռլի, Կանուրուզ, Կաթալազ, Կորադուրէլ (Գիւմբաթ), Թարիւր, Մարդիլ, Չաթախ, Կան նոգնպէս, թէև շատ աննշան թւով, մի քանի տուն միայն, գաւառակի դաշտալին գիւղերից, աւելի՝ Գեօղջաքեօլից, նոգնպէս՝ Աղջազիւնէլից ու Ախալլիից: Դրանցից ամենաբազմամարդ գիւղերն եղել են՝ Կաթաջաուզ ու Կուրջուռլի. առաջինում մօտաւորապէս եղել է 150-200 տուն հազ, միւսում՝ նոցնքան և դուցէ քիչ էլ աւելի: Այդ վիշաւանքն իսկապէս ջոկ-ջոկ գիւղերի անուններ չեն. զրանցից ամեն մինը բաղկացած է եղել մի քանի մանր ու ցրտուցան գիւղամասերից, որոնք թէև ջոկ անունով չիչել են, բայց ամենքը միասին մի եկեղեցի ու մի տաճուէր են ունեցել, մի գիւղ ու մի հասարակութիւն են կազմել և մի անունով ճանաչւել: Այդ կազմութիւնն են ունեցել՝ համարեա առանց բացառութեան, համէէնցիներէ հայրենական բոլոր գիւղերը, և հիմա էլ ալդպէս են նրանց գիւղերը Կովկասեան ափերում:

Յիշւած հազ գիւղերից նրանք, որ եկեղեցի են ունեցել, մեծ մասով ունեցել են և դպրոցներ: Մի երկու տեղում դպրոցը չլինել են նոցն իսկ եկեղեցուց առաջ: Ինչքան եւ լսել ու իմացել եմ, ամբողջ Ան ծովի թիւրքական ափերում չէ եղել մի հատ քիչ թէ շատ օրինաւոր դպրոց, Վերջին տարիները, ճիշտ է, ամեն տեղ, նոցն իսկ ամենախուլ ու վատ ընկած գիւղերում դպրոցներ են բացւել, բայց ինչ օգուտ, քանի որ զրանցից ոչ մէկում չէ ապրել աչն առողջ ու կենդանարար ոգին, որ նորոգէր ու կենդանացէր մարդկային բռնութիւններից ու իրանց սղիտութիւնից թշաւապած ու խեղճ մնացած ժողովրդին: Եւ լսածներս նրանց հայրենական դպրոցների մասին չիչեցնում են հին տիրացուական-խալիֆալական տարր: Այդ դպրոցների, կամ խկապէս տիրացուանոցների մէջ ամենից աւելի ծագած ու վիշաւ է եղել Կուրջուռլիի դպրոցը, որ շատ գիւղերի համար եղել է իրրե կենտրոնական մեծ դպրոց և ուր նոցն իսկ հեռաւոր Սինօղից երեխաներ են եկել կրթւելու համար: Կարծում եմ՝ աւելորդ չի լինիլ մի քանի տեղեկութիւններ տալ այդ դպրոցի ներքին կեանքից: Այգտեղ սովոր-

բեցնելիս են հզել՝ քերական կամ ալբերկարան, ընթերցարան, քրիստոնէական, թւարանութիւն, գրութիւն, քերականութիւն գրարարի՝ աւետարանի թարգմանութեան հետ. ամեն շարաթ օրերը շարական ու ժամագիրք, իսկ երբեմն էլ աղգալին ու սուրբ պատմութիւն և մի քանի աղղալին երգեր: Միւս դպրոցների ծրագիրը զրանից էլ աղքատ է հզել. քերական, հեգարան, սաղմոս, ժամագիրք, շարական, «գործոց», նարեկ ու գրութիւն, իսկ տեղ-տեղ և այն էլ վերջերը՝ չորս գործողութիւն: Աւարկաները զրանք են հզել և ալղ չաջորդական կարգով էլ աւանդել են: Գրութիւն շատ ուչ են սկսել. տարիներով երեխան դպրոց է գնացել բալց իր անունը գրել չէ խմացել. գիր գրելը՝ աւարտելուն մօտիկ ժամանակից են սկսելիս եղել, գլխաւոր հոգն ու աշխատանքը կարդալու վրա է հզել. զուր չէ, որ համէնցի դաղթականները ուսում խօսքի տեղ՝ «կաշտում» (աշխիւքն՝ կարդում) են ասում. չէ որ նրանց ուսումնարաններում կարդալուց դուրս ուրիշ բան չէ եղել. ամեն բան կարդալով ու անգիր անելով են սովորել: Նկատելու բան է, որ Աւետարան կարդալն էլ «մեղք» է համարել. դրա համար «Գործոցը» («Առաքեալների գործերը») կարդալիս են եղել, իսկ չորս աւետարանները—ոչ: Ասումը զուրկ է եղել որ և է սիրտէմական կարգից. աշակերտներից ամեն մէկը իր առանձին դասն է սենցել: Գասը տրւելիս է եղել «աղտեղից-աշնտեղ» հրամանով և կամ միերկու անգամ աշակերտի առաջ կրկնելով: Կարդալը մի միջոց է եղել, որ պիտի ծառայէր անդիր անելուն. ինչ բան որ սովորել են, անգիր անելու համար է եղած. ալղ է եղել ուսման նպատակը, կրթութեան միջոցը: Աւուցումն ու կառավարութիւնը վարել են անդր-ջրհեղեղեան ձեով. երեխանց տարիքը որոշած չէ եղել. ընդունել են ամեն հասակում: Գասը հարցնելուց լիտով տիրացու «վարպետը» կամ դուրս է գնացել՝ ման գալու և կամ պառկել-քնել, անուշ անուշ խօլմիացրել է, ոտները լարելով իր աշակերտների առաջ: Գասարանում ծխելը, թքելը և ուրիշ ամեն տեսակ կեղտոտ գործողութիւններ կատարելը տղէտ «վարպետը» համարել է երկի ինչպէս «բուրումն խնկոց տաշխից և կինամոնաց»: Գասը ոչ սկիզբ է ունեցել և ոչ վերջ. ուսումնարան գնալիս են եղել ուղած ժամանակ, ով երբ կարողացել է: Գասը տեղիս է եղել անընդհատ մինչև կէսօր. ալղ ժամանակ նրանք հաց են կերել, իրանց բերածից ամենալաւ կոտրները բաժին հանելով անկուշտ «վարպետին», որի աղամանը, զգմի «խօխը» (սնամիջ զգումը) մրոտած գղալն ու «տախօնը» (պղնձէ քրեղանք) դասարանի զարդն են կաղմել: Հացից լիտով ամառը՝ աշակերտները խաղալիս են եղել 2—3 ժամ շարունակ, իսկ ձմեռը՝ «վարպետի» հրամանով գնալիս են եղել անտառը՝ իրանց համար վառելու փալտ բերելու: Գրանից լիտով սկսելիս է եղել երկրորդ ու վերջին դասը, որի վերջը արևի հետ է եղել: Աւելորդ է ասել, որ ճիպտան ու դժոխալին «Փալաքան» եռանդով գործել են «վար-

պետիւ, բոռնցքներին հետ միասին Այդ բոլոր դպրոցների գործունէութիւնը ուղղուած է եղել միմիայն այս բանի վրայ, որ անխտիր իրանց քոլոր աշակերտներից տիրացուներ պատրաստեն. ալի է եղել նրանց համար ուսման ու կրթութեան վերջնական ու զլխաւոր նպատակը. ևս պէտք է ասեմ, որ ալի բանում նրանք մեծ «աջողութիւն» են ցոյց տւել. Զ-10 տարեկան երեխաները եւս տեսել նրանց մէջ, որ վարժ ու տիրացուական ձախնով կարողացել են սարկաւազի քարոզները եկեղեցու մէջ. ևրևի դրա համար է, որ ժողովուրդը ամեն կարգի կարգացողին «տիրացու» անուն է տալիս: Եւ որովհետեւ աղջկերանց պէտք է է եկել տիրացութիւնը, քանի որ նրանք տիրացու-տէրութիւնը դառնալու չէին, դրա համար էլ նրանք երբեք չեն մտածել աղջկերանց կրթութեան վրայ և ոչ էլ գոյութիւն են ունեցել նրանց մէջ աղջկերանց համար դպրոցներ: Միմիայն նշանա գիւղումն է եղել, ուն էլ մօտիկ տարիներս, որ մտածել են աղջկերանց հետ աղջկերանքին ևս կարողացնել:

*
* *

Օրդուն գտնուում է Տրապիզոնից արեւմուտք. կաղմում է նոյնպէս մի առանձին կաղա՝ Ջանիկի սանջակի մի մասը: Ինչպէս պատմում են գաղթականները, Համէլէնի հալածւած ու փախստական հայերից շատերը առաջ աղլուսել են եկել, բայց սեռնեւով, որ տեղերը անմշակ են, խիստ անտառների ու մառաշների պատճառներով վարելու անգարմար, նրանցից շատերն ալի և ուրիշ պատճառներից ստիպւած՝ գաղթել են դէպի Չարչամբալի գաւառակը: Տեղերն ու զիրքը համարեա նոյնն են, ինչ որ Չարչամբալի գաւառակինը, միայն մի քիչ աւելի ցածր և կտրտւած զառիվեր ու խորհուրդող առապարներով: Ելլիման՝ նոյնպէս. ծովափի դաշտային մասում—ճահճային, իսկ լեռնային մասում—մեղմ ու բարեխառն, Հոգերը, մանաւանդ հոյ գիւղերի հոգերը, ընդհանրապէս ամուր ու չբերող. նրանց հազիւ մի երրորդ մասն է բերրի ու արդաւանդ համարել: Օրդուի գաւառակի բերքերի մէջ մեծ տեղ է բռնում լոբիան, որ մեծ քանակութիւնով արտահանւել է, օրւան մօտաւորապէս 60 վարալի. մանաւանդ տւելի գին է ունեցել սպիտակ «թըկըլ» կոչւած տեսակը: Միմիայնը մեծ մասով իրանց համար են արել. ծախու չեն ունեցել: Եղել է նոյնպէս թութունը, բայց ոչ աչքքան լաւ, ինչպէս Սինոպլինը ու Չարչամբալինը, ամենալաւ տեսակի թութունը ծախւելիս է եղել փութը 6 մանէթի, աչք ինչ՝ միկնոյն տեսակի թութունը գաղթական ավերում կրկնակի գնով է ծախւում: Թութունի առտրի ալիքան ընկնելու պատճառը, ինչպէս վերեւն էլ ասեցի, մնաւիտաւութիւնն է: Մնացած բերքերն են՝ ցորեն, վարսակ ու գարի. որանք աչքքան քիչ են եղել, որ գիւղացուն իրան չեն բաւականացել, ուր մնալ, թէ արտահանէին: Օրդուի գաւա-

ապրիլի 15-ից աւել հայաբնակ գիւղեր. դեռ աղքատներ միայն
կենտրոնական մեծ գիւղերն են եղել, որոնք՝ ամենքն էլ ունեցել են իրանց
համար ջուկ եկեղեցիներ և բազմապատկեր են եղել մի քանի գիւղամասերից։
Դրանցից դուրս եղել են և մի քանի առանձնապատ փոքր գիւղեր, որոնք
եկեղեցի չեն ունեցել, կենտրոնական մեծ գիւղերը սրանք են եղել. Գէ-
լիքեօյ, Սայաջի, Խլուբէկ, Չուուշար, Բուլթան, Ալաջաթամ և այլն։ Արանցից
միայն Գէլիքեօյը ունեցել է 250 տուն հալ ընտիր։ Համարեա նորիցս
մեծ են եղել և Սալաջին ու Խլուբէկը։ Վերջին պատերազմից չեսող՝ Կով-
կասի լեռնայինների մեծ բազմութիւն, աբխազներ ու չեքքէղներ իրանց
ահազին հօտերով լցւում են սկզբում Օրդուի գաւառակը, բայց քիտո՞-
տեղին չհաւանելով՝ անցնում են Չարչամբալի ծովափերը, ուր իրանց հա-
մար ազատ տեղ չգտնելով, հալածանքով ու սոսկալի անգթութիւններով
կարողանում են փախցնել տեղացի հայերին ու բռնել նրանց տեղերը։
Բայց երբ նոր նաւաճած երկրից աջարացիների մեծ բազմութիւն գաղ-
թում է Օրդուի գաւառակը, որովհետեւ մնացած բոլոր ծովափերը բռնել
էին միւս եկւոր լեռնայիները, կամաց-կամաց աղքատի հայերն էլ են սկսում
գաղթել։ Այդ է պատճառը, կարծում եմ, թէ ինչու Օրդուի հայերը միայն
վերջին պատերազմից չեսող են սկսում գաղթել իրանց հայրենիքից, որով-
հետեւ չհալելով, որ առաջ էլ լաւ օր էին քաշում, աղքատ էին, տնտե-
սական ծանր պայմանների ու տուրքերի մէջ խեղդած էին, հողը չէր բե-
րում, էլի մի կերպ ապրում էին իրանց հալածական երկրում. բայց այն
զաղանների գալուց չեսող, նրանց էլ տեղ չէր մնում ապրելու։ Եւ ահա՝
հետեւելով իրանց հարեան Չարչամբալիների օրինակին, նրանք էլ են
գաղթում Կովկասեան ափերը։ Այսօր մեծ մասով նրանք կենտրոնացած
են Սուխումի չրջանում, բայց ցիր ու ցան խմբերով պատահում են նոյն-
պէս և Չերնոմորի վիճակի հալ գիւղերում։

Օրդուի հալ գիւղերից գաղթողներ եղել են և Փոքր-Ասիայի հեռա-
ւոր Նիկոմիդիայի (Խզմիդ) գաւառը, դարձեալ Թիւրքիստան, բայց հայրե-
նական տեղերից հեռու։ Դրանց գաղթելու պատճառը, ինչպէս երևում է,
աւելի հողն է եղել, քան կեանքի անապահովութիւնը։ Դրանք գլխաւո-
րապէս վերջին պատերազմից չեսող են գաղթել, թւով 75 ընտանիք,
որոնց մի փոքր մասը ուրիշ կողմերից է եղել, մեծ մասը Օրդուի գիւղե-
րից։ Նրանց վրա է մեծ խնամք է տանում այդ գաւառի ունի ժամանակա-
տուջնորդ Ստեփան վարդապետը, Նիկոմիդիայի այդ հերոսն ու գաղթա-
կանների պահապան հրեշտակը, որ հաղարաւով արգելքներին չաղթելով,
աղաճողացնում է այդ գաղթականների վիճակը, հիմնիկով նրանց համար
«Հալուց գիւղը», ուր կարճ միջոցում, համարեա մի քանի տարւոյ մէջ, ինչ-
պէս գրում են, կրկնակի աճում են և լաւ վիճակի մէջ են։ Այդ գիւղի հառ-
տաւելուց մի երկու տարի չեսող, էլի նոր գաղթականներ են գնում այդ

գաւառը, ալս անգամ ամբողջապէս Սրգուի գիւղերից, թույլ մօտ 40 հաշ ընտանիք, Դրանք ժամանակաւորապէս նստում են Ֆէրէզլի գիւղի մօտ, մինչև որ գալիս, տեսնում է նրանց իրանց անձնէր վարդապետը և նրանց համար էլ նոր «Արամ-գիւղ» շինում։ Տրապիզոնի կողմերից մի ուրիշ գաղթական խումբ էլ է լինում գնացած այն գաւառը, որոնց մի մասը նոյնպէս Սրգուի կողմերից է լինում։ Նրանք էլ հաստատւում են «Արմաւիր» գիւղում¹։ Այդ բոլոր գաղթականները, ինչքան լսել եմ, իրանց տեսած, անցած օրերի հետ համեմատած, քիչ թէ շատ լաւ վիճակի մէջ են։ Օրգուեցի համէլէնցիներից շատերը կը գաղթէին ալմանդ, եթէ միայն թիւրքական անուշից չսարսափէին։

Օրգուի գաւառակի նկարագրութիւնն անելով, չեմ կարող չլինել նրա հռչակաւոր Կարադեօլի «եալլան», որի գոմբը լսեմ եմ հարկւրաւոր բերաններից։ Կարադեօլի «եալլան» կամ լեռնալին արօտատեղը գտնւում է Օրգուի հաշ գիւղերից բաւական հեռու, մօտ երկու-երեք օրու ճանապարհի վրայ, բարձրալանդակ ու գեղեցիկ սարաւանդների վրայ։ Դիրքը հրաշալի, ամբողջապէս ծաղկաւետ։ մանաւանդ շատ կալ աղտեղ հազար գիւտ անուշահոտ խնկածաղիկը, ջրերը սառնորակ ու վճիտ, օդը մաքուր ու հովասուն։ Կարադեօլի «եալլան» բիւրաւոր ոչխարների ամարանոց է։ աղտեղ է մշտական վաճառանոցը ոչխարների ու գառների, որոնց համար ամեն կողմից գնողներ են գալիս։ Ասում են, որ ալդ տեղի արօտներում արածող ոչխարի ու գաւի միսը մի առանձին անուշ համ ու քաղցրութիւն ունի։ Աղտեղ են անցնում ամառը գաւառակի բոլոր լեռնական հովիւները իրանց բաղմաթիւ հօտերով մինչև օգոստոս։ ալմանեմտ սկսւում է լեռնալին ցուրտը։ Կարադեօլի մօտակալքում կան գիւղեր, որոնց ճանապարհը ձմեռը կապում է, իսկ «եալլալի» վրայ ոչ ոք չէ մնում։ Այդ «եալլան» ծառայում է և իբրև ամարանոց քաղաքի (Սրգուի) բնակիչների համար։ Կարադեօլի անունը հռչակւած է ամբողջ թիւրքիւում իբրև զրախտ ու անմահական տեղ։ Ժողովուրդը հիացած ու ապշած նրա հրաշալի գեղեցկութիւնից, իր երգերի մէջ նրան «Սուլթան Կարադեօլ» է անւանում, իսկ թիւրքը մինչև անգամ հետեւեալ առածն է հնարել. «Կարադեօլա գէթմէլան թոռուն՝ էօքուզ օլմաս։ Ստամբուլա գէթմէլան աղամ եղիզ օլմաս»²։ Ահա մի կտոր էլ Կարադեօլի վրայ ասւած երգերից։

«Կարադեօլուն եալլարի գիւզ օլուն,

իւղ եալընդա քէլմանալար կըզ օլուր։

Կարադեօլ, Կարադեօլ, Սուլթան Կարադեօլ»³։

¹) Պ. Տոնապետեանց. Ստեփանոս եպիսկոպ. «Արաքս». 1890. № 1։

² Կարադեօլ չղնացած արջաւոր եղ չի դառնալ, Ստամբուլ չղնացած մարդը մարդ չի դառնալ։

³ Կարադեօլի «եալլանները» հարթ են, հարկւր տարեկան պառտւները

*
* *

Ունիայի գաւառակը, կամ, ինչպէս հնումը կոչւում էր, Պոլիմոնակոն, Պոնտոսը, ձգւում է Սև ծովի ափերին, Սրղուից գէպի արևմուտք, լուսնի պէս գեղեցիկ կամար կազմելով, Աւջևը ծվում է արծաթափայլ ծովը, որից 4—5 ժամ հեռու, լեռնալին բարձրութիւնների վրայ երևում են հաղ գիւղերը: Աւջևից ծովը, փետից անտառապատ ու գեղեցիկ լեռներ, որոնցից վազում են քաղցր ու սառնորակ աղբիւրները, մնում ու բարեխառն օդ: Այսքան գեղեցիկ է եղել Ունիան, իմ տեսած Ունիացի գաղթականները բոլորն էլ հիացմունքով էին վիշում իրանց աշխարհը: Ոչ միայն գիրքն է լաւ, ալ և հողերը բերրի, բայց չնայելով սրան, էլի ժողովուրդը միւս տեղերի պէս աղքատ, նիւթապէս ընկած վիճակում, օրապէս հացի կարօտ, էլ չեմ ասում հազարաւոր բռնութիւններին ու անգթութիւններին մատնւած: Ունիայի գաւառակում հաշւել են մօտ հազար տուն հաց, որոնց բնակած գիւղերը սրանք են եղել. Քիօքլուկ, Փէլիտեաթաղ, Կարոմոն, Թաւաքլուզ, Օքուզքիօյ, Քէլուզ, Ֆէնարիս, Բալլուզ, Իւչբուզար, Հոզուլրա, Կապաջուզ, Աղսուտ, Եաղբառոն, Թութլուզ, Կոզբուք, Կարաարմուտ, Աքինջուզ, Թաքիրաղ, Կազոնջուրեմոն, Եալբաշի, Կարատաշ, Իւզուսթիւք, Դարախտա, Կորքմաղլի, Մէնգէն, Կուզգունջուք և վալլան: Սրանց մէջ ամենից նշանաւորներն են. Իւչբուզար, Քիօքլուկ, Ֆէնարիս և Բալլուզ, սրանք հարիւրական տուն բնակիչ են ունեցել, մնացածները 20—50 տուն, մէկը միայն՝ 10 տուն: Գիւղերից ութի մէջ եղել են ջուկ-ջուկ եկեղեցիներ. դրանք կենտրոնական գիւղերն են եղել, որ համէլէնցիների սովորութեան համեմատ, կազմւած են եղել ցիր ու ցան ու փոքր գիւղերից: Այն բոլոր գիւղերում, ուր որ եկեղեցի է եղել, իսկ եկեղեցի չհղած գիւղերից էլ երեքում, եղել են և պարոցներ, չափոնի բան է՝ հին տիրացւական. դրանք էլ վերջին ժամանակները բացւած:

Հողը, մեծ մասով՝ ինչպէս ամեն տեղ Սև ծովի ափերին, ժողովրդի սեփականութիւնը չէ եղել. թիւրք ու չիրքէզ բէկերինն է եղել: Բերքերը սրանք են եղել. սիմինդը՝ որ հացաբոլսերի մէջ ամենից աւելի են ցանել և նրանց գլխաւոր բերքն է եղել: Սիւսը՝ մի տեսակ հացաբոլս է, որին Արաւելի կոզմերում «չիլախ դարի» են ասում: Գարուն շատ նման է, միայն քիստ չունի. կալսելուց ընտել վրայի կեղևը թողնում է, մնում է ցորենի պէս մերկ, համարեա թէ նրա գոյնով: Դա դործ են ածել աւելի «բլղուրի» համար, որ՝ նրանց ասելով՝ ցորենի «բլղուրի» էլ լաւ է եղել, հաց էլ են չինել նրանից. շատ էլ գոլում են նրա հացը, լինելով թիթի ու մարսական: Սիւսը ցանելիս են եղել քչերը. ամեն տուն չէ ցանել: Յօրհնը ամենքը.

աղջիկ կը դառնան, Կարապիօլ, Կարապիօլ...

ցանկելիս են եղել. 5—30 փութ ցանոց է եղել. նոյնչափ ցանկ են և դարին ու վարսակը. լորիա՝ ամենքն էլ ցանկ են. չը ցանոց չէ եղել. ապիտակ լորիալի մի քիւակը (35 օխտ) ծախսելիս է եղել մօտ 70—80 դուրուշի կանեփն էլ ցանկելիս են եղել, աւելի իրանց համար, մի տուն ամենաշատը՝ մօտ 2 փութ, Բաթան ամենքը չեն ցանկել, բայց եղել են 4—8 փութ ցանոցներ. շատ թանկ է դնահատել. 60 օխտն 4 մէջլիթիալի է զնայել (մէջլիթիան 2 մանէթ է), վրալի կանեփն էլ ջոկ ծախսել է, օխտն 2—3 դուրուշի. Ունիալի դաւառակում բացի հաւերից կան մեծ թւով թիւրքեր ու կովկասեան լեռնցիներ. մօտ 500 տուն չերքէզ, 400 տուն՝ աջարացիներ և մի 50 տուն՝ արխաղ. թիւրքերը ամենքից շատ են. նրանց թիւը հաւատար է հաւերի հաւերի ու աջարացիներին թիւն՝ միասին վերցրած. Լեռնցիները աւելի ծովափերն են նստած. լեռների վրայ, հաւերի մօտ շատ քչերն են ապրում. Չերքէզների զիւղերը իրարից շատ հեռու են, ամենաքիչը 6 ժամի ճանապարհի վրայ. իսկ աջարացիներն ու թիւրքերը ալդպէս չեն. նրանք աւելի խիտ են նստած. Հաւերը առաջ նեղութիւն են քաշել չերքէզներից. բայց ալդ նեղութիւնները մուտցւել են աջարացիների պատճառած անգթութիւնների մօտ. ալդ լեռնցի դադանների արարքները յժար է խօսքով նկարագրել. Կրանց գաղանթիւնները միւս չափեր են ստանում աւելի վերջին տարիներում՝ 1885 թւից չնոյ, ալդ տարիներից չնոյ է սկսում և հալը գաղթել Ունիալի կողմերից, առաջին անգամ 1888 թւից. Նրանց թիւն աչքքան շատ չէ. նոր անկած տարին ընդամենը 30 տուն էին, կենդրոնացած աւելի Սոչիի բաժնի հալ զիւղերում և մի քիչ էլ Չերնոմորի միւս կողմերում:

*
* *

Աւնիալից թիւրքական 18 մզոն դէպի արեւմուտք ձգւում է Թերմէի գաւառակը. Ալդ վիճակը, որ աչսօր սննչան տեղ է, հնումը մի անւանի տեղ է եղել և զիցարանական մի աւանդութիւնով՝ շատ երեւելի իր ամառն կանանցով, որոնց զլիսաւոր քաղաքը Թերմէի գետի մօտ է եղել¹. Սրա զիրքը՝ համեմատելով Աւնիալի հետ՝ շատ վատ է, ծովին աւելի մօտիկ է. օդն ու ջուրն էլ ոչ աչքքան լաւ. Հոգերը առհասարակ լաւ են եղել, աչքքան վատ չեն եղել, բայց բոլորն էլ ուրիշի. մեծ մասը կաւաճականի, մի մասն էլ՝ աւրութեան. ժողովրդինը ոչինչ չէ եղել. հալը սեփական հող չէ ունեցել. Բերքերն են՝ սիմինդր, ցորեն, գարի, վարսակ ու բրինձ. Ալդ վերջին բոլոր մշակութիւնը Թերմէի բերքերի մէջ առաջին տեղ է բռնել. դա է եղել ալդ վիճակի միակ արտահանող բերքը. ալդ բոլոր մշակութիւնը տարածւած է եղել նոյնպէս և Ունիալի գաւառակի ծովափի մա-

¹ Բժշկեան, «Պատմութիւն Պոնտոսի»:

սուս Մնացած հացաբոլորը բոլորը իրանց համար են եղել. սիմինդր երբեմն քիչ քանակութիւնով արտահանել են:

Հայաբնակ գիւղերը սրանք են եղել. Էօլումդազ, Խոլլոն, Զիլիֆտար, Սարիասոն և ուրիշ մի քանի փոքր գիւղեր: Ամբողջ վիճակում եղել է մօտ 3—4 հարիւր տուն հաշւով 10 հալաբնակ գիւղերով, որոնցից իւրաքանչիւրն ունեցել է 30—40 տուն հաշւով բնակիչ: Ունեցել են երեք եկեղեցի: Սարիասոն գիւղը ալտոր ամբողջապէս դատարկւած է իր բնակիչներից, որոնք բոլորն էլ գաղթել են Կովկասեան ափերը: Դրանցից աւելի չատ են գաղթել, քան Ունիալից: 1890 թւին դրանց թիւը մօտաւորապէս 60 տուն էր: Դրանց գաղթելու պատճառը գլխաւորապէս կեանքի անապահովութիւնն է եղել լեռնցի աւազակների կողմից: Նրանք էլ աւելի Սոչիի բաժնում են խմբւած: Թերմէացիները, իմ տեսած բոլոր հաշւով գաղթականների մէջ, որոշում են իրանց տգիտութիւնով ու նահապետական բարքով: Զիլում եմ՝ ինչպէս մէկ անգամ սննեակումս նստած՝ հացոց լրագիր էի կարդում: Ներսէս է մտնում մի օտար քահանայ, որ ինչպէս լսող իմացալ, Թերմէի հաշւ գիւղերիցն է լինում և հռչակւած աշնտեղ իբրև ամենից գիտունը վիճակի բոլոր հաշւ քահանաների մէջ: Նա եկել էր Սև ծովի ափերը չրջելու, որպէս զի տեղ գտնի ու գաղթեցնի իր իմաստութեան ու խնամքին լանձնւած հաշւ ժողովրդին: Տեսնելով որ տէր հայրը հետաքրքրւում է կարդացածովս, առաջարկեցի նրան լրագիրը: Տէրտէրը ձեռքն առաւ թերթը և ուզեց կարդալ, բայց զժրախտաբար՝ չրջելով թերթը՝ «ծալրը» չկարողացաւ դանել: Գուր անցան և ակնոյցների օղնութիւնը: Վերջապէս դիմեց ինձ՝ «ծալրը» հարցնելով... Եւ դեռ ալգախիս տղաները մեծ հռչակ են վաբելում տղէտ ու կոյր ժողովրդի մէջ: Տեսել եմ մի ուրիշ քահանայ էլ ի նոյն Թերմէի կողմերից, որի տգիտութիւնը մինչև անգամ առասպելական կարող է համարուել: Ո՛ր մէկը լիչես, որ մէկի վրալ ցաւես: Ի՞նչպէս անի հաշւ գիւղացին որ չգաղթի, չփախչի իր երկրից: Ի՞նչ սրտով մեղադրես նրան, երբ նա դրսից էլ, ներսից էլ լծի տակ է: Իրսում՝ թիւրք բռնաւորի լուծն է նրան տանջում, ունեցածը խլում, չափաւորում, իսկ ներսից՝ իր ազգս ու կոյր առաջնորդի լուծն է նրա վրալ ծանրանում, որ հաւատի անունով խլում, ստրկացնում է նրա անարատ զղացմունքներն ու հոգին:

*
* *

Սինոպի գաւառակը կազմում է համէլենցի հայերի բնակչութեան արեւմտեան սահմանը: Մինչև վերջին պատերազմը նրանից դէնը համէլենցի հայեր չկային: Վերջին պատերազմից լսող, ինչպէս վերև գրել եմ, Զանլիկի սանջակից, գլխաւորապէս Օրդուի կողմերից, տնտեսական ծանր պայմաններից ստրկւած, համէլենցիների մի խումբ գաղթում է հեռաւոր Նիկոմիդիայի գաւառը: Էլ ուրիշ տեղ համէլենցի հայեր չեն պատահում: Սինոպ

և կամ Սընապ, ինչպէս պտում են համէնցիները, շատ նշանաւոր տեղ է ամբողջ Սև ծովի հարաւալին ափերին: Նրա անունը չիշում են ամենահին պատմիչներից Ստրաբոն ու Պոլիբիոս: Աւանդութեան նախելով՝ դեռ արգոնաւորդների ժամանակ Սինոպը չիմւած է եղել: Սինոպի հռչակը սկսում է Միլէդիացիների գալուց, որոնք կենում էին Միջերկրական ծովի ափերին, և հեռւից լսած լինելով Սինոպի գեղեցկութիւնը, մի հատւած նրանցից գալիս է ալդտեղ: Դրանց օրով Սինոպը ահնքան մեծանում է, որ բնակիչների մի մասը տեղ չգտնելով, անցնում է Կիրասոն ու Տրապիզոն: Դրանց ձեռքին էր Սինոպը, երբ երեւելի Միհրդատը տիրելով Պոնտոսի կողմերին, կարողանում է առնել Սինոպի հռչակաւոր ու անառիկ բերդը: Աշնուհետև Սինոպը դառնում է Պոնտոսի մայրաքաղաք: Վերջը Պոնտոսի ընկնելով՝ Սինոպն էլ անցնում է հռոմայեցիների ձեռքը: Հին դարերից մինչև այսօր Սինոպը հռչակւած է իբրև բարեկից ու առատ երկիր: Մեղանից շատ դարեր առաջ լոյն Ստրաբոն շատ է գովել Սինոպի լեռներն ու պարտէզները: Դեռ մինչև վերջին ժամանակները դրա սարերից են տարել Պոլիս մեծ նաւերի փայտեղէն նիւթերը, էլ չեմ փշում նրա ձիթենիներն ու ծովափին բուսած բժշկական խոտերն ու ծաղիկները ¹⁾:

Ալդքան հարուստ ու բարեբեր երկիրը չէր կարող չը գրաւել համէնցի հաւերին, մանաւանդ Ջանիկի կողմերում տնտեսական ու դատական ծանր հանգամանքների մէջ ճնշւած ու խեղդւած հաւերին, որոնք ալդ տեսակ տեղ էին փնտրում: Եւ ո՞վ չէր գնալ Սինոպ: Բոլոր գաղթականները մինչև այսօր հիացմունքով փնշում են Սինոպի աննման գեղեցկութիւնները: Հողը ահնքան արդաւանդ, որ ինչպէս պատմում էր ինձ Սինոպցի մի ծեր գաղթական, ոչ միայն թիւրքիալում, այլ և ոչ մի ալ տեղ չի լինիլ, այստեղերը, ասում էր ծիւղակը՝ ակնարկելով նոր գաղթած տեղերի վրայ, հալի տեղ չեն. սրանք «կզլբաշի», աւաղակի, «աբազի» (աբխազ) պէս մարդու տեղ են, հալ գիդի Սընապ, Սընապ... Աշնտեղի ջուրը պաղ, օդը լաւ, բերքերը առատ. ո՞վ չէր փշիլ Սինոպը: «Աշնտեղի ցորենը, պատմում էր ծերուկը, ոսկու պէս կը փալէր, մարդու երեսը մէջը կերեցնէր և ոչ այստեղի ցորենի պէս՝ սև ու փթած»: Աշնտեղի թուրթունն էլ անուշ համ ու հոտ ունի, գոցնն էլ դեղին սաթի պէս, նրա պէս փալուն ու պսպղուն: Ասում էին, որ տեղի դիրքն էլ բարձր է և ուրիշ տեղերի նման աշնքան դառիվեր ու անհարթ չէ թէև էլի անտառների մէջ կորած ու խեղդւած: Բաց դեռ բոլորը չէ. թէև ալդտեղ էլ ծանր տուրքերը սարսափեցրել են հաւերին, բաց գոնէ ազատ են եղել այն հալածանքից, որ դործ է դրել շատ տեղ իրանց հայրենիքում տեղական կառավարութիւնների կողմից դէպի հաւերը: Հալածանքի տեղ՝ երբեմն նույն իսկ կառավա-

¹ Բժշկեան. «Պատմութիւն Պոնտոսի»:

բուժեան խնամքն ու պաշտպանութիւնն են վաղելել, որ խնարկէ չառ զարմանալի ու չը լսած բան է թիւրքիաւում Ալսպէս՝ Կովկասեան ավերը զաղթելուց մի քանի տարի առաջ, տէրութիւնը հալերին ձրի հողեր է տալիս, գլխաւորապէս անտառոտ ու մացառոտ տեղերից, չընաչելով, որ աչդ հողերը մօտ լինելով թիւրք գիւղերին, աւելի նրանց պիտի տրւէին: Թիւրքերը չալսնի բան է՝ բողոքում են «գիւտուրներին» ցոյց տուած աչդ խնամքի դէմ, պահանջելով, որ հողերը իրանց տրւեն, հակառակ դէպքում՝ սպառնալով խովն ու արօրը թողնել ու անցնել Կովկաս: Աչդպէս էլ անում են, խովները տանում, թափում են դաշտերը և իրանք էլ պատրաստում զաղթելու, բայց կասավարութիւնը նրանց սպառնալիքը բանի արգելում է նրանց զաղթելը: Մի ուրիշ օրինակ. հալերից մէկը նեղը մնալով, սպանում է մի չերքէզի, մի մահմէդականի, բայց բոլորովին անսպասելի կերպով՝ մարդասպան հալը մի քիչ բանտարկելուց չետու, արձակում է և ազատում պատժից: Վերջապէս իբրեւ ամենազօրեղ ապացոյց, որ տեղական կառավարութիւնը լաւ է վերաբերուել հալերին, լսել եմ հիտենալ Ֆակար: Նրբ Աինոպի հալերի հռչակում մի քահանայ, լսած լինելով Կովկասեան ավերի գովքը, իր միամտութիւնից ու սովորութիւնից խաբւելով՝ պատրաստում է իր ծխի հետ դաղթել Կովկաս, գալմաղամը կանչում է նրան իր մօտ, բարեկամաբար աշխատում է նրան համոզել, որ չետ կանգնեն մտադրութիւնից, իրանց տեղերը չթողնեն, խոստանալով որ՝ կը միջնորդի որ երեք տարւալ տուրքերը ընդհանրէն, եղ չունեցողին՝ եզ տան, սերմ չունեցողին՝ սերմ. բայց քահանան ակամջ չէ՝ զնում նրա ասածին և, չափշտակւած նոր երկրի գովքից, իր տառաւոր ծխի հետ անցնում է Կովկասեան ավերը, բայց վերջը զղջալով իր չամառութեան ու արած անխելք քալի վրայ՝ նրանից պակաս չէին զղջացել նրա հետ եկած դաղթականները: Սուտ չէ աւետարանական խօսքը. «Կուրք երբ կուրին առաջնորդէ, երկունսն էլ խորխորատ կընկնեն»:

Ջանիկցիների զաղթելը դէպի Աինոպ սկսել է մեզանից մօտ 70 տարի առաջ: Կրանց թիւը հասել է աշնտեղ մինչև 150 տուն, որոնք ունեցել են երկու եկեղեցի և զետեղւած են եղել Կոյունջ գիւղում, որ միւսնեքի պէս մի քանի թաղերից է եղել կազմւած: Բացի մշտական բնակիչներից, Կոյունջում եղել են նոյնպէս մի քանի տուն վերջերը զաղթած Ջանիկցիներից, որոնք ժամանակաւորապէս ապրելիս են եղել սինոպցի հալերի մօտ, կիսրարութիւն անելով նրանց բարեբեր ու հարուստ հողերի վրայ:

Բացի սովորական հացաբոլսերից, նրանց արտահանող գլխաւոր բերքը եղել է թութունը, որի մշակութիւնը մինչև հիմա էլ կազմում է նրանց ամենազլխաւոր պարագամունքը, չնաչելով աչդ բերքի առեւորի ընկնելուն ու մեծավաճառութեան ճնշումներին: Աինոպցիները բոլոր

համէնցիների մէջ հռչակած են իրեն թութոռնի հմուտ մշակողներ, լատ. «թութոռնջիներ»: Սև ծովի ավերի համէնցիներից չափերը, որոնք հաճ-րենիքում թութոռն չեն արել, և այսօր մեծ չափով թութոռն են անում, մեծ մասով այդ բերքի մշակութիւնը նրանք Սինոպցի զաղթականներից են սովորել:

Չնայելով տնտեսական աջող պայմաններին, չնայելով տեղական կառավարութեան շտեմնած ու չլուած խաղաղ ընթացքին, բայց և այնպէս 1877-78 թ. պատերազմից լիտով հալերը սկսում են խմբերով զաղթել դէպի Վովկաս: Թէ ինչից տոբպած՝ հալը սկսեց թողնել ալդրան բարելից երկիրը, դրան մի քիչ զժւար է պատասխանել: Սև իրաւ՝ միւս բոլոր համ-չէնցիները ունեցել են իրաւացի և շատ խելացի պատճառներ, տնտեսական ու դատական ծանր պայմանների մէջ խելդւած, անհոգ, առանց կեանքի ու կալքի ապահովութեան,—ինչ պիտի անէին, որ չզաղթէին, բայց աչտակ՝ Սինոպում ալդ զրկանքները չեն քաշել. գեղեցիկ տեղ, հարուստ երկիր, բարեբեր հողեր, դրացի թիւրքերը բարի են եղել և լաւ չարաբերութիւն են ունեցել իրանց հետ, ինչպէս և ամեն տեղ համէնցի-նրի մօտ: Ինչքան իսկ եմ, զաղթականներից ոչ մէկը թիւրքերից զժգոհութիւն չէ լստնել. թիւրք գիւղացին, թիւրք ժողովուրդը առհասարակ շատ մօտիկ է եղել հալին ամեն տեղ էլ իր հայրենական ավերում. իրար մօտ դրանք միշտ գնալ-գալ են ունեցել: Հալին հալածողը թիւրք գիւղացին չէ եղել, ալ նրա բարբարոս կառավարութիւնը: Վաղթականներ առելով, նրանք էլ պակաս զժգոհ չեն եղել իրանց տէրութիւնից. նրանք էլ են հալածւել ու հարստահարւել զաղթական լեռնցիների երեսից, ստում էին, որ թիւրքերը հալերին մինչև անգամ երանի են տւել, որ գոնէ աղա-տութիւն ունին զաղթելու, իսկ իրանք ալդ աղատութիւնից էլ զրկւած են ու դատապարտւած մշտական գերութեան բռնաւոր տէրութեան ձեռքին:

Ինչ էլ լինի՝ անկարելի է որ սինոպցիները առանց պատճառի զաղթէին հայրենիքից: Սև իրաւ՝ ինչ խելքին մօտիկ բան է առանց պատ-ճառի զաղթել, այն էլ ալդրան հարուստ ու գեղեցիկ երկիրը: Արդէն լստնի է, որ վերջին պատերազմից լիտով աջարացիները զաղթական ար-չաւանք են գործում Սև ծովի թիւրքական ավերը. նրանց մի մասն էլ գալիս է Սինոպի կողմերը: Նրանցից առաջ չերթէյններն էին եկել. դրանց արդէն քիչ-շատ սովորել էին հալերը: Լեռնցի նորիկ զաղթականների անգթութիւնները երեւի աւելի ծանր են թւացել հալ գիւղացու: Ի՞նչ պիտի անէ գեղեցիկ երկիրը, առատ ու բերրի հողը երբ ալդ բոլոր իրը չէ. երբ նա իր կեանքի և ունեցածի տէրը չէ. երբ իր ձեռքով մաքրած ու բացած արտերից շատերը լեռցի եկւորներն են լուծւում, իսկ տեղական կառավարութիւնն էլ իր նույն իսկ «բարի» ցանկութիւններով անկարող է

լինում զսպել այլ գաղաններին: Ճիշտ է՝ նոյն իսկ իրանք էին պատմում, որ լեռնցիների արածները իրանց տեղում՝ համեմատելով Ջանիկի կողմն. բում պատահած աւազակների անգթութիւնների հետ, աւելի քիչ են եղել, բայց և աւնպէս անուրաւնալի է, որ այդքան անգթութիւններն էլ շատերին ցաւ, վիշտ ու լուսահատութիւն են բերել: Էլ չեմ չիշում թիւրքական անչափ տուրքերը, որ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և այդտեղ՝ խեղդել են հալ գիւղացուն: Ինչ էլ լինի՝ հալ գիւղացին առանց պատճառի չէր կարող գաղթել. ևս համոզւած եմ, որ իմ տեսած բոլոր համէնցի գաղթականները ունեցել են իրանց արդարացի պատճառները, ապա թէ ոչ՝ նրանք չէին թողնիլ հայրենիքը: Եւ գոնէ այդպէս եմ ճանաչել ու հասկացել հալ գաղթական գիւղացուն: Նա որ աւնքան գաղթասէր ու շուտ մոռացող լինէր, աւնքան բանաստեղծական զգացմունք ու վառ լիւրդութիւն չէր ունենալ իր անբաղդ երկրի վրայ: Երկրորդական պատճառների թւում կարելի է փնել նոյնպէս Չարչամբացիներին, որոնք զրանցից առաջ էին գաղթել և որոնց մասին նպատուղ լուրեր էին տարածել Սև ծովի թիւրքական բոլոր ափերում: Ջանիկի ամեն կողմերում նրանց երանի էին աալիս հայրենիքում մնացողները. ամեն տեղ լուրեր էին պտտում, որ նրանք զրախա են գտել, էլ աւազակի ու զափտիալի երեսը չեն տեսնում, մի կոպէկ հարկ չեն տալիս, «հաւատ ու օրէնք են շահում» ու օրից օր հարստանում են... Այդ ու զրանց նման լուրերը փոխել են Սինոպցիների միտքը, որոնք թէև միւսների չափ աղքատ չեն եղել, բայց և էլի նրանց պէս անապահով ու լուսահատւած ծանր տուրքերից ու աւազակների երեսից, Գաղթելուն քիչ չէ նպատում և իրանց մօտ հռչակւած, վերև լիւրւած «երևելի» քահանան, որ լրած լուրերից շացած, ապագայ հարստանալու լուսով կոյր առաջնորդ է դառնում իր միամիտ հօտին:

Սինոպցիների գաղթելը սկսւում է վերջին պատերազմից չետոյ, 80-ական թւերից: Վերջին տարիները Սինոպից գաղթողներ չեն լինում. բոլոր գաղթականները թւով մօտ հարիւր տուն կը լինին. մնացածները՝ մօտ 50 տուն, մնում են հայրենիքում: Դրանց վրայ աւելանում են վերջին տարիները Ջանիկի կողմերից զրանց մօտ գնացած 40 տուն հալ գաղթականներ, աւնպէս որ 1888 թւին Սինոպի վիճակում մնացող համէնցի հալերի թիւն եղել է 26 տուն, որոնք ապրում են մինչև այսօր էլ կոլլուջ գիւղում: Նրանց վիճակը, միւս տեղերի համէնցիների հետ համեմատած, աւելի լաւ է. թէև աւազակներ էլի կան, բայց հալերին աւնքան չեն նեղացնում. քիչ լնէ շատ էլ ապահով վիճակ ունին. «աղալուդ» էլ չեն վճարում, որովհետև փողով գնել են կալւածատէրից իրանց բանեցրած հողը:

Մօտ տարիներս Սինոպցի հալ գաղթականներից մի-երկուսը հողի պակասութեան և տնտեսական ուրիշ պատճառներից ստիպւած, վերադարձան հայրենիք: Այդպէս շատերն են մտածել, որոնք զրկւելով հա-

բուստ ու բարեւից երկրից, ընկել են անմարդաբնակ սարերն ու ձորերը և զղջալով իրանց արածի վրայ, ուղեցել են նորից ևս դառնալ իրանց հայրենիքը. բայց մինչև այսօր էլ դեռ մնացել են, քանի-քանի անգամ եմ լսել Սինոպցի դաղթականներից այս մորմաքող խօսքերը. «մենք ալստեղ եկանք չը գիտնալով. մեր արածը վիճարութիւն է. եթէ առաջուց պատած-տեսած լինէինք այս կողմերը, ինչ էլ լինէր՝ չէինք դալ ալստեղ, մեր Սընապը չէինք թողնիլ»։ Սինոպցի հալ դաղթականները ցրած են այսօր Սուխումի շրջանի և Վէլիամինովեան բաժնի մի քանի հալ գիւղերում, բայց ցիրուցան պատահում են նոյնպէս Չէրնոմորի վիճակի հեռաւոր ծայրերում։

Ես վերջացրի Սև ծովի հայրենական ափերի նկարագրութիւնը։ Այդ հայաբնակ տեղերին առանձին-առանձին տեղակաղրական-տնտեսական ակնարկներ անելով՝ իմ նպատակն էր ցոյց տալ դաղթական հային իր հայրենիքում, կեանքի այն բոլոր թշուառ պայմանների մէջ, որոնք պատ-ճառ են լինում մի ժողովրդի գաղթելուն։

ԵՐԿՈՒ ԳԱՐՈՒՆ

ԱՐԱՄ-ԶԱՐԸԳԻ

Գարունը անցաւ և վարդը թառամեց—

Կուգայ նոր գարուն.

Կը բացւի նոր վարդ, պլպուլը նորից

Կ'երգէ երգ սիրուն:

Գարունը անցաւ վերջին կայծն հանգաւ,

Երգիչը լռեց.

Ել չի գալ գարուն, սրտին ծանրացաւ.

Ձիւնը և սառեց:

Նորա քնարը սէր չէ երգելու

Ել չի գալ գարուն,

Սիրոյ երգերը էլ խորթ են ձիւնոտ

Նորա լարերուն:

1897 թ. 9 օգոստոսի

Տիւրինգէն:

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՐՔԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Պրոֆ. Ն. Ի. ԿԱՐԷՆԻ

Թարգմ. Ա. Արասխանեանցի

Վերջին տարիներս ռուսաց հասարակութեան լայն շրջաններում և մանաւանդ ռուսանոց երիտասարդութեան միջև շատ նշանաւոր չափով ուժեղացել է ձգտումը դէպի ինքնակրթութիւնը և լուրջ գրքերի ընթերցումը: Վերջինիս համար վկայութիւն է ծառայում ի միջի այլոց հրատարակչական գործունէութեան մի փոքր աւելի մեծ կենդանութիւնը: Հինգ այն է որ տեղեկանում ես արտասահմանեան առաջաւոր գրականութիւններից արած որ և է կարեւոր ֆիլոսոֆայական կամ գիտական գրաւծքի ռուսաց թարգմանութեան հրատարակման մասին, և պատահում էլ է որ գրքերից որ և է մէկը կամ միւսը լոյս է տեսնում երկու թարգմանութիւններով: Նաև առաջւանից աւելի լոյս են տեսնում ինքնուրոյն գրքեր, գրաւծ հասարակաց հարցասիրութեանը բաւարարութիւն տալու համար: Այդ հրատարակութիւններից շատերը հասարակութեան մէջ լաւ ընդունելութիւն են գտնում, որին ճարտար ապացոյց է ծառայում այդ գրքերի նոր (երբեմն նաև յաճախակի) տպագրութիւնները: Գիտական բովանդակութեամբ բրոշիւրների, որոնք մի քսանուհինգ տարի առաջ մեծ մասամբ հանգիստ մնում էին գրաւաճառական դարակների վրայ և հեղինակների կամ հրատարակիչների մի տեսակ անշարժ կայքն էին դառնում, այժմ բաւականին բանուկ ապրանք են դարձել: Կան նոյն իսկ հրատարակչական տներ, որոնք շրջանառութեան մէջ են գցում գլխաւորապէս գիտական և ֆիլոսոֆայական գրաւծքների փոքր ծաւալի: Հասարակութեան մէջ պահանջ է զարգացել նաև այնպիսի

գրքերի համար, որոնք արդէն վաղուց սպառուել են. և ահա մենք վկայ ենք լինում մեռեալների մի տեսակ յարութեան: Այս ամենը, իրօք, վկայում է որ հասարակութեան մէջ զօրեղացել է լուրջ գրքերի ընթերցումը:

Ի հարկէ, երբ մարդիկ իրենց ձեռքն են առնում մի գիրք, բրոշիւր կամ ամսագրական յօդած՝ գիտական կամ ֆիլոսոֆացական բովանդակութեամբ, այդ նոքա չեն անում լոկ ժամանակ սպանելու համար. իսկ երբ մարդը պատահաբար չէ կարդում այս ու այն լուրջ գրածք, շահագրգռած լինելով որ և է առանձին խնդրով, այլ իւր պարապ ժամանակի մի մասը շարունակ նւիրում է ընթերցանութեան, ապա այդտեղ խօսքը մի այնպիսի ընթերցանութեան մասին է, որը կեանքի լուրջ գործ է, խօսքը ոգեկան կարեւոր պահանջի բաւարարութեան, մի յայտնի բարձր նպատակի հասնելուն ու միջոցի մասին է: Լինում են, ի հարկէ, ընթերցողների միջև պարզ սիրողներ և մի բան կարդալու, և մինչև անգամ ոչ հէնց այնպէս միայն ժամանակի համար, — կան այնպիսիներ, որոնք ունին իսկական հարցասիրութիւն, երբեմն շատ անորոշ, բայց յամենայն դէպս խիստ համոզուելի, մանաւանդ այնպիսի շրջաններում, ուր աւելի ավինտ են խաղում, և ուր մի բան էլ եթէ կարդում են, այն էլ միայն հետաքրքրականը: Ընթերցասէրներ գիտութիւններ ձեռք բերելու համար պատահում են դեռ ևս մանկական և պատանեկական հասակներում, բայց ղեռահասների ցոյց տւած այդ սէրը միշտ չէ պահպանւում յետուայ տարիներում, և ոչ էլ միշտ նա փոխւում է ուսման ծարաւի, որը իսկական լուրջ ընթերցող է ստեղծում: Շատերը նաև հասուն տարիներում պարզ հարցասիրութիւնից դէնը չեն անցնում. մարդուս դիւր է գալիս միշտ նոր ու նոր բաներ իմանալ, և այդ մինչև անգամ սովորութիւն է դառնում նորա համար. բայց իւր յիշողութիւնը հարստացնելով զանազան ֆակտերով, նա կարող է նաև որ և է հարցերով չզբաղել, պահանջ չգալ իւր միտքը հարստացնելու գաղափարական բովանդակութիւնով, գլուխ չկոտրել որ և է աշխարհայեցողութեան հիմնական խնդիրների համար: Հասկանալի է որ այդպիսի գրասէր ընթերցող կը գերադասի այն ընթերցանութիւնը, որը մտաւոր մեծ լարումն չի պահան-

ջուժ. նա կը հողայ միայն, որ գրքեր կարդալու ժամանցը ոչ մի-
այն հաճելի լինի, այլ և օգտակար. բայց նա կանգ կ'առնի եթէ
հարկաւոր լինի այդ հաճելիից և օգտակարից անցնել նոյնպէս դէ-
պի օգտակարը, բայց որը կը պահանջի որոշ ճիգ, մի քանի դժա-
րութիւնների յաղթելը և երբեմն նոյն իսկ անախորժ զգացողու-
թիւններ, որպէս ձանձրութիւն. երբ հետաքրքրութիւնը դառնում
է գիտութեան ծարաւ, մի բան իմանալու ցանկութիւնը ընդու-
նում է աւելի որոշ կերպարանք, այսպէս ասած, ոգիանում է,
աւելի ուժեղ է բռնում ամբողջ մարդուն և աւելի խորն է շօշա-
փում նորա ոգեկան շահերը, սփռելով ոչ միայն ֆակտերի վրայ
այլ և իդէաների վրայ և բոլոր մտաւոր ձգտումների վերջնական
նպատակ դնելով աշխարհայեցողութիւն մշակելը. միմիայն դի-
տեմալու այդպիսի ցանկութիւնը կարող է բաւականաչափ ուժեղ
լինել, որ մարդիկ ընթերցանութեան մէջ լոկ պարապ ժամերի օգ-
տակար զբաղմունք չտեսնեն և որ նորան նւիրեն, որպէս իսկական
գործի, երբեմն մտաւոր ճիգեր պահանջող, դժարութիւնների,
երբեմն նաև աւելի մեծ ծանրութիւնների յաղթող: Ի հարկէ, այն
լուրջ գրքերի նկատմամբ, որոնք նշանակում են մեծ հասարակու-
թեան համար, հեղինակները ամեն կերպ պիտի աշխատեն հասկա-
նալի և հեշտ իւրացնելի դարձնել այն առարկաները, որոնց մասին
խօսում են. բայց կան սահմաններ, որոնցից դէնը չի կարելի անց-
նել. այդ սահմանները դժագործւում է նոյն իսկ ֆիլոսոֆացական և
գիտական խնդիրների դժարութիւնը: Կայ ընթերցանութիւն էլ՝
ընթերցանութիւն էլ. մէկը յաջողութեամբ կարող է փոխարինել
ամեն ուրիշ զւարճութիւն, որը անհրաժեշտ է աշխատող մարդուն,
հանգստութեան համար. միւսը, ընդհակառակը, ինքը հէնց աշխա-
տանք է դառնում. և որքան շատ ենք կամենում ընթերցանու-
թեամբ ուսանել, նոյնքան քիչ պիտի նայենք ընթերցանութեան
որպէս զւարճութեան վրայ: Հարկաւ, շատ լաւ է, երբ լուրջ գլու-
քերի ընթերցողը իւր մտաւոր աշխատանքի մէջ նաև զւարճու-
թիւն է գտնում, բայց և ամեն աշխատանք զւարճութիւն է դառ-
նում, երբ նա համապատասխանում է աշխատողի ընդունակութիւն-
ներին և հակումներին, կատարում նորա ուժերի չափով և տա-
լիս ցանկացած արդիւնքը:

Ես այս նկատողութեան մէջ խօսում եմ միայն ընթերցանութեան որպէս զբաղմունքի մասին, որին նպատակ է դրում իւրացնել ֆիլոսոֆայական և գիտական, բարոյական ու հասարակական գաղափարներ, մտաւոր հորիզոնի լայնացում: Գրքերը ոչ միայն կարդում են, այլ և նոցանով ուսանում են: Դպրոցը չի կարող լիակատար ուսում տալ: Միջնակարգ դպրոցի նպատակներից մէկն է՝ պատրաստել պատանուն բարձրագոյն ուսումը իւրացնելու համար, որը նոյնպէս չի կարող մի դպրոցի գործ լինել, թէև լինի նա բարձրագոյն, մանաւանդ որ այդտեղ դասաւանդութիւնը մասնագիտական է դառնում, և, օրինակ, ապագայ բժիշկը ամբիոնից ոչինչ չի լսում ֆիլոսոֆայութեան կամ գրականութեան մասին, իսկ ուսանող լեզուաբանը ոչինչ չի լսում աստեղագիտութիւնից կամ քիմիայից: Ով իւր գիտելիքները սահմանափակում է նրանով, ինչ նորան հաղորդւում է ուսուցիչների դասերով դասաւանդւում, կամ պրոֆեսորների դասախօսութիւններով լսարաններում, նա չի կարող լուսաւորեալ մարդ լինել: Բացի այդ, շատերը հնարաւորութիւն անգամ չունին համալսարանում, մասնագիտական ձեւարաններում, ինստիտուտներում և այլ բարձր դպրոցներում ուսանելու, բաց, բակայն, նոյնպէս կամենում են լրացնել, լայնացնել և խորացնել իրենց դպրոցական ուսումը, հաղորդել բարձրագոյն կրթութեանը, և դորա համար ունին թէ անհրաժեշտ նախապատրաստութիւն և թէ անհրաժեշտ ընդունակութիւններ: Ինքնակրթութիւնը այդպիսով դառնում է անխուսափելի լրացումն այն ուսման, որ տրւում է միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում (արդէն չխօսելով սուորին դպրոցի մասին), երբեմն էլ միակ միջոցն է դպրոցական կրթութիւնը փոխարինելու համար: Ինքնակրթութեան համար կատարւող ընթերցանութիւնը նոյնպէս իւր տեսակի ուսում է:

Ինքնակրթութիւնը կարող է ունենալ տարբեր բնաւորութիւններ և զանազան աստիճաններ: Երբեմն ինքնակրթութիւնը միմիայն ինքնուսուցումն է, — այն անձերը, որոնք զրկւած են կանոնաւոր ուսումից ուսուցչի ղեկավարութեամբ կամ դպրոցում, հէնց իրենք կարող են «անցնել» այս կամ այն առարկան դպրոցական դասագրքերով կամ առանձին «ինքնուսուցիչներով» (ինչպիսիներ կան զանազան լեզուների համար), — և ինդիւիդը այստեղ միայն այդ դասա-

գրքերը սերտելն է: Ինքնակրթութիւնը ես աւելի բարձր մտքով եմ հասկանում. դա աշակերտական սերտողութիւնն է այս ու այն բանի, այլ գրքերի ընթերցանութիւնն է՝ աշխարհքի եւ մարդու մասին պարզ գաղափար կազմելու համար: Դորանումն եւ Բախնումն ես զանազանութիւնը ինքնուսուցման և ինքնակրթութեան մէջ, նեղ մտքով տուած: Վերջինս կարող է ունենալ զանազան աստիճաններ, նալած տարիքին, մտաւոր զարգացման, ընդհանուր նախապատրաստութեան աստիճանին: Եւրջ գրքեր կարգաւ ապահանջը այդ նպատակի համար, այսինքն շահագրգռութիւնը իդէական գիտութեան համար, չի կարող որոշ տարիքից առաջ ծագել, և իհարկէ, խիստ սակաւ բացառութիւններով, մարդը, որը մի յայտնի ժամանակում այդ պահանջը չի գգացել, հազիւ թէ անցնելով որոշ տարիներ՝ այլ ևս սկսի ինքնակրթութեամբ զբաղւել: Ես կարծում եմ որ ամենախիսկան ժամանակը իդէական ուսման պահանջը գգալու համար՝ այն տարիներն են, որ երիտասարդ տղաները ու աղջիկները շատ թէ քիչ քուլտուրական շրջանից կամ որոնք առհասարակ գլուխընդում են յայտնի քուլտուրական աղբիւրութիւնների տակ, անց են կացնում միջնակարգ դպրոցների բարձր դաստաներում և բարձրագոյն դպրոցների առաջին կուրսերում: Ով այդ տարիներում անտարբեր է մնում դէպի ուսումը և գրքերը, ով այդ տարիներում գէթ չի երազում ինքնակրթութեան մասին, նա հազիւ թէ յետովայն տարիներում որևիցէ բան անի այդ ուղղութեամբ: Աւելի հասուն տարիքում մտաւորական շահերը կարող են զարթնել միայն այն մարդկանց մէջ, որոնք իւր ժամանակին դպրոցական կրթութիւնն չեն

¹ Այն-Ռուսաստանցիներին հասկանալի լինելու համար նկատենք որ Ռուսիայում միջնակարգ դպրոցներ են համարւում այն հանրակրթական դպրոցները, ուր մտնում են սկզբնական (տարրական) ուսում ստանալուց չետոյ, դորա են գլխաւորապէս գիմնազները (ուր դասաւանդում են հասլատիներէնը և չունարէնը, բայց ոչ իգական գիմնազներում) և ուէալական դպրոցները (աղջիկների համար ուէալական կոչւած դպրոցներ չկան): Բարձրագոյն են կոչւում համալսարանները և ալ ամենաբարձր մասնագիտական դպրոցները՝ բազմարեւստեան դպրոցները, ինժեներական, տեխնոլոգիական, տեխնիկական լեզւարանական բարձրագոյն դպրոցները:

Ծան. Մտրճի խմբ.

ստացել և չլաւ զբքեր չեն կարգացել, բայց որոնք իրենց ոգին կենդանի են պահել:

Բացի ուսանելուց որեւէ զպրոցական հիմնարկութեան մէջ և զբքերի ամնային ընթերցումից, ճիշտ է, կայ գիտութիւն ձեռք բերելու նաեւ մի միջոց. դա՛ հրապարակական դասախօսութիւններ չաճախելն է: Ներկայումս Արեւմտեան Եւրոպայում և Ամերիկայում խիստ զարգանում է այսպէս կոչուող համալսարանական կրթութեան ընդարձակումը¹ (university extention). նա օգտուում է հասարակաց դասախօսութիւններից, կամ, աւելի լաւ, հասարակաց դասախօսութիւնների կարծ և ամբողջական դասընթացներից, որոնք կարգացում են բնակիչների ամենալայն խաւերի համար: Բայց այդ էլ, ի հարկէ, աւելորդ չի դարձնում զբքերի ընթերցումը: Աւելին կ'ասենք. որովհետեւ այդպիսի դասընթացները անհրաժեշտաբար կրճատ են լինում, ուստի զուցէ դեռ աւելի էլ հարկաւոր է լինում նոցա լրացնել ինքնուրոյն ընթերցանութիւնով քան համալսարաններում: Բացի այդ, university extention մեզնում գոյութիւն չունի, և ամնային ընթերցանութիւնը՝ ինքնակրթութեան գլխաւոր միջոցն է մնում: Շատ բնական է, ամեն ոք, որ ինքնակրթութեան է ձգտում, ամենից առաջ կ'ամենում է իմանալ թէ ինչ կարգաչ: Արտասահմանում կան առանձին ցուցակներ (կատալոգներ), ամենուայլաւ գրքերի՝ գիտութեան բոլոր ճիւղերից, բոլոր աղբիւրից ու ժամանակներից: Նրբեմն, սակայն, խնդրի այդպիսի ըմբռնումը թէ ինչ կարգալ՝ շատ անյարմար է: Նախ որ լաւագոյն զբքերը այնպիսիներ են լինում, որոնց հասկանալու համար հարկաւոր է որոշ նախապատրաստութիւն, և այն պայմանով որ նոցա ուսանելը կա-

¹ Այսինքն՝ համալսարանական կրթութիւնը ժողովրդի լայն խաւերին մատչելի դարձնելը:

² Պոցա նորագոյն և աւելի կատարեալ տեսակն են այն ժողովրդական համալսարանները, որոնք վերջին ժամանակներու սկսել են զարգանալ Սկանդինաւիայում, Գանիայում, Զւիցէրիայում, Ամերիկայում, Ռուսիայի սահմաններում ժողովրդական համալսարաններ կան Ֆինլանդիայի մեծ-ղբք-սուրբեան մէջ, ուր նոքա մեծ զարգացում են ստացել, և, օրինակ, 1896 թիւն, որպէս մեծք գիտենք, նոցա թիւը ներկանդիւնում 15 էր:

տարւի առանձին բացատրութիւններով: Երկրորդ, ինքնակրթութեան նպատակների համար մեծ ցաւ չի լինիլ, եթէ լաւագոյն գրքերից շատերը չկարդացեն, և, ընդհակառակը, մեծ ցաւ կը լինի, եթէ չկարդացեն ուրիշ գրքեր, որոնք ոչ մի դէպքում չեն կարող լաւագոյն գրքեր կոչելու յաւակնութիւնն ունենալ: Փուկիդիդէսը և Տացիտոսը ամենայն հիմամբ դասում են համաշխարհային գրականութեան լաւագոյն գրքերի շարքում: Բայց եթէ իրենց արժանաւորութեան համար նոքա ընկնում են ցուցակի մէջ, ապա հազիւ թէ մեծ շահ լինէր եթէ ընթերցողը կարգաց Փուկիդիդէսը և Տացիտոսը, բայց չկարդայ մեզ ժամանակակից, թէև միջակ, մի դասընթացք հին պատմութեան: Քանորի Ձուտ բանականութեան քննութիւնը նոյնպէս մի ամենալաւ գիրք է, որին ոչ ոք դասակից չի շինիլ Ֆիլոսոֆացութեան պատմութեան նոյն իսկ մի լաւ գասագիրք: Բայց այդպիսի անուններով կարելի է որքան կամենաք զարդարել լաւագոյն գրքերի ցուցակները, — գործնական հետեւանքնա չի ունենալ: Ես նոյնն եմ ասում մինչև անգամ իսկպպէս խելացի կերպով կազմեա՞ծ դասագրքերի մասին:

Մինչդեռ ցուցակներ այն գրքերի, որոնց պէտք է կարդալ, անհրաժեշտ են: Ահ որ առանձին գրեա՞ծքներ ունինք այն մասին, թէ ինչ կարդայ ժողովուրդը¹, կամ ինչ կարդան երեսնաները: այդպիսի ցուցմունքներին կարօտ են նաև հասակաւորները:

Վերջին ժամանակներս մեր (ռուսաց) գրականութեան մէջ մի քանի ձեռնարկութիւններ եղան՝ գրքեր ընտրելու գործը դիւրացնելու համար:

Գոցանից առաջինն է «Գիրք գրքերի մասին», կամ «գործնա-

¹ Պրոֆ. Նարէեւը ակնարկում է խմբական ուժերով ռուսերէն կազմած երկնասոր յալունի գիրքը «Ինչ կարդալ ժողովուրդը» («Что читать народу»), ուր առաջ են բերւած ռուսաց լեզուով ամեն կարգի գրքեր՝ ժողովրդական ընթերցանութեան համար, որոնց կցւած են կազմող անձերի կամ ալոյց կարծիքները այդ գրքերի պէտքականութեան ատրիճանի մասին ժողովրդի համար: Նոյնպէս կազմւած է մի գիրք «Ինչ կարդան մանուկները»:

կան ցուցակ գրքեր ընտրելու համար գիտութիւնների կարեւորագոյն ճիւղերից, որ կազմել են Մոսկւայի գիտնականները պրոֆ. Եան-ժուլի խմբագրութեամբ: Այդ հրատարակութիւնը նշանաւոր յաջողութիւն ունեցաւ, որ ցոյց է տալիս թէ հատարակութեան մէջ այդպիսի օժանդակութիւնների կարիք կայ: Աստ տեղը չէ այդ հրատարակութեան արժանիքների և պակասութիւնների մասին խօսել: Իւր բնաւորութեամբ՝ «Գիրքը գրքերի մասին» — տեղեկացոյց է. այլտեղ կարելի է գտնել թէ ինչ կայ ռուսաց և եւրոպական գլխաւոր գրականութիւնների մէջ այս ու այն առարկաներից և թէ ինչ արժէք ունի նոցանից ամեն մէկը, և ուր սակայն ոչ սակաւ խօսքը ամենամասնագիտական առարկաների մասին է, բաց չկայ նշանակաւ թէ գրքերից որոնք պէտքական են ինքնակրթութեան համար: «Գիրքը գրքերի մասին» ցոյց կը տայ ձեզ թէ ինչ կարելի է կարդալ մի որոշ խնդրի մասին, բաց նա ձեզ չի ասիլ թէ ինչ խնդիրների մասին պէտք է կարդալ՝ լուրջ ընդհանուր կրթութիւն ստանալու համար: Եւ կազմողները այդպիսի նպատակ ինկատի չեն ունեցած:

Ինքնակրթութեան համար առանձին ծրագիրներ, որ կազմել են զանազան գիտութիւնների մասնագէտներ, վերջին տարիներս տպոււմ էին *Миръ Божій* և *Сѣверный Вѣстникъ* ամսագիրներում: Դարձեալ չըջափելով այն հարցը, թէ որքան այդ ծրագիրները ընդհանրապէս և առանձին ծրագիրները մասնաւորապէս յաջող են կամ անաջող (այս տողերիս գրողը ինքը գրեց *Миръ Божій*-ի համար մի յօդաւած ընդհանուր պատմութեան գրքերի մասին), ես կ'ընդգծեմ միայն նոցա ընդհանուր առանձնացատկութիւնները: Առաջին, ընթերցողներին այլտեղ տրոււմ են ծրագիրներ առանձին առարկաներից այն ենթաշրջութեամբ, որ իւրաքանչիւրը կ'ուզենայ ծանօթանալ միմիայն գիտութիւններից մէկն ու մէկին. իսկ բոլոր այդ տեսակ ծրագիրները միացնել մէկի մէջ կը նշանակէր կազմել գրքերի մի այնպիսի անաղին ցուցակ, որը հազիւ թէ գործադրել կարողանար. այդ ծրագիրներից ոմանք գուցէ ծառայէին դոքտորական քննութեան պատրաստուելու համար: Երկրորդ, ցուցակներ կազմողներից շատերը իրենց առաջադրած խնդիրը հասկացել էին այնպէս, որ նշանակեն եղած նիւթերը ինքնակրթական

ընթերցանութեան համար որ և է առարկայից, քան ընթերցանութիւնը ղեկավարել որոշ ծրագրով զրքերի որոշ ընտրութեամբ. (այդպէս հասկացաւ խնդիրը նաեւ տողերիս գրողը վերը յիշած յօդաւորում): Երրորդ, այդ ծրագիրները և զրքերի ցուցակները կազմում էր իւրաքանչիւրը այնպէս, ինչպէս ամեն մէկը հարկաւոր էր համարում, այսինքն այդտեղ չկար ոչ ընդհանուր զազաւար, ոչ ընդհանուր պլան, և այդ պատճառով ծրագիրները իրար համաչափ չէին: Այդ ծրագիրներից ոմանք որքան արժանաւորութիւններ էլ որ ունենային (տողերիս գրողը, օրինակ, իւր կազմածը ամենից քիչ պիտանացու է համարում այն նպատակի համար թէ ինչ խնդիրներից և ինչ զրքեր պիտի կարդալ), նոցա ընդհանուր պահասութիւնը այն է, որ կազմողները ինկատի չեն ունեցած, այսպէս ասած, ընթերցողին ընդհանրապէս, և այն էլ ընթերցողին, որը զրքերի մէջ բնու միւսնոյն բանը չէ որոնում¹:

Այդ պահասութիւնը չունին „Программы домашнего чтения“ (Ծրագիրներ տնային ընթերցանութեան համար), որ հրատարակում է տնային ընթերցանութիւնը կազմակերպող մասնաժողովը, որ կաջ Մոսկւայում, տեխնիկական գիտութիւններ տարածելու ընկերութեան ուսումնական բաժանմունքին կից (коммиссія, состоящая при учебномъ отдѣлѣ Общества распространения техническихъ знаній въ Москвѣ): Այդ ծրագիրներում բոլոր գիտութիւնները բաժանւած են վեց կարգի՝ ֆիզիկո-քիմիական գիտութիւններ, բիոլոգիական (կենսաբանական), ֆիլոսոֆայական, հասարակական իրաւաբանական, պատմութիւն և գրականութիւն (գրականութեան պատմութեան հետ), ուր ամեն մի բաժանմունքի համար տրւած է մանրամասն ծրագիր՝ անհրաժեշտ և յանձնարարարելի զրքերի ցուցմունքով: Ենթադրւում է որ ամեն մի ծրագրի իրազործումը կը պահանջի չորս տարի: Առաջմ (1896 թ.) լոյս են տեսել ծրագիրներ առանձին հրատարակութիւններով առաջին երկու տարիների համար: Այդ հրատարակութիւնը ունեցաւ հազարից չափողութիւն: Աւելցնեմ, որ Մոսկւայի այդ մասնաժողովը ղեկավարում

¹ Նշանակենք նաեւ երկու ծրագիր (ֆիլոսոֆաութիւնից և սոցիոլոգիայից) Русское Богатство ամսագրում:

է իւր կլիկանների զբաղմունքները զրազրութեամբ և անձնական յարաբերութիւններով, և զիւրացնում է նշանակած զբերից օգտակը:

Այլ բնաւորութիւն ունին «Программы чтения для самообразования» (Ինքնակրթութեան համար ընթերցանութեան ծրագիրներ), որ հրատարակել է Պետերբուրգի Թանգարանի մանկավարժական կոմիտէի առանձին բաժանմունքը (Особый отдѣлъ Комитета Педагогическаго музея въ Петербургѣ): Թէև բաժանմունքը իւր նպատակից զուրս չի գցել ծրագիրներ կազմելը առանձին զիտութիւնների համար, բայց առաջեմ (1896 թ.) նա հրատարակել է միայն երկու այդպիսի ծրագիր (սուսաց պատմութեան և քաղաքաանտեսութեան համար), և նոքա լոյս տեսան տւելի մասնագիտօրէն, քան անային ընթերցանութեան ծրագիրները: Բաժանմունքի զլիւսւոր խնդիրն էր կազմել մի ընդհանուր հանրագիտական ընթերցանութեան ծրագիր ինքնակրթութեան համար, ուր մտնէին բոլոր զիտութիւնները: Այդ ծրագրի նպատակն էր—ինքնակրթութեանը նպաստել, վերջինիս նպատակ գնելով աշխարհայեացք մշակելը: Այդ պատճառով ամեն զիտութեան ծրագրի մէջ ցոյց են տրւում միայն կարեւորագոյն խնդիրները, որոնց հետ ծանօթանալը անհրաժեշտ է ամեն մի լուսաւորւած մարդու համար, որը կամենում է որոշ աշխարհայեացք կազմել իւր համար: Եւ այդ հրատարակութիւնը կարճ միջոցում մեծ թւով տարածւեց:

Իմ չիշած բոլոր հրատարակութիւնները վերաբերում են հինգ տարիներին՝ 1892—1896 թ.: Ընթերցող հասարակութիւնը շատ արագ գնեց չփրքը զբերի մասին, որպէս նաև Մոսկւայի ու Պետերբուրգի (վերը չիշած) «Ծրագիրը»: Դա, որպէս ասացի, վկայում է թէ ինքնակրթութեան խնդիրները զօրեղապէս հետաքրքրում են հասարակութեան:

Ընթերցողների օգնութեանն են դալիս զխանականները, զրոգները և հրատարակիչները: Յօդւածիս սկզբում ես արդէն խօսեցի վերջին ժամանակներիս հրատարակչական գործունէութեան կենդանութեան մասին: Յատուկ մասնաժողովներ կազմելը Մոսկւայում և Պետերբուրգում ինքնակրթութեան ծրագիրներ կազմելու համար՝ ցոյց է տալիս, որ զխանական աշխարհում քիչ չեն մարդիկ, որոնք

համակրութեամբ են վերաբերում գէպի այդ անող ծարաւը գէպի գիտութիւնը։ Նոցա կազմած ծրագիրները պարբերական մամուլի մէջ աննշմար շանցան, և ինչպէս էլ որ վերաբերէին առանձին գրախօսները և կրիտիկոսները, գէպի ծրագիրները, ոչ ոք սակայն չը ժխտեց ինչորի կարեւորութիւնը։ Նոյս տեսան նաև առանձին յօդուածներ գիտութիւնները ժողովրդականացնելու մասին, մանաւանդ Արեւմտեան Աւրոպայում և Ամերիկայում համալսարանական գիտութիւնների տարածելու մասին...

Նոյր վերոյիշեալ հրատարակութիւնները նոյնպէս ծառայում են համալսարանական ուսումը տարածելուն։ Մեր յիշած ծրագիրները կազմելու մէջ մասնակցել են մեծ մասամբ մեր բարձրագոյն դպրոցների պրոֆէսորները, համալսարանների գլխաւորութեամբ։ Նոցա ծրագիրներից մեծ մասի մէջ երևում է որ կազմողներից ամեն ոք հասկացել է թէ իւր գիտութեան մէջ որն է ամենաէականը և կարեւորը և թէ ինչը ունի կրթական նշանակութիւն։ Նոցա ցոյց տւած գրքերը նոյնն են, որ նոքա ցոյց են տալիս ուսանողներին և սկսնակ մասնագէտներին, և ով գար նոցա մօտ խորհրդի —նոյնը ցոյց կը տալին։ Սակայն, բոլոր յիշած ծրագիրներում ի նկատի է առնւած սխողի գիտութեան մի ընդհանուր մակերևոյթ —միջնակարգից ոչ ցածր։ Բայց այդ ծրագիրները կազմելով՝ բոլոր այդ մասնագէտները մտածել են, որ ինքնակրթութիւնը չպէտք է վերջանայ երիտասարդի դուրս գալովը բարձրագոյն դպրոցից։ Գիտութեան զաւառը ընդարձակ է. ամեն ինչ չես իմանալ, ամեն ինչ չես կարդալ նոյն իսկ ամենաերկար կեանքում։

Զիպ արդեօք մի որ և է ընդհանուր սխաւմ, ընդհանուր պլան, գրքերի սահմանափակ ցուցակ, որոնցով ընթերցողը կարենար զեկավարւել?

Այ. բոլորը կախած է անհատի տաճնաչափութիւններից և ամեն մի ընթերցողի պայմաններից։ Թող ամեն ոք ինքը մշակի իւր պլանը, որոշի իւր կարդալու գրքերը. միմիայն կարդալով կարելի է կարդալ սովորել — ոչ մեքենայական ընթերցանութեան մոքով, այլ այն մոքով որ բոլորովին գիտակցական կերպով վերաբերւի մարդ գէպի կարգացածը և կարգալու համար նշանակածը, — միայն թէ լինի շահագրգռութիւն գէպի գիտենալը, խորը և լայն ուսումը և չափով լինի ընտրւած զեկավարութիւնը, որը այնքան անհրաժեշտ է մանաւանդ առաջին քաղերին։

ԿԵԱՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ

Ըստ. պրոֆեսոր Փեռնորնի (Verworn) (Allgemeine Physiologie. Jena. II Auflage)

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

Կար ժամանակ, որ մեր երկիրը մի տաք մարմին էր, իւր մօրարեւի նման, որ մինչև հիմա էլ իւր բոցավառ ճառագայթներով տաքացնում և լոյս է տալիս մեզ: Ամենապինդ քարերը, ամենամուր մետաղները, որ հիմա մեր երկրի սառած կեղևի մասերն են, այն ժամանակ հրահալ զրութեան մէջ էին՝ և բոցավառ զազերի մթնոլորդը բոլորում էր երկրի հալած միջուկը: Այդ բոցավառ զանդածի տաքութիւնը հասնում էր հազարաւոր աստիճաններին:

Թէ իրաւ, երկրագունդը զարգացման մի այգալիսի շրջան է անցել, այսօր լնդունում են բնական զիտութիւնների բոլոր ճիւղերը. աստղաբանութիւնը և Ֆիզիկան, երկրաբանութիւնը և էւո-

1. Սպեկտրալ անալիզ, ալսինքն տարրերի հետազոտութիւն սպեկտրի միջոցով. դա հետազոտութեան մի մեթոդ է, որ հնարեցին Գիրխհոֆ և Բունզեն 1859 թւին: Մի քիմիապէս ի մի ձուլած մարմնի հիմնական նիւթերը (օր. երկաթ, նատր, և ալն) երբ բոցավառւած են՝ ճառագայթներ են արձակում, որոնք երբ նեղ ճաքի միջով մի մութ սենեակ թողնելու լինենք ու ճառագայթները թողնենք մի ապակեալ պրիզմով (կողեր ունեցող ապակի) անցնեն՝ անգույն լուսը ծիածանի պէս գոյնների է բաժանում (կարմիր, նարնջի, դեղին, կանաչ, բաց կապույտ, ինդիգոյ գոյն, մանրակազմ), որոնց միջև սև դժեր են երևում: Այդ գոյներից ճշտապէս իմացւում է թէ լոյս արձակող մարմինը ինչ քիմիական բաղադրութիւն ունի:

Խմբ:

լիւցիան, հանքաքանութիւնը և քիմիան համաձայն են այդ կէտին: Եւ իրաւ ժամանակիս հետազոտութիւնը հետազոտողի և սովե-տրալ անալիզի միջոցով ուղղակի մեր աչքի առաջ դրեց այն, որ հիմա էլ փեղեքում ամեն տեղ զարգացման նոյն ընթացքն է կատարում, ինչ որ մեր երկիրն է մի անգամ կատարել, և հիմա էլ ամեն տեղ հանդիպում ենք ուրիշ երկնային մարմինների վերայ երկրիս կատարած զարգացման բոլոր աստիճաններին:

Այս հանդամանքը ահա, որ մեր երկիրը մի ժամանակ այնպիսի դրութեան մէջ էր, ուր կեանքը գոյութիւն ունենալ չէր կարող, որովհետեւ այն ժամանակ երկրի տաքութիւնը անասելի մեծ էր, երկրի երեսին ոչ մի կաթիլ ջուր գոյութիւն չունէր և կեանքի-ապրուստի պայմանները լիովին բացակայ էին, այս հանգամանքը, երկնում ենք, կեանքի ծագման մասին մտածելիս, պէտք է հաշիւ առնել և աչքից երբեք բաց չթողնել:

Արդ՝ գիտենք այն տարբեր կարծիքները, որոնք դիտական հիմունքներով զանազան դիտնականներ արտայայտել են կեանքի ծագման մասին:

ա. Նախածագման հիպոթէզ. (Urzeugung, Archigonie, Abiogenesis, Generatio Spontanea):

Նախածագման հիպոթէզը իւր էական դժերով հեռեկան է: Որովհետեւ մեր երկրի զարգացման մէջ մի ժամանակ կար, որ կենդանի նիւթը նորա վերայ գոյութիւն ունենալ չէր կարող, ապա, կենդանի նիւթը, երկրի զարգացման մի աւելի ուշ ժամանակ, երբ երկրի կեղեւը արդէն պղպեղ էր և կեանքի տպրելու պայմանները կային, անկենդան նիւթից պիտի առաջանար ինքնածին կերպով:

Այդտեղից ծագում է հեռեկալ հարցը. ինչ ջատկութեան տէր էին առաջին օրգանիզմները (կենդանութիւն ստացած նիւթը) և ճրպիսի պայմանների մէջ նոքա առաջացան:

Հին գարերը, նոյն իսկ Արիստոտելի նման բազմահմուտ հանձարը, կարծում էին, որ որդերը, միջատները, նոյն իսկ գորտերը առաջ են գալիս սլից (աղմից): Ուշ, Ռեզի և Սւամմերզամի հետազոտութիւնները միջատների զարգացման մասին ցոյց տւին այդ կոպիտ կարծիքի սխալ և հիմնադուրկ լինելը: Նախածագման թէօ-

րիան սակայն մի նոր յենակէա առաւ մանրագիտակի գիւտով, որը զիտնականների առաջ մի բոլորովին նոր աշխարհ բաց արաւ:

Նորա շնորհիւ մարդ առիթ ունեցաւ տեսնելու, որ անկենդան նիւթի վերայ մի բուռ ջուր ածելուց յետոյ բազմաթիւ մանր կենդանիներ էին առաջանում, որոնք այդ պատճառով մինչև հիմա էլ ջրի որդ (ինֆուզորիաներ) են կոչուում: Նւ զոքա նախածագման կամ ինքնածնութեան թէօրիայի լատագոյն ապացոյցներն էին մանաւանդ իրանց ամենապարզ և հասարակ կազմութեամբ, պատկանելով մինչև այդ գիտութեանը յայտնի եղած կենդանիների ամենաստորին կարգին:

Սակայն, այս անգամ էլ դուրս եկաւ, որ այդ ստորին կարգի օրգանիզմները նախածագմամբ կամ ինքնածնութեամբ չէին առաջանում, այլ զարգանում էին այն սերմերից, որ առաջուց մեր թափած ջրի մէջ էին ընկել կամ օդից կամ ամանից և կամ մեր ձեռներից: Միլնէ, Շւան, Շուլցէ, Հելմհոլց և այլ գիտնականներ ցոյց տւին, որ երբ մարդ ձեռի նիւթերը եփելով կենդանի սերմերից ազատէ, թողնէ որ օդի միջից թափած ջրի տեղը նոր սերմեր ընկնեն, այն ժամանակ ինֆուզորիաներ (ջրի-որդեր) չեն առաջանում: Երբ վերջապէս մեր օրերում մանր օրգանիզմներից ամենամանրը—բաքտերիաները—զրաւեցին գիտնականների ուշքը, բաքտերիօլոգների հիմնադիր հանճարեղ Պաստէօրը և ապա Ռոբերտ Կոխը հիանալի մեթոդներով ցոյց տւին, որ այդ կենդանիներն էլ երբեք իրանք-իրանց անկենդան նիւթից չեն ծագում, այլ միշտ առաջ են գալիս կենդանի սերմերից. ուր նոցա սերմերը մահացրած կամ ոչնչացրած են, այնտեղ չի կարող առաջ գալ ոչ մի կենդանի օրգանիզմ, թէկուզ կեանքի գոյութեան պայմանները դոնէլին իրանց լրութեամբ և կատարելութեամբ:

Այս վիճաբանութեան հետ, թէ արդեօք անկենդան նիւթից կարող է ինքնիրան կենդանի օրգանիզմ առաջանալ, մինչև վերջին ժամանակները շարունակւում էին լաբորատորիաներում արհեստաբար կենդանիներ առաջնելու փորձերը: Մեր օրերում այդ փորձերը կապւած են Պոլլէի անւան հետ, որը պնդում էր, թէ անկենդան նիւթից արհեստաբար կարելի է միավանդակ (միարջիջ, einzellig) օրգանիզմ—ստորին կարգի սունկեր կամ բաքտերիաներ առաջացնել, և թէ

կարևոր նիւթերը չարմար պաշմանների մէջ դնեն: Այդ պնդումը հիմնովին ջրեց Պաստէօրի և Կոխի անհերքելի փորձերով: Այդ կարծիքը քիմերական է մանաւանդ այն պատճառով, որ օրգանիզմի քիմիական կազմութիւնը, յատկապէս կենդանի սպիտակուցի կազմութիւնը առժամանակ գիտութեանը լիովին անձանօթ է:

Նախածագման թէօրիան զիտական հիմքի վերայ դրեց Հէկկէլը: Նորան չի հետաքրքրում՝ այն հարցը թէ այսօր արդեօք նախածաղումը զոյութիւն ունի թէ ոչ. նա դեռ 30 տարի առաջ պնդում էր, որ կենդանի նիւթը ևրկրի ծագման մի որոշ ժամանակուս մի անգամ անկենդան նիւթից պիտի առաջ գար, որովհետև կար մի ժամանակ, երբ երկիրը մի այնպիսի դրութեան մէջ էր, ու կեանքը չէր կարող գոյութիւն ունենալ: Եւ այդ ժամանակը, երբ կեանքը սկիզբն առաւ, ըստ Հէկկէլի՝ մթնոլորտում պատող գոլորշիների թանձրանալուց կաթիլ և անձրև գոյանալուց առաջ չէր կարող լինել: Ինքնիրան առաջացած օրգանիզմն էլ, ըստ Հէկկէլի, դեռ վանդակ (բջիջ, Zelle) չէր, այլ ամենաստորին, ամենապարզ մի օրգանիզմ, ինչոր միայն երևակայել կարելի է, «միանգամայն համասեռ (հոմոգէն) կազմազերծ (structurlos) և անձնւ մի սպիտակուց»: Թէ ինչպէս առաջացաւ այդ նախնական օրգանիզմը, այդ թողնում է Հէկկէլը մի կողմ, շեշտելով այն հանգամանքը, որ երկրի զարգացման այն շրջանը, երբ կեանքն առաջացաւ, և այն ժամանակեայ մթնոլորտի, ծովի և ցամաքի պայմանները որպէս նաև նոցա փոխազդը (Wechselwirkung) մենք իսկի երևակայել անգամ անկարող ենք: Իւր այդ նախնական, ամենապարզ, ամենատարրական և հասարակ կենդանի օրգանիզմը Հէկկէլը անւանում է «վոնէր», որից ապա ծագած պիտի լինեն վանդակաւոր օրգանիզմները, որոնցից, ապա, էւոլյուցիայի շնորհիւ, ամբողջ կենդանի աշխարհը:

Այս տեսութիւնը շնացելով իւր պարզութեանն ու հասարակ լինելուն, շատ կողմերից չարձակման ենթարկեց և առիթ աւաւ նորանոր թէօրիաների:

մ. Կեանքի տիեզերական լինելու թէորիան
(Kosmozoen-Theorie)

Վերջին ժամանակները նախածագման դէմ դուրս եկաւ այն փարձիքը, թէ ամբողջ տիեզերքում ցրւած են կենդանի սաղմեր (սերմ, Keim), որ յայտնի գիտնական Պրէյերը կոսմոցոեն—տիեզերասաղմ, տիեզերական կենդանի է անւանում: Այդ թէորիայի հիմնադիրը Հ. Ն. Ռիխտերն է: Նորա ելակէտը (Ausgangspunkt) այն յայտնի երևոյթն է, որ ամբողջ տիեզերքում ցրւած են անթիւ մանր մարմիններ, որոնք իրանց ճանապարհին հանդիպած մեծ մարմիններին քսւելով անցնում են և կամ, եթէ ձողուլթիւնը մեծ է, ընկնում են այդ մարմինների վերայ: Արդ՝ այդ փոքրիկ պինդ մարմինները կարող են կենդանի սաղմեր տեղափոխել երկնային մի մարմնից, ուր կեանքը գոյութիւն ունի, դէպի մի այլ մարմին, ուր նա գոյութիւն չունի. տեղափոխել, ասեմք օրինակ, երկրից դէպի լուսինը, ուր եթէ այդ սաղմերը նպաստաւոր պայմաններ գտնեն, մասնաւորապէս չափաւոր տաքութիւն և խոնաւութիւն, կարող են աճել, և ելակէտ դառնալ մի ամբողջ երկնային մարմնի կենդանիներով բնակւելուն:

Տիեզերքի այս կամ այն մարմնի վերայ, ըստ Ռիխտերի, շարունակ գոյութիւն է ունեցել կեանքը բջիջների մէջ. կենդանի բջիջի գոյութիւնը տիեզերքում յաւիտենական է նիւթի պէս. „Omne vivum ab aeternitate e cellula“ ասում է Ռիխտերը: Օրգանաւոր կեանքը այդպիսով սկիզբ չունի, այլ շարունակ մի երկնային մարմնից անցել է միւսը: Երկրի վերաբերմամբ Ռիխտերը չի ուզում լուծել այն հարցը թէ ինչպէս այնտեղ կեանքը առաջացաւ, այլ թէ նա ինչպէս մի ուրիշ երկնային մարմնից մեր երկիրը հասաւ: Դորա պատասխանն էլ մենք տեսնք, որ նա լուծում է տիեզերքում Թափառող փոքրիկ մարմինների (ընկնող աստղերի) միջոցով, որոնք կենդանի տարրը հասցրած պիտի լինեն երկիր, ուր նպաստաւոր պայմանների մէջ աճելով նա սկիզբն է կզել երկրի կենդանիներով ու բոյսերով լցւելուն:

Թէ կենդանի սաղմը մթնոլորտի միջոցով կարող էր անմնաս փրկիւր հասնել և շփումից առաջած հսկայական տաքութիւնից

չաչրեւել, Ռիխտերը ազացուցանում է նորանով, որ երկրի վրայ ընկնող փոքրիկ մարմինների—մէտէօրների—վրայ նկատուած են ածուխի, փթած մարմինների (humus) և նոյն իսկ նաւթային նիւթերի հետքեր, որոնք առանց աչրեւելու հասել են երկիր, հասկանալի է ուրեմն, որ կենդանի սաղմերն էլ կարող էին անվնաս մնալ:

Եսկ տարակոյսի ենթակայ չի կարող լինել այն երևոյթը, որ կենդանի սաղմը առանց իրան վնասելու կարող է երկար ճամբորդել տիեզերքում: զօրան վկայ են կեղծ-մահու (scheintod) երևոյթները և մանրէների (միկրոբների) սերմերը, որոնք շատ երկար ժամանակ պահպանում են իրենց կեանքի գոյութիւնը անվնաս կեղծ-մահու մէջ, առանց ջրի և առանց կերակրի:

Մի քանի տարի յետոյ, Ռիխտերից անկախ, Հելմհոլց և Վիլլիամ Թոմսոնը քննում էին նոյն հարցը, թէ արդեօք չէր կարող կեանքը մի ուրիշ երկնային մարմնից մեր երկիրը հասած լինել. և երկուսն էլ գտնում են, որ դա մի փանաղիայի խաղալիք չէ, այլ բուն գիտական հարց է:

Հելմհոլցը ասում է. «Մէտէօրները երբեմն պարունակում են ածխա-ջրածնի միութիւններ. ածխածինը կենդանի սաղմի բնորոշ տարրն է. ով գիտէ, զուցէ այդ մարմինները (մէտէօրները) որ լի են ամբողջ տիեզերքում, տարածում են կենդանի սաղմ այնտեղ, ուր մի որեւէ երկնային մարմին արդէն չարմար պալմաններ ունի նոցա պահպանելու: Աւայդ կեանքը իւր սաղմով մեր կեանքին ազդակից պիտի համարենք, որքան էլ նա իւր ձեով մերինից տարբեր լինի, շնորհիւ տարբեր պալմանների գոյութեան: Հելմհոլցը չի ժխտում այն, որ մէտէօրները կարող են սաղմի տեղափոխող հանդիսանալ, քանի որ շարժումից առաջացած սաստիկ շփումից տաքանում է միայն նոցա արտաքինը, իսկ ներքին մասը մնում է պաղ: Առսմոցոէն—տիեզերատաղմի—թէօրիայի մասին Հելմհոլցն աւելացնում է. «Ես չեմ ուզում վիճել նորա դէմ, ով այս թէօրիան անհաւանական, այոջ. մինչև անգամ շատ անհաւանական է գտնում. բայց երբ մեր բոլոր փորձերը զուր են անցնում անկենդան նիւթից արհեստաբար կենդանի օրդանիզմ առաջացնելու, ապա մի լիովին ուղիղ-գիտական միջոց է, երբ մենք հարց ենք տալիս՝ արդեօք կեանքը երբ և իցէ սկիզբն է ունեցել, արդեօք նիւթի պէս յաւիտենական չէ՝ նա, և

Թէ արդեօք նորա սաղմերը մի երկնային մարմնից դէպի միսը չճե-
տեղափոխուել և այնտեղ զարգացել, երբ նախատառք պայմաններ-
են գտել: Խսկական արտերնատիւր յայտնապէս հետեւեալն է. օրդա-
նական (բոյս, կենդանի) կեանքը կամ մի որևէ ժամանակում ակիզքն է
առել և կամ զոյութիւն ունի չաւիտեանս-չաւիտենիցս:

գ. Պրէյլերի թէօրիան կեանքի յաւիտենականութեան մասին:

Պրէյլերը հակառակ է թէ նախածնութեան և թէ տիեզերա-
սաղմի թէօրիաներին, և հետեւեալ պատճառներով: Նախածնութեան.
թէօրիայի դէմ նա առում է. եթէ մարդ ընդունում է, որ էւոլյուցիայի-
(զարգացման) մի որոշ ժաւանակում մի անգամ կենդանի սուբստանցը
(նիւթը) անկենդան նիւթից առաջացաւ, ապա մարդ կարող է պա-
հանջել, որ նոյնը այսօր էլ տեղի ունենար: Այդ նպատակով կատար-
ւած բազմաթիւ փորձերը սակայն միշտ պտտուել են անաջողու-
թեամբ: Եթէ նախածնութեան թէօրիան ընդունում է, որ կեանքի-
առաջանալը կարելի էր ամենահին ժամանակում, իսկ հիմա ոչ, դա-
էլ միանգամայն անհաւանական է, որովհետեւ ընդհանրապէս պայմանները,
որոնք կեանքի պահպանութեան համար կարեւոր և հիմա իրական-
են, տէրք է կենդանու առաջին անգամ ծաղկելու ժամանակ էլ իրա-
պէս զոյութիւն ունենային. այլապէս նախածնութեան արդիւնքը
չէր կարող ապրել: Մարդ չի հասկանում իսկապէս թէ հիմա ի՞նչ
բան է պահաս, որ նախածնութիւնը զաղարկել է մեր օրերում տեղի-
ունենալուցս:

Պրէյլերը տիեզերասաղմի թէօրիան էլ չի ընդունում, որովհետեւ
նորա կարծիքով դա հարցը չի լուծում, այլ միայն յետաձգում է.
այն է՝ կեանքի ծագումը, այդ թէօրիան մեր երկրից տեղափոխում
է մի որ և է այլ երկնային մարմնի վերայ, ուր սակայն զրւած-
հարցը մնում է նոյն զրութեան մէջ անլուծելի:

Ինկատի ունենալով ամենօրեայ փորձը, որ բոլոր օրդանիզմ-
ները շարունակ առաջ են դալիս իրանց նման օրդանիզմներից և
մինչև օրս դեռ չի հասնատուել, որ մի օրդանիզմ առաջանար ինքն-
իրան—առանց ծնողների, Պրէյլերը մի հարց է առաջարկում. թէ
արդեօք նախածնական թէօրիան հարցի սխալ դնելու արդիւնք չէ:
Երբ նա պահանջում է, որ կենդանի սուբստանցը (նիւթը) մի ան-

գամ անկենդան նիւթից պիտի ծագած լինի. և թէ արդեօք ուղիղ չէր լինիլ եթէ հարցը բոլորովին յորա հակառակը դնէր:

Գուցէ անկենդան նիւթն է առաջացել կենդանականից: Բոլոր օրգանիզմները առաջանում են միայն կենդանի օրգանիզմներից. անօրգան, անկենդան նիւթը (հող, մետաղներ) որպէս մենք տմեն օր տեսնում ենք, առաջանում է ոչ միայն անկենդան, այլ և կենդանի նիւթից, որից նա բաժանւում է ինչպէս մեռած տարր, կամ որի մահից յետոյ նա մնում է որպէս մեռած աճիւն: Այդ նախաբանով Պրէշերը այն կարծիքն է յայտնում նոսրացնութեան թէօրիաչի գէ՛մ, որ ժամանակով կենդանի նիւթն է առաջինը. իսկ անկենդանը ծաղիլ է նորա զատանքից (Ausscheidung): Նա ընդունում է, որ կեանքը յախտկան է. Omne vivum e vivo. — Այս երևոյթը երբէք բացառութիւն չի ունեցել:

Այս թէօրիաչի հետեանքները շատ հարցասիրական են: Եթէ կեանքը երբէք անօրգան նիւթից չի ծագել, այլ միշտ առաջացել է կենդանի սուբստանցից, ապա նա պիտի դոյութիւն ունենար և այն ժամանակ, երբ երկիրը մի հրահալ և բոցավառ մարմին էր: Այդպէս էլ կարծում է Պրէշերը. ուստի և նա «կենանք» զաղափարը սովորականից շատ ընդարձակ ըմբռնելով, ոչ միայն այսօրեայ կենդանի սուբստանցն է կենդանի համարում, այլ և այն բոցավառ կրակը, որ պրոտոպլազմ-օրգանիզմներից շատ առաջ գոյութիւն ունէր: Եթէ մարդ իրան ազատում է, ասում է Պրէշերը, այն սխալ և անիրական մտքից, թէ ներկայ պրոտոպլազմայի յատկութեամբ միայն կեանքը կարող էր գոյութիւն ունենալ և այն հին միայն չարմարութեան համար հնարած կարծիքից, թէ նախօրօք լոկ անօրգան (անկենդան) նիւթը կարող էր գոյութիւն ունենալ, ապա զժւար չէ մի քայլ աւելի հեռու դնալ և կեանքի անսկիզբ լինելը ճանաչել. «omne vivum e vivo». Այս զիտողութիւններով Պրէշերը հետեւեալ պատկերն է տալիս կեանքի մասին: Երկրի ամբողջ բոցավառ մասսան նախօրօք մի հսկայական օրգանիզմ էր: Այն ահագին շարժումը, որի մէջ նա դառնում էր, նորա կեանքն էր: Իսկ երբ երկիրը սկսեց պաղիլ, ապա սկսեցին զատուիլ այն նիւթերը, որոնք այլ ևս հեղուկ զրութեան մէջ չէին կարող մնալ, որպէս, օրինակ, մետաղները, որոնք ամբողջ օրգանիզմի կենդանի շարժմանը չէին

կարող մասնակցել, որից և կազմեցաւ առաջին անօրգան (անկենդան) մասսան: Այսպիսով երկրի բոցավառ-հեղուկ նիւթը նորա կենդանի տարրն էր. իսկ սառած մասը—անկենդան: Այս երեւոյթը շարունակեց, մինչև որ երկրի մասերը պաղելով-սառելով հետզհետէ լիովին մահացան և ապա առաջացան դադալին և կաթիլալին տարրերի միութիւնները (Verbindung), որոնք հետզհետէ նմանու՛մ էին նախասաղմին (պրոտոպլազմա), որը մեզ ծանօթ կեանքի հիմն է կազմում:

Ճերկրի տաքութեան պակասելու հետ աւելի և աւելի բարդ կապակցութիւններ, քիմիական միաւորումներ, աւելի ու աւելի բարդ մարմիններ, խառնաշփոթութիւններ, ցանցակերպ մէկից-միւսից անցնող երեւոյթներ առաջանալով, այն էլ միշտ բազմացող բաժանումներով ու զատումներով, հիմք աւին բոյսերի և կենդանիների նախնական ձևերին:

Այսպիսով մենք չենք ասում թէ նախասաղմը ինքնին երկրի կազմութեան սկզբից գոյութիւն ունէր, ոչ էլ այն, թէ անսկիզբն մի որ և է երկնային մարմնից երկիր ընկաւ, և ոչ էլ այն, թէ նա պլանետների վրայ անօրգան նիւթից է ծաղել, այլ մենք պնդում ենք, որ տիեզերքի անսկիզբն շարժումը կեանք է, և պրոտոպլազմայի ծաղումը—այդ կեանքի մի մնացորդը՝ փոփոխւած պայմանների մէջ: Ծանր մետաղները, որ մի ժամանակ այդ հսկայ կեանքի մասերն էին, սառելուց յետոյ էլ չհալեցան, չմտան այս նոր փոքրիկ (սաղմային) կեանքի շրջանակը: Նոքա հին, բոցավառ կեանքի վաղաժամ մահաւան մնացորդներն են, այն կեանքի, որի շունչը գուցէ լուսավառ երկաթի գոլորշի էր, որի արիւնը հեղուկ մետաղներ, որի կերակուրը գուցէ մոլորակներն էին:

դ. Պֆլիւզէրի թէօրիան

Պֆլիւզէրն էլ մի բազմահմուտ աշխատութեան մէջ ¹ մանրօրէն ուսումնասիրելով կեանքի ծաղման հարցը, այն կարծիքն է յայտնում, որ կենդանի սուբստանցը (նիւթը) երկրիս վերայ ինքնիւրան առաջացել է անկենդան սուբստանցից:

¹, Pflüger: „Ueber die physiologische Verbrennung in den lebendigen Organismen“—Pflügerischer Archiv, Bd. 10. 1875.

Այս դիտնականի թէօրիան այն առաւելութիւնն ունի, որ նամիացն սպեկույացիօններով չի զբաղւում, այլ հարցը պնդօրէն կապում է ֆիզիօլոգիական (բնախօսական) և քիմիական յայտնի իրողութիւնների հետ և խիստ գիտնականօրէն լուսարանում է իւր բոլոր մասերով: Յաւում եմ, որ նորա թէօրիան չեմ կարող այստեղ ներկայացնել «Մուրճ» ի ընթերցողների համար, որովհետեւ այն հասկանալու համար պէտք է քիմիայից որոշ աստիճանի պատրաստութիւն ունենալ. ուստի նոքա թող բաւանան միայն Պֆլիւգէրի հանած եղբայրացութիւններով: Կեանքի հիմքը նա գտնում է մի քիմիական մարմնի մէջ, որ ցիան (cyan) է կոչւում. իսկ այդ մարմինը՝ յայտնի է քիմիայից, որ առաջ կարող է գալ միայն ամենախիստ տաքութեան մէջ: Ուստի Պֆլիւգէրը բնական է գտնում, որ կեանքի հիմքը սկիզբն պիտի առնէր դեռ այն ժամանակ, երբ մեր երկիրը տաք-հալած գրութեան մէջ էր:

Ք Ն Ն Ա Կ Ա Ն

Կեանքը յաւիտենականն է արդեօք, թէ սկիզբն ունի:

Կեանքի ծագման մասին երկրի վերայ՝ յիշեալ թէօրիաների մէջ երկու միմեանց հիմնովին հակառակ կարծիք կայ, որ զեղեցիկ կերպով արտայայտւում է Հելմհոլցի դրած արտեփնատիւի մէջ. «օրգանական կեանքը կամ մի որեւէ ժամանակ սկիզբն է առել եւ կամ յաւիտենական է»: Մի երրորդ՝ միջին ծանապարհ չըկայ. ով կեանքի ծագումն ունենալն է ընդունում, չի կարող նորա յաւիտեան լինելն ընդունել. ով կեանքի յաւիտենութեանն է կողմնակից, հակառակ պիտի լինի նորա սկիզբ ունենալուն:

Քննենք կեանքի յաւիտենութեան թէօրիան:

Այդ թէօրիան ասում է, որ կեանքը անսկիզբն է և մի մոլորակից անցնում է դէպի միւսը, անվերջ շարունակելով իւր գոցութիւնը: Այս կարծիքը ուղղակի հերքել համարեալ անկարելի է, քանի որ մենք դեռ ևս չենք ապացուցել, թէ իրօք սաղմերի փոխանցումը մի երկնային մարմնից դէպի մի ուրիշը անկարելի է. թէև անուղղակի կարելի էր պնդել, որ շատ անհաւանական է կեանքի յաւիտեան լինելը, քանի որ օրգանաւոր և անօրգան մարմինների համեմատութիւնը

ցոյց է տալիս, որ առաջինները բաղկացած են նոյն քիմիական նիւթերից, ինչ որ անօրգանները, և տարբերում են միմեանցից միայն իրանց քիմիական կապակցութիւններով: Կենդանի սուբստանցի կարեւորագոյն կապակցութիւնները. — սպիտակուցաւոր մարմինները — սկզբունքով՝ հակադիր չեն անօրգաններին և տարբեր են նոցանից նոյնքան, որքան անօրգանների զանազան քիմիական կապակցութիւնները միմեանցից: Նւ եթէ օրգանաւոր մարմինները յաւիտենական են, ապա, հեռւօրէն մտածելով, յաւիտենական պիտի լինէին նաև շատ հանքային կապակցութիւններ (Verbindung), որպէս որձաքարը, ֆելդսպատը (Feldspat) և այլն. եթէ այդ տեսակէտով մի քիչ հեռուն գնացինք, պիտի այն անմիա կզրակացութեանը գացինք, որ առհասարակ բոլոր քիմիական կապակցութիւնները յաւիտենից գոյութիւն ունին. կապակցութիւններ, որոնք ամեն օր հարիւրներով և հազարներով կատարւում են մարդկանց ձեռքով քիմիական լաբորատորիաներում: Քանի որ օրգանաւոր և անօրգան մարմինների քիմիական կապակցութիւնների մէջ սկզբունքի տարբերութիւն չկայ, նոցա ծագման մասին էլ բնականօրէն սկզբունքով տարբեր թէօրիաներ պիտի չառաջանան. կամ երկուսն էլ յաւիտենական են, և կամ երկուսն էլ սկիզբ ունին. որովհետև մենք հաստատ գիտենք անօրգանների ծագում ունենալը, բնական է ուրեմն, որ օրգանաւորներն էլ մի որևէ ժամանակ պիտի առաջացած լինեն:

Բոյսերի ֆիզիոլոգիայից յայտնի մի հիմնական երևոյթ էլ լիովին հակառակ է այն կենթադրութեանը, թէ կեանքը անօրգաններից չի ծագել. մի յայտնի իրողութիւն է, որ աշտօր էլ բոցաւ շարունակ սննդւում է անօրգան նիւթերից (ածխածիւթու, ջուր, ծծումբ և այլն). երբ մարդ գարնանը փոքրիկ հունար զետնի մէջ է թաղում և ամառը նորանից առաջացած ահագին բոցան է դիտում, նորա համար ակներև է, որ բոցաւ իր այդ ահագին մարմնի կենդանի տարրը տաւել և կենդանացրել է իրան բոլորող անօրգան (անկենդան) նիւթերից: Նւ երբ ձմեռը վրայ է հասնում, նոյն կենդանի բոցաւ համարեան ամբողջովին մեռնելով դառնում է մի անօրգան (անկենդան) մարմին:

Այստեղ աշխարհ տեսնում ենք օրգանաւոր և անօրգան մար-

մինների անբաժան կապը, ուր կենդանի նիւթը ծագում է անկենդան նիւթից և կրկին մեռնելով, — լուծւում, դառնում է անկենդան: Իրաւացի է յայտնի բուսական Նէգելի-ի (Nägeli) նկատողութիւնը, թէ մեր հաստատ գիտեցածն այն է, որ անօրգանը (անկենդան) օրգանաւորի (կենդանի) մէջ դառնում է օրգանաւոր սուբստանց. և օրգանաւոր սուբստանցը դառնում է լիովին անօրգան կապակցութիւն, — այսքանը բաւական է, որ սլաւոնականութեան օրէնքով հետեցընենք օրգանաւորի ծագումը անօրգանից: — Նախաձեռնութիւնը հերքել, նշանակում է հրաշք ընդունել:

Կեանքի յաւիտենութիւնն է ընդունում և Պրէյերը, միայն բոլորովին այլ մտքով. նորա թէօրիան, սակայն, շատ հետեւողներ չունեցաւ:

Նա ասում է, որ կենդանի սուբստանցը առանց ընդհարման ծագում է այն սուբստանցից, որ մի ժամանակ հրահալ դրութեան մէջ էր. մենք իրաւունք չունենք այդ վերջինը մեռեալ անւանելու, որովհետեւ իրօք կեանքի և մահւան մէջ, որպէս անօրգան և օրգանաւոր մարմինների մէջ, մի բաժանարար սուր գիծ չկայ, և առհասարակ այդ բաժանումը կամայական է:

Եւ որովհետեւ այդ սուբստանցը տիեզերական նիւթի մի մասն է, որը յաւիտենական շարժման մէջ է, ապա ուրեմն կեանքը, որ շարժման մի բարդ երևոյթ է միայն, նոյնպէս յաւիտենական է, որպէս մատերիան (նիւթը):

Պարզ է, որ նախաձագման և Պրէյերի թէօրիաների տարբերութիւնը նոցա տարբեր հասկացողութիւնն է կեանքի մասին: Առաջինը սովորական ձևով կենդանի է անւանում միայն օրգանաւոր նիւթը՝ անօրգանի յանդիման, իսկ Պրէյերը «կեանք»ը խիստ ընդարձակ է ըմբռնում և տիեզերքի բոցահալ նիւթն էլ կենդանի է համարում: Եթէ կեանք գաղափարը այդպիսի ընդարձակ մոքով ըմբռնենք, ապա մնացեալ հետեւութիւնները, որ հանում է Պրէյերը, հասկանալի կը լինին: Սակայն դա իւր անշարմարութիւններն ունի:

Այն գաղափարը, որ մենք արօտայայտում ենք կենդանի բառով, ծագել է ներկայի կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների ճիշտ, գիտական և համեմատական դիտողութիւնից: Այդ բաժանումը ունի միայն մի՛ արմատական կէտ. դա սպիտակուցաւոր

մարմինների նիւթի փոխանակութիւնն է: Այն է, սպիտակուցաւոր մարմինները, որ նաև կենդանի օրգանիզմ են կոչուած, ընդունակ են անդւելու, անդաժը մարսելու և աւելորդութիւնները իրանցից զատելու: Ո՛չ մի անօրգան (անկենդան, օր. մետալներ) մարմին սպիտակուց չունի: Ընդհակառակը ամեն մի օրգանիզմ սպիտակուցունի, եւ այդ սպիտակուցի կերակրելն է (Stoffwechsel), որով նա տարրերում է անկենդան մարմիններից:

Այս միջոցը թէև տարրական, պրինցիպական չէ, բայց միակ հաստատուն միջոցն է, որով մենք բաժանել ենք կարողանում անկենդան նիւթը կենդանականից:

Եթէ այս կետը բաց թողնենք աչքից և Պրէյերի պէս այն մարմիններն էլ կենդանի անւանենք, որոնք սպիտակուց չունին, որպէս հրահալ մարմինները, ապա մեր գտած որոշումը լիովին կորցնում է իւր նշանակութիւնը, և օրգանաւոր ու անօրգան մարմինների բաժանումը դառնում է անկարելի:

Պրէյերը մի լսիկ ենթադրութիւն էլ է անում, թէ հրահալ նիւթերը նիւթի փոխանակութիւն ունէին, որ ոչ մի գիտողութեան վրայ չի հիմնւած. թէև մի կողմից այն էլ անտարակուսելի է, որ այդ հրահալ նիւթերը մի ներքին և այն էլ շատ զօրեղ շարժման ընդունակութիւն ունէին, միւս կողմից կենսքն էլ ինքնին մի բարդ շարժումն է, որին ամեն մի մոլեկուլային շարժում սկզբունքով ազգակից է: Եւ սակայն, այն շարժումը, որ արտայայտուած է կենսքի մէջ նիւթի փոխանակութեամբ, մի շատ բնորոշ երևոյթ է: Այդ այն է, որ կենդանի սուբստանցը շարունակ մաշւում է, զատում (ausscheiden) կամ հեռացնում է իրանից սեփական մարմնի հնացած մասերը, նորա տեղը ընդունելով նոր մասեր, որոնցով շարունակ նորոգում է իւր մարմինը, կազմելով ատոմներն նոր խմբեր: Բոլոր կենդանի սուբստանցի ամենաբնորոշ յատկութիւնն է այս մաշւիլն ու նորոգւիլը, կամ զատելն և ընդունելը (ausscheiden—aufnehmen): Թէ նոյն շարժումը, այն է մաշւիլն ու նորոգւիլը գոյութիւն է ունեցել նաև հրահալ նիւթերի մէջ և անընդհատ շարունակւելով եկել հասել է մինչև մեր օրերը կենդանի օրգանիզմների մէջ, շատ տարակուսելի է: Այսօր էլ երկրի մէջ կան հրահալ նիւթեր, որոնք երբեմն երև-

ւան են գալիս հրաբուխների մէջ, թէև այդ նիւթերը երբեմն ջրի նման հոսելով հրաբուխից առաջ են սողում երկրի երեսին և ցոյց են տալիս շարժման մեծ ընդունակութիւն, բայց նոքա շունին նիւթի փոխանակութիւն, ուստի և մենք իրաւունք չունինք այդ նիւթերը կենդանի անւանելու: Արքան էլ ոգհհարուստ, ուշագրաւ և ազդու է Պրէյերի թէօրիան, սառը դատելուց յետոյ չենք կարող համաձայնիլ նորան, մեր երկրի նախկին հրահալ նիւթերը ամբողջովին կենդանի համարելու նկատմամբ: Այստեղ ուրեմն զայիս ենք այն եզրակացութեան, որ կենդանի սուքստանցը մի անգամ առաջացած պիտի լինի այն սուքստանցից, որ մենք սովորաբար կեանքից զուրկ ենք համարում:

և. կենդանի սուքստանցի ծագումն ու էությունը
ըստ Փերուտնի

Վերևի թէօրիաները զննելուց և քննադատելուց յետոյ, պրոֆ. Ֆերուտնը տալիս է իւր թէօրիան կեանքի ծագման մասին, որ Ֆիլիպքերի ու Հէկկէլի թէօրիաների նորաձեւութիւնը կարելի է անւանել, ուր նա հետեւեալ մտքերն է զարգացնում:

Ֆիլիպքերի արտայայտած կարծիքի համեմատ մենք կարող ենք խոշոր գծերով մի մօտաւոր պաշտօնար տալ կեանքի ծագման մասին երկրի վրայ: Կեանքի արմատներն հասնում են այն հնագոյն ժամանակներին, երբ երկրի կեղևը զեռ հրահալ զրութեան մէջ էր: Այն ժամանակ առաջացած ցիանի կապակցութիւնները այն հիմնական նիւթերն էին, որոնցից սկիզբն առաւ կեանքը: Ախնելով դիւրին լուծւող, նոքա չարաքերութեան մէջ պիտի մտնէին ածխածինի բազմատեսակ կապակցութիւնների հետ, որոնք նոյնպէս կրակին են պարտական իրանց ծագումը: Երբ երկիրը պատող գոլորշիները խոսանալով և պաղելով սխեցին հեղուկ-անձրևի պէս ցած դալ արգէն բաւականաչափ պաղած երկրի վրայ, կրակից ծագած ճիշեալ կապակցութիւնները քիմիական տարբերութեան մէջ մտան ջրի և նրա մէջ լուծւած աղերի ու գազերի հետ, որից և առաջ եկաւ կենդանի սպիտակուցը:

Այս առաջին կենդանի սուքստանցը, որը ինքնաձին կերպով անկենդան սուքստանցից առաջացաւ, զեռ շատ պարզ էր և

տարբերութիւններ չունէր: Շատ հաւանական է, որ նա դեռ բջիջի ձև չունէր, այսինքն նորա զումարը դեռ չէր բաժանուած միջուկի (Kern) և պրոսոպլազմայի (նախասաղճ), այլ իւր բոլոր մասերով համասեռ (gleichartig-homogen) էր, ինչպէս այդ Հէկկէլն էր ընդունում իւր մոնէրի համար:

Այս է ահա այն հաւանական դրութիւնը, որ այսօր կարելի է անել կենդանի սուբստանցի ծագման մասին: Այն պայմանները, որոնք նպաստեցին այդ կեանքի առաջանալուն, մեղ համար այնքան անծանօթ և մթին են, որ աւելորդ և անհիմն է այդ մասին երկարաբանելը: Կենդանի սուբստանցի գոյութիւնը իբրև իրողութիւն ընդունելուց յետոյ՝ մենք կանգ ենք առնում այն հաստատ հողի վրայ, որտեղից սկսելով Լամարկն ու Դարվինը հիմք դրին իրանց թէօրիային. իսկ Հէկկէլն ու Վայսմանը իրանց աշակերտների հետ նոյնը շարունակելով հաստատեցին ծագման (Descendenz) թէօրիան, որը բացատրում է մեզ կեանքի կրած էւոլիւցիան մինչև մեր օրերը:

Բացատրելը այդ թէօրիայի էականները երկու խօսքով:

Ներկայումս երկրի վրայ գոյութիւն ունեցող բոլոր կենդանի օրգանիզմները—հազարաւոր կենդանիներն ու բիւրաւոր բոյսերը—ծագում են այն պարզ և հասարակ սաղմից, որի առաջանալը անկենդան նիւթից վերևը նկարագրեցինք: Իրապէս ուրեմն բոլոր կենդանիները արեւնալից են և մի ծագումն ունին: Պատմական ժամանակի համար այդ երևոյթը բացատրելու առանձին հարկ չկայ, քանի որ ամեն օր աչքով տեսնում ենք այն սոլորական իրողութիւնը, որ ամեն մի կենդանի շարունակ ծագում է իւր նման կենդանիներից:

Այն ինչ, այն միլիօնաւոր տարիներն ու դարերը, որ անցել են կենդանի սաղմի առաջանալուց մինչև մեր օրերը, մեր աչքով չենք տեսել և նորա մասին պատմութիւն էլ չունինք: Այդ ժամանակի համար ահա հարկաւոր են ապացոյցներ, և բնութիւնը դորա համար պահել է թանկագին վիպութիւններ: Ինչպէս մի հին արձանագրութիւն կամ հին զրամ մեզ տեղեկութիւն է տալիս մի որ և է թաղաւորի կամ անցքի մասին, որ պատմութեանը յայտնի է, այնպէս էլ քարաքանութիւնը (Versteinerungskunde—Palae-

ontologie) մեզ անկասկածելի տեղեկութիւններ է տալիս երկրի վրայ ապրած այն կենդանիների և բոյսերի մասին, որոնք մի ժամանակ ապրել են և ներկայիս կենդանիների նախահայրերն են: Երկրաբանութիւնից յայտնի է, որ երկրի կեղևը զանազան շերտերից է կազմւած, որ իւր հնութեան համեմատ բաժանւում է հինգ գլխաւոր մասերի, որոնք ըստ հնութեան կոչւում են առաջին—ամենահին շերտ, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ ամենավերջին շերտը, որի վրայ մենք ենք ապրում: Արդ՝ այդ շերտերի մէջ պահւած-քարացած կենդանիների և բոյսերի մնացորդներն ու կմախքը աշխարհ ցոյց են տալիս օրգանաւոր աշխարհի աստիճանական զարգացում. ո՛չ, ի հարկէ, լրացեալ և կատարելութեամբ, որովհետև բոլոր կենդանիների հետքերը չեն պահւած և երկրի կեղևը ամբողջովին չի փորւած ու ուսումնասիրւած: Մանաւանդ ստորին կենդանիներից շատերը չունէին այնպիսի ամուր կմախք, որ ազատ մնային փշանալուց և միլիօնաւոր տարիներ զիմանային ժամանակի կործանիչ ուժին: Բայց ով կուրացած չէ գերբնական ուժերի հաւատով, պիտի համոզուի, որ ամբողջ օրգանաւոր աշխարհը, այն որ մի ժամանակ ապրել և մեռել է, և թէ այն, որ այսօր ապրում է, մի՛ ծագումն ունի, և միայն դարերի հսկայական շարքն ու արտաքին պայմանների ահագին ազդեցութիւնը նոցա ամեն միւսին տւել է մի որոշ տիպային ձև ու ապրուստի եղանակ: Այդ քարացած կենդանիների ցոյց տւած յատկանիշ կողմը այն է, որ երկրի շերտերի դասաւորութեան հետ նկատելի է և կենդանիների ու բոյսերի զարգացումը. ամենահին շերտերի մէջ նկատելի են ստորին կազմութիւն ունեցող կենդանիներ, միջին շերտերում կենդանիների կմախքը ցոյց է տալիս աւելի զարգացած ձևեր, որ աստիճանաբար բարձրանալով ամենավերջին շերտում նկատում ենք կենդանիների ամենազարգացած խմբեր, որոնց թւում և մարդուն:

Համեմատական անդամահատութիւնը (Vergleichende Anatomie) զորա մասին տալիս է երկրորդ հիմնաւոր վկայութիւնը: Նա ցոյց է տալիս որ զանազան կենդանիների նոյն օրգանները որոշ նմանութիւն ունին իրար հետ. (օրինակ, մարդու սկանջը նման է կապիի սկանջին), որ նշան է, թէ նոքա մի ժամանակ արեւնակից պիտի եղած լինին:

Այդ համեմատութիւնների շնորհիւ գիտնականները այն եզրակացութեանն էին եկել, որ թռչուններն ու սողունները մօտ ազգականներ են. — Ուղղակի ապացոյց չկար դորա համար: Եւ ահա գտնուում է երկրի շերտերում մի քարայրած կենդանի, աղաւնու մեծութեամբ՝ (*Archaeopteryx macrurus*), որը թռչունի և թէ սողունի յատկութիւններն ունի միեւնոյն ժամանակ, որովհետեւ նա ունէր մոզէսի բերան, ատամներ և ողնաշար մի երկար ազիով, բայց մարմինը ամբողջովին ծածկւած էր թռչունի փետուրներով: Գիտութեանը այսօր այդպիսի հարիւրաւոր օրինակներ են չայտնի:

Երրորդ կարեւոր վկայութիւնը բոլոր կենդանիների արեւակցութեան մասին տալիս է էմբրիոլոգիան կամ անհատի սաղմաբանութիւնը: Ամեն մի ձուի սաղմ, մինչև հասունանալը և իւր ցեղին յատուկ տիպային ձև ընդունելը անցնում է զարգացման ահադին աստիճաններ: Այսպէս՝ թիթեռի ձուն դառնում է բոժոժ, թրթուր և ապա թիթեռ, որոնք գործին անտեղեակ մարդոց կարող են բռնորովին աչլ կենդանի թւալ, մինչ նոքա միեւնոյն կենդանու զարգացման զանազան աստիճաններն են: Յայտնի է, որ որդիքը ժառանգում են ծնողների յատկութիւնները: Դորանից դժւար չէ եզրակացնել, որ կենդանի սաղմն էլ կարճ ժամանակով անցնելու է զարգացման այն աստիճանները, որոնցով անցել են նորա նախնիքը հազարաւոր և բիւրաւոր տարիների ընթացքում:

Այսպիսով ամեն մի կենդանի էակ իւր սաղմային զարգացման ժամանակ, օրինակ մարդը մօր արգանդում, անցնելու է այն աստիճանները, որոնցով մարդկութիւնը անցել է իւր կեանքի երկարատեւ և դանդաղ ընթացքում, սկսած պրոտոպլազմայից մինչև ինքը մարդը: Այնպէս որ, դիտելով մարդու սաղմի զարգացումը մօր արգանդում, կարող ենք տեսնել այն զարմանալի նմանութիւնը, որ կայ բոլոր ստորին կենդանիների և մարդու սաղմի մէջ: Հէկկէլը իւր Վեռլան ստեղծագործութիւնն — գրքի մէջ պատկերներով ցոյց է տալիս կաթնասուններից ողնու (*Ameisenigel*), պարկաչկենդանու (*Beutelthier*), եղնիկի, կառուի, կապկի և մարդու նմանութիւնը սաղմային զարգացման երեք աստիճաններում: Առաջին աստիճանում այդ կաթնասունների սաղմերը բոլորը նման են ձկան և միեւնոյն ժամանակ միմեանց այնքան, որ մարդու, կառուի և ֆուսցեալ կենդանիների

սաղմերը անկարելի է զանազանել միմեանցից: Տարբերութիւն նկատելի է միայն զարգացման աւելի ուշ՝ երկրորդ աստիճանում միայն, երրորդ աստիճանում միայն կարելի է այդ սաղմային կենդանիները զանազանել, թէև նոցա մէջ եղած նմանութիւնը դարձեալ ակնհայտ է... Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ բոլոր կաթնասունները ծագում են միեւնոյն ընդհանուր նախնիքից և սաղմի զարգացումը (Ontogenie) իւր նախորդների անցած զարգացման աստիճանների կրկնութիւնն է: Այնպէս որ, միայն սաղմի զարգացումը ղիտելով մենք մտաւորապէս կարող ենք ասել, թէ մի որևէ կենդանի ինչ ծագումն ունի և կենդանիների որ ցեղին աւելի մօտ ազգական է: Այսպէս ուրեմն, քարաքանութիւնը, համեմատական անդամահատութիւնը և սաղմաբանութիւնը ձեռք-ձեռքի տաւ՝ գալիս են հաստատելու այն Վիսկոն, որ բոլոր օրգանիզմները մի՛ ծագումն ունին, և ցոյց են տալիս այն ճանապարհը, որով այդ կենդանիներն անցել են իրանց զարգացման ընթացքում, հասնելով մինչև կենդանիների «թագաւոր» — մարդը:

Այդ ուսումնասիրութիւնների հիման վրայ կենդանի օրգանիզմների ցեղաբանութիւնը հետևեալ պատկերն ունի:

Առաջին կենդանի տարրից, որ Հէկկէլը մշնէր է անւանում, առաջացաւ միարջիջ սուբստանցը, որ բաղկացած էր մի միջուկից և պրոտոպլազմայից — այսպէս անւանեալ՝ պրոտիստները: Պրոտիստներից առաջացան մի կողմից բոյսերը, միւս կողմից կենդանիները: Այդ բաժանումից առաջացաւ այն մեծ տարբերութիւնը, որ կայ բոյսերի և կենդանիների մէջ. այն է, բոյսերը կերակրւում են անօրգան նիւթերով, իսկ կենդանիները օրգանաւոր: — Այդ ստորին կարգի կենդանիներից առաջացաւ ամբողջ կենդանական աշխարհը աստիճանական զարգացմամբ, որպէս նաև բուսական աշխարհը ստորին կարգի բոյսերից (Protophyten): — Այսպիսով՝ բուսական և կենդանական աշխարհը իւր բիւրաւոր ձևերով ու տեսակներով միմեանց հետ կապւած են նեղ-արեւնական կապերով:

Թէ որպէս և որանդից առաջացաւ այն հսկայական տարբերութիւնը կենդանի օրգանիզմների մէջ, թէ ի՞նչպէս Հէկկէլի նախնական պարզ, հասարակ և անձև սաղմը (մօնէրը) զարգացման այնպիսի հսկայական քայլեր կատարեց և ձևերի մի աներևակայելի

բազմատեսակութիւն առաւ, բացատրում է մեզ Դարւինի համա-
ւաւոր թէօրիան, որ ընտկան ընտրութիւն է կոչւում (Selec-
tionstheorie):

Դարւինի ելակէտը հետեւեալն էր. յայտնի է, որ միևնոյն տե-
սակի կենդանիները—նոյն իսկ միևնոյն ծնողների զաւակները ունե-
նալով միևնոյն արպային ձևերը, այնուամենայնիւ քիչ թէ շատ
տարբերւում են միմեանցից: Պատճառն այն է, որ զաւակը միայն
հօր կամ մօր սաղմի արդիւնք չէ, այլ նոցա խառնուրդի. նա չի
ժառանգում միայն հօր կամ մօր, այլ այդ երկուսի յատկութիւն-
ները այս կամ այն չափով խառնւած: Բնականօրէն, զաւակը չի
կարող բացարձակ հօրը կամ մօրը նմանել:

Միւս կողմից նա ենթակաջ է արտաքին պայմանների զօրեղ
ազդեցութեանը, որոնց շնորհիւ նա իւր ծնողներից և իւր ցեղի
միւս կենդանիներից տարբերւելու նոր վայրկեաններ է ստանում:
Այսպիսով նման կենդանիները ուզում են ապրել. նման կենդանի-
ները նման էլ կերակուր են ուզում, և այդ կերակրի պատճառով
նոցա մէջ ծաղում է մրցութիւն, կռիւ, որ հալերէն գոյութեան
կռիւ է կոչւում.—կենամարտ (Kampf ums Dasein.—struggle for
life): Կռիւ մէջ, հարկաւ, յաղթողը, զօրեղը ապրում է, իսկ յաղթ-
ւողը մահան գատապարտւում: Այսպիսով ապրում են նոքա, որոնք
մի առաւելութիւն ունին և արտաքին պայմաններին աւելի են
յարմարւում. իսկ նոքա, որոնք այդ արտաքին պայմաններին չեն
կարող յարմարել, բնականօրէն մեռնում են:

Զարգանալու, աճելու և իրանց սերունդը շարունակելու մեռւմ
են ուրեմն միայն զօրեղները, արտաքին պայմաններին յարմարող-
ները, աւելի ընտիրները, որոնք և շարունակում են կենդանի օր-
գանիզմների գոյութիւնը: Այդ ընտրութիւնը թոյլերի և զօրեղ-
ների մէջ, արտաքին պայմաններին յարմարելու և իրանց կեանքը
շարունակելու ընդունակութիւնը,—այդ է ահա, որ կոչւում է ընտ-
կան ընտրութիւն (Natürliche Zuchtwahl.—natural selection):
Այնքան է, որ օրգանիզմները ապրելու համար յարմարւած պիտի
լինին արտաքին պայմաններին և նորա բիւրաւոր ձևերն ու տար-
բերութիւնները արդիւնք են միայն այդ պայմաններին յարմարե-
լուն:

Դիտելով կենդանի օրգանիզմների կատարած փոփոխութիւններն ու զարգացումը մի կողմից մինչև ծաղկաբոյսերը (Blüthenpflanze), միւս կողմից մինչև ողնաւորները, նկատում ենք այն աչքի զարնող երևոյթը, որ կենդանի օրգանիզմը պարզից, հասարակից առաջանալով, միշտ բարդւել և զարգացել է, ամենաչնչին կարիքի համար ստեղծելով առանձին օրգան՝ շարունակ առաջագիմել կատարելագործւել է:

Նստերը այս հանգամանքի մէջ ուզում են Աստուծոյ մատը տեսնել, այն, որին հէնց էն զլխից Գարւինի թէօրիան հակառակ է եղել: Օրգանիզմների էությունից չունի ոչ մի նպատակ. նա արդիւնք է բնական երևոյթների համախմբման. նա պիտի առաջանար, երևան գար անհրաժեշտօրէն, քանի որ արտաքին պայմանները իրանց լրութեամբ որպէս մի պատճառական անհրաժեշտութիւն պահանջում են նորա տեղի ունենալը: Մի որ և է նպատակ տեսնել բնական երևոյթների մէջ, դա միայն մարդու գործն է. բնութիւնը չի ճանաչում ոչ ծայր, ոչ վախճան և ոչ որ և է նպատակ. պէտք է միշտ գիտակ լինել, որ այն կարծիքը, «թէ մարդը աւելի կատարել է քան ամէօքը» (ամենաստորին կարգի կենդանի), կը մնայ միշտ կամայական, որին երբէք իրականութիւնը չի համապատասխանում: Եթէ մենք զարգացումը կատարելութիւն ենք անւանում, դա միայն պայմանական արտայայտութիւն է: Աշխարհը չունի ոչ մի նպատակ, որին նա ձգտել կարենար. — այնպէս մի բան կայ միայն. յաւիտենական զարգացում, այսինքն անվերջ փոփոխութիւն...:

Եթէ այս բացատրութիւններից ծագող եզրակացութիւնները հանենք, մեզ համար պարզ և հասկանալի պիտի լինի, որ կեանքը իւր ծագման առաջին օրից արդիւնք է երկրիս արտաքին պայմանների:

Կեանքը մեր երկրի զարգացման մի գործոնն է թւաքանական մտքով. կենդանի սուբստանցը, քանի որ մեր երկիրը հրահալ դրութեան մէջ էր առանց պաղած կեղւի, էէր կարող գոյութիւն ունենալ: Բայց պիտի առաջ գար միւսնոյն անխուսափելի անհրաժեշտութեամբ, ինչպէս ամեն մի քիմիական կապակցութիւն, եթէ կարևոր պրոցմանները ներկայ են: Կեանքի ձևն ու կազմու-

Թիւնն էլ պիտի ենթարկին ան աստիճան փոփոխութեան, որքան արտաքին պայմանները փոխուում են երկրի զարգացման ընթացքում: Կենդանի սուբստանցը երկրի մատերիայի (նիւթի) մի մասն է լոկ: Այդ մատերիայի կենդանի սուբստանց դառնալը երկրի զարգացման մի նոյնպիսի արդիւնք էր, որպէս ջրի առաջանալը. մի երևոյթ, որ անհրաժեշտօրէն առաջ եկաւ երկիրը կազմող մասսայի պաղե-
լուց...

ԱԼԱԳԵՍՋԻՆ

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Աւմութ ամեր ճակարիդ զիզւան՝
Դուման հազար, Ալագեանդ,
Սրտումս արև հէչ չի ծաղկում,
Սիրտս էլ զուման, Ալագեանդ:

Ա՛խ, փէշերդ անցայ, տեսայ—
Աւանց փշի վարդ չկայ.
Ե՛խ, իմ փուշը... էջ, Ալագեանդ,
Իմ զարդիս պէս դարդ չկայ:

Է՛ջ, Մանտաշի¹ նշխուն հաւքեր,
Իմ զարդս որ ձերն եղնէր,
Ձեր էդ դաւա՛վառ, խնս՛փետուրներն
Կը սենալին, քանց գիշեր:

Է՛ջ, Մանտաշի մարմանդ հովեր,
Իմ զարդս որ ձերն եղնէր,
Ձեր նո՛ւշ-անո՛ւշ ծաղկանց հոտը
Թոյն ու տօթի կը կտրէր:

¹ Մանտաշը Արագածի ամենագեղեցիկ և մեծ ձորն է,—Կուման—
մշուշ:

Է՛յ վնխ, կոտորան իմ թևերըս,
 Ընկա՛յ զիրկդ, Ալազեան՝
 Զան, մենձ սրտիդ սիրտս սղմեմ,
 Լամ, սրտանց լամ, Ալազեան՝

1896 թ. 23 օգոստոսի. Օդեսա:

Ապրում եմ մենակ, մարդկանց մէջ օտար,
 Նրանց աչքերը ինձ չեն ողջունում:
 Մարդկանց սրտերը փակ են ինձ համար,
 Նրանց ականջը ձայնս չի լսում:

Իմ ընկերները — իմ խոր մտքերն են,
 Որ սուր թևերով երկինք են չափում:
 Այն վառ աստղերը — զթոռ աչքերն են,
 Որ վշտիս ժամում ինձ քաղցր են ժպտում:

1894 թ. Նոյեմբերի 3. Լալաջիկ:

ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷ ¹

(1799—1856)

(Շարունակութիւն ¹)

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻ

Պարիզ մայրաքաղաք մը է, աշխարհ մըն է Թրանսպին և պարիզցիներ տարբեր մարդիկ են: Պարիզ ուրոյն հայրենիք մըն է: Թրանսպին բոլոր ուժերուն դարաւոր կեդրոնացումը, օտար բոլոր մեծ ուժերուն կուտակմամբը կնճռոտած, Պարիզը կազմած է: Զուտ մտաւորական հայրենիք մըն է, բոլոր ազգերուն իսկութեան խտացումովը ձեւացած, և որ իրեն զաւակ կը համարի բոլոր մոքերը որոնք իրենց տեղական շրջանակին դէմ կ'ապստամբեն, ընդունւած հարգերէն դուրս կ'ելլեն և իրերը իրենց երեսովն ու աստառովը միանգամայն տեսնել գիտեն,—«Սատանաներուն արքայութիւնը», ինչպէս ըսած է Հայնէ ինքն իսկ: Թրանսպիններուն մէջէն, ամենէն հարազատ պարիզցին Վոլտէրը եղաւ: Բայրըն, Թէյե Սլըյոնի զաւակ և անգլիական զգայնութեամբ խմորւած, պարիզցի էր հոգիով: Հայնէ, Թէյէտ գերման նիւթեղէններով շինւած, պարիզցի միտք մըն էր, և այնչափ հզօր պարիզցի մը եղաւ որ վերանորոգեց և զարգացուց պարիզեան ոգին: Վոլտէր հեգնութիւնը իր ծայրագոյն կատարելութեանը հասուցած էր: Հայնէ, կարելի է ըսել, ստեղծեց, կամ ձոխացուց հեգնութեան այն նոր և աւելի փառնգաւոր ձեւը, կատակը, blagueը՝ պարիզեան բառով: Հեգնութիւնը դեռ լուրջ փորք մը ունի, որոշ նպատակի մը դէմ ուղղւած ուժ մըն է, և

¹. Տես Մուրճ 1898 թ. № 6.

գործունեութեան տարր մը կրնայ դառնալ՝ ինչպէս եղաւ Յեղափոխութիւնը յառաջ բերելով. blagueր, աննպատակ, հակասական, մշտափոփոխ ու ծածանուտ ծաղրանքն է, որ կը կործանի կործանելու համար, որ ոչինչ կը յարգէ՝ ոչ իսկ ինքզինքը, որ երբեմն քմահաճոյքը կ'ունենայ յուզմունքի փոխելու և որ սպաննած ատենը զոհին վրայ լալու կ'ելլէ։ Հայնէ վարպետը եղաւ այդ նոր ծիծաղին, և իրմէ ի վեր Պարիզ իւրացուց, ընդարձակեց և ամբողջ գրականութեան մը հողին դարձուց զայն։

Պարիզ գրկաբաց ընդունեցաւ իր որդեգիրը։ Հայնէ արդէն քիչ շատ ծանօթ էր հոն, իր Ֆրանսասիրութեամբն և իր բանաստեղծական համբաւովը։ Անժիշտպէս պաշարեցաւ բարեկամներով և հիացողներով, որոնց մէջ կարեւոր տեղ բռնեցին Գէռառ դը Հէուալ հոյակապ ու զժրաջող բանաստեղծը, և Թէոֆիլ Գոթիէ, արիստագէտ գրագէտը, որ իր գործերուն Ֆրանսերէն թարգմանութեանը օգնեցին իրեն։ Ապրուստի միջոցները Գերմանիայէն կարած լինելով, Ֆրանսական կառավարութիւնը իրեն ատեն մը ամսական կապեց։ Եւ Հայնէ շարունակեց, աւելի ազատ հողի մը վրայ, աւելի ու ժեղ ձևով մը, ինքզինքը արտայայտել։ Մէկ կողմէ իր գործը Ֆրանսայի կը ծանցնէր թարգմանութիւններով, միւս կողմէ առաջ կը տանէր Գերմանիան հիմնիվեր չեղափոխելու ձգտող իր գրական գործունեութիւնը։ Հայրենիքին մէջ ունեցած սակաւթիւ հաւատարիմները կը պաշտպանէին իր անունն և իր դործը՝ անթիւ հակառակորդներուն դէմ. կազմած էր նոր սերունդ մը որ ինքզինքը իրիտասարդ-Գերմանիա կ'անւանէր, և պայքարը կը քսւէր քաղաքական, բարոյական և գրական պայմանադրութիւններուն դէմ։

Հայնէ խստապէս քննադատուած է իր աչս անազնիւ կարծած ընթացքին համար, որով հակառակորդ երկրէն իր հայրենիքը ծաղրած ու հարւածած է. գերմանացի հայրենասէրները մինչև այսօր զինքը կ'ատեն իբր իրենց հայրենիքին մէկ ամօթալից ու ապերախ զաւակը։ Վատաստանը անիրաւ է. պէտք չէ մոռնալ որ Հայնէ հրէայ էր և ոչ գերմանացի. և ցեղի բաժանումները մարդկութեան մէջ աւելի իրական ու բնական են քան հայրենիքներու սահմանադրումները։ Հայնէ, գերման մը ըլլալով հանդերձ, հրէայ մնացած է, հրէայի պէս զգացւած է, և ատով, անջատ և անկախ նայւածքով

մը կրցած է տեսնել բոլոր ազգաբնակիչներն ու թերութիւնները
 այն ժողովուրդին որուն մէջ ծնած էր: Ասկից զատ, եթէ իրաւ է
 որ Հայնէ իր ծննդավայրի եղբայրներուն կոպտութիւնը ծանակելու
 մէջ շատ անգամ ծայրացեղ անգթութիւն մը պրծած է և իր գերմա-
 նական ծագրանկարները քիչ մը չարածձի հաճոյակատարութեամբ
 մը Պարիզցիներուն առջև տարածած է, նոյնչափ իրաւ է որ իր
 յարձակումները միշտ արդար և ճշգրտադատ եղած են. իր հարւած-
 ները կ'ուղղէին պրուսիական ողիին, հայրենամոլ, զինամոլ, հնամոլ,
 արծաթամոլ ձգտումներուն դէմ, և իր խալթածքը երբեք չէ հա-
 մարձակած բուն գերման հոգիին վեհաշուք գեղեցկութեանը զպիւր
 «նոգ մի՛ ընէք, կը գրէ իր Գերմանիա քերթածին նշանաւոր յա-
 աջաբանին մէջ», — որ իր այն հազազիւս կտորներէն մէկն է, ուր
 հակառակ թեթեւ քմծիծաղի մը, հոյակապ կերպով լուրջ եղած է,
 — երբեք Հռենոսը Ֆրանսացիներուն չափի յանձնեմ, այն պարզ
 պատճառով որ իմն է Հռենոսը: Այո՛, իմն է ծննդեան անկապտելի
 իրաւունքով մը. այդ կարծեցեալ ազատ Հռենոսին ազատ և անկախ
 տղան եմ ես: Բայց նախ ազատենք զայն Պրուսիացիներուն ճան-
 կերէն: Գալով Գերմաններուն, զանոնք եղբայր տեսած է Ֆրանսա-
 ցիներուն, երկու մեծ ազգերը, «քաղաքակրթութեան երկու ընտ-
 րեալ ազգերը», ինչպէս ինք կ'ըսէ, մէկը հիմնաւրի երազողը, միւսը
 քաջ մաքառողը. և ո՞վ իրմէ աւելի խորին յուզմամբ արտայայտած
 է գերման հանճարին ազնւական մեծութիւնը. տեսէք իր էջերը
 Գէթթէի, Շիլլէրի, Հէգէլի, գերման բնութեան, գերման մտածման
 վրայ. բայց իր բաղձանքն է որ գերման հոգին ազատի պրուսա-
 կան բռնութենէն և Ֆրանսական սկզբունքներով նորոգի, կատա-
 բելագործի, ամբողջանայ: «Իսկ Ալգասն ու Լոռէնը, կը գրէ նոյն
 յառաջաբանին մէջ, ես չեմ կրնար զանոնք գերման կայսրութեան
 կցել ձեր կարծածին չափ զիւրին կերպով. այդ երկրին մարդիկը
 Թրանսալի չարած են սերտիւ, այն քաղաքացիական իրաւունքնե-
 րուն համար զոր ձեռք ձգած են Ֆրանսական Ֆեդափոխութեան շնոր-
 հիւ, այն հաւասարութեան օրէնքներուն և ազատ հաստատութիւն-
 ներուն համար որոնք միջին դասակարգին բաղձանքները կը փայ-
 փայլին, թէպէտ սուր մեծամասնութեանց ստամոքսին զեռ շատ
 քիչ հակում կուտան: Ալգասի և Լոռէնի մարդիկը Գերմանիայի պիտի

սրին, երբ աւարտենք ինչ որ Ֆրանսացիները սկսան, 1789-ի Յեղափոխութեան մեծ գործը, տինզերական ռամկավարութիւնը: Երբ Յեղափոխութեան մտածումը իր բոլոր հետեանքներովը շարունակենք, երբ սարկութիւնը ջնջենք իր վերջին ապաստանարանին՝ երկնքին մէջ, երբ երկրիս երեսին աղքատութիւնը վերցնենք, երբ անժառանգւած ժողովուրդին, ծաղրւած հանճարին, պղծւած դեղեցկութեան իրենց պատշաճ պատիւը զարձնենք, ինչպէս որ մեր մեծ վարպետները, մտածողներն ու բանաստեղծները ըսած և երգած են և ինչպէս մենք, անոնց աշակերտները, կ'ուզենք,—այն ատեն ո՛չ միայն Ալլամն ու Լոռենը, այլ Ֆրանսան ամբողջ, այլ փրկւած Եւրոպան ու աշխարհ արարած մերը պիտի ըլլան:

Հայնէ հոս չի կատակեր. ընդհակառակն, իր մտածման խորքը ցոյց կուտայ, որ տարօրինակէս հօր և առողջ էր, և որ ազգի խնդիրներէն վեր կ'ելլէր, ընկերական մեծ վերանորոգման ձգտումը կ'ուրաւգծէր: Երբեմն լրջութենէն անդին անցած և իր զգայնութիւնը պարզ ու մերկ ցուցուցած է. Գերմանիոյ վերքերը քանի մը անգամ իրմէ արցունք քաղած են. և չիկայ աւելի վրդովիչ բան քան այդ անպատկառ քրքջացողին յուզումը. Գանտէի աքսորի երգէն դատ, չեմ գիտէր աւելի տխուր էջեր քան Ռայզըքիլդէր-ին առաջին հատորին վերջաբանը, ուր Հայնէ կը նկարագրէ գերման դաղթականներու ողորմ անցքը Ֆրանսայէն. «Հաւուր մեծ ճամբուն վրայ էի, և իմ առջևէս կ'անցնէին, բարձր ու յամրագնաց, շատ մը զիւղացիի խոշոր կառքեր, տեսակ տեսակ ողորմելի անդուկներով, արկղներով, հին փրանկաձև անօթներով, կնիկներով ու տղաքներով բեռնաւորւած էրիկ մարդիկ քովերէն կը քալէին, և զարմանքս մեծ եղաւ երբ անոնց խօսիլը լսեցի... գերմաներէն կը խօսէին, սուաբ բարբառով: Հասկցայ որ դաղթականներ էին, և երբ աւելի ուշով զիտեցի զիրենք, յանկարծ զգացում մը թափանցեց զիս, ինչպէս ամբողջ կեանքիս մէջ դեռ չէի ունեցած. արիւնս սիրտս ժողովեցաւ և կուրծքս զարկաւ, որպէս թէ դուրս ելլել ուզէր՝ և կարելի եղածին չափ շուտ շունչս կտրեցաւ: Այո՛, նոյն ինքն Հայրենիքն էր որ ճամբուն վրայ դէմս կ'ելլէր. այդ սալեբուն վրայ խարտեաշ Գերմանիան էր նստած, իր մութ կապոյտ աչքներով, իր շատ խոհական ու բարեմիտ դէմքերով, և բերնին

անկիւնը՝ ունենալով այն ողբալի սահմանափակ պարզմոտութիւնը, որ ատենով զիս այնչափ նեղացուցած ու տխրեցուցած էր, բայց որ հիմա մեկամաղձիկ յուզում մը կուտար ինծի. որովհետեւ եթէ, երկուսսարդութեան աղւոր օրերուն մէջ, յաճախ չարաչար ծաղրած եմ ազգային տխմարութիւններն ու սովորութիւնները, եթէ զիւղապետի պէս թմրած ու երջանիկ և խոտունջի պէս դանդաղ հայրենիքին հետ շատ անգամ ընտանեկան կուիւներ ունեցած էի՝ ինչպէս կը պատահի ամեն մեծ ընտանիքի մէջ, բոլոր այս յիշատակները մարեցան հոգիիս մէջ երբ հայրենիքը տեսայ դժբաղդութեան, պանդխտութեան, աքսորի մէջ. իր թերութիւններն իսկ ինծի սիրելի և անգին երեցան, իր փոքրոգի սովորութիւններուն հետ հաշուեցայ, և անոր ձեռքը սեղմեցի, այդ գերման գաղթականներուն ձեռքը սեղմեցի, և ինծի թւեցաւ որ հայրենիքին ձեռքը կը սեղմէի բարեկամական դաշինքը վերանորոգելու համար:

Այս տեսակ էջերը առատ չեն Հայնէի մէջ, բայց ասոնք կը բաւեն ցուցնելու Հայնէի մտածումը, զերծ ամեն ծպտումէ: Այդ մտածումը մաքուր ու վեհ է, և եթէ մարդ ուշադրութեամբ նայի Հայնէի ամբողջ գործին մէջ, անոր ծամածռութիւններուն ու կլմպողտիկներուն տակ միշտ պիտի տեսնէ այս ազնիւ մտածումը՝ պահւելոտած: Օր մը երբ Գերմանիա թօթւէ իր թմրութիւնը, պիտի տեսնուի, որ իր ամենէն լուրջ խորհրդատուն, իր ամենէն առողջ գաւակը՝ իննդ կարծւած, ապերախտ համարւած Հայնէն էր, որ թէպէտ յաճախ կարծր ու տհաճոյ ձեւ մը տաւ իր խօսածքին, բայց միշտ ճշմարտութիւնը ըսաւ իր հայրենիքին: Այս անգամ ալ, ինչպէս Շէքսպիրի խաղերուն մէջ, հոպիտն է որ խորունկ խօսքերը ըսած պիտի ըլլայ:

Ու միշտ, իր մէջ մտածումներու ամբողջ աշխարհ մը ունենալով հանդերձ, կարենալով՝ եթէ ուզէր, հինգ բանաստեղծի և տասը հրապարակագրի գործ արտադրել, Հայնէ նախ ընտրեց հոպիտի ղիբքը պահել: Ոստոտելով ըսաւ ամենէն ծանրախորհուրդ բաները, և շարունակեց քահքահել երբ էն տխուր զգացումներով կը զբաղէր: Գերազանցապէս արեւստագէտ խառնւածք մը ըլլալով, ծիծաղելի կ'երևար իրեն վարդապետական ձեւ մը առնել իրերուն առջև, դասախօսի լրջութեամբ կեանքը բացատրել և կուսակցականի հաւատ-

քով լրագրի մը յարել: Իր պաշարը, թէև ամենէն ազնիւ սկըզբունքներէն մեկնած, ոչ մէկ որոշ և անմիջական նպատակ ունէր, քաղաքական գործիչի մը, կրօնական վերանորոգիչի մը, զրական նոր պետի մը համոզւած և տրամաբանական մաքառումը չէր: Այդ պաշարը բնական հետեանքն էր միշտ խռովայոյզ, միշտ տենդոտ, միշտ զժգոհ մոքի մը, որ ոչ մէկ բանի կը հաւտար, ոչ մէկ բան հաստատել պիտի համարձակէր, և ամեն բանի ունայնութեանը մէջ՝ իր ձանձրոյթը կը զբօսցնէր զանդւածներուն հաւատքին դէմ կռւելով: Իր էականապէս տոհմիկ բնութեանը ծնունդն էր այդ հակաձառութեան ոգին, որով կը մղւէր մեծամասնութեան մտածածին հակոտնեան որդեգրելու, այն պայմանով որ վանէր երէկւան իր մտածածն ալ՝ եթէ վաղը անի հասարակաց դառնար և գռհհհհհնար: Երբ տեսայ որ, կը գրէ նամակի մը մէջ, Աստուծոյ գոչութիւնն ուրանալը աղտոտ կաշկարներու և բնդի դերձակի աշկերտներու բերանը ինկեր էր, երբ անասուածութիւնը ճարպ, օղի և ծխախոտ հոտիլ սկսաւ, այն ատեն աչքերս բացւեցան, և զգանքին բերած սիրտ-խառնւոքովը հասկցայ ինչ որ բանականութեամբ չէի հասկցած, և մնաք բարով ըսի անասուածութեան: Նոյն ձանձրոյթը զգաց, երբ տեսաւ որ իր քաղաքական ու զրական գաղափարները տարածւեցան և բազմութեան մը բերանը իյնալով լըրճւեցան. ետքերը, սկսաւ ծաղրել նոյն իսկ Երիտասարդ-Գերմանիան, զոր ինք ստեղծած էր: Տարբեր՝ ժ.Վ. զարու մտածումէն, որուն քանդումը ժխտական հաստատում մըն էր, որ իր դիզած աւերակներուն վրայ ապագայ շէնքին հաւատքը կը քարոզէր, Հայնէ բացարձակ անհաւատութեան, անդարմանելի յուսահատութեան հասած էր. ըմբռներ էր որ կեանքին ոչ սկիզբը, ոչ վախճանը, ոչ նպատակը ծանօթ է և կրնայ ըլլալ, թէ ճշմարտութիւնը գտնել մարդուն չէ տրւած, թէ ոչինչ ստոյգ է և ոչ ոք իրաւունք ունի, և թէ մարդուն ուրիշ բան չի մնար ընել, ծաղրելի չըլլալու համար, եթէ ոչ կեանքին պարապը զարդարել աւելի կամ նւազ սիրուն սոփեստութեամբ մը որ զբօսցնէ և մխիթարէ: Հեռու վիքուն չաւակնութիւնն ունենալէ տիեզերքին ասջև որոշագիծ և անխախտ կեցւածք մը առնելու, չկարենալով, Շէքսպիրի պէս, առանց բացատրել փորձելու, մարդկային կրքերուն շեփորը դառնալ և կեանքը հաղա-

րապատկեալ արտայայտել, կամ Գէօթէին պէս բնութիւնը ըմբռնել ջանալ՝ որչափ որ կարելի է մարդուն, և հանդարտ, վստահ, տիեզերական հոգիին անձնատուր, թողուլ որ կեանքը յաւերժական օրէնքներուն համեմատ թաւալի և հասնի իր անձանոթ նպատակներուն, ոչ ալ ինչպէս Իբսէն ըրաւ, համոզած ըլլալով հանդերձ կեանքին ունայնութեանը, դառն քաջութեամբ մը մարտնչիլ ծակատաղին դէմ և կռիւին ազնւութեամբը վախճանին խաւարը մոռնալ, Հայնէ կեանքին առջև ձեռք գցեցաւ դերասանի մը որ բոլոր դերերը կը հասկնայ և կ'ապրի, անոնց և ոչ մէկուն կը հաւատայ, և որ կը խնդայ բոլոր գիմալներուն տակէն՝ նոյն իսկ երբ անոնք զայրոյթը, ցաւը կամ խանդավառութիւնը կը պատկերեն:

Եւ ճիշտ սոսկ պէտք բազմաձև, վարանոտ, հակասական ըլլալուն համար է, որ Հայնէի հեգնութիւնը լեզի է և խորունկ, ամենէն խորունկն ու ամենէն լեզին որ երևցած է մարդոց մէջ՝ հակառակ թեթև երևոյթին: Վոլտէր, որ մեծ հեգնողը կը նկատուի, Հայնէի քով հաւատացեալ մը կը դառնայ. անի դեռ միամտութիւններ ու հաւատքներ ունէր, գրական, քաղաքական, իմաստասիրական դաւանանքներ կը պարզէր, համոզմունքով կը հեգնէր, և իր ըրածին հաւատալու իմաստակութենէն, էր խորշեր: Հայնէ ծայրագոյն սկեպտիկն է, բացարձակ անպատկառը. ոչ մէկ վախ, ոչ մէկ ամօթ, ոչ մէկ ինչ խղճմտութիւն, ոչ մէկ ակնածանք ունի. վսեմ լկոտածն է: Այս վերջնական տարբազանգրութեան խմորը հրէայ ցեղէն միայն կրնար ծնիլ: Հրէան միշտ ջղուտ և ծայրացեղ, որ հին օրերուն առեւտրութեամբ ու ցասումով շինուած հաւատք մը ստեղծեց, այս դարուն կատաղի և բացարձակ անհաւատութեան կրցաւ հասնիլ: Ժամանակակից ընկերութեան մէջ, հրէայ ցեղը, զոր Նիցշէ ինքն իսկ կը դաւանի իբր ամենէն հղօրն ու ճապարկը մարդկային ցեղերուն, միջնադարեան հալածանքէն աւելի խտացած, աւելի ինք իր մէջ սեղմած ու սրցած, առանց հայրենիքի, և ստեղծելով դաւաժարական հայրենիք մը որ իր ցանցը ամբողջ աշխարհիս վրայ կը տարածէ, դարձաւ տարր մը տարբազանգրութեան և յեղափոխման. միշտ ծայրացեղ, հրէան կ'երևայ երկու երեսներով, որոնք արդի աշխարհին երկու բևեռներն են. մէկ կողմէն դրամի զօրութեան մեծ տիրապետոյն է, միւս կողմէն ընկերական հաւասարութեան,

մարդկային ազատագրութեան մեծ գործիքն է. Ռոտշիլդն է, և Կառլ Մառքսը. երկու երեսները, որոնք հակոտնեաներ են, իրար կը լրացեն և անգիտակցաբար նոյն վախճանին կը ձգտին. զրամական գործունէութիւնը հայրենիքներուն պատւարները կը քանդէ, երկիրները իրարու կը կապէ, աշխարհս կը ձգտի դարձնել մեծ անխափան պողոտան՝ առևտրական երթևեկին համար. յեղափոխական մտածումը՝ ուրիշ զէնքերով՝ կը տապալէ ազգային եսականութիւնները, կրօնական կոիւնները, քաղաքական մաքառումները, ընկերական անհարթութիւնները, և կ'ուզէ երկիրը դարձնել միակ տուն մը միակ ազգին՝ մարդկութեան համար. Հայնէ հրէայց ցեղին արևատագէտ արտայայտութիւնը եղաւ. Անոր լուծիչ ոգին ներկայացուց իր ծիծաղովը. Սև ծիծաղը դառն էր, որովհետև ամբողջ հրէութեան կուտակած ոխը կը պարունակէր:

Իր ցեղն է դարձեալ, որ Հայնէի մէջ ձևացուցած է խառնուրդ մը Արևմտցիի և Արևելցիի, աստիճանով մը զոր ոչ մէկ եւրոպացի բանաստեղծ ունեցած է: Այդ նրբացած եւրոպացին արևմտեան քաղաքակրթութեան վերջնական մոտձմանը կը միացնէր Արևելքի հոգիին խորին ըմբռնողութիւն մը. Հայնէ իր մէջ զարթնունն զգաց հին երրաջեցի բանաստեղծներուն թրթռուն, հեշտական ու ճշուտ տաղերգութեանը: Ամբողջ Արևելքը իրեն բացւեցաւ, իր միտութեան ու խոնկերովը, իր երևակայութեան պալատներովը, իր գոյներու ակնախտիդ ու թոյլ ծիածանովը, և իր յուսահատ ճակատագրականութեամբն ալ որ ամէն բան ունայն կը տեսնէ, բանականութիւնը կ'արհամարհէ և զգայարանքներուն կուտայ յաղթանակը մտքին վրայ. Շիտակն ըսելով, կը զրէ տեղ մը, ես դերմանացի չեմ, և կը փութամ ըսելու որ եթէ դերմանացի ըլլայի՝ պիտի չսարժենայի ասով. բարբարոսներ են ասոնք. աշխարհիս վրայ երեք քաղաքակիրթ ժողովուրդ կայ միայն, Ֆրանսացիները, չինացիները և պարսիկները: Ես հպարտ եմ պարսիկ ըլլալուս...: Ա՛խ, ի՞նչպէս կարօտը կը քաշեմ Սպահանին: Սև ըսել է պէտք է օտար երկրի մէջ քաշկռուիմ, հեռու վարդապատաններէն ու շողշողուն մինարէներէն: Ի՞նչ անեղ է ճակատագիրը, որ կը ստիպէ պարսիկ բանաստեղծը իր տողերը ձեր դժոխացին պրուսիական լեզւին հատկոտեալ ու խապոտ կշռութեանը ձկնել, որ կը դա-

տապարտէ զայն ձեր հանրակառքերուն ցնցումները հանդուրժելէ ձեր զգւելի մառախուղներուն մէջ փոտել, առանց հաշուելու ծխախոտի մուխի մէջ մքլած ձեր ապուշ դէմքերուն սրտնեղիչ տեսքը, ձեր հռոմէական օրինադրքերը, ձեր փիլիսոփայական խառնապուրը և բոլոր ուրիշ երկու փարայի անհամութիւնները: Կատակի ձևով, իր ձանձրոյթն է եւրոպական քաղաքակրթութեան իմաստակութեանէն, և անկեղծ է երբ կը հառաչէ կարօտովն Արեւելքի ոսկեզօծ անհոգութեանը, երազուն մեղկութեանը և խնկահոտ պարտէզներուն ուր սէրը ծաղկի մը պէս կը բուսնի: Սոխակները, հրեշտակները, վարդերը, հուրիները Հայնէի էջերուն մէջ յաճախ կը պտըտցնեն իրենց լուսեղէն սուերները, երբեմն թեթեւ հեգնութեամբ մը երանգւած բայց միշտ կենդանի և անկեղծ: Սիրոյ մէջ մանաւանդ, Հայնէի խորունկ արեւելցիութիւնը կը մատնէ. կինը իրեն համար ծաղիկն է, անիմաստ, անուշաբոյր, շաղփաղփուն, և փուշերով պաշարւած, զոր պէտք է հոտւրտալ, զգուշութեամբ, գինովնալ անոր բուրումովը, առանց աւելին ուզելու: Սշխարհս անմիտ է, աշխարհս կոյր է, կ'երգէ իր սիրելիին, աշխարհս օրէ օր աւելի ապուշ կ'ըլլայ. քեզի համար, աղւոր աղջիկս, կ'ըսէ թէ չար բնութիւն մը ունիս:—Սշխարհս անմիտ է, աշխարհս կոյր է, և քեզ երբեք պիտի չճանչնայ. չըզիտէր թէ ինչպէս կը դողամ քու զիրկդ, և թէ ինչպէս քու համբոյրներդ զիս կ'այրեն: Միայն թէ իր մեղկութիւնը երբեմն մահու զալուկ մը կ'առնէ, հիւանդ հեշտութեանց մէջ կը կախւի, կամ պիղծ բաղձանքներու կը յանդգնի, և այն ատեն կը զգացւի որ այդ պարսիկը Պաղեստինի հովիտէն անցած է, Մեռեալ ծովին շունչը ծծած է և Ասորիքի կնիկներուն քսած է՝ որոնք մահն ու սէրը իրարու կը խառնէին: Ասոնցմէ ալ անդին, Հայնէի Արեւելքը կ'ընդարձակւի, մինչև Հնդկաստան կ'երթայ, ու թերևս հոն, ոսկի լոտոսներուն, ագնիւ ասուածներուն, հսկայ անդուժմունքներուն երկրին մէջն է որ ամենէն երկայն կ'ընկողմանի Հայնէի հոգին, քիչ անգամ կ'իջնայ բուդդայական Հնդկաստանին սև յուսահատութեանը մէջ, աւելի կը սիրէ բրահմանական ծիրկաթինին երկայնքը ծածանիլ, կամ Ռամայանային դիցական անտառին մէջ կը թափառի. Գալիտագային սիրոյ մրմունջը մոխի կ'ընէ, բայց դէպքերուն մութ մազերուն կը զմայլի. իմ ծագումն Հնդկաստանին է, կը գրէ Ռայդը:

ընդունին մէկ գլխուն մէջ, և անոր համար է որ ինքզինքս ընտանի կը զգամ՝ Վալմիքիի անսահման դաշնակաւոր անտառներուն մէջ, աստուածային Ռամային դիւցազդական տառապանքները սիրտս կը շարժեն ծանօթ ցաւի մը պէս, Քալիտաղայի երգերուն մէջ ամենէն անուշ յիշատակները կը փթթին ինծի համար: Եւ երբ ուզէ իր սիրականը հրաւիրել դէպի ոսկի մենութիւն մը, աշխարհիս մէջ ուրիշ դրախտ պիտի չնախընտրէ բայց եթէ նւիրական եղբրքը հրաշալի գետին. լիմ երգերուս թւին վրայ քեզ պիտի տանիմ. քեզ մինչև Գանգէսին ափունքը պիտի տանիմ. հոն անուշ տեղ մը գիտեմ: Հոն խնկաւէտ պարտէզ մը կը ծաղկի լուսնին խաղաղ շողերուն տակ. լոռոսի ծաղիկները իրենց սիրուն քուրիկին կը սպասեն: Սմբուլները իրենք իրենց մէջ կը խնդան կը խօսին և աստղերուն աչք կ'ընեն. վարդերն իրարու ականջն ի վար հոտաւէտ խօսքեր կը պատմեն: Երկնոս ու ոստոստուն վիթերը կը մօտենան ու մօտիկ կ'ընեն, և հեռուն, սրբազան գետին հանդիսաւոր ջուրերը կը կարկաջեն: Հոն պիտի ընկողմանինք արմաւենիներուն տակ, որոնց շուքը մեզի երկնային երանութեան երազներ պիտի հոսէ: Անշուշտ, Հայնէին մէջէն անցնելով, Արևելքը բեկբեկած, ցրքցքնած, թափանցկացած, նրբացած է. հին պատկառելի հոգին իր աստղազարդ երկնքի վեհութիւնը չէ կրցած պահել. Հայնէի անհամբեր ու չարածի մոլորին մէջ, ասիական մեծախառ արքայութիւնը ցառքտան թեթեւութիւն մը ստացած է՝ զոր ծանրաշուք Արևելքը չէր հաճած ունենալ:

Եւ այն ատեն, բոլոր այս այլազան և հակընդդէմ տարրերով կաղսւած, Հայնէի գործը կը ներկայանայ մեզ հրաշալի քալէիլոսկոպի մը պէս, որ ամէն ակնթարթի, աննշմարելի շարժումով մը՝ նոր գոյն կ'առնէ ու նոր պատկերներ կը ձևացնէ: Ո՞ր սահման, ո՞ր բանաձև պիտի կրնայ այդ գործը որակել իր ամբողջութեանը մէջ: Քրիստոսութիւնը անգոր է բացատրել և բնորոշել այդ յեղեղուկ ստեղծագործութիւնը: Անի հակասական, փոփոխական և կենդանի է, տիեզերքի մը պէս: Գերմանիոյ հեգնիշը ամենէն հիւսնալի լիդերն (երգեր) ու քալիլադները գրած է գերման բանաստեղծութեան: Ո՞վ Հայնէն աւելի հասկցած է գերման անտառը, հեքիաթներով, ողին-

րով, աղջիկներով բզբացող, ու լուսինկային արցունքներուն տակ արծաթ գոլորշիներով ծխաշունչ. ճինաւուրց անտաւն է մոզութիւններուն. թմբի ծաղիկներուն հօտը կը զգացւի հոն: Լուսին հրաշալի լոյսը սիրտս հեշտանքով կը լեցնէ: Ո՞վ աւելի փափուկ խանդավառանքով երգած է թեթեւ էլֆները, խուսափուկ վիլլիները, հեգնող քորոլլները, խոնաւ նիքսերը, թափանցիկ օնդինները, և անոնց խաղերն ու երգերը ալեւոր ծառերուն մեյամաղձութեանը տակ. Վիլս ինչպէս էլֆները շնորհալի կերպով իմ շուրջս թռչտած են. Սիրուն էակներ են անոնք, որ անդադար կը շաղփաղփին ու ամէն կողմ կը վազվզեն՝ օդի պէս թեթեւ: Իրենց նայւածքը, մեղկ ու սուր միանգամայն, կը խոստանայ երջանկութիւն մը անուշ ու խորհրդաւոր, բայց անհետաքեր... Երբ առաւիկն եզրը կը նստէի, նիքսերը, այդ բաքանդները ծովային, ոստոտելով կ'նկէին ջուրէն, իրենց երկայն արծաթափայլ քօղերով և իրենց կանանչ ալիքածան մազերով. ու մանդիլին կը զարնէին, ջութակ կ'ածէին, նիքսերու մեծ շուրջպարը կը նւագէին... Ի՞նչ վճիռ ներշնչումով երգած է բլրիկ տեսիլքը Հալֆադար արքային որ ծովին տակ, կապուտակ երերուն արալատին մէջ, կանանչ պարիկի մը ծունկին կը թնամ՝ կը քնանայ յաւիտեան. ինչ մաքուր ցայտով նւագած է Լոռնլայն աղետաւոր աղջիկը, որ բլուրին կատարը նստած, ռոսկի սանդղով ռսկի մազերը կը սանդղէ, և կ'երգէ երգ մը որուն եղանակը մոզիչ է և ահեղ», այնպէս որ Հռենոսէն նաւակով անցնող պատանին ինքզինքը խենդ ցաւով մը բռնած կը զգայ և չի տեսներ վիհն ու ժայռերը: Եւ ո՞վ իրմէ աւելի փափուկ շեշտերով սիրոյ չարչարանքը պատմած է: Հայնէ ամենէն կատարեալ բանաստեղծն է սիրոյ, և զայն ներկայացուցած է իր ամէն երեսներով, իր բոլոր ծալքերովն ու խորշերով, և նոյն իսկ իր ծաղրանկարովը: Ամէն ճամարտակ հռետորութենէ, ամէն ուռուցիկ այլաբանութենէ, ամէն կեղծուպատիր զարդարանքէ և խաթարող խոշորացումէ հեռու, Հայնէ ճշմարիտ իրապաշտի նայւածքով մը տեսած է սէրը, իրական շրջանակին մէջ, իրական անձերովը, իրական զգացումներովը զայն նկարած է, և ամենէն բնական պարզութեամբ ցուցուցած է զաւելուական ու ցաւաղին դռամը, զգեւի կերպով հասարակ և անհունապէս եղերական, որ յաւիտենաբար կ'անցնի մարդուն ու կնոջ միջև. և զգացման այդ

իրականութիւնը, այդ բնական զծերն ու անկեղծ պատկերներն են որ Հայնէի սիրերգին կուտան իր անբաղդագելի շեշտը կեանքի և տառապանքի: Ի՞նչ անուշ է տրամութիւնը վերադարձին երգերուն, ուր զգացումը, պարզ և անհուն, խուռնկի պէս կը գոլորշանայ և ոլոր ոլոր կը մարի գողտրիկ տողերուն ծածանքին մէջ. «Իմ անայնչափ մութ կեանքիս մէջ ատենով անուշ պատկեր մը շողաց. անուշ պատկերը մարած է հիմա, և խաւարը զիս կը պաշարէ: Երբ տղաքը մութին մէջ մնան, կը խռովին, կը վախնան, և դողերնին փարատելու համար բարձրաձայն երգել կը սկսին: Ես ալ, խենդ աղայ, հիմա մութին մէջ կ'երգեմ: Ետը զարունին լիդերը, յուզման կաթիլներ են, առուան երանգներով վարդաւորած, աստղի ցուքերու պէս թեթև ու վճիտ, և աղու արցունքի պէս մաքուր. «Երբ դուն քովէս կ'անցնիս, երբ շրջազդեսող ինծի կը քսուի, սիրտս ուրախութենէ կը ցատքէ և քու ետեէդ կը վազէ: Այն ատեն, դուն կը դառնաս և ինծի կը նայիս մեծ աչուըներովդ, և սիրտս անչափ կը վախնայ որ հազիւ կրնայ քեզի հետեւիլ: Ինձերմնցցոյին երգերը, նոյնչափ փափուկ և նոյնչափ տրտում խանդաղատանքի մը կը միադնեն հեղնութեան նշոյլ մը որ անոնց դալիութիւնը կանանչով ու կարմիրով կը պիտակէ. «Իմ երգերս թունաւոր են. ինչպէս չըլլան թունաւոր, դուն իմ կեանքիս ծաղկին վրայ թոյն կաթեցիր:—Իմ երգերս թունաւոր են. ինչպէս չըլլան թունաւոր. սրտիս մէջ դէզ մը օձեր ունիմ, ու քեզ, սիրելիս, Ի՞նչպէս այս կատակները տառապանքը կը մատնեն, ինչպէս այս ծիծաղը սեղմած հեծկտանքի կը նմանի, և ինչպէս կը զգացւի որ կեղծ է այդ զւարթութիւնը, և թէ արիւն կայ անոր ետեւ. և ինչպէս մաքուր է երգը, երբ այդ կարծեցեալ շնականը դիմակը փար կ'առնէ ու կը հաճի իր յուզմունքը խոստովանել. ինչ կարելի է գտնել աւելի կուսական քան սա լիդը (երգ). «Դուն ծաղկի նման ես, շնորհալի, աղւոր ու ամբիծ. քեզի կը նայիմ և անուշ տրամութիւն մը սրտիս մէջ կը սահի:—Ինծի կը թւի որ պէտք էր ձեռքերս գլխուդ վրայ տարածէի և Աստուծոյ աղօթէի որ քեզ միշտ այդպէս շնորհալի, աղւոր ու ամբիծ պահէ:»

Թշնամիները, որ Հայնէն անսիրտ, ցածոգի, չար հռչակեցին, անոր խուսափուկ մէկ կեղևը միայն տեսած էին. աչդ կամաւոր ան-

տարբերին մէջ, որ անգութի զեր մը կը խաղար ու սրիկայի ձեեր կ'առնէր, ամենէն փափուկ հողին կար, ամենէն բարձր ազնուութիւններուն կարողութիւն մօրը համար Հայնէ պահեց միշտ խանդաղատողին յարգանք մը որ կը մատնէ պարզ բարի մարդը զոր կրնար ըլլալ՝ եթէ ուզէր։ Իր ծաղրը, որ ամէն բանի դպած է, հօրը առջեւ միշտ ուժաթափ ինկաւ ու խոնարհ գորովի մը փոխեցաւ։ Ճեստովոր եմ, կ'երգէ մօրը ուղղւած հնչեակի մը մէջ, գլուխս բարձր բռնել։ Ի բնէ՝ քիչ մը դողող և յամառ եմ, և եթէ թագաւորն ալ երեսս նայի, աչքս վար չեմ առնէր։ Սակաջն, ո՞վ իմ սիրելի մայրս, կ'ուզեմ բարձրաձայն ըսել ասիկա, որչափ ալ սիրտս հպարտութեամբ ուռի, քու անուշ ու անքովթ ներկայութեանդ՝ շատ անգամ խոնարհ երկիւղ մը կը զգամ։ Պարիզի պանդխտութեանը մէջ տարիներով անոր կարօտը քաշեց, գուրդուրանքով ու հիացումով կը խօսէր անոր վրայ ամենուն։ Իր վերջին օրերուն, անոր յիշատակը զինքը կը լացնէր, և զանի շտիպեցնելու համար՝ իր հիւանդութեանը չարչարանքներուն մէջէն, անոր զւարթ նամակներ կը գրէր։ Իր կնոջը՝ Մատիլդին համար Հայնէ հայրական աղապարանք մը ունեցաւ։ Իր հոգեվարքի երկայն շրջանին, ամէն վայրկեան այն սեւ օրը կը մտածէր երբ անիկա մենակ ու անպաշտպան պիտի մնար մահւանը մօտ, կ'աղօթէր հրեշտակներուն որ ճակնն այն կնոջը վրայ զոր զաւկի պէս սիրած էր և զոր իր մահը այրի և որբ պիտի թողուր։ Խեղճ ազնիւ մարդ։ Այնչափ խնդաց որ մոռցան թէ իր ամբողջ կեանքը տառապանք մը եղած էր, և այնչափ ինքզինքը գիտմամբ լսիրշ ցուցուց որ շտեման իր սրտին ոսկի ցոլքերը՝ ընդհանուր գործին երփնեմանք բարեկենդանին մէջ։ Հայնէ, որ կը զւարճանար տեսնելով որ զինքը ճիւղ մը կը կարծեն, անգամ մը միայն, իր ամենէն գոգար երգերէն մէկուն մէջ, կը թւի փորձւած ըլլալ ինքզինքը մերկ ու բնական նկարելու։ «Աղւոր աղջիկ, ձկնորսին կ'ըսէ, նստակից ցամաքին մօտեցուր։ մօտս եկուր, նստէ հոս. ձեռք ձեռքի խօսինք քեզի հետ» — Քաղցր գլուխդ սրտիս վրայ դիր, մի՛ վախնար, դուն որ ամէն օր ինքզինքդ աներկիւղ վայրենի ծովին կը յանձնես — Իմ սիրտս նման է ծովին։ Ահալներ կան հոն, ու խարակներ, ու մրրիկներ, և խորը անգին մարգրիտներ կը քնանան։

Մեղամաղձիկ խոստովանութեան, զգայնական ինքնամերկացման

այս անցքերը հազադէպ են, ու լիովին (երգ) մարդրիտներուն պէս, ամբողջ գործին խարակներուն ու մրրիկներուն տակ, կանանչ ու պղտոր ջուրերուն խորը կը քնանան: Հայնէ միշտ նախամեծար համարեց չար երեւալ, նոյն իսկ կոշտ. և հարիւրներով կը համբւին իր այն էջերը ուր կինը իր ծիծաղովը կ'ասղնտէ, Սիրոյ երեսն ի վեր կը հայհոյէ, հոգին կը ծաղրէ ու մարմնոյն բիրտ յափրացումը կը փառաբանէ, աստուածներուն սուերին կը քրքջայ, պատմութիւնը զուեշտի մը կը փոխէ, գերման ցեղը վերջնականապէս ծիծաղելի կը դարձնէ փիլիսոփայ քնադերգակ արջի մը գէմքով զանի պատկերացնելով. կը համարձակի նոյն իսկ մօրուքին խնդալ հին Բաբառուսին վսեմ ուրականին, մեծ վաչելուչը Մայր—բնութեան հետ կը խօսի ինչպէս խռզած մեծ-մօր մը հետ. մահն իսկ կը կատակէ, և կը գտնէ որ աշխարհս երազն է զինով աստծոյ մը, որ ասանց մնաք-բարովի՝ զիցական խնջոյքէն փախած, մենաւոր ասողի մը մէջ գացած է քնանալ, առանց զիտնալու որ կը ստեղծէ ինչ որ կ'երազէ, և թէ այն օրն ուր աստուածը պիտի արթննայ, քնոտ աչւընէրը պիտի շիւն, պիտի խնդայ, և աշխարհս ոչնչին մէջ պիտի անէանայ:

Երբ հեզնեղէն յոգնի, բոժոժները կը լռեն, ու նոյն հոգին կը խօսէ, ու այն ատեն՝ իրական կեանքին ձանձրոյթէն անդին կ'անցնի, երևոյթներու աշխարհը կը թափանցէ, ամենէն գեղեցիկ, ամենէն խօլական, ամենէն յանդուգն երազները կը պատմէ: Կը վերակուէ շիւսիսային ծովին տեսիլքը, ուր, զիշերային երկնքին մէջէն հին հելլեն աստուածութիւններուն ուրականներն մեղամաղձօրէն կը տողանցին՝ իրենց մեռած գեղեցկութեամբը հաղւած. կամ կը նշմարէ Աթթա թողլին ցնորական թափօրը, ուր Հերովդիազան կ'երեւայ, աժգոյն ու վրդովիչ, ձեռքը բռնած՝ Մարգարէին արիւնոտ պոլսը զոր կը համբուրէ. կամ կը սեւզէ Քիօքէնցական զիշերներուն մեռել-կնիկը, Մառիան, աղետաւոր շնորհի, արհաւիրակից հրապուրանքի դէմքը՝ որ զինքը կը հալածէ և կամ կը տեսնէ, այնպէս ինչպէս ոչ մէկը տեսած էր. քաղցր Քրիստոսը, աշխարհին փրկիչը, որ ճածանուտ սպիտակ պատմուճան մը հագած, և հըսկայի մը չափ մեծ, ծովուն և ցամաքին վրայ կը քալէր, գլուխը երկնքին կը դպէր, և ձեռքերը երկնցուցած՝ ծովն ու ցամաքը կ'օրհնէր, և ինչպէս սիրտ մը՝ կուրծքին մէջ՝ արեւը, կարմիր ու վառ

արևը կը կրէր, և այդ լուսարձակ ու բոցացացաւ սիրտը, սիրոյ և պայծառութեան վառարան, իր շնորհալի ճաճանչները և իր յաւիտենական լոյսը ծովուն և ցամաքին վրայ կը թափէր:

Ամբողջութեանը մէջ նկատուելով, Հայնէ կը ներկայացնէ կանացի զգայնութիւն մը՝ իր ամենէն ծայրայեղ զարգացմանը հասած: Հայնէ ունեցած է նրբազգացութիւնը, յանդգնութիւնը, ջղաշին տաղնականները, արցունքի անզսպելի պայթումներն ու անամօթ քրքիջները, թունաւոր չարութիւններն ու սերովբէական գորովները, և ամբողջ անդիմադրելի համարձակութիւնը շատ գեղեցիկ, շատ նուրբ, շատ զարգացած և քիչ մը հիւանդ կիներուն՝ որոնք ամէն բան կ'ըսեն, ապահով իրենց շրթունքներուն աղւորութեանը, ձայնին քաղցրութեանը և ըսել զիտնալու արեւստին վրայ: Հայնէ ըսել գիտցած է. և անոր համար է որ իր ամենէն ծանր յանդընդնութիւնները շնորհ ունին, և իր կոպտութիւններն անգամ սիրուն են. իր անսահման գործին մէջ, մէկ էջ մը չիկաց որ ճոռոմութեան զարնէ, մէկ պատկեր մը կամ գաղափար մը չիկաց որ ուռուցիկ ըլլաց կամ իմաստակ, մէկ տող մը չիկաց, որ ամենէն վարպետ ու գիտակից ճաշակին կնիքը չկրէ, և, ինչ որ իր ամենէն մեծ արժանիքն է, և որ կը բացատրէ բոլոր միւսները, մէկ տող մը չիկաց, կատակաբան կամ լուրջ, որ բացարձակ անկեղծութենէ մը չբղխի և ամենէն տաք ու հոծ կեանքովը չբաբախէ:

Անհուն, աշխարհի և հրաշալի պանթէոն մըն է այդ դործը, անձնարարական ու հրէշաւոր տաճար մը, ուր բոլոր աստուածներն ու բոլոր ողիները, բոլոր ծաղիկներն ու բոլոր աստղերը ներկայ են և իրարու կը նայեն, իրարու չհաւտալու ձևով մը, ապշած իրարու քով գտնուելէ, իրենց իսկ իրականութեանը վարանտ: Նազովբեցիին դալիունակ դէմքին քով Բաքոսին ծաղկաւետ գլուխը կը բարձրանայ հոն. Հերովդիադային ոճրագործ սուերին զիմակը և Ատղիկին յայրատ ժպիտին մօտիկ, Կոչս-Մօրը շուշան սուերը կը ծածանի. արեւելքին հրեղէն քերորէներուն հետ, հիւսիսային գոլորշական ոգիները կը թռչտին. և Բուդդային խաղաղ թախծութեանը ընթերակաց, յաղթ ու խեղկատակ պատկերը կը ցցի Փալ-

լոսին: Դիւցազնական հոգիները, կուսական խառնածքները պիտի միշտ վիրաւորին այս անբարիշտ ու կնճռոտ թանգարանէն. և Հայնէ պիտի մնայ բանաստեղծը անոնց, որոնք զիտեն թէ կեանքին բոլոր երեսները իրար կ'արժեն և թէ ծիծաղը լացին մէկ աւելի դառն ձևն է:

Բնութիւնը ահռելի անգթութեամբ պատժեց իր անառակ զաւակը: Ողնաձուծի հիւանդութիւն մը, որ Հայնէի Պարիզ գալէն քիչ յետոյ արդէն ծայր տւեր էր, 1848-էն սկսեալ զինքը անկողնին դամեց: Այդ հոյակապ մարդը, որ հրէայ ապողոնի մը վրդովիչ գեղեցկութիւնը ունեցած էր, ուրւական դարձաւ՝ տանջարանի վրայ երկնցած: Այդ մարդու կերպարանք առած տնեղը, այդ ամբողջ շարժուն միտքը, անդամալոյծի փայտացմանը դատապարտեցաւ, և ամէն վայրկեան ինամւելու, առաջնորդելու, հսկելու կարօտ երեսխալի սրտածմիկ ծիծաղելիութեանը մէջ ինկաւ: Այդ անյադ կենցաղամոլը ութը տարիի մօտ տառապագին ճգնաւորութեան կեանք մը քաշլուտել ստիպեցաւ, աբտաքին աշխարհին կապած՝ միմիայն իր մտքովը որ կենդանի մնացած էր, անընդհատ տանջւելով իր ախտալարակ մտին գալարումներովը և յուսահատ կատաղութեամբը իր խեղճ կաշկանդւած հոգիին: Իրեն հիւանդապահ ունէր իր կինը, Մատիլդը: Այդ աղջիկը Պարիզ դիպւածով փողոցը ճանչցած, անոր հրաշալի գեղեցկութենէն գերւած և իրեն ամուսին առած էր զայն, առանց նկատելու որ լացարար կնկան մը աղջիկ էր ան, բացարձակապէս տգէտ, անտեղեակ իր էրկանը հանճարին և անկարող զայն հասկնալու: Այդ ամուսնութիւնն ալ հակասութիւններէն մէկն էր Հայնէին, որուն կեանքը գործին հետ միշտ ներդաշնակ եղաւ: Այդ պարզամիտ, տգէտ և հոյակապ աղջիկը սիրեց տղու մը, պէպէքի մը, կուռքի մը պէս, զւարճանալով անոր տգիտութենէն, խանդաղատելով անոր միամտութիւնը, և յօժարակամ թողլով որ ան զինքը ծաղրէ, զինքը անգիտանայ, նոյն իսկ զինքը չարչրկէ իր գեղեցիկ անասունի քմայքներովը, երախտագէտ ըլլալով անոր՝ այն տարփական զինովութեան համար զոր կուտար իրեն: Հիւանդութեան օրերուն, Մատիլդը քրոջ գորովով խնամեց զինքը. ու խեղճ հիւանդը,

սիրով ու զթուլթեամբ լեցւած, իր մահէն յետոյ անոր անպաշտպան կացութեան մտածումովը զախարուն, անոր ամբողջ կեանքը ամենայն մանրամասնութեամբ ապահովելը իր ամենէն մեծ գրադուհն ըրաւ: Մատիլդէն զատ, իր անկողինին մօտ կուգային յաճախ զրական բարեկամներ, և մասնաւորապէս Ժէստո. զը Նէսւալը, իր աշխատակիցը և սրտակիցը. Ժէստոն ալ զԺբօխտ մը և հիւանդ մըն էր. երկու տառապեալները վսեմ տեսակցութիւններ ունեցած ըլլալու են՝ մահւան սեմին վրայ: Ժէստո խենդեցաւ, և ողորմելի խցիկի մը մէջ, աղքատ, մենաւորիկ, մեռաւ, Հայնէէն առաջ:

Կեանքը կամաց կամաց կը քաշւէր. մահը անգուլթ պարանք մը կը դնէր իր խեղճ խօսեցեալը երկայն սպասցնելու: Մարմինը կը հալէր. ուժերը կը հատնէին. և ահաւոր ցաւեր զինքը կը պրկէին: Իր թշնամիներուն ասիկա տխուր առիթ մը եղաւ Աստուծոյ բարկութեան մէկ ապացոյցը տեսնելու այս զարհուրելի վախճանին մէջ: Ինքը՝ Հայնէ, հակառակ այս անբերելի տառապանքներուն, իր զւարթութիւնը չէր կորսնցուցած. իր հոգեվարքն ալ հեզնեց: Իրեն ալց երող բարեկամներուն կատակներ կ'ընէր իր ցաւերուն վրայ, մահւան մասին հեզնական նմանութիւններով կը խօսէր: «Ձեզ աստճուց ըսեմ որ, կը գրէ Ալիքսանդր Գիւմային, եթէ դեռ երկայն ատեն ուշացնեն ձեր այցելութիւնը, կրնայ ըլլալ որ զիս ալ չգտնէք հիմակաւն տանս մէջ, և թէ ուրիշ տուն մը մեկնած ըլլամ որ դեռ անծանօթ է ինծի, այնպէս որ չպիտի կրնամ նոր հասցէս դնապանիս ձգել՝ ձեզի պէս ուշ մնացող բարեկամներու համար: Ծատ վաշտուն գաղափար մը չունիմ ապագայ բնակարանիս վրայ. միայն գիտեմ որ մութ ու գարշահոտ նւթանցքէ մը կը մօտեն հոն, և հիմակուց այդ մուտքը անախորժ ազդեցութիւն մը կ'ընէ վրաս, այնպէս որ երբ այդ տունը փոխադրուելու խօսքը ընեմ, կ'ինս կուլայ:»

Ալ աստուածային երկոտանի մը չեմ, կը գրէ ուրիշ նամակի մը մէջ. ալ չեմ գերմաններու ամենէն ազատը՝ Գէօթէէն յետոյ, ինչպէս աւելի առողջ օրերու մէջ Ռուզը զիս անուանած է. ալ չեմ թիւ 20 մեծ հեթանոսը, զոր որթապսակ Բաքոսին կը նմանցնէին, մինչդեռ իմ թիւ 10 պաշտօնակցին Վալմարի մեծ-դքսութեան Արամազդա տխուրօտը կուտային: Ալ ապրելուս երջանիկ ու բիշ մըն ալ մարմնեղ հելլեն մը չեմ, որ մեղամաղձիկ նազովրեցիներուն վրայ

ղւարթ ժպիտ մը կը հակէի. հիմա խեղճ Հրէայ մըն եմ մահու չափ հիւանդ, տառապանքի ողորմ պատկեր մը, դժբախտ մարդ մը...»։

Շարժումները թուլցան օրէ օր. մահը զինքը կը պաշարէր, կը սեղմէր։ Կուրցաւ. նամակներն անգամ գրելու համար ստիպւած էր գրագրի մը տուն տալ. և որպէս զի կարենար իրերուն մէկ տարտամ զգայութիւնը ունենալ, պէտք էր որ աչքին կոպը մատովը վեր առնէր և պազած բիբը ուժով սևեռէր։ Այդ ցաւի օրերուն երգեց իր ամենէն թանկագին երգը. Ղազարի զիրքը իր հոգեվարքի սաղմոսն է։ Այլեցուցիչ քաջութեամբ, զեռ զւարթութիւնը կը տւէ հոն. և մահամերձը, իր խաւարին մէջէն, կը չամառի Աստուած ու հոգին ու կեանքը հեգնել, արքայութեան զաւեշտապատկերներ գծելով կը զւարճանայ, միջտոի կատուի տարփանքներով սէրը կը շարունակէ խեղկատակել, և նոյն իսկ իր չարչարանքը, իր վախը, իր յուսահատութիւնը կը ծաղրէ. «Ուղեղիս խորը մեծ իրարանցում մը կը լսեմ. ինձի այնպէս կուգայ որ մէկը հոն սնդուկները կը կապէ և թէ միտքս, Աստուած իմ, թէ միտքս ինձմէ առաջ ճամբայ պիտի ելլէ»։ Երբեմն, կեանքէն անջատուելուն ցաւը կոշտ անկեղծութեամբ աղաղակներ մղել կուտայ իրեն. «Կ'ըսեն թէ փառքը մեր գերեզմանը կը տաքցնէ։ Անմիտ ու չիմար խօսք։ Մեզ տաքցնելու համար, տարփառուոր կովարածուհիի մը խոշոր գլուխները աւելի արժէք ունին»։ Ուրիշ անգամ, կը ջանայ ինքզինքը զինովցնել Յաւին սրբազան հեշտութիւնը օրհնելով. «Թող որ վերքերդ արիւնին. թող որ արցունքներդ անհատնում վսզեն. ցաւին մէջ զեղխութիւններ կան գաղտնի հեշտութեան, և արցունքը շատ անուշ պալասան մըն է։ —Եթէ օտար ձեռք մը քեզ չէ վիրաւորած, ազէկ կ'ընես որ դուն ինքզինքդ վիրաւորես. մի՛ մոռնար վայելուչ կերպով շնորհակալ ըլլալ Աստուծոյ երբ արցունքները երեսդ թրջեն»։ Սր մըն ալ, իր հոգեվարքը, և անոր մէջէն՝ իր ամբողջ կեանքը կը խորհրդապատկերէ իր ամենէն վսեմ տեսիլքներէն մէկուն մէջ. ինքզինքը կը տեսնէ զամուսնացած անիծեալ զղեակին, «նախատինքներու զղեակին» ծոցը, որուն պարտէզին մէջ թունաւոր ծաղիկներ կը բուսնին ու չար սողուններ կը սահեն. «անկից ծովը կ'երևար մինչև հեռուն. հոն կը կենայի յաճախ, սիրոս վայրենի երազանքներու մէջ ընկղմած։ Սրտիս մէջ ալ մերթիկ կար։ Ի՞նչ գոռումներ, ի՞նչ զայրոյթներ, ի՞նչ կատաղու-

Թեան փրփուրներ... Նախանձով կը զիտէի նաւերը որոնք զէպի
երջանիկ երկիրները կը զիմէին. բայց խաւարչտին զղեակը զիս իր
նզոված կապանքներուն մէջ շղթայւած կը պահէր»։ Վերջապէս,
պահերը կուգան ուր ամէն հեգնութիւն, ամէն պէրանք կը նետէ և,
իր ցաւին փաթթւած, կուլայ, վախով լեցւած, ինչպէս տղայ մը
որ գիշեր ատեն դուրսն է մնացեր։ «Սև կինը գլուխս զօրովով կուծ-
քին վրայ սեղմեց։ Ախ, մազերս ճերմկեցան ուր որ իր արցունք-
ները կաթեցին։ Գրկեց զիս, և անդամալոյճ եղաց. գրկեց զիս, և
ուժերս կորսնցուցի. աչքներս պազաւ, և կուրցայ. իր վայրի
շրթունքներովը երիկամունքիս ծուծը քամեց։ Հիմա մարմինս զիսկ
մըն է, ուր հոգիս բանտարկւած կը մնայ»։...

Սև կինը անգամ մըն ալ համբուրեց զիսկը, և հոգին, ազա-
տած, փախաւ խառնեցաւ Տիեզերքին, որուն ամենէն սիրուն մէկ
հիւլէն էր։

Վ. Գ. ԲԵԼԻՆՍԿԻ

(Մահուան յիսնամեակի առիթով)

(Շարունակութիւն ¹⁾)

IV

Երեսնական թւերին, երբ ճորտատիրութիւնը դեռ ևս անշաղ-
թելի վէմի պէս կանգնած՝ ծանրանում էր կեանքի բոլոր արտայայ-
տութիւնների վրայ, Ռուսաստանը զուրկ էր ներքին քաղաքական
կեանքից։ Քաղաքացին, նրա ցանկութիւններն ու ձգտումները ոչ մի
նշանակութիւն չունէին. ամենքի համար հայրաքար մտածում էր
պետութիւնը իր կաշառակեր պաշտօնեաների միջոցով։ Չնայած սոս-
կալի բռնակալութեան, որ սառցնում էր կեանքի երակներում
արիւնը, մի կենդանութիւն ու շարժում է նկատում գրականու-
թեան մէջ։ Պուշկինը հասունանում էր և պատրաստում էր Գոգոլի
գրական ուղղութիւնը, որի նպատակը պիտի լինէր իրականութեան
հաւատարիմ ստեղծագործութիւնը։ Այդ շարժման զուգընթաց սկըս-
ւել էր մի մտային խլրտում. գրական ու փիլիսոփայական շահերն
սկսել էին զերակշիւ նշանակութիւն ստանալ։ Եւ զարմանալի էլ չէ.
ճշմարտութեան ծարաւի երիտասարդին մնում էր միայն զբաղմունքի
ու հետաքրքրութեան առարկայ անել գրականութիւնն ու փիլիսո-
փայութիւնը, որովհետեւ քաղաքական կեանք չկար, որ նրան հրա-
ւիրէր գործնական կեանքում դեր խաղալու՝ մասնակից լինելով հայ-
րենիքի վիճակին։

Շարժումը նկատում էր մանաւանդ Մոսկւայի համալսարանում։
Երկու պրոֆեսոր՝ Նագեթզին և Պաւլով կարողացան հետաքրքրի-

¹⁾ Տես Մուրճ, 1898 № 6.

դարձնել իրանց ունկընդիրները համար Գերմանիայում այդ ժամանակ տիրող Շելլինգի փիլիսոփայական համակարգը, որի հետևողներն էին իրանք։ Ռուս միտքը զարգացաւ և ինքնուրոյնութեան հասաւ մանաւանդ գերմանական մտքի ազդեցութեան տակ, և այդ իրողութեան կատարելուն շատ նպաստեց Շելլինգի համակարգը։ Բաւական է ասել թէ վերը յիշած երկու պրոֆեսորներին լսող երիտասարդների մէջ էին Ռուսաստանի ապագայ ականաւոր գործիչներից շատ շատերը, որոնք եռանդով ընդունում, ուսումնասիրում և իւրացնում էին իրանց ուսուցիչների հաղորդած նոր ճշմարտութիւնները։ Կենդանի երիտասարդութիւնը փիլիսոփայութեան մէջ միայն գիտութիւն ու ճշմարտութիւն չէր փնտռում, այլ նաև այն բոլոր հարցերի պատասխանն ու բարոյական պահանջների գոհացումը, որոնք ծնունդ էին առնում նրանց ազնիւ և վերասլաց հոգում։ Նրանց համար փիլիսոփայութիւնը ամեն բան էր, բայց մանաւանդ բարոյական հզօր դրդիչ։ Տուրգենևը վկայում է թէ «մենք այն ժամանակ փիլիսոփայութեան մէջ փնտռում էինք ամեն բան, բացի զուտ մտածութիւնը։ Այդ «մենքի» մէջն էր թէ երիտասարդութեան այն մասը, որ համալսարանումն էր և թէ այն մասը, որ նոր էր դասընթացն աւարտել։ Ձմռանանք այստեղ յիշել, որ գերմանական մտքի ազդեցութիւնը, որ սկզբում գերակշիւ էր, կամաց-կամաց թուլացաւ և 40-ական թւականներին առաջաւոր մարդիկ արդէն այն գաղափարական շարժման ազդեցութեան տակ ընկան, որ ծնունդ էր առնել Գրանտիայում։

Այդ ժամանակեայ ուսանողական շրջաններից յայտնի են մանաւանդ երկուսը, որոնց ազդեցութիւնը ռուս մտքի և Ռուսաստանի կուլտուրական զարգացման համար, անդնահատելի է։ Ստանկեւիչի և Հերցէնի շրջաններն էին, ուր նոյն Հերցէնի վկայութեամբ կենդրոնացած էր և սաղմի մէջ ապրում էր ամբողջ ապագայ Ռուսաստանը։ Երկու շրջանին էլ փոխադարձաբար յայտնի էր միմեանց գոյութիւնը, բայց մօտ չարաբերութիւն չկար անդամների մէջ։ Ընդհակառակն՝ դեռ ինչ որ խուլ արհամարհանք կար նրանց մէջ։ Հերցէնի շրջանի մարդկանցից մէկը վկայում է թէ «նրանց դուր չէր գալիս մեր համարեա բացառապէս քաղաքական ուղղութիւնը, մեզ՝ նրանց համարեա միայն մտահայեցականը։ Նրանք մեզ համար

րում էին ֆրոնդերներ և ֆրանսիացիներ, մենք նրանց՝ սանտիմենտալ և գերմանացիներն:

Հերցէնի շրջանը շատ փոքր էր. սկզբում իսկի շրջան էլ չէր երկու ազգական, ինքը՝ Հերցէնն ու բանաստեղծ Սգարեը, ահա բոլորը: Սրանց գրաւել էր մոքերի աջն հոսանքը, որ սկիզբն առաւ Ֆրանսիայում և յայտնի է Սեն-Սիմոնիզմն անունով, նաև աջն ընկերավարական գաղափարները, որոնք միմեանց յետևից ծնւում էին նոյն երկրում: Զէին խորշում նաև գրականութիւնից, բայց գրածների մէջ փնտռում էին յայտնի մոսկոր ուղղութիւն, հասարակական մոքի ներկայութիւն. ահա թէ ինչու նրանք ժորժ-Չանդի երկրպագուներն էին. նա իր վէպերով սրանց սիրած գաղափարներն էր տարածում: Բայց խօսակցութեան ու մտածմունքի գլխաւոր նիւթը քաղաքական հարցերն էին և Ռուսաստանի քաղաքական վիճակը: Ապագայում այս շրջանը, իսկապէս Հերցէնը՝ շատ մեծ դեր խաղաց քննադատութեան ենթարկելով բարեկամական վէճերի ժամանակ Ստանկելիի շրջանի գաղափարները, ապա մերւելով նրանց հետ՝ գերակշռութիւն տւեց իր դաւանած գաղափարներին և մոքի ուղղութեանը:

Բոլորովին հակառակ պատկեր էր ներկայացնում Ստանկելիի շրջանը, որ թէ թւով մեծ էր և թէ ունեցած նշանակութեամբ առաջնակարգ: Այստեղ էին ինքը՝ Ստանկելիւն, Վ. Բոտկին, Մ. Բակունին, Կ. Ախսկով, Կատկով, Կաւելին, Ֆ. Կորշ, Բէլինսկի և ուրիշները: Բացի Բէլինսկուց բոլորն էլ ապահովւած մարդիկ էին, բացի Բոտկինից բոլորն էլ կալւածատէրեր, լաւ ապրած, լաւ պահած, խնամքով կրթւած, բարձր հարցերով զբաղւելու և մտային զարգացումով պարսպելու ամեն յարմարութիւն ունեցող, անձանօթ կեանքի նեղութիւններին և բաղդի հալածանքներին: Այս հանգամանքը նրանց բնաւորութեան հետ միացած՝ իր կնիքը խորապէս դրաւ նրանց մոքերի ու համոզմունքների վրայ:

Համարեա ամեն օր հաւաքւում էին մեծ մասամբ Ստանկելիի մօտ, որ ամէնքին գրաւում էր իր նուրբ ճաշակով, խորասոյզ մըտքով և բնաւորութեան մեղմութեամբ ու անեղծ մաքրութեամբ, և ջերմ վէճերին ու խօսակցութիւններին վերջ չկար: Գեղարեւտի, գրականութեան ու փիլիսոփայութեան հարցերը ասպարէզ էին դա-

լիս ուշադիր վերլուծութեան ու անդամահատութեան ենթարկելու: Բոլորն էլ զեղարեւտի ջերմ սիրահարներ էին և երկրագունեի, բոլորն էլ նուրբ ու կիրթ ճաշակի տէր անձեր: Կարգում ու քննութեան էին առնում Շեքսպիրի, Շիլլերի, Գէօթէի, Պուշկինի և մանաւանդ Հոֆմանի ֆանտաստիկ գրեւածները, կազմում էին երաժշտական հանդէսներ, միշտ յաճախում էին թատրոն, ուր այդ ժամանակ հրաշքներ էր գործում Մաչալով հանձարեղ զերասանը: Մի խօսքով օրերն անցնում էին խելացի զարճութիւններով ու զբաղմունքներով:

Նըջանում տիրող մոլորի ու զղութիւնը վերացական էր և բարոյական, մանաւանդ բարձր զիբք ունէին անձնական բարոյականութեան վերաբերող հարցերը: Բոլոր բարոյական հարցերը վճռում էին բացարձակ տեսակէտից նայելով և ճշմարտութեան ու անկեղծութեան զգացմունքն ամեն բանից վեր էին դասում. ուստի չափազանց ատում էին կեղծաւորութիւնը, ձեւական բարոյականութիւնը, հաշից բղտող առաքինութիւնը: Այդտեղ աչքի էր ընկնում մանաւանդ Բէլինսկին, որի սէրն ու ատելութիւնը ամենից բուռն էր արտայայտւում և որն ամենանուրբ զգացմունքներն անգամ ձգտում էր հաշի ու քննութեան առնել: Նրան լիովին գրաւել էր անձնական բարոյական իդէալի պարզելը. աշխատում էր որոշել թէ ինչպէս պիտի լինի բացարձակ բարոյականի տէր մարդը: Ունեցած գաղափարներն ու զաւանած համոզմունքները զործնական երկու հետեանք ունեցան շրջանի համար. մի կողմից՝ ձգտում էին կրթել իրանց մէջ կատարեալ բարոյական անձնաւորութիւն: Ընկերները զալիս էին իրար մօտ, բաց անում իրանց սրտի ամենածածուկ խորշերը, և ամենափոքր զգացմունքներն ու մտածմունքները ընկերական դամոնների առարկայ դարձնում՝ փոխադարձ խնամքով ու հսկողութեամբ ձգտելով կատարելութեան:

Միւս հետեանքն էլ ռուսական կեանքի զնահատութիւնն էր: Կ. Ալսակովը վկայում է թէ շատ էին յարձակում Ռուսաստանի վրայ. բայց այդ յարձակումը դարձեալ նոյն վերացական-բարոյական տեսակէտից էր լինում, որ կլանել էր ամենքին: Այս է ամենազլխաւոր պատճառը, որ նրանց յարձակումը ոչ թէ կազմի դէմ էր, այլ՝ անձերի. կեանքում ոչ թէ հիմնարկութիւններ էին տես-

նում, այլ՝ մարդիկ: Միւս պատճառն էլ կեանքը ճշանդէն էր: Նրանց հասարակական զրութիւնը թոյլ չէր տւել կեանքի հետ երես առ երես շփելու կամ զործ ունենալու, այսպիսով անմիջական տպաւորութիւնների ազդելը փակ էր նրանց առաջ. միւս կողմից՝ խորասուզելով միտքը փիլիսոփայական վերացականութիւնների մէջ, նրանք իրանք վերացել էին կեանքից և սաւառնում էին նրա վրայ: Կեանքը ուսումնասիրում էին ոչ անմիջապէս, այլ՝ թատերաբեմից ու զրբերից, ուր ի հարկէ նրանք տեսնում էին միայն լաւ ու վատ անձեր, և ոչ այդ անձերը պայմանաւորող հանգամանքները, շրջապատը: Կարճ կտրած՝ Ստանիսլէի շրջանը քաղաքական հոտառութիւն չունէր, զուրկ էր քաղաքական հայեացքներից ու իդէալներից:

Շրջանում Բէլինսկին առաջնակարգ տեղ չէր զբաղում: Շատերը նրանից հարուստ ու բազմակողմանի տեղեկութիւններ ունէին, շատերի միտքն աւելի ուժեղ էր տեսական հարցերում, քան նրանը, շատերը աւելի ընդունակ էին վերացական հարցերով զբաղւելու, քան նա: Ուստի, անուրանալի է այն ազդեցութիւնը, որ արաւ շրջանը Բէլինսկու վրայ, մանաւանդ տեղեկութիւնների կողմից: Բէլինսկին օտար լեզուներ չգիտէր, գերմաներէն համարեա չէր իմանում, իսկ ֆրանսերէն շատ սակաւ. անհրաժեշտաբար նա օտար գրականութեան ու մտքի մասին տեղեկութիւններ առնում էր շրջանի մարդկանցից կամ անմիջապէս, կամ սեփականում էր խօսակցութիւնների ու վէճերի ժամանակ: Բաց կային յայտնի տեղեր, ուր Բէլինսկին շրջանից շատ բարձր էր և ոչ ոք չէր կարող նրան հաւասարել: Այդտեղ դեր էր խաղում նրա անօրինակ բնաւորութիւնն ու խելքի կազմը: Մինչդեռ ընկերները փիլիսոփայական հարցերով պարապում էին «այնպէս, առանց իրանց համակրանքների ու հակակրանքների զօրեղ մասնակցութեան, Բէլինսկին ընդհակառակն իր ամբողջ հոլովութեամբ խիստ կ'զած էր շրջանի դաւանած գաղափարներին, և ոչ ոք այնքան բոց ու կրակ չէր մոցնում վէճի մէջ, ոչ ոքի սիրտն այնքան ուժգին չէր բաբախում ընդունած գաղափարների համար, որքան նրանը: Նա ապրում էր այն ամենի համար, ինչ համարում էր ճշմարտութիւն, մոլեգնաբար ձգտում էր ու փնտռում այդ ձըմարտութիւնը և կրօնական մարդու պէս կապւած էր նրա հետ: Նա կատաղի կերպով պաշտպանում էր իր ընդունած ճշմարտութիւնը:

որովհետեւ հէնց բնականից կուող էր ծնւած. մի տեղ ասում է. «Ես ծնուել եմ, որ իրերին իրանց խնայան անունը տամ: Այս աշխարհում ես կուող եմ: Իսկ խելքի առանձնացատկութիւնն այն էր, որ իւրացնելով հիմնական ելակէտը (ИСХОДНАЯ ТОЧКА) նա արդէն ինքն իր կողմից, իր սեփական խելքի ուժով զարգացնում էր մի ամբողջ համակարգ կամ մտքերի յաջորդական ու խիստ հետեւողական շղթայ: Լինելով անկաշառ, անկեղծ ու անվեհեր մտածող, նա իր մտքի սանձը բաց էր թողնում և արամաքանական ճանապարհով չէր վարանում մտքի ամենահեռաւոր ծայրերը հասնելու, ամենածայրացեղ բարձունքները վերանալու, մինչև ուր միտքը շատ անգամ վիրաւորում էր նրա խիստ զգայուն բարոյական զգացմունքը: Այս վկայում են այնպիսի հեղինակաւոր անձեր, ինչպէս Հերցէն և Իշ. Օդոևսկի: Իսկ ինքն ահա թէ ինչպէս է իրան բնորոշում. «Վերացականութիւնն իմ սփերան չէ. նա խեղդիչ ու զաղիր է ինձ համար և մտքի ապարիզում ես չափազանց անզոյն դեր եմ կատարում: Իմ սփերան կրակէ խօսքերն են ու կենդանի պատկերները. այդտեղ միայն ինձ համար թէ լաւ է, թէ արձակ: Իմ ուժն ու զօրութիւնը իմ անմիջական զգացմունքի մէջ է, դրա համար էլ երբեք երես չեմ դարձնի նրանից, որովհետեւ ինքս ինձանից երես դարձնելու գիտաւորութիւն չունեմ: Ահա հէնց այդ անմիջական զգացմունքն էր, որի հետ պիտի հաշիւ տեսնէր Բէլինսկու խրացրած զաղափարներից ամեն մէկը, այդ զգացմունքն էր զլիսաւորապէս կշռում սեփականած զաղափարների արժանիքը, նա էր ուժ ու թափ տալիս Բէլինսկու խօսքին ու կարծիքին: Այդ զգացմունքն էր նաև նրա հոգու տանջանքների, մտաչին թափառումների և ծայրացեղ մտքերի պատճառը և հէնց դրա համար էր, որ շրջանում նրան անւանում էին «անզուսպ Վիսսարիոն» ու հեղինակաւոր ընկերները խորհուրդ էին տալիս մի քիչ չափաւորել եռանդը, մի քիչ հանդադրել... Այդ զգացմունքը, որ երևում է գեռ ողբերգութեան մէջ, նրա բնաւորութեան առանցքն ու ծուծն է, և այդ ծուծի վրայ մազի չափ ազդեցութիւն չարաւ շրջանը փոխելու մտքով, որովհետեւ այդ կողմից նրանից ուժեղ մարդ չկար:

Նա կեանք մտաւ այսպիսի հաւատով. «Ես ոչ մի տեղ երբեք չեմ կորչի չնայած խիստ բաղդի հալածանքներին. մաքուր խիղճ»:

այն հաւատը թէ արժանի չեմ կրած դժբախտութիւններիս, ունեցած մի քիչ խելքս, փորձիս բաւականին պաշարն ու, որ զլիաւորն է, բնաւորութեանս մի քիչ ամբողթիւնը, ինձ չեն թողնի, որ կորչեմ: Իմ դժբախտութիւնների համար ոչ միայն զանգատաւոր չեմ, այլ և ուրախ եմ: Սեփական փորձովս իմացայ, թէ դժբախտութիւնների զպրոցն ամենալաւ դպրոցն է: Ապագան ինձ չի սարսեցնում: Մտքիցս անց եմ կացնում իմ կեանքն ու քրքրում: ու թէ և ինչ որ դառն զգացմունքով նկատում եմ, որ ոչ մի լաւ բան չեմ արել, բայց այս էլ պիտի ասեմ, որ ինքս ինձ չեմ կարող կըշտամբել որեւէ սոորութեան, գարշութեան, որեւէ վարմունքի համար, որ թեքւելիս լինէր դէպի մերձաւորի վնասը:

Մի տարուց յետոյ նա շատ փայլուն ապացոյց տւեց, թէ իր ունեցած հաւատը որքան հիմնաւոր էր. նա չկորաւ 34 թւ. 2եմբարից նա մի յօդած ուղարկեց «Գրական անուրջներ» վերնագրով, որ մաս-մաս տպւեց Նաղեժդինի «Մոլլա»-յում: Այդ յօդածների արած տպաւորութիւնն ահագին էր ընթերցող հասարակութեան վրայ: Այստեղ կենդանի ու աշխոյժ ձեռով քննութեան է առնւում ուս գրականութեան անցեալը. մէկ մէկու յետեւից ցած են զլորւում զօրեղ բազլի հարւածից «մանր մեծ մարդիկը» և իրանց պատշաճ տեղերը բռնում. փորձ է անում յայտնի համակարգի փերածկու գրական երևոյթները և յայտնի տեսակէտից գնահատելու: Մինչև Բէլինսկին եղել էին քննադատներ, դուրս էին քննադատական յօդւածներ, բայց այդ բոլորը մեծ մասամբ աւելի վախկոտ ձայների մի համերգ էր, քան որոշակի ու պարզ յայտնած կարծիքների համակարգ: Առաջին յօդւածում իսկ երևում են Բէլինսկի-գրողի բոլոր ատանձնատկութիւնները. ժամանակի ընթացքում նա իր համոզմունքները մի քանի անգամ փոխեց, բայց գրողի տիպը մինչև գերեզման անբիծ ու անարատ մնաց: Անկեղծութիւնը ցանցւած է զրւածքի բոլոր խորշերի վրայ. զգացմունքի խորութիւնն ու ուժը բռնում է տրամաբանական ապացոյցների տեղ, ծաղրը համոզելու զէնք է, իսկ հեղինակի լավող ոգևորութիւնը գրաւում տանում է իր հետ ընթերցողին. կարծիքներն ու համոզմունքներն արտայայտւած են խիստ, որոշ ու պարզ. հեղինակը անմիջապէս ճամբայ է բացանում դէպի ընթերցողի սիրտը և տիրում նրա մտքին: Պանտեը,

որ կրել է առաջին յօդաձի տալաորութիւնը, նրան «ճշմարիտ ու խիստ ձայն» է անւանում, շատ սիրուն բնորոշելով Բէլինսկու դըր-
ւածները: Բացի այդ Բէլինսկին իր առաջին յօդաձով աչքի ընկաւ
նաեւ մի ուրիշ կողմից. այստեղ առաջին անգամ քննադատութիւնը
նկատուի կերպով պատուում է իր նեղ մաշկը և հրապարակ է դուրս
գալիս իր հսկողութեան տակ առնելու բացի զրական հարցերը,
նաեւ հասարակական, պատմական ու փիլիսոփայական հարցերը: Բէ-
լինսկու առաջին յօդաձը իսկոյն աչքի ընկաւ, և իր բարոյական
ուժի շնորհիւ հեղինակին առաջնակարգ տեղը տաւ բոլոր գրողնե-
րի մէջ. ոմանք յարեցին նոր գրողին, մանաւանդ ճշմարտութեան
ծարաւի ջահիլները, իսկ մեծամասնութիւնը թշնամացաւ նրա հետ:
Ահա թէ ինչ է տաւ Կն. Վեազեմսկի՝ Պուշկինի շրջանի մի մարդ:

„Поклонникъ и послѣдователь Бѣлинскаго въ моихъ гла-
захъ человѣкъ отпѣтый, и, просто сказать, пѣтый дуракъ“,
էլ չենք խօսում ուրիշների մասին: Տուրգենևն տաւ է թէ Պե-
տրբուրգում նրան համարում էին մի ցինիկ, որի համար ոչ մի
սրբութիւն չըկա՝ աշխարհում, մի բուլղոդ, որին Նաբիժկինը խնա-
մում էր թշնամիների վրայ քիս տալու համար, և այլն...

Վերն տախը թէ Բէլինսկին իր համոզմունքները մի քանի ան-
գամ փոխեց. այդ փոփոխութիւններին մանրակրկիտ և ամեն ուղ-
ղութեամբ հետեւելը մեզ շատ հետու կը տանէր, ուստի մենք կ'ար-
ձանագրենք այն փոփոխութիւնները, որ եղան նրա զեղարեւտի
մասին ունեցած հայեացքների մէջ, կը հետեւենք նրա համակրանք-
ների փոփոխելուն այդ բնագաւառում, ընդհանուր գծերով բնո-
րոշելով նրա հասարակական դաւանանքը: Առաջին յօդաձում նա
արծարծում է Շեքսպիր համակարգը և նրա զեղարեւտական հա-
յեացքների տեսակետից դատողութիւններ է տալիս հեղինակների
մասին: Նա քարոզում է թէ զեղարեւտը բնութեան ընդհանուր
կեանքի գաղափարի՝ իդէալի մարմնացումն է ձայների, գոյների և
խօսքերի միջոցով. որ ամեն զեղարեւտական երկի հիմքում ընկած
է մի գաղափար, որից նա աճում ու հասունանում է, ինչպէս սաղ-
մից բոյան է աճում ու հասունանում, որ զեղարեւտականութիւնը
այդ գաղափարի և նրա ձևի ներդաշնակութեան մէջ է: Առաջար-
կում է գրողներին, հենւելով իր ունեցած վերացական-բարոյական

զաղափարների վրայ, որ նրանք աչքի առաջ ունենան մարդկութեան կենդանի շահերը, ուշադիր լինեն զէպի ընդհանուր միտքն ու զգացմունքը, և այլն: Այդ ժամանակ նա Շիլլերի ջերմ երկրպագուն էր, նրա ունեցած իդէալների համար, ոգևորութեամբ էր խօսում նրա մասին և նրա բողոքը սրբապղծութիւն չէր համարում, ինչպէս քիչ յետոյ եղաւ:

V

Շուտով Բէլինսկին Բոսկինի և Կլիւշևսկու (բանաստեղծ) շնորհիւ ծանօթացաւ միևոր փիլիսոփայական համակարգի հետ, որ Գերմանիայում արդէն բոնում էր Շելլինգի վարդապետութեան տեղը: Հեգելի համակարգն էր, որ նոր ուժով կլանեց Ստանկե իչի շրջանի մարդկանց ուշադրութիւնը 1837 թ. սկսած: Բէլինսկու հոգին չէր սիրում հակասութիւններ, նա զբքերումն իսկ դժուար էր դիմանում հակասութիւններին, իսկ կեանքի հակասութիւնների հետ նա դեռ այնքան լաւ ծանօթ չէր, որովհետեւ երես առ երես կեանքին քիչ էր ջանդիւղած. կենսական նեղութիւնները կարծես քսւել անցել էին նրա վրայից և չէին բաց արել նրա աչքերը: Նա փնտռում էր կեանքի այնպիսի բանաձև, որ թէ բանականութիւն ճանաչէր և թէ ընդդէմ լինէր ամեն ընդդիմութեան, բարկութեան, բողոքի: Հեգելի փիլիսոփայութիւնը տաւ նրան իր փնտռածը: Փիլիսոփայի երկերից ամեն մէկը, իւրաքանչիւր էջն ու տողը կենդանի ու ջերմ խօսակցութիւնների նիւթ դարձան և փոխադարձ օգնութեամբ իւրացւեցին:

Մանաւանդ ահազին վէճերի սլառճառ դարձաւ Հեգելի մի դրութիւնը. «ինչ որ բանական է՝ իրական է և ինչ որ իրական է՝ բանական է»: Սրանից բղխած բարոյականը իրականութեան չընդդիմանալն էր, քանի որ ինչ իրական է՝ ուրեմն բանական է, նշանակում է նրան ընդդիմանալը յանցանք է, սրբապղծութիւն է. այստեղից ստացւում էր մի դաւանանք, որ հիմնւած էր իրականութեան պաշտամունքի վրայ: Բէլինսկին յարեց այս նոր վարդապետութեան նաև մի հոգեբանական կարիքից դրդւած: Նա գրում է թէ «յոգնել էի վերացականութիւնից» և «խիստ պահանջ էի զգում իրականութեան մօտենալուն». Հեգելի համակարգը նրա պա-

հանջը գոհացրեց: Բայց նա ծանր հոգեկան տանջանքների գնով գնեց իր հաշտութիւնը իրականութեան հետ: Ճես մոքերն ստանում էի սրտորաստ՝ ընծայի նման. բայց դրանով ամեն բան չէր վերջանում և միայն դրանով ևս շատ քիչ բան կը շահէի. իմ կեանքով, արցունքներին ու հոգուս հառաչանքների գնով ևս իւրացրի այդ մոքերը և սրանք շատ խորը մտան իմ էութեան մէջ:

Խնչն էր սակայն այդ դժուար փոխակերպումը. Բէլինսկու էութեան ծուծը՝ նրա անմիջական զգացմունքը: Այդ զգացմունքը չէր հաշտուում վերացական մոքի տւած արդիւնքների, հետեւաբանութիւնների հետ: Սկզբում լսում էի զանգատներ. «... ցաւն այն է, որ դադարիս ինչ որ չի խորատուգում այսպէս ասած իմ լինելութեան ծածկագոյն խորհրդարանները, չի տիրանում իմ ամբողջ էութեան: Հարկաւոր էր հաշտել այն իրականութեան հետ, որին քիչ առաջ աչքով աչք չուէր նայելու, որին անւանում էր «զազիր», «զղւելի», «զարշելի»: Փորձեր է անում նոր ու հոյակապ մտքի հմայքից հեռու փախչելու, իրականութիւնից խոյս տալու. Վերական կեանքից ևս թափ եմ կենում երեւակայականի մէջ և այնտեղից իրական կեանքին դառնալը ինձ համար դառն արթնացում է: Այն կեանքը, որի դէմ նա այնպէս եռանդով կռւում էր իր ողբերգութեան մէջ, որին ատում էր իր հոգու բովանդակ ուժով, այժմ նրա համար պիտի անպայման բանական լինէր. նա փախուստ է տալիս. Ճես ինձ համար ստեղծել եմ ինչ որ Ֆրանսասիքական աշխարհ և մէջն ապրում եմ. այդ աշխարհը գեղեցիկ է. ներս մըտնելիս ևս ինձ մարդ եմ զգում, մէջս զգում եմ և՛ սէր, և՛ եռանդ. դուրս գալիս զգանքով եմ նայում իրականութեան: Բայց արդէն մօտ էր հաշտութիւնը... Սոսկալի փնտռումներից չետոյ, նա իր ցաւին մի դարման գտաւ. Վերականութիւնը հրէշ է. որպէս զի նրանից ազատենք ու հրէշի տեղ՝ բազումորութեան աղբիւր տեսնենք նրանում, դրա համար մի միջոց կայ միայն. զիտակցել նրան: Ու սկսում է պիտակցել. կեանքն էլ օգնութեան է գալիս: Լարւած դրութիւնն ու ընկերների աջակցութիւնը, մի տարի սարսափելի տանջանքներից չետոյ, 38 թ. նրան բոլորովին հաշտեցրին իրականութեան հետ. նախկին զգանքը դէպի արտաքինը փոխւում է յարգանքի. առժամանակ թմրում է արթուն խեղճն ու բարոյական

զգացմունքը և մենք Բէլինսկու գրչի տակից այս տեսակ տողեր ենք տեսնում զուրս եկած. «... այսպէս ուրեմն թողնենք, որ գործերն ընթանան այնպէս, ինչպէս ընթանում են և սուրբ ու անգարձ հաւատ ունենանք թէ ամեն ըստ ղէպի լաւն է գնում»:

39 թ. Բէլինսկին ամառն անց կացրեց Բախունինենց կալածքում: Մ. Բախունինի ընտանիքը մի օրինակելի շրջան էր. ծերունի հայրը թարմութիւնը դեռ չկորցրած՝ մասնակից էր լինում երիտասարդների աղմկայոյզ վէճերին և շատ յաճախ համաձայնում նրանց հետ. կանայք զարգացած ու բարձր շահերով հետաքրքրուող անձեր էին, այնպէս որ կարելի էր նրանց հետ ոչ միայն խելացի փոսակցութիւն ունենալ, այլ և փիլիսոփայական հարցերի մասին վիճաբանել: Կնքը Բախունինը, որ պաշտօնաթող սպայ էր, աչքի էր ընկնում իր նուրբ խելքով, տեսական մտքի ահագին ուժով և վիճաբանելու անօրինակ տաղանդով: Նա Բէլինսկու նման անվեհեր ու համարձակ մտածող էր. այդ համարձակ խելքը ապագայում հասցրեց նրան մինչև իր անիշխանական դրութիւնը՝ «խորտակելու կիւքը շինելու կիւք է»: Այժմ նա էլ, շրջանի միւս անդամների նման, իւրացնում էր Հեգելի փիլիսոփայութիւնը՝ մասնակից անելով նաև Բէլինսկուն: Այդ ընտանիքում Բէլինսկին կատարելապէս հաշտական հայեացքների տէր դարձաւ. և իսկապէս՝ ինչ աւելի բանական իրականութիւն էր հարկաւոր, քան Բախունինենց ընտանիքն ու Ստանկեիի շրջանը. իսկ իրական կեանքը չէ որ շատ էր հեռու:

Հեգելն արդէն հիացնում է Բէլինսկուն. «Ամառը նա (Բախունինը) աչքի անցրեց Հեգելի կրօնի և իրաւունքի փիլիսոփայութիւնը: Նոր աշխարհ բացեց մեր առաջ: Ուժն իրաւունք է, իրաւունքն ուժ. — չէ, չիմ կարող նկարագրել թէ թէն զգացմունքով ես լսեցի այդ խօսքերը. այդ ինձ համար փրկութիւն էր: Ես հասկացայ թաղաւորութիւնների անկման դաղափարը, տիրապետութիւնների օրինաւորութիւնը, ես հասկացայ, որ վալդենի նիւթական ուժ չկայ, որ չկայ սւիսի ու սրի իշխանութիւն, չկայ կամայականութիւն, պատահականութիւն, և վերջացաւ իմ խնամաստութիւնը մարդկային ցեղի վրայ: Իրականութիւնը դառնում է Բէլինսկու համոզմունքների անկիւնաքարը. իրականութիւն խօսքը ինձ համար հաւասար է Աստուծ խօսքին», գրում է նա:

Եւ սկսում է խիստ քննութեան ենթարկել անցած կեանքը. Կրօնի բնադաւառն էլ է ինձ մատչելի, բայց ինձ աւելի մօտ բնադաւառը գեղարեստինն է. և Մեղիշիական Վենեռայի զիպսէ սիրուն ընդօրինակութիւնն ինձ համար աւելի թանկ է, քան այն անմիա երջանկութիւնը, որ ես փնտռում էի բարոյական հարցեր վճռելում: Տէր Ասուած, ինչ սարսափելի կեանք էր այն՝ բարոյական տեսակէտը քիչ էր մնում խորակէր ինձ համար կեանքի զեղեցիկութիւնը, նրա բանաստեղծականն ու հրապուրանքը:

Հին աշխարհացեացքի հիմունքների հետ փոխեցին նաև գեղարեստի մասին ունեցած հայեացքները. այժմ նա քարոզում է իրականութեան հպտակ ու հաւատարիմ ստեղծագործութիւն, պաշտպանում է այսպէս կոչւած առարկայական ստեղծագործութիւնը, կատաղի կերպով կոխ է մղում այն տեսակ գրեւծներին, որ փայլում է հասարակական ատողջ միտք ու գաղափար: Նրա քննադատութիւնը դառնում է զուտ գեղարեստական, ինքը՝ արտաքին ձևի երկրպագու. զրական երկերը գնահատում է նրանց գեղարեստական արժանիքներով, առանց ուշք դարձնելու նրանց բովանդակութեան վրայ. մոռցին հորիզոնը նեղանում է: Բայց չնայած հիմնական հայեացքների սխալ լինելուն նրա տւած գեղարեստական դատավճիռները անսխալական են և մնում են մինչև այսօր. այստեղ պէր էր խաղում նրա ահագին գեղարեստական բնածին հոսանքութիւնը, որ կրթւել ու նրբացել էր ընկերական շրջանում:

Նոր հայեացքներին զոհ գնացին շատ երկեր, ամենանշանաւորը Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» կատակերգութիւնն էր, որին խիստ քննադատութեան ենթարկեց գեղարեստական տեսակէտից՝ ծաղրելով Չացիու բողոքը իրականութեան դէմ և չընկառելով այդ նշանաւոր գրեւծքի հասարակական նշանակութիւնը: Շիլլերը, որ այնքան սիրելի էր նրան երբեմն, այժմ դառնում է նրա անձնական թշնամին՝ իր բողոքի համար իրականութեան դէմ: Ամեն բողոք այժմ նրան թւում է սրբապղծութիւն, ջանքանք. երկիւղածութեամբ է խօսում Պուշկինի և Գէօթէի մասին, որոնք իրականութիւնը վերարտադրում են առանց իրանց անձնական չարաբերութիւններին տեղ տալու. փոխւում է նաև նրա վերաբերմունքը դէպի մեծ ազգերը. սոսկալի ատելութեամբ ու զայրոյթով է խօ-

սում Ծրանիական ազգի, նրա մոքի ու գրականութեան մասին. ծաղրում է XVIII դարու «լուսաւորիչ» գրականութիւնն ու նրա գործիչներին. ծաղրում է և նոր գրողներին՝ Ժորժ-Չանդին, Հիւգօին. որովհետեւ բոլորն էլ ընդդէմ են գնում բանական իրականութեան, առանց նկատելու, որ ինքը իր ամբողջ հոլթեամբ ու գործունէութեամբ նոյնպէս ընդդիմանում, բողոքում է իրականութեան դէմ ¹⁾...

39 Թւ. նա երկու յօդած գրեց, որոնց համար յետոյ շատ փոշմանեց. այդ յօդածներն էին «Բորոգինօյի տարեդարձը» և «Դէօթէի քննադատ Մենցելը». այստեղ նրա հաշտութիւնը իր զազաթնակէտին հասաւ. բացարձակ քարոզում էին ուղղակի անբարոյական մոքեր և հիմնական եղբայրացու թիւնն այն էր թէ ամեն բան լաւ է ու կարգին, մանաւանդ Ռուսաստանում: Այս յօդածները պատճառ դառան վէճերի ընկերական շրջանում. շատ չարաւոր ուղղութեան տէր մարդիկ նոյն իսկ զաւարեցին այլ ևս նրան բարեկէր Բայց իր քարոզածը նա ճշմարտութիւն էր համարում և ոչ մի ուժ էր կարող ստիպել նրան համոզմունքի հակառակը խօսելու. գրականութեան մէջ նրանից ուժեղ մարդ չըկար, որ սանձէր նրան և ցոյց տար նրա սխալները, բանար փակ աչքերը. ինքը միայն կարող էր իր հետ մրցել, ինքն էլ այնպէս էր համոզւած:

Բայց մոլորութիւնը երկար չըտեւեց: Բնկերների նկատողութիւնները չէին կարող ազդել Բէլինսկու վրայ, որովհետեւ նրանց հիմնական հայեացքները մէկ էին, Բէլինսկու արածն այն էր միայն, որ այդ հիմնակէտերը նա ըստ սովորութեան զարգացրել էր տրամաբանօրէն ու հեռեւողաբար մինչև ծայրը, ուր նրան չէին կարողանում հետեւել նոյն իսկ ընկերներից ամենահամարձակները: Բայց այս անգամ սթափեցնող ձայնն ուրիշ կողմից եկաւ. ոչ թէ ընկերներն էին, այլ Մոսկւայի միւս շրջանի զլուխը՝ Հերցէնը: Կատաղի վիճաբանութեան մէջ Հերցէնը յարձակեց Բէլինսկու վրայ և սկսեց

¹⁾ «Տարազի» այս տարաւ լուծիսի համարներում տպւած Բէլինսկու յօդածի կտորը աղ չըջանի գրածներինցն է. լուս է տեսել 1837 թ. աշնան պէս որ պէտք է զգուշանալ. այդտեղ իսկական, թանկապիւն Բէլինսկին չէ. խստող:

Նրա զէնքերով նրան հարւածել, անվեհեր կուտղին ուղիղ ձանապարհ հանելու և Ստանկեիի ամբողջ շրջանի կործանիչ գաղափարներին ընդդիմանալու համար, նա մանրակրկիտ ուսումնասիրել էր Հեգելի փիլիսոփայութիւնը և նրա անունով էր իր առարկութիւններն անում: Բէլինսկին զգաց, որ իր ունեցած համոզմունքների հիմքերը տատանեցին, որ նրանք ամուր չեն, բայց չլքիջեց, այլ խռով ու անբաւական հեռացաւ Հերցէնից. ու թէև վերը յիշած յօդաձևերը դեռ չէր տպել՝ չոչնչացրեց, այլ իր հետ տարաւ Պետերբուրգ 39 թ. հոկտեմբերին: Ապագան ցոյց տուաւ թէ Հերցէնը չէր սխալուում:

VI

Համալսարանից դուրս դալուց յետոյ Բէլինսկին մնաց դռներին. պետական պաշտօն չէր կարող ստանձնել, ուրիշ յարմար գործ չէր գտնում. մնում էր կիսաքաղց օրերը մի կերպ անցկացնել: Փորձեց գրական վաստակներով մի կերպ ապրել, բայց այդ աշխատանքը չէր ապահովում մարդու: Թարգմանեց Պոլ-դը-Կոքի վէպերից մէկը, կազմեց մի քերականութիւն, գրեց մի դրամատիքական գրւածք, բայց տանելի ապրուստի տէր անգամ չը դարձաւ: Նադեժդինի «Մոլւալում» աշխատելիս ապրուստի նման մի բան կարողացաւ ձեռք բերել. մանաւանդ երբ խմբագիրը արտասահման գնալու պատճառով՝ խմբագրութիւնը յանձնեց Բէլինսկուն (35 թ.): Բէլինսկին իրան յատուկ ոգևորութեամբ գործի կալաւ և գործի քաշեց նաև ընկերներին. Ստանկեիի ամբողջ շրջանը սկսեց աշխատել, իր օրգանը դարձնելով Նադեժդինի երկու հրատարակութիւնը:

Թերթերի վախճանից յետոյ Բէլինսկին նորից մնաց դռներին, մինչև «Մոսկովսկի Նաբլիւդատել» ամսագրի աշխատակից դառնալը, ուր իսկապէս խմբագիր էր՝ թէև ոչ յայտնի: Այստեղ դրութիւնն էլի մի քիչ լաւացաւ: Այստեղ էլ ամբողջ խումբն էր աշխատում. ամսագրին տւել էին զուտ փիլիսոփայական ու գրական ուղղութիւն. Բէլինսկին աշխատում էր, որ բոլոր գրւածները մի ուղղութեամբ լինեն և ամբողջական ապաւորութիւն անեն ընթերցողի վրայ, որ և նրան յաջողում էր, որովհետև աշխատակիցները միատեսակ համոզմունքների տէր էին: Դրական բաժինը աչքի էր ընկնում իր

քննարանքով, փխխտութեան յօգուածներն իրանց նշանակութեամբ: Գործն առաջ էր զնում եռանդով, որ 39 թ. այլ ևս թերթը անկարելի էր հրատարակել: Բէլինսկին նորից մնաց անդործ ու անապրուստ:

Պրանից առաջ նա ուզում էր ուսուցչութեան զնալ, բայց չըջաջողեց: Ընկերները նրա համար մի հարուստի տան լորձ գտան. պիտի տանտիրոջ գրեթէ քններն ուղղէր. ամեն յարմարութիւն կար. լուսաւոր սենեակ, դաշնամուր, պարտէզ, լաւ ապրուստ, ահագին գրադարան, բայց որովհետեւ նա երբեմն պիտի իր համոզմունքները զոհէր կամ լռութեան տար, երկու-երեք ամիս էլ չը համբերեց. ձեռքի թաշկինակում փաթած թեց իր ունեցած չունեցածն ու դուրս եկաւ «յգոտեղից» տոմսակ թողնելով՝ թէ անյարմար է նրա համար այդ պաշտօնը. ու զնաց նորից իր խուցը, որ մի տակառանոց էր, լաւ ցարարի տան դիմաց, սապոնի դուրը շինելով նեխած մի փոքրիկ սենեակ, որի դուռը միշտ բաց էր թողնում, որովհետեւ բան չը կար տանելու: Նկատեցէք, որ հենց այդ պայմաններումն էր ապրում, երբ գրում էր թէ ամեն բան դէպի լաւն է զնում, կեանքում միայն լաւութիւն կայ, և հաշտ էր սոստական իրականութեան հետ:

Այդ ժամանակ նա մտադրեց զնալ Պետերբուրգ. և Պանսելի միջոցով բանակցութիւններ սկսեց «Ստեփանուհինը եւ Չապիսկի» ամսագրի խմբագիր Կրասկուս հետ: Դեռ սկզբում, 36 թ. եղել էին բանակցութիւններ, երբ նա առաջարկել էր այսպիսի պայմաններ. «Որով ուրախ եմ մասնակցելու ամեն ազնիւ ձեռնարկութեան և աջակցել՝ թոյլ ուժերիս ներածի չափ՝ հայրենի գրականութեան բարգաւաճմանը. բայց ես ուզում եմ լիովին պահպանել կարծիքներիս ազատութիւնը և ոչ մի կերպ ինձ չեմ ճնշի անձնական կամ կենսական որեւէ յարաբերութիւնով: Այժմ նրան յաջողեց իր ուղած գլխաւոր պայմանով զնալ Պետերբուրգ. պէտք է պահպանէր ամսագրի ամբողջ քննադատական և գրախօսական բաժինը: Անհանգրստութեամբ թողեց նա Մոսկւան, դժարութեամբ բաժանեց սովոր ու սիրած շրջանից, կարծես նախադգում էր այն փոփոխութիւնները, որ պիտի կրէր նրա հոգին: Եւ իրաւ. Պետերբուրգում նա նորից փոխեց իր համոզմունքները, այս անգամ արդէն վերջնականապէս:

Մենք տեսանք, որ նոյն իսկ հաշտած ժամանակնա հաշտւած չէր իրականութեան հետ. ինքն իր ամբողջ էութեամբ մի բողոք էր իրականութեան դէմ, չէր նկատում թէ քարոզելով, որ իրականութեան պէտք է չընդդիմանալ, նա ինքն իր քարոզով արդէն ընդդիմանում է յայտնի կարգերի, յայտնի մոքերի և ուղղութիւնների: Բայց ահա և ուղղակի ապացոյց. «դու գիտես թէ ինչ կարծիքներ ունեւմ մարդկանց մասին, գրում է նա մի բարեկամի հաշտւած ժամանակ. դու գիտես, որ նրանց ես երկու կարգի եմ բաժանում. մարդիկ, որ զուրկ չեն սիրոյ սաղմից և մարդիկ, որ զուրկ են այդ սաղմից. վերջիններն ինձ համար անասուններ են և ես թուլութիւն եմ համարում նրանց նոյն իսկ փոքր ինչ խնայելը: Ուրեմն թէև հաշտւած՝ բայց իր կողմից չանցանք չի համարում այն, ինչ կ'ատէր ու կը հալածէր եթէ ուրիշներն անէին. այդ է պատճառը, որ Գրիբոեդովի կատակերգութեան մասին գրելիս նա անարգել թոյլ է տալիս, որ իր զգանքն ու ատելութիւնը ասպարէզ դուրս գան Ֆամուսովների, Մալալիւնների և ուրիշների դիմաց:

Սաղմեր կային ուրեմն փոփոխւելու. և փոփոխութիւնը կատարւում է մի անգամից, զանազան ծայրերից և զանազան ուղղութեամբ: Այդ փոփոխութիւնը, որ տեւեց երկու տարի, շատ տեսակէտներից անգնահատելի մի իրողութիւն է. քայլ առ քայլ կարելի է հետեւել այդ փոփոխութեան բոսկիին զրա՞ծ նամակները կարդալով, որոնք երբեմն հաստ տետրակներ էին լինում: Մենք իհարկէ մանրամասն չենք հետեւի այդ փոփոխութեան: Ասպարէզ դուրս եկաւ Լերմոնտովը իր հզոր բողոքով և խիստ ատելութեամբ դէպի իրականութիւնը. միւս կողմում կանգնած էր Բաչրոնը իր «համաշխարհային վշտով» և կեանքի, իրականութեան դէմ մղած կռուով. Բէլինսկին չէր կարող չենթարկւել այդ ուժերին, չէր կարող չըհամակրել այդ զօրեղ անձնաւորութիւններին, որոնք անհաշա կռիւ էին սկսել կեանքի դէմ, չէր կարող՝ որովհետեւ ինքն ևս մի զօրեղ անձնաւորութիւն էր: Բայց և չէր կարող չատել նրանց որովհետեւ նրանք ընդդէմ էին դնում «բանական իրականութեան», բողոքի, բարկութեան ու զայրոյթի ներկայացուցիչներ էին: Մանաւանդ Լերմոնտովը. նրա արագին տաշանդը հմայել էր Բէլինսկուն, անհանգիստ էր անում նրան, հոգու ներսը ինչ որ բան ասում էր թէ

ներա մաքերը սխալ են. զօրեղ զրդումից զարթնում էր առ ժամանակ քնած զգացմունքը և անձնաւորութիւնը գլուխ էր բարձրացնում:

Միւս կողմից առաջին անգամ իրականութիւնը երես առ երես կանգնեց Բէլինսկու առաջ. հարց էր ծագում՝ ի՞նչ պիտի անել ներկայումս, ի՞նչպէս պիտի այդ իրականութեան մօտենալ, ի՞նչպէս դործ ունենալ նրա հետ: Այդ խնդիրների առաջ պարզ դուրս նկարեց Մոսկւայի կեանքը իր անբովանդակութեամբ, և ահա զժգոհութիւն է լսում այդ կեանքի դէմ... Հանապաղ խօսել իմ մասին կամ իմ տանջանքների մասին, մոռանալով, որ ուրիշն էլ է իր մասին մտածում և տանջանքներով հարուստ—ոչ լաւ է, ոչ էլ խելացի: Բարոյական զգացմունքը, դէպի մարդիկ ունեցած ցաւակցութիւնն ու սէրն սխտւում են գլուխ բարձրացնել: Նա յարձակւում է իրանց ընդհանուր ուղղութեան վրայ, որ դէմ է կեանքին և ուշադրութեան չի առնում այդ կեանքը:

Ահա և իրականութիւնը կանգնում է նրա առաջ. «ինձ սպանել է այս հասարակութեան տեսքը, ուր իշխում ու դեր են խաղում ստոր ու միջակ շնորքի մարդիկ, իսկ այն ամենն ինչ ազնիւ է և շնորհալի ամօթալի անդործութեան մէջ է ընկած»։ Կեանքն սխտւում է այլ ևս չբողոսացնել նրան, նոյն իսկ կամաց-կամաց ատելի դառնալ: Ու լսում է կատաղի փոթորկի հեռու գոռոցը. «ինչո՞ւ համար Եւրոպացին տանջւելիս իրան ձգում է հասարակական գործունէութեան մէջ և այնտեղ էլ ելք է գտնում իր տանջանքից դուրս դալու...»

Բոտկինը Բէլինսկուն անւանում է բողոքող վիրաւորւած սիրտ. և իսկապէս սիրտն էր նրա մէջ բողոք բարձրացնողը, նրան տանջողն ու անհանգստացնողը. փիլիսոփայական մտքերի յետեւից ընկնելով՝ նա անուշադիր էր թողել այդ սիրտը. այժմ միայն հասկացաւ, որ իր միտքը ծուռ ճանապարհով է գնում, հաշտ չէ սրտի հետ և հենց այդ է զժբախտութիւնների ու տանջանքների հիմքը: Նա իր զգացմունքը յարգում էր, զիտէր, որ այդ է իր բնաւորութեան չլաւագոյն կողմը, այդ ամուլեզնութեան ու վայրենութեան հասնող զգացմունքը, և այժմ այդ զգացմունքն էր վիրաւորւած, որ նշանակում է թէ իրականութիւնը Բէլինսկու էութիւնն էր խանչում և

յօշոտումն Սարսափելի տանջանքներից, անքուն դիշերներից ու անհանգիստ և լարած մտածութիւններից յետոյ, Բէլինսկին վերջապէս թոթափեց իր վրայից թմրութիւնն ու մոլորութիւնը:

Վերը բերած բոլոր պատճառների հետ միացաւ և մի ուրիշը, ու վերջնականապէս խորտակեց հին աշխարհացեացքը: Արեւմուտքի գրականութեան հետեւելով՝ նա տեսաւ այնտեղի կեանքը. Ծրանսիայում այդ ժամանակ ռումանիք ու զղութիւնն էր կռիւ սկսել, Գերմանիայում՝ Վերիտասարդ Գերմանիան՝ Հէյնէն ու Բէօրնէն անձը զուրս էր եկել սապարէզ. բարձրաձայն քարոզում էր իր բնական իրաւունքը. ձայնի իրաւունք էր պահանջում քաղաքական, հասարակական ու բարոյական հարցերում, պահանջում էր իր իդէալների ազատ քարոզումը: Փրկութեան դուռը բացւած էր. Բէլինսկին ներս մտաւ, և ահա ինչպէս է յայտնում Բոտկինին իր փոխելը.

«Անիծում եմ իմ զգուշի իրականութեան հետ հաշուելու ձրգտումը! Աեցցէ մեծ Շիլլէրը, մարդկութեան ազնիւ փաստարանը, փրկութեան փայլուն ասողը, հասարակութեան ազատիչը աւանդութեան կաշկանդիչ նախապաշարումներից! Աեցցէ բանականութիւնը, թող կորչի խաւարը! ինչպէս բացականչում է մեր մեծ Պուշկինը: Այժմ ինձ համար մարդկային անձնատրութիւնը բարձր է պատմութիւնից, հասարակութիւնից, մարդկութիւնից: Այդ՝ դարուս միտքն ու մտածմունքն է! Տէր Աստուած! մտածելն իսկ սարսափելի է, թէ այն ինչ էր, որ ինձ պատահեց՝ ջերմ թէ խելագարութիւն. կարծես առողջացող հիւանդ լինեմ: Մի ուրիշ տեղ. իրականութիւնը դահիճ է»:

Ժորժ-Չանդի, որին այժմ երկրպագում է, Միցկէիչի, որի վրայ կատաղի չարձակումներ էր անում, Լուի-Բլանի և ուրիշների զրաժները կարդալով, նա կամաց-կամաց պարզում է անձնատրութեան կապը հասարակութեան հետ, տեսնում է, որ մէկը միւսի արգասիքն է, և անցնում է ընկերավարական բանաւիճակ: Բոտկինին գրում է. «դու լաւ գիտես իմ բնույթը. միշտ ծայրացեղութիւնների մէջ է նա և երբեք չի ընկնում իդէալի կենտրոնը: Աս ցաւով ու դժարութեամբ եմ հեռանում հին իդէալից, բոլորովին բացատում եմ նրան, իսկ նոր զաղափարն ընդունում եմ պրոգնիտի բո-

լոր մոլեռանդութեամբ: Այսպէս ուրեմն ես այժմ մի նոր ծայրա-
յեղութեան մէջ եմ, այդ ընկերավարութեան գաղափարն է, որ
ինձ համար դառել է գաղափարների գաղափար, լինելութեանց լի-
նելութիւն, հարցերի հարց, հաւատի ու գիտութեան այդ ու քէ:
Ամեն բան նրանից է, նրա համար և դէպի նա է գնում: Նա ինքը
հարց է և հարցի վճիռ: (Ինձ համար) նա կլանել է պատմութիւնն
էլ, կրօնն էլ, փիլիսոփայութիւնն էլ...

Նոր աշխարհայեացքին նա միայնակ, իր սեփական ուժերով
անցաւ՝ անկախ ընկերական ամեն ազդեցութիւնից. միայնակ էլ
տանջեց իր փնտռումների ժամանակ: Մինչև կեանքի վերջն էլ նա
հանգիստ չէր կարողանում յիշել իր մոլորութիւնը և ամեն դէպքը
բերած ժամանակ ինքն իր վրայ էր յարձակուում ու ինքն իրան
դատաւարուում. ամենքի առաջ էին իր «զգւելի» յօդաճնները և
ամեն անգամ յիշողութիւնը կրճում էր նրա սիրտը: «Դրանից յե-
տոյ, ամենից ծանր բանն ինձ համար «Խեղքից պատուհասը» յիշե-
լըն է, որին ես դատաւարտեցի գեղարուեստական տեսակէտից, որի
մասին արհամարհանքով ու բարձրից էի խօսում, առանց գլխի ընկ-
նելու, թէ դա մի ազնիւ, մարդասէր երկ է և եռանդուն (այն էլ
առաջին) բողոք ռուս զգւելի իրականութեան դէմ, աստիճանաւոր-
ների, կաշառակերների, անբարոյական ու անտուայ կալածատերերի
դէմ, տգիտութեան, կամաւոր ստրկութեան և այլ հազարաւոր
ընկեր դէմ: Որ մոռա՞նք եմ՝ ինչ զիզազներով է կատարւել իմ
ղարգացումը, ինչ սարսափելի մոլորութիւնների գնով եմ գնել ճշ-
մարտութիւնը, այն էլ ինչ դառն ճշմարտութիւն, որ աշխարհ
գարշելի է, մանաւանդ մեր շուրջը:

Նոր ուղղութիւնը հիմնադրատակ արաւ նրա բոլոր համոզմունք-
ները և վերջնականապէս արտայայտեց Գոգոլին գրած յայտնի նա-
մակում, որ զրւել է 47 թ. արտասահմանից, ուր Բէլինսկին գնա-
ցել էր բժշկւելու, և որն ամբողջովին մինչև այսօր դեռ չի լոյս
տեսած: Ահա ամենակարևոր կտորը. «...Ուստի դուք չէք նկատել,
որ Ռուսաստանն իր փրկութիւնը, ոչ թէ խորհրդաղգածութեան
ու պիլիտիզմի մէջ է փնտռում, այլ քաղաքակրթութեան, լուսաւո-
րութեան, մարդասիրութեան մէջ, ժողովրդի մէջ մարդկային ար-
ժանապատուութեան զգացմունք զարթեցնելով, որ այնքան դար կո-

րած էր ցնի ու աղբի մէջ: Նրան հարկաւոր են արդարութեան ու աւուղջ խելքին համաձայն օրէնքներ ու իրաւունքներ և նրանց ըստ կարելոյն խիստ զործադրութիւնը: Իսկ դրա տեղ նա մի սարսափելի տեսարան է պատկերացնում, ուր մարդիկ մարդ են ծախում:.. դա մի երկիր է, ուր ոչ միայն անձնաւորութեան, պատւի ու սեփականութեան ապահովութիւն չկայ, բայց և ուր չկայ նոյն իսկ ոստիկանական կարգ. այլ դրանց տեղ կայ միայն ծառայող գողերի ու յափշտակողների ահագին կազմակերպութիւն: Այժմ Ռուսաստանի ամենակենդանի ժամանակակից հարցերն են ճորտատիրութեան ոչնչացումը, մարմնական պատժի վերացումը, այն օրէնքների ըստ կարելոյն խիստ զործադրութիւնը, որ արդէն գոյութիւն ունին:

Ընդհանուր հայեացքների հետ զուգընթաց փոխեցին նաև նրա կարծիքները գեղարւեստի, գրականութեան և քննադատութեան մասին: Զուտ գեղարւեստական տեսակէտը կորչում է. խօսք է լինում գրողի քաղաքացիական պարտականութիւնների մասին, գնահատում է ամեն երկ այն կապով, որ նա ունի իրական կեանքի հետ, որքան հասարակական միտք է պարունակում իր մէջ. դրականութեան արժանիքը համարւում է այն, որ նա լինի հասարակական հարցերի արտայայտութիւն. քարոզում է, որ այժմ իր նշանակութիւնը կորցրել է զուտ գեղարւեստական քննադատութիւնը, որը չի ուզում ուշադրութիւն դարձնել քննադատւած երկի գրութեան ժամանակի ու տեղի վրայ, այն պայմանների վրայ, որ ստիպել են այս ինչ հեղինակին գրել իր երկը և ազդել են նրա գործունէութեան վրայ: Մի անգամից Բէլինսկու քննադատութիւնը հարստանում է նորանոր տարրերով. նա գեղարւեստական էր, այժմ մնալով գեղարւեստական՝ նա դառնում է նաև պատմական և հասարակական. զուտ քննադատից նա դառնում է քննադատ-հրապարակախօս, առաջնորդ: Նոր հայեացքների համաձայն փոխւում են և նրա համակրանքները. Շիլլերը, Զորթ-Ջանդը, Լեբմոնտովն առաջին տեղն են բռնում. Գոգոլը դառնում է հիացմունքի առարկայ իր ծաղրի համար. Ֆրանսիական զրականութիւնն սկսում է աւելի ու աւելի ուշադրութիւն գրաւել:..

Այսպիսով Բէլինսկու հայեացքների փոփոխւելու հետ, 40-թ.

սխառ Նրա քննադատութիւնն էլ, Ձեռնիշխակու խօսքերով ասած՝
աւելի ու աւելի թափանցւում էր ուս կեանքի կենդանի հարցե-
րով, աւելի ու աւելի լաւ էր ըմբռնում այդ կեանքի երևոյթները,
աւելի ու աւելի վճռական ձևով ձգտում էր պարզել հասարակու-
թեան առաջ գրականութեան նշանակութիւնը կեանքի համար,
իսկ գրականութեան առաջ՝ այն յարաբերութիւնները, որ նա պի-
տի ունենայ դէպի կեանքը, որպէս նրա զարգացումը կառավարող
գլխաւոր ուժերից մէկը: Տարեցտարի Բելինսկու յօդածներում
մենք տեսնում ենք աւելի պակաս դատողութիւններ վերացական
առարկաների մասին, կամ եթէ կենդանի առարկաների մասին են
դատողութիւնները, ապա վերացական տեսակէտից չեն. աւելի ու
աւելի գերակշռող են դառնում կեանքի տւած տարրերը:

(Վերջը լաջորդ անգամ)

ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ ԵՒ Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵԼԾՈՒԹԻՒՆԸ

(Գրականական-քննական էտիւդ)

ԿԱՐ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

II

Գեռ աշակերտական սեղանից Շահազիզեանը բազմ է ունեցել վկայ լինելու այն խորհրդաւոր իրողութիւնների, որ կատարուում էին մեր նորածիլ հրապարակախօսութեան և գրականութեան մէջ: Նրա միջի հասունացումը, նրա հայեացքների և համոզմունքների հաստատումը զուգադիպում է այն երջանիկ ժամանակի հետ, երբ Ռ. Պատկանեանը վստահացել էր խռովել ազգայինների անհոգութիւնը, երբ Մ. Նալբանդեանը իր քննադատական յօդաւանդներով մերկացնում էր հոգեորականութեան և սրան համեմատ ժամանակակիցների կեղծաւոր խաղերը: Այդ առաքինի մարդկանց յայտարարած գաղափարները գրաւում են երիտասարդ Շահազիզեանի միտքը և արձագանք են գտնում նրա սրտում: Հնութեան երգերի եղանակները դուր չեն գալիս Ռուսաստանի մայրաքաղաքում— Լազարեանց ճեմարանում—սնւած երիտասարդին: Նրան հրապուրում են նոր երգերի եղանակները, որ բովանդակում էին իրանց մէջ մի ինչ որ սիւրբիւն, սիրտ հովացնող տարր: Նոր գէնքերի շաչիւնը, նոր մըր-

¹) Տես Մուրճ № 5.

ցորդների գործունեութիւնը բնականաբար ազդում են երիտասարդ Շահաղիգեանի վրայ, թէ նրա ներքին տրամադրութեան և թէ նրա հայեացքների զարգացման վրայ, և նա սկսում է իր գրականական գործը՝ ներշնչած նոր բուրմունքներով, Նազարեանցի և Նալբանդեանի գրօշակի տակ:

Գրականութիւնը ժամանակակցութեան հայելի է. նա ցոյց է տալիս հասարակութեան զարգացման աստիճանը, նրա ճաշակն ու ձգտումները. նա ցոյցնում է իր մէջ այն դադափարական հոսանքները և իղէալները, որ տիրապետում են հասարակական կեանքի մէջ: Գեղարեստական գրականութիւնը իրականութեան կենդանագիր պատկեր է: Ժամանակակցութիւնը կարող է ունենալ շատ թեւրութիւններ. հասարակութեան առաջնորդող դադափարները կարող են լինել սխալական. այս դէպքում գրականութեան կատարելիք գերը շատ մեծ է և պատասխանատու. նա չպէտք է բաւականանայ կենդանագրելով իրերը և երևոյթները այնպէս, ինչպէս նոքա կան, այլ ներշնչելով մտաւորապէս և բարոյապէս բարձր կանգնած շրջանների իղէալներով՝ գինւի հասարակութեան առաջագիմութեան արգելքների դէմ: Մտնացոյց անել կենսական դադափարների փշերի և տատակների վրայ, այդ միայն գրականութեան գերի կէտն է. գրականութիւնը նաև պիտի մաքրի այն փշուր ճանապարհը, որ տանում է ազգերին դէպի քաղաքակրթութիւն, և հանդիսանայ պատգամախօս ցանկալի ապագայի և հերկիչ ներկայ հասարակական, անարգաստուոր անդաստանի:

Այն հեղինակը, որ չունի որոշ-գրական աշխարհայեացք, չի կարող գրականութեան ճշմարիտ սպասաւոր լինել, ապա ուրեմն և օգտաւէտ հասարակական գործիչ: Մտրակել նախապաշարմունքները, բացատել ներկայի կազմը ժամանակաւոր ազդեցութիւն է գործում ընթերցողի վրայ: Հասունանում է հասարակական գիտակցութիւնը՝ գիտող աչքերը, բնականաբար, որոնում են մի որոշ յենարան: Մեր թիւութիւնը պահանջում է իղէալ, և ով որ խորատակում է ներկայ իղէալը, եթէ միայն կամենում է ազդել մեզ վրայ և զենավարել մեզ, պէտք է տալ մի նոր կենդանի իղէալ, պէտք է տանի մեզ դէպի այն ճանապարհը, որտեղ մեր հոգեւոր շահերը կարող են ստանալ համապատասխան սնունդ: Թող մտածողը կամ գործիչը բաց

տսեն վատը, քանդեն հինը, որ փուլ գալու վրայ է, բայց և թող տան նրանց տեղ մի գրական բան, մի որոշ դաւանանք:

Այ մի հեղինակ չի կարող աջողութիւն ունենալ, երբ նա չի զեկավարում այս գրականական սկզբունքով: Յիսնական թւականներն զործիչները լաւ էին հասկանում այս սկզբունքը, և նրանց գործունէութեան ծրագիրը մշակած էր այդ ոգով: Նոքա տապալեցին գրոց լեզուն, այդ անսովի բերդը—և նրա տեղ տալին աշխարհիկ բարբառ. նոքա յայտարարեցին, որ, եթէ մի ազդ կամենում է առաջադիմել, պէտք է ցոյց տայ ինքնագործունէութեան շնորհք և ոչ ապաւինի մի դասակարգի հոգածութեան վրայ, պէտք է ինքը իր մտքի և ոգու ոյժերով զարգանայ և կատարելագործւի. նոքա քարոծեցին կեղծաւոր ազգասէրներին և եսամոլ մեծատուններին, որոնք համոզւած էին, թէ իրանք արտօնւած իշխանաւորներ են, և այդ եղիպտական մոլմիաների տեղ ասպարէզ բերին պարտաճանաչ և եռանդուն երիտասարդ ոյժեր: Նրանց շրջանումն են կերպարանել Ս. Շահազիզեանի զաղափարները, նրանց քաղաքացիական հրաւերին է արձագանք տւել Վ.Լեոնի վշտի» հեղինակը:

Այժմ տեսնենք, թէ ինչ է տւել հայ հասարակութեան Ս. Շահազիզեանը և ինչ գրականական վաստակներ ունի նա: Խօսելով Ս. Շահազիզեանի վաստակների մասին, մենք կը կենդրոնացնենք մեր ուշադրութիւնը նրա գրականական փառքի և ժողովրդականութեան գլխաւոր և, գուցէ, միակ աղբիւրի վրայ—Վ.Լեոնի վիշտը: Երկասիրութեան վրայ, որ լոյս աշխարհ եկաւ 1864 թւականին: Ս. Շահազիզեանը ասպարէզ եկաւ իր նախորդների զաղափարակոծութեան, տենդային և ցնցեղական գործունէութեան միջոցին: Նա իր ուսուցողական պոէմայով փորձ փորձեց զեղարւեստօրէն վերաբտադրել ժամանակի արդարացի պահանջները. նրա բռնած զիրքը դէպի իրականութիւնը բացասական էր: Վ.Լեոնի վիշտը պոէման գրւած է այն ժամանակ, երբ եւրոպական և սուս գրականութեան մէջ նկատուում էր մի տեսակ բայրոնամոլութիւն, երբ սկիստիցիւմը և հիասթափւածութիւնը մոգա էր, ուստի զարմանալի չէ, որ մեր հեղինակն էլ ազատ չէ մնացել այդ հոսանքից:

Բայրոնականութիւնը մի բարդ գրականական երևոյթ է. դա արեւմտեան կեանքի և քաղաքակրթութեան հարստացող դաւակ է: Նրա

բնորոշ յատկանիշը համաշխարհային վիշտն է, նրա ծանրականու-
թեան կենտրոնը անհատն է, որ բողոքում է տիրապետող հասկա-
ցողութիւնների և տրադիցիաների դէմ, որ չի ուզում ճանաչել դա-
րերի ընթացքում բորբոսնած բարոյական կոդեքսը և ձգտում է
ազատուել սրա ճնշող ազդեցողութիւնից: Բայրոնականութիւնը մի
տեսակ ջատագովութիւն է անհատի, որ լուրջ և անկեղծ վշտանա-
լով հանդերձ՝ երբեմն գիմակաւորւում է շինծու և արւեստական
վշտականութեամբ: Բայրոնող անհատը երբեմն աջնպէս է յափշտակ-
ւում իր փողբիկ զգացմունքներից և կրքերից, որ երեւակայում է
իրան հետաքրքրական ուրիշների համար և սկսում է կոտորաւել,
մի ինչ որ բան ձեւանալ, ֆանֆարոնութիւն անել: Ձեական վիշտը
ունեցել է շատ հասարակական և գրականական ներկայացուցիչներ,
վշտաբեկ երեսը մի տեսակ դիրք էր տալիս սալոններում: Չալլի-
Հարոլդեան զգեստը, Թախժալի և դունատ դէմքը, հիասթափ
հայեացքը և մեյամաղձ խօսքը գրաւում էր շատերին: Այս տարա-
փոխիկ գրականական հիւանդութեան ժամանակն է լոյս տեսնում
«Լեոնի վիշտը»:

Յիշենք վէպի բովանդակութիւնը հեղինակի յայտնած մտքերի
զարգացման և կապակցութեան հետեւելու համար: Իր նախերգանքի
մէջ բանաստեղծը յայտարարում է, որ տրամաբանութիւնը և ող-
ջամտութիւնը Թեյադրում են իրան դրել ժամանակակից աշխար-
հիկ լեզուով, արձակում է կաջժակ և որոտ, շանթեր ու թունալից
խօսքեր խաւարամիտների բանտիւր, որ չի ուզում հասկանալ ժամա-
նակի պահանջը՝ խօսել ժողովրդի հետ սրան հասկանալի լեզուով և
մեծամտութեամբ պաշտպանում է գրաբարը: Բանաստեղծը բանե-
ցնում է խիստ և ինքնահաւան լեզու իր հակառակորդների դէմ և
իր բանակուսական ձեռով, չափազանց բարձր տոնով սկսւած խօսքով
թուլացնում է իրան առաջնորդող, անշուշտ համակրելի գաղափարի
նշանակութիւնը:

«Առասպելական կեղծիակ տիտաններ

Թող իսկականին ընդունեն պատկեր.

Հրէշների շարքն երեւութանան,

Եւ բոլոր ցնորք լայնափոր հնութեան:

Վեհափառ սագեր, քնար լարեցէք,

Ո՞չ ձեր պապերը Հռոմ փրկեցին.
 Սռանց հանաքի զուռնա փչեցէք...
 Ծաղրածունների գործերն ցաւազար,
 Ազաչում եմ ես, ժամ մի դադարեն,
 Որոնք համոզմունք, ուխտեալ զազափար
 Այսօր պնդում են, որ էզուց հերքեն.
 Անտաշ մրողներ, որ գարշ քսութիւն
 Հանապաղ ունիք ձեզ հաղորդակից,
 Կապեցէք սակաւ ձեր սողուն լեզուն...

«Լեոնի վիշաք» էջ 12

Հանդէս է գալիս վէպի հերոս Լեոնը: Հեղինակը քիչ տեղեկութիւն է տալիս նրա մասին: Լեոն մի հին հայ տնից է, ունի մի ծեր մայր, որին սիրում է կարօտագին սիրով, ունի հակառակորդներ, որոնք լարում են իր դէմ թշնամական որոգայթներ: Թէ ինչ կրթութիւն է ստացել նա և ինչ անցեալ ունէր, մեզ չայտնի է, Վիայն այսքանս զիտենք՝—

«Լեոն իւր բոլոր ուսման շրջանից
 Այսքան ինչ կարաց հետեւեցնել,
 «Ես պիտի լինեմ մարդ ազատ, անբիծ»,—
 Եւ ես կարող եմ իմ ազգը սիրել»: էջ 24

Անհատական մաքրութեան և ազատութեան դադափարով է դուրս գալիս Լեոնը կենսական ասպարէզ: Անշատուժը հարազատներից, մտերիմ բարեկամների բացակայութիւնը և ազգային վիճակը դրոշմել են նրա ճակատի վրայ մի ինչ որ թախիծ: Նրա բնիկները «սնափառ» և պճնասէր, աշխարհի վայելքների ետևից ընկած, առանց ձգտումի և նպատակի մտշում են իրանց կեանքը, իսկ ինքը, տեսնելով իր ազգի վէրքերն ու արատները՝ ուխտում է օգնել նրան, որին նա անւանում է:

Խաւար, նիւթապաշտ, երկչոտ և վհատ,
 Սիրող չարութիւն և փառք անցաւոր
 Եւ սորա համար առաւ նա իւր ձեռն
 Այս մինակ հնարս, որոշեց ջրել

Թիւր սկզբները այն կորստաբեր,
Որով հայի կեանքն իսպառ էր խախտուել: էջ 29

Յուսահատ և վշտաբեկ թէ կեանքի չարիքներից, թէ իր սիրոյ անաջողութիւնից և թէ հայրենիքի ներկայից, որ մի աքսորանքի խուց է երևում նրան, Լեոնը «խոցւած ուղեղով» է թափում իր արտի կսկիծը.

Մեր ցաւերի մասին: Ճարտասանական ձևերով և ձայնի պէսպէս հնչիւններով նա խրախուսում է հայրենակիցներին զարթել քնից, խրատել դառն պատմական անցքերից. նա պախարակում է այն հայրենասէրներին, որոնք չեն ընդունում ներկայի պահանջները, և անւանում է նրանց «ապօրինաւոր որդիք», «Գեհնի որդիք» և այլն ածականներով: Հովացնելով իր այրւած սիրտը հակառակորդների նկատմամբ՝ Լեոնը քարոզում է ուսում և կրթութիւն, որոնցով երևան է դալու «ոսկի ապագան», մի հանգամանք, որ «զարդարելու է հայրենասէրի ճակատը դափնի պսակով»: Հեղինակը ամեն կերպ ճգնում է ներկայացնել մեզ իր հերոսին, ինչպէս անզուգական հայրենասիրի և, երկար ու ձիգ խօսացնելով նրան ազգային շահերի մասին:

Լեոնի սիրտն ու միտքը ալէկոծւում են. նա հանգիստ չունի ոչ ցերեկը և ոչ գիշերը: Աշխարհը մի զգւելի բանտ է թւում նրան. նա ուզում է թողնել հիւսիսը, բարեկամներին և այն չքնաղ կոյսին, որին սիրել է «պղաժողական» սիրով, և սլանալ դէպի կարօտած հայրենիքը: Տալով իր «մաքուր հրեշտակին» վերջին հրաժեշտը՝ նա ուղղում է իր ճանապարհը դէպի իր մայր երկիրը: Հեղինակը օժտում է իր հերոսին ամեն բարեմասնութիւններով և պատում է նրան մեծութեան շքով: Լուսաւորւած և առաջադէմ Լեոնը ջերմ ազգասէրի զգեստը հագին, սրտամոմոք, մտրակը ձեռքին այցելում է իր հայրենակիցներին: Նա փրփրւում է խաւարասէր ազգայինների նեղհայեացութիւնից, ազգի տգիտութիւնից և յետամնացութիւնից. նա տեսնում է, որ հայը չունի լուսաւորւած վարժապետներ ու քարոզիչներ, չունի դպրոցներ և «ուսումնառութեան» աշակերտներ: Լեոնը, ըստ երևութիւն, հեռանում է իր ուսումնավայրից դէպի հայրենիք քաղաքացիական պատրաստ ծրագրով, գործելու և օգուտահատ

լինելու տենչով, սրտի ու մտքի համոզմամբ, գնում է լոյս սփռելու, նոր օկզբունքներ մտցնելու կեանքի մէջ, հիւանդ եղբօրը վրկութիւն գնել և ցաւերը փարատել, գնում է ուղեկցութեամբ Հէյնէյի, Գէօթէյի, Բայրընի, Շեքսպիրի և կոմս Էմանուէլի: Երկար ճանապարհորդելուց յետոյ՝ նա գալիս է մի քաղաք, որտեղ վրդովւած ժողովուրդը միաբերան կամենում է հրապարակ հանել իր հովւի անարգ արարքները, մի երեւոյթ, որ ցոյց է տալիս թէ ժողովուրդը ունի որոշ պահանջներ դէպի իր հոգեւոր պաշտօնեան և ընդունակ է կարիք դէպքում դատաւիտել յանցաւոր գործիչներին: Մի առգէտ և լարծաթասէր հասարակութեան մէջ ինքնաճանաչութեան այս նշանը անշուշտ մխիթարական է և կարող է համարւել քաղաքացիական կեանքի և առաջադիմութեան գրաւականներից մէկը. բայց Աւոնը վհատում է և ոչ մի մխիթարական բան չի գտնում հայ հասարակութեան մէջ:

Թողնենք հարցի այդ կողմը. Աւոնը ուզում է միջամտել, բան խօսել, հասարակական խղճի և բողոքի արտայայտիչ լինել,— և ով հիասթափում,— հովիւը շտապում է հիւսիս, որտեղ նա պիտի որոնի արդարադատութիւն. բաւական է այդ, որ Աւոնը լռի, գործ չկատարի. նա յուզւում է սրտում, և միայն... նա շարունակում է իր ճանապարհը. բնութեան գեղեցկութիւնները, հրաշալի տեսարանները չեն գրաւում նրան. դառն վիշտը մաշում է նրան. ծանր խորհուրդներով պաշարւած՝ նա ոչինչ չի տեսնում և, կարծես, սաւառնում լինի.

Նորա ներքին կեանք-թախիծ տրտմութեան,
Մտքի շարժումները—ալէկոծ մի ծով:
Ուրախութեան դառն, կնքած յաւիտեան,
Այլ փչելու չէ նրան գարնան հով:
Նորա մատաղ սիրտ, որ երբեմն պայծառ
Ծաղկում էր որպէս պարտէզ նազելի,
Խեղդւած կուրծքի մէջ, քամում է իսպառ
Փորձութեան բաժակ, որ նորից լցնի:

Մինչև այժմ Աւոնը ներկայանում է մեզ իբրև մի խօսող գործիք հեղինակի առանց որևէ գործողութեան. նա բարձրութիւնից

է ճառում հայի վիճակի մասին, դիտողութիւններ է անում ազգային պակասութիւնների վրայ, նա տրտմում է իբրեւ դիտող և հանդիսատես կեանքի, իբրեւ վերացական տրտմակ (печальник): Հետեւելով հերոսին՝ մենք տեսնում ենք նրան Կովկասում. նա հիանում է հայուհիների գեղեցկութիւնից. Ելլադայի և Խաւիշի փառաբանած գեղեցկութիւնը ոչինչ է նրա տեսած գեղի առաջ. բայց, դժբաղդաբար, նա չի նկատում իր գեղածիծաղ քոյրերի մէջ հայութեան նշոյլ—նրանք չ'զիտեն իրանց մայրենի լեզուն և չունին ազգային դաստիարակութիւն:

Նա երկար ու բարակ քարոզ է կարդում հայ աղջկերանց, յիշեցնելով նրանց հինգերորդ դարու հայ կանանց առաքինութիւնները և, երբ լսում է նրանցից, որ հայութիւնից օտարանալու մեղքը իրանցը չէ, այլ ծնողների, մտրակում է սրանց յանցաւոր անհոգութիւնը և լոկ շահախնդրութեան անձնատուր լինելը: Հայ աղջիկը, ասում է Լեոնը, անկիրթ է և անպատրաստ ամուսնական պարտականութիւնների համար. նա կեանք է մտնում և խաղ ոլիկ դառնում իր ամուսնու մարմնական ցանկութիւնների. նա չունի կամք և իրան վայել դիրք, նա հարձ է: Սրտմտելով այս հասարակական չարիքից՝ Լեոնը բացականչում է.

«Բաց սրտիդ վէրքը աշխարհիս առաջև,—

Անարգարութիւն թող այսօր մեռնի.

Թող հորիզոն գաջ փրկութեան արև.

Գեղեցկութիւնդ թող փառօք զարթնի:

Ով հայոց հայրեր և հայոց մայրեր,

Ինչով կարող էք ձեր խիղճը սրբել...

.....

Մանր է ձեր գործը քան թունով թափած

Անէծք ու նզով դառն յանցաւորի.

Ձեզ ներելու չէ երկնային Ասուած.

Ձեր առաջ է դժոխք, ծրն դատաստանի: Էջ 91

Լեոնը ամբիոն է բարձրացել, նա շարունակում է իր խօսքը դէպի հայ ծնողը, որ «դարան է գործում իր զաւակներին» և մտածում է միայն իր գրպանի մասին. բացատրում է նրան հարստու-

թեան անցողականութիւնը և անշուք մահ է գուշակում, խրատում է բարի գործ գործել, որ պայծառ է ֆնում ինչպէս պարզ երկինքը:

Ատենաբան ինտելիգենտը կարծում է, որ ազգի ուշքն ու միտքը իրան է դարձրած, որ ամենքը մտածում են այն մասին, թէ ի՞նչ կ'ասի նա, և ինչո՞ւ նրա ճակատի վրայ գրոշմած է վշտի և մտա-տանջութեան կնիքը. նա յայտնում է ի լուր բոլորի, որ իր արտմու-թեան պատճառը հայն է, որ «կեղտի գերի» է գաւել:

Այսպէս է ճարտարում Լևոնը. քարոզը նրա համար, կարծես, մի փեշակ լինի, վիշտը՝ մի վարագոյր, հայրենիքը—բեմ, հայրե-նակիցները—հանդիսականներ, իսկ ինքը՝ մի գերասան է, որ կա-տարում է հանգամանքին համապատասխան գերը: Նա հաւատացած է, որ նզովք կարդալով հասարակութեան վրայ՝ կարելի է բուժել նրա վէրքերը, և խաւար հայրենիքը լոյս Եւրոպա դարձնել¹. զիտու-թեան անուշով խօսող Լևոնը այնքան միամիտ է ձևանում, որ կար-ծում է, թէ, տալով հարստականներին «անառակ», «աչքածակ գայ-լեր» տիտղոսներ և վախացնելով նրանց «անառակ», «գերեզմանի» «գիշատի» ագռաւների ուրւականներով՝ կը դարձնի նրանց օրինա-կելի ծնող և հասարակութեան պիտանի զաւակներ:

Լևոնը յագեցնում է իր ատենաբանական ծարաւը. նա մի նւագ լուծ է, իսկ նրա ստեղծիչ-հեղինակը հրճւում է իր հե-րոսի ճարտասանական ձիրքից, նրա սրտից ու մտաւոր հարստու-թիւնից:

Չորրորդ գրքի սկզբում բանաստեղծը նկարագրում է իր հայ-րենիքին տիրող բարոյական և մտաւոր մեռելութիւնը, յայտնում է իր զմայլանքը «կանաչ Հայաստանի».—այդ «եզեմնական դրախտի» գեղեցկութիւնների մասին. հայրենի բնութեան նկարագիրը, լիրի-կական յետադարձութիւնները (էջ 109—101) իրանց պատկերաւո-րութեամբ և գոյների սրայծառութեամբ այնքան աջող են, որ ակներև է այդ դէպքում հեղինակի բանաստեղծական ճաշակը կամ ջիւղը: Այս անկեղծ, ոգեզմայլ նկարագրութիւններից յետոյ բանաստեղծը մատ-նանիչ է անում հայերի ճնշւածութեան, քաղաքացու կեանք վարե-

¹. Թէ բանաստեղծը այդպէս է հաւատացած—այդ մենք չենք տես-նում:

լու անկարելիութեան, օրէնքի և արդարադատութեան բացակայութեան, անձի և զոյքի անապահովութեան մասին նրանց մայր երկրում: Խաւար Ասիան, որ սնուցանում է անկշտում գաջներ և պատառոտում անմեղ գառնուկներ, բարբարոսութեան և անշարժութեան մի բուն է, որտեղ կենդանի խօսքը ցնդում է օդի մէջ: Ահա և Առնը իր բուն երկրումն է. ամաշուժիւն է և կենդանութեան ոչ մի նշոյլ: Առնը զանազան հարցումներ է անում բնիկ երկրին, և ոչ մի պատասխան. նա տեսնում է անընդհատ աւերակներ, բնակիչների լռիկ-մնջիկ խոնարհումը իրանց վիճակին, նա չի տեսնում ոչ լոյս, ոչ ծաղիկ կենդանութեան. նա անդգայանում է տխուր տեսարանից. նրա ճառերի աղբիւրը չորացել է, նա հազիւ բացականչում է «ցաւեցէք մարդիկ, ցաւիր Հայաստան». նրա երեակայութիւնը ջարութիւն է տալիս նախնեաց փառքի ներկայացուցիչներին—Սահակ ու Մեսրոպին, Ներսէս ու Ղազարին, ազատամիտ Ամբրոնացուն, որոնք սրտի հեծեծանքով պարսաւում են կղերի «ազգադրութ» արարքները: Հնութեան ուրաւականների բերանով Առնը ջանդիմանում է ժամանակակից հոգեւորականութեանը, բացատրում է ճշմարիտ կրօնի վեհութիւնը, որ «ոչ ծես է և ոչ կոյր հաւատ», և նրանց անմահական խօսքերից՝ յետոյ ինքն էլ նոր կրօն է զգում: Այժմ նա գտնում է, որ եզիտութեան և կրօնի մէջ հակառակութիւն չկայ» և բողոքում է խղճի ազատութիւնը ճնշող և կրօնի մէջ «քաբտիչ սերմեր» սփռող մարդկանց դէմ: Այս անմխիթար երեւոյթները դիտելուց յետոյ Առնը գալիս է այն եղրակացութեան, որ ազգի փրկութիւնը լուսաւորութեան և դպրոցների մէջ է. մեզ հարկաւոր է, ասում է նա, ակադեմիա հոգեւոր կեանքի—ակադեմիա մայր-էջմիածնում. «նա բողոքում է, որ էջմիածնի անյատակ զանձանակը ոչ մի ազգաշէն գործի չի ձեռնակում. վերջապէս, հեղինակը խղճահարւում է իր հերոսի աչքի ընկնող բանաւոր արտմակութիւնից (печальничаніе) և յորդորում է նրան իմաստասիրել իրական կեանքը», խօսքը «գործ» դարձնել: Առնը խոստովանում է, որ «չառ խօսեց», «բայց» քիչ գործեց, իսկ մենք կ'ստենք ընթերցողի հետ՝ ոչինչ չգործեց. հայրենիքը պիտի սպասի, որ Աստծոյ օգնութեամբ Առնի սիրտը նոր յուսով լցւի և այն ժամանակ «նա կը տայ իր կեանքը գործին»: Խեղճ հայ ազգ. նա պիտի

սպասի „у моря погоды“ թէ երբ բարեշէն հիւսիսում կրթւած ազգասէրը, բարեկեցիկ երիտասարդը սիրտ կ'առնի և յետոյ կ'բարեհաճի գործելը:

Լեոնը ականատես է տգէտ ժողովրդի վիճակին, հարստահարիչ մեծաւորների բռնութեան, մաքուր կրօնը պղտորող կղերին. բայց նա միայն ճառում է, քարոզում է, անիծում է, մտրակում է,— և մաքուր սրտով ու խղճով հնաւանդում հայրենիքից, համոզւած լինելով, որ նա կատարել է մի անօրինակ քաղաքացիական քաջութիւն: Վշտադէմ Լեոնը կամեցաւ հային լոյս պայծառութեան», իսկ մենք, հեղինակի դրդմամբ, պիտի մեկնենք նրան մեր բարեկամական ձեռքը և ցանկանք լօրեր հանգստեան: Հերոսը կատարեց մի զբօսանք, ցոյց տւեց բանաւոր ազգասիրութիւն, գթութիւն և վշտակցութիւն, չորդորեց զէպի առաջադիմութիւն:

(Վերջը գալ համարում)

ԻՆՉ Է ԱՐԻԵՍՏԸ ԸՍՏ ՏՈՒՍՏՈՅԻ

Сочиненія графа Л. Н. Толстого.—Часть пятнадцатая. Что такое искусство. Москва, 1898:

Ե. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅԻ

Պոմն Լև Տոլստոյ՝ը նորերս հրատարակել է մի նոր նշանաւոր գրութիւն «Ինչ է արւեստը» (Что такое искусство) խորագրով որ աւարտել է նա անցեալ 1897 թւականին: Խնդիրը նորան երկար տարիներ է զբաղեցրել: Ան կատարեցի, ինչպէս կարողացայ, 15 տարի ինձ զբաղեցնող աշխատութիւնը՝ ինձ մօտիկ առարկայի— արւեստի մասին... (ասում է նա իւր հետազոտութիւնների «եզրակացման» մէջ, էջ 220). 15 տարի առաջ ես սկսեցի գրել արւեստի մասին, կարծելով թէ մի անգամ որ սկսեմ՝ առանց ընդհատելու կը վերջացնեմ աշխատութիւնս. բայց բանից երեւաց, որ իմ մտքերը այդ առարկայի մասին դեռ ևս այնքան անորոշ էին, որ ես չկարացայ ինձ համար բաւարար չափով բացատրել նոցա: Այդ ժամանակահատից դէս, շարունակ մտածում էի այդ առարկայի վրայ և վեց-եօթ անգամ փորձեցի գրել, բայց ամեն անգամ, բաւականին շատ գրելով, ինձ անկարող էի զգում գործը մինչև վերջ հասցնել և թողնում էի աշխատութիւնը: Այժմ վերջացրել եմ այդ աշխատութիւնը, և, որքան էլ վատ շինած լինեմ, բայց յոյս ունիմ, որ ուղիղ է իմ հիմնական միտքը այն ծուռ ճանապարհի մասին, որի վրայ կանգնած է և որով ընթանում է մեր հասարակութեան արւեստը, զորս պատճառի մասին, և թէ այն մասին թէ ինչու մն է կացանում արւեստի իսկական կոչումը,—և որ

այդ պատճառով իմ աշխատութիւնը, թէև շատ անլիակատար, շատ ու շատ պարզաբանութիւնների ու լրացումների կարօտ, զուր չի կորչիլ, և արւեստը, վաղ թէ ուշ՝ իւր այժմեան ծուռ ճանապարհից դուրս կը գայ:

Տոլատոյի այս նոր գրաւածքը, որպէս կարող է տեսնել ընթերցողը արդէն նորա այս մի քանի տողերից, կրում է յեղափոխական բնաւորութիւն, որպէս նորա բոլոր վերջին գրաւածքները ասհասարակ Գրաւածքի ոյժը նորա մէջն է, որ Տոլատոյը արւեստի մասին իւր կազմած գաղափարը կապել է մի ընդհանուր աշխարհայեացքի հետ՝ մարդուս կեանքի և մարդկութեան մասին, որով արւեստը նա սերտ կապում է մարդու և մարդկութեան բարօրութեան խնդրի հետ:

Տոլատոյը ուշք է դարձնում նախ այն հանգամանքի վրայ, որ արւեստի պահպանութեան վրայ կառավարութիւնները միլիոններ են տալիս իբր օժանդակութիւն ակադեմիաներին, կոնսերւատորիաներին ու թատրոններին. ամեն մեծ քաղաքում ահագին շինութիւններ են կառուցւում թանգարանների վրայ, ակադեմիաների, կոնսերւատորիաների, գրամատիկական դպրոցների վրայ՝ ներկայացումների ու կոնցերտների համար: Հարիւրաւոր հազար բանւորներ, որպէս՝ քարտաշներ, ներկարարներ, հիւսնէր, պատաստողներ, դերձակներ, վարսավիրաներ, ակնագործներ, բրոնզագործներ, գրաշարներ իրենց ամբողջ կեանքը անց են կացնում արւեստի պահանջները լրացնելու համար, այնպէս որ ներկայումս, ըստ Տոլատոյի, հազիւ թէ մարդկային որ և է ուրիշ գործունէութիւն, բացի պատերազմականը, այնքան ոյժեր զբաղեցնում լինի, որքան արւեստը: Դռքա այդ գործունէութեան համար են ծախսում: Բայց և ամբողջ կեանքեր նորան են նւիրւած և նորան են զոհւում, որպէս պատերազմի համար. հարիւրաւոր հազար մարդիկ փոքր հասակից նւիրում են իրենց կեանքը՝ ոտները արագ պտուղանների վարժեցնելու, (պարողներ), միւսները՝ որ սովորեն մասնեղով շատ արագ ջոկել ստեղծները կամ լարերը (երաժիշտներ), երրորդները (նկարիչներ) նրա համար, որ ներկերով նկարեն ամեն ինչ որ կը տեսնեն. չորրորդները՝ որ կարողանան ամեն նախադասութիւն շուտ տալ ամեն կերպ և ամեն բառին հանգ գտնել: Միմիայն Պարիզում՝

30.000 նկարի: Կայ. նոյնքան էլ թող լինի ամբողջ Գերմանիայում, նոյնքան Անգլիայում, նոյնքան Ռուսիա, Իտալիա և մանր տէրու-
թիւններում միասին առած, նոյնքան Ամերիկայում: Հաւասար
թւով էլ երաժիշտներ, երգիչներ և գեղարւեստական գրողներ,—
և այլն: Եւ ստացւում է միլիոնից աւելի գեղարւեստագէտներ, որոնք
արտադրում են տարեկան առնւազն եռապատիկ թւով գեղարւեստի
գործեր, իսկ մի տասնեակ տարում տասն անգամ աւելի, այնպէս որ
բնաւ հնարաւորութիւն չկայ որ մի մարդ կարողանայ այդքան դործ-
քերի հետ ծանօթ լինել (տ. էջ 161): Ըստ Տոլստոյի, այդ թիւը
արդէն ցոյց է տալիս որ դոքա առհասարակ իսկական արւեստի
գործքեր չեն, և չնայած դորան՝ դոքա հանգիստնում են իբրեւ
արւեստ և խրախոջս են գտնում մեր ժամանակում: Այդքան գործ-
քեր արտադրելու համար ժամանակիս արւեստագէտները դիմում
են չորս միջոցների՝ փոխառութեան (займствование), նմանողու-
թեան (подражание), ցնցման (поразительность, эффектность)
և հետաքրքրութեան (занимательность),—բաներ, որոնք իս-
կական արւեստի յատկութիւնները չեն (տ. գլուխ XI, էջ
118-119): Փոխառութիւնը կայանում է նրանում, որ գեղար-
ւեստի առաջնայ երկերից փոխ են առնում կամ ամբողջ սիւժէներ
(բովանդակութիւն) և կամ ամենքին յայտնի բանաստեղծական երկերի
աւանձին գծերը և այնպէս են փոխադրում նոցա, որ մի քանի
յաւելումների հետ ի միասին նոր բան երեւան: Տոլստոյը ամբողջ
էջեր է նւիրում (էջ 121-128) այդ չորս եղանակների պարզաբա-
նութեան և յայտնում, որ արւեստի այդ կեղծիքներին նպաս-
տում են երեք բան՝ 1) գեղարւեստական երկերի համար գեղաբ-
ւեստագէտներին տրուող նշանաւոր վարձատրութիւնները և հետեւա-
պէս՝ գեղարւեստագէտների փէշակաւորութիւնը, 2) գեղարւեստա-
գիտական քննադատութիւնը և 3) գեղարւեստի դպրոցները: Գրքի
մի գլուխը (XII) նւիրած է այդ նիւթին, իսկ յաջորդ գլուխը ամ-
բողջապէս նւիրած է Ռիխարդ Վագների «Նիբելունգներ» օպերայի
նկարագրութեան, ցոյց տալու համար թէ մեր ժամանակում մար-
դիկ որքան զուրկ են իսկական գեղարւեստը հասկանալու ընդունա-
կութիւնից և որքան սովոր են գեղարւեստ ընդունել այն առարկա-
ները, որոնք նորա հետ ընդհանուր ոչինչ չունին: Մի այլ գլուխ

(X) Տոլստոյը տեսութեան է առնում Ֆրանսիական իմպրեսիոնիստներին, սիմուլիստներին, դէկադէնտներին, մանաւանդ նոցանից ամենատաղանդաւոր համարւածներին՝ Բոդլէրի և Վերլէնի գրւածքները:

Ամբողջ գրքի մէջ, մանաւանդ մի քանի գլուխներում, ցանւած են ամբողջ լուսաւոր աշխարհին յայտնի անուններ, որոնք գնահատութեան են ենթարկւած՝ իսկական արւեստի մասին իւր՝ Տոլստոյի՝ կազմած գաղափարի տեսակէտից. Համբրոսի Իլլիադան և Ոդիսիականը, Սոփոկլէս, Էսքիլէս, Եւրիպիդէս, Արիստոփան, Ասուածաշունչի գրքերը, Դանտէ, Տասսօ, Միլտոն, Շէքսպիր, Գէթէ, Շիլլէր, Վ. Հիւգօ, Պուշկին, Գոգոլ, Դոստոեւսկի, ինքը Տոլստոյ, Դիկկէնս, Զոլա, Իբսէն, Մետերլինգ, Զորջ Ելլիոտ, և ուրիշներ. Բախ, Բեետհովէն, Վագնէր, Բերլիոզ, Բրահմս, Ռիխարդ Շտրաուս, Շոպէն, Լիստ և ուրիշներ. Ֆիլիսոս, Ռաֆայէլ, Միքէլ-Անջելօ և այլք:

Տոլստոյի մի գերազանց յատկութիւնն է՝ խօսել պարզ, անկեղծ. դորա համար էլ նա օրինակներ բերում է իսկական հեղինակներից ու առանց քաշւելու, համարձակ, որպէս մէկը, որը կամենում է ամբողջապէս հասկացւած լինել:

Տոլստոյի այս գրւածքում շատ կուռքեր վար են դնում, և շատ անսպասելի կերպով, — բայց միշտ համաձայն իւր դաւանանքին: Այդ դաւանանքի ճշդութիւնից կախւած է նաև հին ու նոր ստեղծագործողների մասին Տոլստոյի յայտնած դատաւճիռների արժէքը: Անցնենք ուրիմն Տոլստոյի գեղարւեստական դաւանանքին և այն քննադատութեան, որին նա ենթարկում է ժամանակակից արւեստագիտութիւնը կամ էստետիկը:

Տոլստոյի հայեացքները պարզաբանելուց առաջ՝ անհրաժեշտ ենք համարում նախ ներկայացնել այստեղ արւեստագիտութեան (էսթետիկի) մասին յայտնած բազմաթիւ նշանաւոր գրողների կարծիքները, որովհետև միայն այդպիսով կարելի է տեսնել թէ ինչումն է կայանում Տոլստոյի ըմբռնողութեան ինքնուրոյնութիւնը: Այդ գրողների հայեացքները առաջ են բերւած զխաւորապէս երկու հեղինակների գրւածքներից. «Շասլէր. — Արւեստագի-

տուլթեան քննական պատմութիւնը (Schassler.—Kritische Geschichte der Aesthetik. գերմաներէն. 1872), և Վնայո — Գեղեցկի Փոլսոփայութիւնը, (Knight.—The philosophy of the Beautiful. անգլիերէն):

Հարկ ենք համարում, սակայն, նախազգուշացնել ընթերցողներին. էսթետիկի մասին գրողները, ամենամեծ մասամբ, եղած են մետաֆիզիկներ. նոցա տւած սահմանումները (définitions) մեծ մասամբ խրթին են և պահանջում են ընթերցողից լարւած ուշադրութիւն: Մետաֆիզիկական ըմբռնումը առաջացրիւ է նաև մետաֆիզիկական լեզու. և մենք դեռ աշխատել ենք բնագիտութիւնի տւելի հասկանալի լինել:

Էստէթիկը, կամ գիտութիւնը արւեստի մասին, գոյութիւն ունէր Յոյների և Հռոմացիների մէջ. Սոկրատէս, Պլատոն, Արիստոտէլ որպէս նաև էպիկուրեանները—Սենեկա, Պլուտարխ, Պլուտին—յայտնած են հայեացքներ արւեստի մասին. բայց IV դար Քր. յետոյ ընդհատուած է այդ գիտութիւնը և երկար դարեր մոռացութեան արւում: Նոր էսթետիկը սկսուած է 18-րդ դարում, 1750 թ-ին, գերմանացի Բաումգարտէնի¹ ղից. հետևապէս այդ գիտութիւնը 150 տարւայ անցեալ ունի: Այդ ժամանակաւ ընթացքում էսթետիկի մասին գրել են անթիւ գրքեր և յայտնել շատ հայեացքներ նորա էոթեան մասին: Բաումգարտէնը (ծն. 1714, † 1762 թ.), որոշեց էսթետիկը այս կերպ. տրամաբանական (լոգիկական) իմացականութեան առարկան է ճշմարտութիւնը. էսթետիկական (այսինքն զգայական) իմացականութեան առարկան է գեղեցկութիւնը: Գեղեցկութիւնը այն Կատարեալն է (աբսոլյուտը), որ կարող է գիտակցել զգացմունքը: Ճշմարտութիւնը այն կատարեալն է, որ կարող է գիտակցել խելքը: Բարին բարոյական կամքի ձեռք բերած կատա-

¹ Մենք ազդեղ հետևում ենք Տոլստոյին, թէև պիտի նկատենք որ արւեստի պատմութեան մէջ չայտնի է Աբբէ Դյուբօ (abbé Dubos), որը դեռ ևս 1719 թւականին իւր *Réflexions critiques sur la poésie et la peinture* աշխատութեան մէջ առաջինը հարց դրեց ազգերի գեղարւեստական ընդունակութեան զանազանութեան պատճառների մասին, և գեղարւեստը որպէս սոցիալական երևոյթ նկատեց, թէև դորան շատ անբաւարար պատասխան տւեց:

րեալը: Գեղեցկութիւնը ստացւում է համաչափութեամբ, այսինքն՝ մասերի կարգաւորութեամբ իրենց փոխադարձ յարաբերութիւնների մէջ, և նոցա յարաբերութեամբ դէպի ամբողջը: Իսկ գեղեցկութեան նպատակն է՝ ղիւր զալ և ցանկութիւն առաջացնել: Գեղեցիկը իւր կատարելութեամբ յայտնւում է բնութեան մէջ, և այդ պատճառով բնութեան նմանելը արւեստի բարձրագոյն խնդիրն է:

Բառամգարտէնի այդ հայեացքին հետեւեցին Մէյեր, Էշէնբուրգ, Էբերհարտ. միայն թէ սոքա ջոկեցին ղիւրեկանութիւնը՝ գեղեցկութիւնից:

Այլ կերպ որոշեցին Գեղեցիկը Բառամգարտէնից յետոյ անմիջապէս երեցած մի շարք գրողներ՝ Շիւց, Ջուլցէր, Մենդէլսոն, Մորից, որոնց համաձայն արւեստի նպատակն է ոչ գեղեցիցը, այլ բարին: Եւ ահա ինչպէս. ըստ Ջուլցէրի (1720—1779) գեղեցիկ կարող է ընդունել միմիայն այն, ինչ իւր մէջ բարին է պարունակում. մարդկութեան կեանքի նպատակն է հասարակաց կեանքի բարօրութիւնը. դորան հասնում են բարոյական զգացմունքի կրթութիւնով, և այդ նպատակին պէտքէ ստորագրւի արւեստը: Գեղեցիկը այն է, ինչ առաջացնում է և կրթում այդ զգացմունքը: Գրեթէ նոյնն է ասում Մենդէլսոնը (1729—1786), որի համաձայն արւեստը կայանում է նրանում, որ զգացմունքով ազօտ կերպով ձանաչած գեղեցիկը հասցնւում է մինչև ճշմարիտը և բարին. իսկ արւեստի նպատակն է՝ բարոյական կատարելութիւն:

Այդ ուղղութեան էսթետիկոսների համար գեղեցիկ իդէալն է պատուական հոգի—պատւական մարմնի մէջ: Այսպիսով այդ էսթետիկոսների մօտ կատարեալը (աբսոլյուտը, բացարձակը) այլ ևս չի բաժանւում երեք տեսակների՝ ճշմարտութեան, Բարութեան և Գեղեցկութեան, այլ դոցա աչքում Գեղեցկութիւնը ձուլւում է առաջին երկուսի հետ:

Բայց ահա երեան է գալիս Վինկելմանը (գերմանացի, 1717—1767) որը արւեստի խնդիրները խստօրէն բաժանում է ըստ նպատակից և արւեստին նպատակ է դնում արտաքին, և այն էլ միայն պլաստիկական գեղեցկութիւնը: Գեղեցկութիւնը երեք տեսակի է՝ ձևերի, գաղափարի, որը արտայայտւում է Ֆիզուրի ղիրքով (պլաստիկական արւեստի՝ օրինակ արձանների, մէջ, և երրորդ՝ տրտա-

յայտութեան գեղեցկութիւն, որը հնարաւոր է միմիայն առաջին երկու պայմանների ներկայութեամբ. այդ արտայայտութեան գեղեցկութիւնը արւեստի բարձրագոյն նպատակն է, և այդ պատճառով ներկայիս արւեստը պէտք է ձգտի հին (այսինքն գլխաւորապէս Յոյներին) հետեւել նոյն կերպ հասկացան գեղեցկութիւնը նաև Լեսսինգը, Հերդերը, յետոյ Դէօթէ և գերմանացի բոլոր նշանաւոր արւեստագէտները մինչև Քանտը, որից սկսուած է արւեստի նոր ըմբռնումն:

Այսպէս Գերմանիայում մինչև Քանտը, որին շուտով կը վերադառնանք:

Անկախ գերմանացիներից՝ նոյնաժամանակ գրում են էսթետիկի մասին Անգլիայում, գլխաւորապէս՝ Շէֆտսբիրի (1670—1713), Հուդսոն (1694—1744), Հոմ (1696—1782), Բէօրկ (Burke) 1730—1797):

Փրանսիայում նոյնաժամանակ գրում են հայր Անդրէ (1741), Բատէօ (1713—1780), ապա Դիդրօ, Դ'Ալամբէր, մասամբ Վոլտէր:

Իտալիայում Պադանօ, Մուրատորի (1672—1750), Սպալետի (1765):

Հոլլանդիայում նշանաւոր էր Հէմտէրհիլչիս (1720—1790), որը ազդեցութիւն ունեցաւ գերմանացի էսթետիկոսների վրայ: Նորա հայեացքով՝ արւեստի էութիւնը գեղեցկութիւնն է:

Բայտ Շէֆտսբըրի'ը ինչ գեղեցիկ է՝ ներդաշնակ է և համաչափ. ինչ ներդաշնակ է և համաչափ՝ նաև ճշմարիտ է. և գեղեցիկը ու ճշմարիտը նաև դիւրեկան է ու լաւ: Գեղեցիկը ոգով է ճանաչուած. Ասուած՝ հիմնական գեղեցկութիւնն է, և գեղեցիկը ու բարին միեւնոյն աղբիւրից են:

Բայտ Հուդսոնի, արւեստի նպատակն է գեղեցիկը, որի էութիւնն է միութեան արտայայտութիւնը շատութեան մէջ. գեղեցիկը ճանաչուած է բարոյական (էթիկական) բնազդով, որը կարող է արւեստի բնագոյն չլինել: Այսպիսով Հուդսոնի ասելով, գեղեցիկը միշտ բարին է, բաժանուած է սորանից և կարող է սորա հակառակը լինել:

Բայտ Հոմի, գեղեցիկը այն է ինչ դիւրեկան է, և այդ պատճառով ճաշակն է որոշում թէ ինչ է գեղեցիկ. իսկ լաւ ճաշակի հիմքը կայանում է նրանում, որ ամենամեծ հարստութիւնը, լիու-

Թիւնը, ոչժը և տպաւորութիւնների բաղմաղանութիւնը պարփակւած լինի ամենափոքր սահմանների մէջ:

Ըստ Բէօրկի՝ վեհը և գեղեցիկը արւեստի նպատակն է, և ունին իբր հիմք՝ ինքնապահպանութեան զգացմունքը և հասարակականութեան զգացմունքը: Այդ զգացմունքները միջոցներ են ցեղի պահպանութեան՝ անհատի միջով: Առաջինը ձեռք է բերւում սնունդով, պաշտպանողութիւնով և պատերազմով. երկրորդը՝ հաղորդակցութիւնով և բազմանալով: Այդ պատճառով ինքնապահպանութիւնը և նորա հետ կապւած պատերազմը վեհի աղբիւրն է. հասարակականութիւնը և նորա հետ կապւած սեռական պահանջը աղբիւր են ծառայում գեղեցկութեան:

Միւսներից հետաքրքրական է Պազանիո՛ի հայեացքը: Արւեստը է միաւորում գեղեցկութիւնների, որոնք սփռւած են բնութեան մէջ: Այդ գեղեցկութիւնները տեսնելու ընդունակութիւնը ճաշակն է. իսկ նոցա ի մի ամբողջութիւն միացնելու ընդունակութիւնը կոչւում է արւեստի հանձար: Գեղեցկութիւնը բարու հետ աչնպէս է ձուլւում, որ գեղեցկութիւնը արտայայտւողն բարու, իսկ բարին՝ ներքին գեղեցկութիւնն է:

Մուրատորիի և մանաւանդ Սպալետտիի հայեացքները նման են Բէօրկի վերը յիշած հայեացքին. արւեստը հասարական (էգոիստական) զգացմունք է, հիմնւած ինքնապահպանութեան և հասարակականութեան ձգտման վրայ:

Հեմստերհիլսի ասելով՝ գեղեցիկը այն է, ինչ ամենից շատ վայելք է տալիս. իսկ ամենաշատ վայելք շնորհողը այն բանն է, որը ամենաշատ թւով դադափարներ է տալիս ամենակարճ միջոցում: Գեղեցկի վայելքը ամենաբարձր գիտակցութիւնն է, որին կարող է մարդ հասնել, որովհետեւ նա ամենակարճ միջոցում տալիս է ամենամեծ քանակով պերցեպցիոնների (տպաւորութիւնների):

Այսպէս մինչև Քանտը:

Գերմանիայում, Վինկէլմանից յետոյ առաջ է դալիս Քանտի քոլորովին նոր տեսութիւնը, որը ամենից պարզ բացատրւում է գեղեցկի գաղափարը, հետևապէս և արւեստի գաղափարը:

Ըստ Քանտի, մարդ ճանաչում է բնութիւնը իրենից դուրս և ինքնիրեն բնութեան մէջ. իրենից դուրս նա որոնում է ճշմար

տուժիւնը. ինքն իւր մէջ որոնում է բարին,—մէկը զուտ բանականութեան գործ է, միւսը՝ գործնական բանականութեան (ազատութեան) գործ է: Բացի իմացողութեան այդ երկու միջոցներից՝ կայ նաև զատելու ընդունակութիւն (Urtheilskraft), որը դատողութիւններ է կազմում՝ առանց գաղափարների և բաւականութիւն է առաջացնում՝ առանց ցանկութեան — Urtheil ohne Begriff und Vergnügen ohne Begehren: Այդ ընդունակութիւնն է հէնց որ կազմում է էսթետիկական զգացմունքի հիմքը: Իսկ գեղեցկութիւնը, տւրքիտիւ (անձնական) մտքով, այն է, ինչ որ առանց գաղափարի և առանց գործնական շահի, առհասարակ անհրաժեշտորէն դիւրեկան է. իսկ առարկայական (օբյեկտիւ) մտքով դա՝ նպատակայարմար առարկայի ձևն է այն չափով, որով նա հասկացւում է առանց որ նպատակի մասին մտածենք:

Նոյն կերպ են հասկանում գեղեցիկը նաև Քանտի հետևողները, որոնց մէջ է և Շիլլէրը (1759—1805): Ըստ Շիլլէրի ևս, արւեստի նպատակը գեղեցիկն է, որի աղբիւրը վայելքն է առանց գործնական օգուտի: Այնպէս որ արւեստը կարող է կուլել խաղ, բայց ոչ չնչին վբաղմունքի մտքով, այլ իբրև նոյն իսկ կեանքի գեղեցկութեան յայտնութիւն, որը այլ նպատակ չունի, բայց եթէ գեղեցկութիւնը ինքը:

Քանտի հետևողների մէջ նշանաւոր էր նաև Վիլհէլմ Հումբոլդտը, որը գեղեցիկը որոշելու համար նոր բան չաւելցրեց, բայց պարզեց նորա տեսակները, որպէս դրամա, երաժշտութիւն, երգիծականը և այլն:

Քանտից յետոյ էսթետիկի մասին գրում են, բացի երկրորդական Ֆիլոսոֆաներից, Ֆիխտէ, Շելլինգ և Հեգել ու նոցա հետևողները:

Ըստ Ֆիխտէի (1761—1814) գեղեցիկը գիտակցւում է այսպէս. Աշխարհքը (բնութիւնը) երկու կողմ ունի. նա արդիւնք է մեր սահմանափակութեան, և նա արդիւնք է մեր ազատ իդէալական գործունէութեան: Առաջին մտքով նա սահմանափակ է, երկրորդում՝ նա ազատ է: Առաջին մտքով ամեն առարկայ սահմանափակւած է, ինքզնիքիւրւած, սղմւած, և մենք տեսնում ենք այլանդակութիւն. երկրորդ մտքով մենք տեսնում ենք ներքին լիու-

թիւն, կենդանութիւն, վերածնութիւն,—տեսնում ենք զեղեցիկը: Այնպէս որ առարկայի տգեղութիւնը և զեղեցկութիւնը կախւած է զիտողի տեսակէտից: Այդ պատճառով զեղեցիկը զոնւում է ոչ թէ աշխարհքի մէջ, այլ զեղեցիկ ոգու մէջ (shöner Geist): Արւեստը նոյն այդ զեղեցիկ ոգու յայտնութիւնն է, և նորա նպատակը ոչ միայն միտք կրթելն է—դա զիտականի զործ է, ոչ միայն սիրտ կրթելն է—դա բարոյական քարոզչի զործ է, այլ ամբողջ մարդուն կրթելն է: Այդ պատճառով զեղեցկութեան նշանը որ և է արտաքինի մէջ չէ, այլ արւեստագէտի մէջ զեղեցիկ ոգի լինելու մէջն է:

Յիստէին հետևող հանդիսացան Ֆրիդրիխ Շլէգէլ և Ադամ Միւլլէր: Շլէգէլը էսոթետիկական արւեստի հետ անբաժան ընդունում էր բարոյական և ֆիլոսոֆայական արւեստը: Ադամ Միւլլէրը ընդունում էր հասարակական անտիկ զեղեցկութիւն և անհատական—ինդիւիդուալ—զեղեցկութիւն. աշխարհքը, ուր համաձայնեցրած են բոլոր հակասութիւնները՝ բարձրագոյն զեղեցկութիւնն է:

Յիստէի ժամանակակից նշանաւոր ֆիլոսոֆան, որը մեծ ազդեցութիւն ունեցաւ մեր ժամանակի էսթետիկական հայեացքների վրայ, էր Շելլինգը (1775—1854): Ըստ Շելլինգի, զեղեցիկը այն է, ինչ որ սահմանափակի մէջ անսահմանութիւն է ներկայացնում: Արւեստի գըլխաւոր բնութիւնը անգիտակցական անսահմանութիւնն է: Արւեստը միացումն է ենթակայականի (սուբյեկտիւի)՝ առարկայականի (օբյեկտիւի) հետ, բնութեան և բանականութեան, անգիտակցականի՝ զիտակցականի հետ: Այդ պատճառով արւեստը զիտակցելու բարձրագոյն միջոցն է:

Շելլինգի հետևողներից կարևորագոյններն են Զուլդեր (1780-1819) և Կրաուզէ (1781-1832): Ըստ Զուլդերի՝ զեղեցիկի զաղափարը հիմնական զաղափարն է ամեն բանի: Աշխարհքում մենք տեսնում ենք հիմնական իդէալի իւղաթիւրութիւնը. իսկ արւեստը երևակայութեան ոյժով կարող է բարձրանալ հիմնական իդէալի բարձրութեան: Այդ պատճառով արւեստը ստեղծագործութեան պատկերն է—Ըստ Կրաուզէի՝ արւեստի բարձրագոյն աստիճանը կեանքի արւեստն է, որը ուղղում է իւր զործունէութիւնը կեանքը զար-

դարելու համար, որպէս զի դա լինի պատական (գեղեցիկ) բնական-տեղի պատական մարդու համար:

Հէգէլով սկսւում է արւեստի նոր վարդապետութիւն, որը — ոմանց համար գիտակցաբար, իսկ մեծամասնութեան համար անգիտակցաբար — պահպանւում է մինչև այսօր: Հէգէլի վարդապետութիւնը աւելի պարզ չէ, քան նորա նախորդներինը, և դեռ աւելի ևս մութն է և միտքիական:

Ըստ Հէգէլի (1770-1831) Աստուծոյ յայտնւում է բնութեան և արւեստի մէջ գեղեցկութեան ձևով: Աստուծոյ երկու կերպ է երեւան գալիս՝ առարկայի և ենթակայի մէջ — բնութեան և ոգու մէջ: Իսկ գեղեցկութիւնը գաղափարի թափանցումն է նիւթի միջով: Ճշմարիտ գեղեցիկը միայն ոգին է և այն ամենը ինչ ոգուն յատուկ է. այդ պատճառով բնութեան գեղեցկութիւնը միայն ոգուն յատուկ գեղեցկի արտացոլումն է. գեղեցիկը միայն ոգեկան բովանդակութիւն ունի: Բայց ոգեկանը պէտք է արտայայտւի զգայնական ձևով (այսինքն՝ ինչ կարելի է տեսնել, լսել, շօշափել և այլն): Իսկ ոգու զգայնապէս արտայայտւելը միմիայն երևոյթ է (Schein): Եւ հէնց այդ երևոյթն է գեղեցկի միակ իրականութիւնը: Այնպէս որ արւեստը գաղափարի այդ երևոյթի իրականացումն է, և ծառայում է իբր միջոց, կրօնի և Ֆիլոսոֆայութեան հետ ի միասին՝ գիտակցութեան բերել և արտայայտել մարդկանց ամենախորը մտքերը և ոգու բարձրագոյն ճշմարտութիւնները:

Հէգէլի ասելով ճշմարիտը և գեղեցիկը միևնոյնն է. տարբերութիւնը նրանումն է միայն, որ ճշմարտութիւնը գաղափարը ինքն է, որքան նա ինքն իւր մէջ գոյութիւն ունի և երևակայելի է: Իսկ գաղափարը (իդէա), որը արտայայտւում է դուրսը, գիտակցութեան համար պառնում է ոչ միայն ճշմարիտ, այլ և գեղեցիկ: Գեղեցիկը գաղափարի արտայայտւելն է:

Հեգելին հետևողներ եղան Վէյսէ, (1801-1867) Արնոլդ Ռուզէ (սխառ հետևողը Հէգէլի, 1803-1880), Ռոզէնկրանց, Թէօդոր Ֆրէր (1807-1887) և ուրիշներ:

Բայց Հէգէլի վարդապետութեան հետ զուգահեռաբար երևացին Գերմանիայում գեղեցկի թէօրիաներ, որոնք ոչ միայն չէին ընդունում գեղեցիկը իբր գաղափարի յայտնութիւն, և արւեստը՝

որպէս այդ գաղափարի արտայայտութիւն, այլ և ժխտում էին այդ և ծաղրում: Այդպէս էին Հերբարտ և Շոպէնհաուէր:

Ըստ Հերբարտի (1766-1841), գեղեցիկը ինքն ըստ ինքեան չկայ և չի կարող լինել, այլ կայ միայն մեր դատողութիւնը, որի հիմքերը միայն պիտի գտնուեն (aesthetisches Elementarurtheil): Կան յարաբերութիւններ, որոնց մենք գեղեցիկ ենք անւանում, և արւեստը կայանում է այդ յարաբերութիւնները գտնելու մէջ, որոնք միաժամանակ են նկարչութեան, պլաստիկի (արձանագործութիւն) և ճարտարապետութեան մէջ, յաջորդական են և միաժամանակ՝ երաժշտութեան մէջ, և սոսկ յաջորդական են բանաստեղծութեան մէջ: Հակառակ առաջւայ էսթետիկոսների, ըստ Հերբարտի գեղեցիկ առարկաներ յաճախ նոքա են, որոնք ոչ մի բան չեն արտայայտում, օրինակ՝ ծիածանը, որը գեղեցիկ է իւր գծերի և գոյների պատճառով, և ոչ այն աւանդութեան պատճառով, որ կապւած է նորա հետ, որպէս Իրիսը կամ Նոյլ ծիածանը:

Հեգէլի մի այլ հակառակորդն էր Շոպենհաուէր, որը ժըխտում էր Հեգէլի ամբողջ սիստէմը և նորա էսթետիկը:

Ըստ Շոպենհաուէրի (1788-1860), կամքը առարկայանում է աշխարհքում զանազան աստիճանների վրայ, և թէպէտ որքան այդ աստիճանները բարձր են, այնքան աւելի գեղեցիկ է առարկայացած կամքը, բայց և այնպէս ամեն աստիճան իւր գեղեցկութիւնն ունի: Իւր անհատականութիւնից հրաժարւելը և կամքը յայտնելու աստիճաններից մէկն ու մէկի վրայ խոկալը՝ մեզ տալիս է գեղեցկութեան գաղափարը: Ըստ Շոպէնհաուէրի՝ բոլոր մարդիկ ընդունակութիւն ունին ճանաչելու այդ գաղափարը սորա զանազան աստիճանների վրայ և դորանով ժամանակաւորապէս ազատւելու իրենց անձնաւորութիւնից: Արւեստագէտի հանձարը ունի այդ ընդունակութիւնը ամենաբարձր չափով և այդ պատճառով յայտնագործում է ամենաբարձր գեղեցկութիւնը:

Այդ ամենակարեւոր գրողներից զատ՝ Գերմանիայում երեւացին աւելի քիչ ինքնուրոյն և աւելի քիչ ազդեցութիւն ունեցած էսթետիկոսներ՝ Հարտման, Կիրխման, Շնասէ, մասամբ Հելմհոլց (իբրև էսթետիկոս), Բերգման, Իւնգման և անթիւ ուրիշներ:

Ըստ Հարտմանի (1842)՝ իրը ինքն ըստ ինքեան գեղեցիկ չէ:

բայց արևեստագէտը նորան դարձնում է գեղեցիկ:—Ըստ Շնապսէի (1798-1875) գեղեցիկը չկայ աշխարհում. արևեստը տալիս է այն ինչ, բնութիւնը անկարող է տալ:—Կիրիմանը (1802-1884) զրեց փորձնական արևեստագիտութիւն. ըստ նորան՝ պատմութիւնը վեց աշխարհ ունի. գիտութեան, հարստութեան, բարոյականութեան, հաւատի, քաղաքականութեան և գեղեցկութեան աշխարհներ:—Ըստ Հենրի Դոյլի, որը զրեց գեղեցկութեան մասին՝ իւր յարաբերութեամբ դէպի երաժշտութիւնը, երաժշտութեան մէջ գեղեցկութիւնը ձեռք է բերւում միմիայն օրէնքների հետևելով, որոնք անյայտ են արևեստագէտին, այնպէս որ գեղեցիկը յայտնւում է արևեստագէտի մէջ անգիտակցաբար և չի կարող անալիզի ենթարկւել:—Ըստ Բերգմանի գեղեցկութիւնը չի կարող առարկայօրէն որոշւել. գեղեցիկը ճանաչւում է անձնապէս (սուբյեկտիւ կերպով), և այդ պատճառով էսթետիկի խնդիրը կայանում է նրանում թէ ում ինչն է դիւր գալիս:

Անցնենք այժմ Ֆրանսիային, ուր այս դարում էսթետիկի մասին գրողներից կարևորագոյններն են եղել՝ Կուլէն, Ժուլյուս (1796-1842), Պոնի, (չիցէրացի) Ռաւէսոն, Լըւէք — իբրև իդէալիստական գրողներ, որոնք գրել են և գրում են գերմանական ֆիլոսոֆացու թեան ազդեցութեան տակ: Վերջին ժամանակներս արևեստը և գեղեցիկը հասկանալու համար ազդեցութիւն ունեցան Տէն, Գիւյօ, Ներբիւլիէ, Կոստէր, Վէրոն:

Կուլէնը (1792-1867) էքլէկտիկ է (հակառակ ծայրերը միացնող, հաշտեցնող) և իդէալիստ: Ըստ նորա՝ գեղեցիկը միշտ բարոյական հիմք ունի. արևեստը նմանողութիւն չէ, և ոչ էլ գեղեցիկ է այն, ինչ դիւրեկան է. գեղեցիկը սահմանւում է ինքիրանով. նորա էութիւնն է՝ բազմատեսակութիւնը միութեան մէջ:

Պրոնի հետևող էր Հէգէլի և Պլատոնի. Լըւէքը՝ Շէլլինգի և Հէգէլի: Տէնը (1828-1893) սահմանւում էր գեղեցիկը իբր որևէ նշանաւոր գաղափարի էական բնոյթի (քարակտէրի) յայտնագործութիւն. այն գաղափարի, որը աւելի կատարեալ է քան թէ նա իրականութեան մէջ արտայայտւում է ¹):

¹ Աւելցնենք մեր կողմից, որ Տէնը չափնի է իւր հուշակամ խօսքով՝ Արևեստի գործը արդիւնք է այն ամբողջի, որը ներկայացնում է ոգու և

Գիւյօ՛ի (1854—1888) ասելով՝ զեղեցիկը առարկային (իրին) մի օտար բան է, այլ այն էակի ծաղկումն է իսկ, որի վրայ նա երևում է: Արեւստը բանական և զիտակցական կեանքի արտայայտութիւնն է, կեանքի, որ մեր մէջ դրոււմ է, մի կողմից, գոյութեան ամենախորը զգացումները և, միւս կողմից, ամենաբարձր զգացումները և մտքերը: Արեւստը բարձրացնում է մարդուն անձնական կեանքից դէպի ընդհանուր կեանքը, ոչ միայն մասնակցութեամբ միևնոյն զգացողութիւններին ու հաւատալիքներին, այլ և միատեսակ զգացումների միջոցով:

Շեքսպիրիէ՛ն արեւստը սահմանում է իբր գործունէութիւն, որը 1) բաւարարութիւն է տալիս մեր բնածին սէրին դէպի պատկերները (apparences), 2) այդ պատկերների մէջ դաղափարներ է մըտցնում, 3) միաժամանակ բաւականութիւն է տալիս մեր զգացմունքներին, սրտին և մտքին: Գեղեցիկը իրերին յատուկ է, այլ մեր ոգու գործողութիւն է: Գեղեցիկութիւնը մտապատրանք է (իլլիւզիոն): Ձկայ բացարձակ գեղեցկութիւն, այլ գեղեցիկ թւում է այն, ինչ մեզ բնորոշ և ներգաշնակ է թւում ²:

շրջապատող բարքերի դրութիւնը, (L'oeuvre d'art est déterminée par un ensemble qui est l'état général de l'esprit et des mœurs environnantes). —Դա՛ «միջավայրի» (le milieu) թէօրան է: Տէնի առելով այդ «ընդհանուր դրութիւնը» ստեղծում է «բարոյական մթնոլորտը», որը արեւստի զարգացման համար նույն նշանակութիւնն ունի, ինչ որ ունի «ֆիզիկական մթնոլորտը»—բուսականութեան համար: Այդ բարոյական մթնոլորտը, որի արտայայտութիւնն է իշխող ճաշակը, ստեղծում է երեք իրար հետ ներգործող տարրերից—ցեղը, կլիման և բուսական (մոմէնտ): Նաև արեւստի զարգացումը կատարւում է բնական ընտրողութեան մեծ օրէնքի ներքոյ:

Տէնի այդ տեսութեան դէմ Հենըքէնը (Hennequin) հրատարակեց իւր *La critique scientifique* («Գիտնական քննադատութիւնը»), ցուց տալու համար Տէնի հաջեցքների անկալունութիւնը: Հենըքէնի գլխաւոր առարկութիւնը այն է, որ միևնոյն ցեղի, կլիմայի ու ժամանակի արեւստագէտներ իրարից շատ տարբեր գործեր են ստեղծում, և ոչ էլ ստեղծագործները հետեւում են իշխող ճաշակին, և դորա համար Հենըքէնը առաջ է դնում մի շարք անուններ վիպասանների, նկարիչների, երաժիշտների և այլն:

². Արեւստաբանութեան մէջ Գիւյօ՛ին պատկանում է մի պատուաւոր տեղ, Նա մեռաւ շատ երիտասարդ—35 տարեկան: Նա ևս արեւստը սո՛

Ըստ *Կոստէրի*՝ գեղեցկի, բարու և ճշմարտի գաղափարները քնածին են։ Այդ գաղափարները լուսաւորում են մեր միտքը և համանիշ են Աստուծուն, որը է ինքը բարին, ճշմարիտը և գեղեցիկը։ Իսկ գեղեցկի գաղափարը իւր մէջ պարփակում է էութեան միութիւնը, բաղիացուցիչ տարրերի բազմազանութիւնը և այն կարգը, որը միութիւն է մոցնում կեանքի արտայայտութիւնների բազմազանութեան մէջ։

Ըստ *Վէրոնի* (1825—1889) արւեստը զգացողութեան (էմօսիոն) յայտնադործութիւնն է, որը հաղորդւում է դուրսը պծերի, ձևերի, գոյների զասաւորումով, յաջորդութիւնովը շարժումների (ժեստ) կամ բաների, որոնք ենթարկւած են յանդերի։

Անցնելով *Անգլիա*, Տոլստոյը անցեալ դարից յիշատակելով Ռէյչին (1704—1796), Ալիստնին (1790) և Էրազմ Դարւինին (1731—1802), անցնում է ներկայ դարի էսթետիկոսներին, որոնք են՝ մա-

ցիոլոգիական տեսակէտից քննեց։ Ըստ Գիւլօ'ի՝ արւեստը սոցիալական մարմնի գործունէութիւն է, որը ամենամեծ նշանակութիւն ունի այդ սոցիալական մարմնի պահպանութեան և զարգացման համար։ Իւր այս համոզմունքը նա մի անսովոր ճարտարախօսութեամբ է լալտնում, և նորա մտքերի շեղումը փնիցնում է գերմանացի Հերդէրին, 18-րդ դարից Բալց Գիւլօ'ն ժամանակ չունեցաւ բազմակողմանի հետազոտութիւններով իւր մտքերը հիմնաւորելու։ Նորա հետազոտութիւնները սահմանափակւում էին Ֆրանսիայի 19-րդ դարով։

Մինչև այժմ արւեստաբանութիւնը սոցիոլոգիական տեսակէտից դեռևս քիչ է չօշափւած, Գիւլօ՝ 1719-ին, Հերդէր՝ դորանից կէս դար լետոյ, և Տէն ու Գիւլօ—վերջին ժամանակներս—սհա առ այժմ բոլորը։ Այժմ փորձեր են անում արւեստը ուսումնասիրել սկսելով ամենաստոր աստիճանի վրայ դտնող ժողովուրդներից, որպիսիք են վալրենիները, որպէս ալդ արւած է և անում է կրօնի, բարք ու վարքի, իրաւունքի, տնտեսութեան նկատմամբ։ Որպէս մի փորձ էթնոգրաֆիական հիմքի վրայ դրած արւեստաբանութեան կարող ենք փնել Էրնստ Գրոսս'էի «Արւեստի սկիզբները» (Ernst Grosse—Die Anfänge der Kunst. 1894. (32 նկարներով և 3 տախտակներով)։ Կոմս Տոլստոյը, ըստ երևութին, նորադոյն գիտութեան ալդ ճիգերը ի նկատի չի առած, և, թէև ինքը իւր փշած բազմաթիւ ֆիլոսոֆաների ու արւեստաբանների լալտնածները շատ թէ քիչ մտաաֆիլիական է լալտարարում, բալց և ինքը, որպէս պիտի տեսնենք, գիտական մեթոդից շեղում է։

սամբ Զարլա Դարւին, Սպենսէր, Մորլէյ, Գրանտ-Ալլէն, Քէրզ, Նայթ:

2. Դարւինը (1809—1889) իւր «Մարդու ծագումը» գրած-
քում (1871) գեղեցկութիւնը անւանում է զգացմունք, որը յա-
տուկ է ոչ միայն մարդուն, այլ և կենդանիներին, և ուրեմն նաև
մարդու նախահայրերին: Թռչունները զարգարում են իրենց բոյ-
ները և գնահատում են գեղեցկութիւնը իրենց զոյգերի մէջ: Գե-
ղեցկութիւնը ազդում է ամուսնութեան վրայ: Գեղեցկութիւնը իւր
մէջ ամփոփում է զանազան բնաւորութիւնների գաղափարը: Նրա-
ժշտութեան արւեստի ծագումը՝ արուների կոչն է հգերին:

Սպենսէրը գտնում է արւեստի ծագումը խաղի մէջ, որ-
պէս և Շիլլէրն էր ասում: Ամենաստորին կենդանիների մէջ կեան-
քի ամբողջ եռանդը մտնում է կեանքը պահպանելու և շարունա-
կելու վրայ. մարդուս մէջ, սակայն, այդ կարիքները լրացնելուց
յետոյ, մնում է ոյժի աւելնորդ: Այդ աւելնորդը գործ է ածում
խաղի վրայ, որը անցնում է արւեստի: Խաղը իսկական գործողու-
թեան պատկեր է. նոյնն է և արւեստը: Էսթետիկական բաւական-
ութեան աղբիւրը 1) այն է, ինչ վարժում է մեր զգացողու-
թիւնը (տեսողութիւնը, լսողութիւնը և այլն) ամենալիակատար
կերպով՝ ամենաքիչ ճիգով, 2) առաջ բերող զգացումների ամենա-
մեծ բազմատեսակութիւնը. 3) այդ առաջինների միացումը և այն
պատկերացումը որ բղխում է դորանից:

Տոդնմանտէրի համաձայն (1872) գեղեցկութիւնը անվերջ
հրապոյր է, որը մենք ճանաչում ենք [թէ խելքով և [թէ սիրոյ
էնթուսիսով: Իսկ գեղեցիկը գեղեցիկ ընդունելը կախում է ծա-
շակից և չի կարող որ և է կերպ սահմանել միայն [թէ կարելի է
ասել որ ինչքան բարձր է քուլտուրան՝ այնքան մարդ մերձենում
է գեղեցիկը ճանաչելուն:

Իսկ արւեստի էութիւնը, այսինքն այն բանի, որ ազդում է
մեզ վրայ գծերով, գոյներով, հնչիւններով—կոչը ոյժերի գործ չէ,
այլ բանական որոնք իրար օգնելով՝ ձգտում են ղէպի մի խելացի
նպատակ: Գեղեցիկը՝ հակասութիւնների հաշտեցումն է:

Ըստ Մորլէյի՝ գեղեցիկը մարդու հոգու մէջն է: Բնութիւնը
խօսում է մեզ աստածայինի մասին, և արւեստը այդ աստա-
ծայինի խորհրդանշանական (երոգլիֆական) արտայայտութիւնն է:

Գրանաւ-Ալլէն՝ Սպենսերի շարունակողն է և ասում է թէ գեղեցկութիւնը ֆիզիկական ծագում ունի։ Արեւստի սկիզբը՝ խաղն է։ Գեղեցիկը այն է որ ամենակարճ միջոցում ամենաշատ զրգումունք է պատճառում։ Գեղեցիկը ճանաչելը ճաշակից է, որը կարող է կրթել։ Պէտք է հաւատալ ամենանուրբ կրթած և ամենախորդական մարդկանց զատողութեան։ Այդ մարդիկն են կագմում ապագայ սերնդի ճաշակը։

Զեյլը՝ (1883) գտնում է, որ գեղեցկութիւնը մեզ միջոց է տալիս լիապէս ըմբռնել առարկայական (օբեկտիւ) աշխարհը՝ առանց աչքի առաջ ունենալու աշխարհի միւս մասերը, ինչպէս այդ անհրաժեշտ է գիտութեան համար։

Նայտ՝ (1893) Շելլինգի պէս, գեղեցիկը գտնում է առարկայի և ենթակայի միաւորութեան մէջ. գեղեցիկը բղխում է այն բանի բնութիւնից, որ յատուկ է մարդուն, և այն բանի գիտակցութիւնից, որ ընդհանուր է ամբողջ բնութեան։

Թէև վերը առաջ են բերւած ոչ բոլոր էսթետիկոսների անունները, բայց դժբա կարևորագոյններն են։ Այսպիսով, ըստ Տոլստոյի, էսթետիքի մասին կարծիքները կարելի է չորսի բաժանել. ոմանք շարունակում են Բաուսդարտէնի և Հէգելի միստիկական (խորհրդաւոր) արւեստաբանութիւնը. երկրորդները արւեստի էութիւնը մարդու մէջ են դնում և գեղեցկի հիմքերը ճաշակի մէջ են որոնում. երրորդները—ամենավերջին ժամանակի էսթետիկոսները գեղեցկի սկզբնաւորութիւնը որոնում են Ֆիզիոլոգիական օրէնքների մէջ. չորրորդները, վերջապէս, արւեստի զաղափարը ջոկում են գեղեցկի զաղափարից և, ինչպէս օրինակ Սէլլին, արւեստ են համարում այն, ինչ կարող է բաւականութիւն պատճառել սահմանափակ թւով հանդիսականներին և ունկնդիրներին, չանկախ դորանից ստացած օգուտից։ Բայց գերակշիռ չափով գեղեցկի զաղափարը, բոլոր կարևոր էսթետիկոսների համաձայն՝ մտնում է արւեստի զաղափարի մէջ։

Մենք չորսն կը վերադառնանք։

(Շարունակելի)

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵԱՂՈՒԲԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ.—Հայերէն-ուսերէն բառարան. „Ар-
мяно-русский словарь“. Թիֆլիս, տպար. Յ. Մարտիրոսեանցի
1891 թ.

Այս վերնագրով բառարանը եօթը տարուց աւելի է, որ լուս աշխարհ է եկել: Իւր ժամանակին մեր սլար-բերական թերթերը կարծիկ տեղեկութիւն տւին այս հրատարակութեան մասին, իսկ «Մուրճ» ամսագրի մէջ երեսց մի ընդարձակ քննադատական լօղւած ¹, բայց ոչ մէկը հեղինակներից ցոյց չտուց մի շարք, կարելի է ասել հսրիւրաւոր ալ աններելի սխալները, որոնք մտել են բառարանի մէջ: Այս սխալները ալ կարգի սխալներից են, որոնք ուղղակի ցոյց են տալիս հեղինակի տգիտութիւնը թէ հայերէն և թէ ռուսերէն լեզուներում:

«Հայերէն-ուսերէն բառարանը», հեղինակի ասելով, սպառւելու վրա է և նա մտադիր է սկսել նրա երկրորդ տպագրութիւնը. ուրեմն այժմ չարմար ժամանակ է ուղղել բառարանի սխալները: Այս նպատակով

մենք պատշաճ համարեցինք, հեղինակին օգնելու համար, բերել այստեղ սխալ թարգմանած բառերի մի ցուցակ, որքան մեզ չաջողել է ալդ նկատել, և ուղղել ինչպէս մենք ինքներս հասկանում ենք, չչօչափելով ալն ահագին քանակութեամբ զգալի թերութիւնները, որոնք ցոյց են տրւած հանդուցեալ Սարգիս Սարգսեանի ընդարձակ քննադատութեան մէջ ²:

¹ Այս լօղւածը Մուրճի մէջ երկրորդ ընդարձակ քննադատութիւնն է լինւած հայ-ուսերէն բառարանի. և մինչդեռ հանգուց. Ս. Սարգսեանցը հմուտ լեզւաբան էր՝ գրականական արժանիքներով, ներկալ լօղւածի հեղինակ պ. Զելինսկիին չալտնի է որպէս հետազոտող կովկասեան կեանքի և առանձնապէս տեղեակ Նրեանալ նահանգին ու գաւառական ժողովրդի կեանքի՝ բարբառին, երկրի բնականութեանը և ալն: Ալ ալ պատճառով է, որ տեղ ենք տալիս ներկալ լօղւածին, որի արժէքը հէնց իրա մէջն է, նաև անկախ քննա-

¹ Հանդուցեալ Սարգ. Սարգսեանի:

Ա.

Ակաւ—зуб.

Ագր—навозъ, пометъ.

Աղրակուտ—навозная куча.

Աղրանունդ—питающийся навозомъ.

Աղրել—унавозить.

Աղիւս—плитка, кирпичъ.

Աղցան—соленіе, салатъ (куш.).

Ամբու—коренная лошадь

Անաղ—непосоленный.

Անթթխմոր—безъ дрожжей.

Աւքարաց—смотрящій въ оба; смыш-
ленный, прозорливый,
бдительный.

Առուդու—трилистникъ.

Աստղիկ—Венера.

Ակաւ—ի ռուսերէնէն է коренной зубъ, իսկ зубъ հայերէն աստաւ.—Սխալ են թարգմանած աղբ, աղրակուտ, աղրանունդ, աղբել բառերը, որովհետեւ հիմնական աղբ բառը ռուսերէն соръ, հետևաբար միւսների թարգմանութիւնը կը լինի сорная куча, питающийся соромъ, засорить (навозъ հայերէն կու).—Աղիւս բառի առաջ բոլորովին աւելորդ է դրած ПЛИТКА բառը, քանի որ աղիւս նշանակում է кирпичъ. իսկ ПЛИТКА-ն փոքր, տափակ որ և է նիւթից չինած առարկայ է, օրին. ПЛИТКА ШОКОЛАДА, ПЛИТКА ЧАЯ և այլն.—Աղցանը բոլոր տերևներից եփած պատի կամ ուտիւ-
լալ (երբ իւրով ձւով են եփում) կերակուր է, իսկ ռուսաց բառերը соленіе, салатъ նշանակում են՝ առաջինը՝ աղի դրած բոլոր մասերը

դասւած բառարանից. Պր. Զելին-
սկու աւստեղ երևան եկող հմտու-
թիւնից կարելի է օգտուել նաև առ-
հասարակ խմբ.

կամ պտուղներ, իսկ երկրորդը պար-
տիզի մի բոլոր անուն է, որին հա-
յերէն ասում են Թաւայ—Lactuca sa-
tiva L.¹, աւելի ճիշդ կը լինի աղ-
ցան բառը թարգմանել՝ купание,
приготавливаемое изъ листьевъ рас-
тений: Ամբու բառով գիւղացիք ան-
ւանում են գութանին կամ արորին
լծած առաջի դոյզ եզներին.—Непосо-
ленный բառը ռուսաց լեզուի մէջ
քիչ է գործածուած և անաղ բառը
աւելի լարմար է թարգմանել прѣс-
ный, безъ соли բառերով.—Անթթ-
խմոր բառի ռուսերէնն է безъ зак-
васки, որովհետեւ թթխմոր—заквас-
ка тѣста (տ. Թթխմոր բառը).—Այ-
րարաց բառի առաջ բաւական է
թողնել смышленный, прозорливый
и бдительный, իսկ смотрящій въ
оба նախադասութիւնը բոլորովին
աղաւաղում է այժմաց բառի միտքը:
Առուդու բառը medicago sativa L.
բոլոր անունն է, այլ ոչ թէ три-
листникъ բոլոր, որին լատիներէն
անւանում են Trifolium L:—Աստղիկ
բառի առաջ, որի ռուսերէն ճիշտ
թարգմանութիւնն է ЗВѢЗДОЧКА, գր-
ւած է Венера բառը, որ լունաց
աստածուհիներից մէկի անունն է,
իսկ Աստղիկը մեր ինչ հակական

¹ Салатъ նշանակում է և առան-
ձին կերակուր, որ պատրաստում են
թաւայից, հետուրի արմատից, եփած
կամ խորոված ճակնդեղից, եղերտա-
կից և այլն, համեմելով նրանց
քաղախով, ձէթով, մանանիխով, չա-
քարով, պղպեղով և այլն:

² Ռուսները առուդտին անւա-
նում են Фриванерէն բառով ЛЮДЕР-
НА (լիւցերնա), կամ Թուրքի բա-
ռով ЮНДЖА (հոնջա),

աստածունէին է և իւր չատկութիւններով և աստածաւորն շնորհքներով բոլորովին նման չէ կամ շատ հեռու նմանութիւն ունի լուսաց վէներաւին: Չենք հասկանում, թէ կարիք կալ բառարանի մէջ մտցնել չատուկ անուններ (ինչի՞ օր. Անահիտ, վահագն և ալլն չկան բառարանի մէջ, ալ միայն Աստղիկը պատիւ է ունեցել տեղ ունենալ պ. Եաղուբանի բառարանի մէջ), կամ չատուկ անունը թարգմանել համեմատական ձևով ուրիշ ազգի չատուկ անունով. Աստղիկը միտում է Աստղիկ ամեն լեզուի մէջ, իսկ Венера-ն չի կարող փոխել նաև ուրիշ ազգերի գրականութեան մէջ:

Բ

Բանջարբոսուկ — мелкий градъ.

Բևեռ — полюсь.

Բանջարբոսուկ անունով անւանում են մանր կարկտանման ձիւնը, որի ուսերէն անունն է круп. Բանջարբոսուկը լինում է ցուրտ ժամանակ (ձմեռը), իսկ мелкий градъ կամ մանր կարկուտը և ամեն տեսակ կարկուտը, ինչպէս չալտնի է, երբէք ձմեռը չի լինում: Բևեռ բառի գործածութիւնը полюсь բառի մտքով երկրորդական է, ալ նրա սկզբնական իմաստն է ГВОЗДЬ (մեխ), որ բառարանի հեղինակը մոռացել է դնել:

Գ

Գաթալ — родъ колобка.

Գաճ — известъ; гипсъ.

Գաճալին — известковый; гипсовый.

Գան — приторность, отвращение.

Գանդգալ — чувствовать приторность, отвращение.

Գանել — питать отвращение, отвращаться.

Գանելի — отвратительный.

Գանեցնել — возбуждать отвращение.

Գեղարդ — пика.

Գղել — чесать.

Գղոց — чесалка.

Գինեմոլ — предавший доманин вину; горкій пьяница.

Գինեմոլութիւն — предавание вину доманин; запой, горькое пьянство.

Գոնջ — паршивый.

Գոհար — драгоценный камень; бриллиантъ.

Գրամու — страстный поклонникъ, любитель книгъ; библиоманъ.

Գաթալ հալիական հացերի տեսակներից մէկն է, որ թխում են իւզով կաթով և ձով չունցած խմորից, և բոլորովին նմանութիւն չունի ոչ տեսքով և ոչ էլ համով ուսաց Կолобокъ հացին: Աւելի ճիշտ կը լինէր գաթալ բառը թարգմանել՝ родъ сдобнаго хлѣба: — Գաճ-ի ուսերէնն է гажъ, որի մաքուր տեսակը ստացւում է гипсъ և алебастръ¹ անունով գաճաքարերից, իսկ աւելի անմաքուրը ստացւում է ուրիշ տեսակ զանազան նիւթերով խառն գաճաքարերից, երբ նրանց ալրում են, իսկ ինչ վերաբերում է известъ բառին, դրա հաչերէն թարգմանութիւնը կը լինի կիր, մի նիւթ, որ ունի բոլորովին ուրիշ քիմիական բաղադրութիւն և ստացւում է ալ տեսակ քարերից: Ճիշտ կը լինի, եթէ գաճ

¹ Գ. Եաղուբանի բառարանում алебастръ գաճաքարը հաչերէն ալրաբառը է անւանւած:

գածային բառերը թարգմանի гажа, тажевый և ոչ թէ известь, известковый, гипс, гипсовый բառերով, քանի որ известь նշանակում է կիր, իսկ гипс (նոնգլէս և алебастр) գածաքար:—Հալոց բառարաններում մենք գտանք միայն դան և զանեմ բառերը, որոնք նշանակում են ծեծ, ծեծել (битье, бить), իսկ ու. Եաղութեանի աշխատասիրած բառարանի մէջ բերած են, բացի նրանցից և զանրգալ, զանեկ և զանեցեկ բառերը, որոնք, ինչպէս երևում է վերը ցուց տած ռուսերէն թարգմանութիւնից, ոչ մի կապ չունին հալոց դան, զանեմ բառերի հետ:—Գեղարդ բառի ռուսերէնն է копье, ալ ոչ թէ пика, որ նշանակում է տէգ, նիզակ:—Բոլորովին սխալ են թարգմանած և զգել, զգոց բառերը, որոնք ռուսերէն չեն նշանակում чесать, чесалка, ալ կը նշանակեն трепать, трепалка:—Գինեմոլ, գինեղութիւն բառերի առաջ, горький пьяница, запои, горькое пьянство, դրած են և ամբողջ նախադասութիւններ предавший до магии вино, предавание вино до магии, որոնք նախ կոպիտ են և անգործածելի, և երկրորդ՝ բոլորովին աւերորդ են:—Աւերորդ է և ճիշտ չէ գոհար բառի առաջ դնել և брилльянтъ բառը, որովհետեւ брильянтъ բառով անւանում է առանձին տեսակ թանկագին քար, իսկ գոհար բառով ընդհանրապէս անւանում ենք թանկագին քարեղէններ:—Նոնգլէս նշանակութիւն չունի զրամոլ բառի թարգմանութեան համար բերել մի ամբողջ կոպիտ նախադասութիւն (страшный поклонникъ, любитель

книгъ) քանի որ библиоманъ բառը շատ պարզ արտապատում է գրամոլ բառի միտքը:—Գոնջ բառը նշանակում է պակասաւոր, ալսինքն ֆիզիկական պակասութիւն ունեցող մարդ կամ կենդանի, իսկ паршивый բառը, որը դրած է զոնջ բառի առաջ, հալերը դրան ասում են քաչալ, բորոտ, թէև զոնջ գործ են ասում, չալտնի բան է սխալմամբ, և վերջի բառերի մտքով:

Դ

Դադարել—прийти въ покой, успокоиться.

Դադարում—приведение въ покой.

Դէմուդէմ ելնել—выйти другъ другу на встрѣчу.

Դիզել—свалить въ кучу.

Դոխ տ. աղաւնի—голубь.

Դռնակ տ. Դռնիկ—дверцы, клапанъ.

Դրամակիր—драхма.

Прийти въ покой, успокоиться, приведение въ покой ճիշտ չեն արտապատում դադարել, դադարում բառերի միտքը, որոնք նշանակում են перестать, успокоиться, усное, прекращение բառերը:

Դիշել բառը աւելի ճիշտ կը լինի թարգմանել собрать, собирать կամ собрать, собирать въ кучу բառերով, մինչդեռ կուտակել, որի ռուսերէնն է сваливать, չի համապատասխանում գիզել բառին (օր. փող դիզել, խոտ դիզել և ալն նախադասութիւններում):—Դոխ բառը «Առ-

¹ успокоиться — հանգստանալ. ալդ մտքով դուք է անում ոչ թէ դադարել, ալ՝ դադար առնել:

Իմք.

ձեռն» բառարանի մէջ բացադրւած է ձագար (воронка) բառով, բայց իբրեւ աղանի (голубь) գուցէ ստեղծւած է հեղինակի հայրենիքում և հասկանալի կը լինի միմիայն նորա ծննդավայրում:—Գոնակ բառով դիւղացիք անւանում են դռան կողքին պատի մէջ շինած ալն ծակը; որի մէջ մտնում է սողնակը (փականը) դռուը փակելու ժամանակ, իսկ դռնակ իբրեւ փոքրիկ դռու (дверцы) կամ փական (клапанъ) ոչ մի տեղ չեն գործ ածում:—Իրամակշիռ բառը նշանակում է մի որ և իցէ նիւթ մէկ զրամի կշեռքով, իսկ драхма բառը հին ժամանակներում գործ ածւած արծաթեալ զրամի (փողի) անունն է, որ ալժմ դեղատոններում նշանակում է որոշ ծանրութիւն, ուրեմն աւելի ճիշտ կը լինի դրամակշիռ բառը թարգմանել въсь драхмы կամ въсь въ одну драхму բառերով:

և

Եզնալիզու—волоный языкъ.

Ետինք—послѣобѣденное время; послѣ полудни.

Ետինքուալ—послѣ обѣденный.

Երակ—вена.

Երամ—стадо, стая.

Երթիկ—слуховое окно; крыша.

Երինջ—телка, телица.

Երկանք—жерновъ.

Երկունք—роды; болѣзни при родахъ.

Եզնալիզու բառը չի նշանակում եզան լիզու (волоный языкъ), ալ մի խոտի անունն է, որին ռուսերէն անունն են подорожникъ, որից զանազան տեսակներ կան. *Plantago lan-geolata* L., *Plantago media* L., *Ta-*

racacum officinale Wigg. և ալն-ի տու գաւառում հայերը սրան անւանում են դաղտիկուռ:—Ետինք, ետինքուայ բառերը послѣобѣденное время, послѣ полудни, послѣобѣденный բառերի մտքով մի թիւրիմացութիւն է, և բառարաններում չկան. ժողովրդի մէջ այս մտքով չենք լսած. բայց սրանից, այս բառերը ժամանակի հետ կապ չունին, այսինքն ժամանակ չեն ցոյց տալիս, հետեւաբար չեն կարող թարգմանել լի-չեալ ռուսաց բառերով: Գուցէ այս բառերը նոյնպէս բառարանի հեղինակի հայրենիքի բառերից են (պատուում ենք մի երկրի զաւակին, որը մինչև անգամ ընդհանուր բառարանի մէջ չի կարողանում մոռանալ իւր հայրենիքը):—Երակ ռուսերէն артерія, жила, кровеносный сосудъ. жила въ рудникахъ, ալ ոչ թէ вена, որի հայերէն անունն է սուերակ:—Երամ բառը նշանակում է թռչունների և ոչ թէ անասունների կամ գրաստների խումբ, որին անում են հայերէն հօտ, ուրեմն стадо բառը չի համապատասխանում երամ բառին (стадо ժողովրդի լեզուով նախիր):—Երթիկ բառով հայերը անւանում են ալն ծակը, որ լինում է տան առաստաղում (առիքում) և ծառայում է թէ լուսի և թէ մուխը դուրս գալու համար. ուրեմն չառ տարօրինակ կը լինի, որ այս բառը նշանակի слуховое окно կամ крыша (կտուր):—Երինջ (աւելի գործածական է էրմինջ) բառով հայերը անւանում են երեք տարեկան էգ գրաստին, որ ռուսերէն կը լինի трехлѣтка, իսկ телка, телица անւանում են երկու տարե-

կան էգ հորթին.—երկանքը երկու փոքրիկ կոշու քարեր են, որոնք չի նստ են երկնաքարից, ալսինքն շերբօցն անունով տեղակ քարից զանա- նազան բաներ (աղ, քթախոտ և ալն) ձեռքով աղալու համար. ուրեմն երկանք բառը որոշ մի առարկայի անուն է, և չի կարելի թարգմանել շերնօց բառով, ալսինքն որոշ տեղակ հանքաքարի անունով: —երկունք նշանակում է родовыя бѣги, ալ ոչ թէ роды (ծին, ծննդաբերութիւն) և ոչ էլ болѣзнь при родахъ (հիւանդութիւն, որ պատահում է ծննդաբերութեան ժամանակ):

Ձ

Ձկն.— прга

Ձարճախօս — говорящій весело.

Ձիւ — дискантъ.

Прга բառով թէն ռուսները զկե- ոին են տառով, բայց գործածական է Ռուսաստանի որոշ տեղերում, իսկ աւելի գործածական է шешка բառը (шешius), որ ս. Եազուրեանի բա- րարանի մէջ երկրորդական տեղ է բռնում, որովհետեւ զրաւ է փակա- կծի մէջ:—Նոյնպէս գործածական չէ և կոպտո ճախադասութիւն է гово- рящій весело. աւելի ճիշտ կը լինի զարճախօս բառը թարգմանել весельчакъ բառով:—Ձիւ նշանակում է звонкій, բայց дискантъ ս. Եա- ղուրեանի հնարած զիլ բառի թարգ- մանութիւնն է:

Թ

Թաթաղիչ—ручной скобленный ножъ

Թափել — стряхнуть, лиять.

Թափնոց—жердь (для снѣтія пло- довъ съ дерева).

Թեփոսիլ—покрыться чешуею, ше-

лухою; забудорожиться.

Թթխմոր — забваска (тѣста).

Թթխմորալին	}	дрожжевой.
Թթխմորի		

Թի — лопата.

Թուման — туманъ (персидская мо- нета), туианъ (десять рублей).

Թրթնջուկ ս. Աւելուկ

Թաթաղիչը ручной скобленный ножъ¹ չէ, ալ ռուսները նրան ա- տում են подскребышникъ, որով քե- րում են խմորի տաշտը: Այս բառը գործ է ածում գլխաւորապէս տաճ- կահանքի մէջ (Ալեքսանդրապոլի, Նոր-Բալաղէտի, Ախալքալաքի և Ախալցխի գաւառներում), իսկ պարս- կահանքը և երեանցիք նրան անա- նում են տաշտաքերիկ, որ փոքրիկ երկաթեալ թիւն նման գործիք է: Թափել բառի առաջ, բացի пролить, вылить, сыпать. высыпать, զրաւ են և стряхнуть, лиять բառերը, որոնց հալերէնը կը լինի Թափ տալ, գունաթափել. ուրեմն վերջի երկու բառերը (стряхнуть, лиять) չեն համապատասխանում թափել բա- րին:—Թափնոց բառը նոր բառ է և զրաւ Ախալցխալի, որ թարգման- ւել է բառարանի մէջ жердь բառով (ռուսերէնի միտքը—բարակ երկար փայտ) նշանակում է ալնալիսի մի փայտ, որով թափում են ծառից պտուղ- ները, ուրեմն չի կարելի ասել նրան жердь (для снѣтія плодовъ, съ де- рева), ալ պէտք է թարգմանել

¹ Скобленный ножъ գործ են ա- ծում կաշեգործները կաշին մաքու- րու համար: Չօկ բարբառում ալդ նոյնը կոչում է ալիչ:

жердь для сбиванія плодовъ съ дерева (պարսկահայերը աղպիսի փայտը անւանում են զուլայ)։ — Յեփոսեղ *взбудорожится* բառի թարգմանութեամբ մի քիչ տարօրինակ է, և պակասում են *покрыться* *отрубями*, *запахаться* *отрубями* բառերը, — թիւում — *закваска* *тѣста* (վերջի բառը ինչու համար փակագծի մէջ է — չեմ հասկանում) ճիշտ է, բայց թըթիւմը պին, թիւում է քնչի պէտք է լինին *дрожжевой*, քանի որ *дрожжи* առանձին նիւթ է, որ չինւում է գալուկ բուսի (*Humulus lupulus* L) ծաղիկներից, իսկ *закваска*-ն թըթւած խմոր է։ Մենք հրաժարում ենք բացատրել այս հարցը և գուցէ կը բացատրի ինքը բառարանի հեղինակը։ — Թի բառի առաջ դրւած է միայն *лопата* բառը, որ նշանակում է Թի և բաժ. դոցա որոշելու համար հարկաւոր էր դրել *деревянная лопата*։ — Գուման, իսկ է, նշանակում է *персидская монета* (պարսկական դրամ)։ Բայց զարմանալին այն է, թէ որտեղից բառարանի հեղինակ պ. Սադուբեանը գտաւ, որ պարսկական թումանը հաւասար է տասնութը։ Աղպիսի թումանը դործ է անում միայն վրաստանում¹, իսկ Պարսկաստանում և մինչև անգամ այժմ էլ Անդրկովկասի այն տեղիքում, որոնք մօտիկ են կամ սահմանակից են Պարսկաստանին, թուման կամ, աւելի ճիշտ, թիւման հաւա-

¹ Արքան մեզ չափանի է, ոչ միայն վրաստանում, այլ Անդրկովկասի թէ հայերը և թէ թուրքերը թուման անուով 10 ուսըլի են հասկանում։ Խմբ.

սար է 10 զուանի, իսկ ամեն մի զուանը հաշւում են 30 կոպէկ ուսաց դրամ, ուրեմն թումանը այժմ 3 ուսըլի է (վաթսունական թւականներում պարսից թումանը 2 1/2 ուսըլի էր գնահատւում)։ — Թրծնշուկը աւելուկ խտրը չէ. առաջինին ուսաները անւանում են *кислецъ*, իսկ երկրորդին — *щавель дикий* (առաջինի լատիներէն անունն է *Oxalis Acetolla* L, իսկ երկրորդին — *Rumex obtusifolius* L.)։

Փ

Փեռ տ. Ժալո։

Ժալո բառի թարգմանութիւնը ճիշտ է (*скала*, *утесъ*), բայց փեռ բառը, որ ժողովրդական է, բացի Ժալո նշանակութիւնից, ունի և այլ նշանակութիւն. թռչունի անուն է, որին ուսաները ասում են *скворецъ* (հայերէն անւանում են և սարիակ, լատիներէն *Turdus merula*)։

Ի

Իլիկ — *челнокъ* (въ ручной ткацкой машинѣ).

Ինծ — *барсъ* *чеопардъ*.

Իսլամական — *мусульманскій*.

Իլոտ — *жирный*.

Իլիկ բառով հայերը անւանում են բարակ երկաթեայ կամ սղոյալատեայ ձողունը, որը հազցնում են ջարփելի վրա և որի վրա վաթմանում է մանած թելը, իսկ *челнокъ*-ի հայերէնն է կիոց, որ գործ են անում ջուհակները կտաւ դործելու մեքենայի մէջ. ուրեմն երկուսն էլ տարբեր մեքենաների մասեր են։ — Ինծ բառը միայն *леопардъ* բառի հայերէն անունն է, իսկ *барсъ*-ին հայերն ասում են յովադ։ — Իսլամական բառը սխալ է

թարգմանած **мусульманский** բառով, որովհետև խալաթ բառի ածականը ուսուց լեզվի մէջ չկալ, հետևաբար արդ բառի ածականը թարգմանել մի ուրիշ բառի ածականով անպարմարէ և սխալ: Աւելի ճիշտ կը լինի եթէ խալաթական բառի առջև դնել **къ ис-ламу** օղոսիւնս բառերը:—**խալաթ** жирный է, ալ իւրով աղտոտած—запачканный маслом (իւզալի== жирный).

1.

խալաշ—лепешка, лавашъ.

խոլել—утромбовать.

խո—водоросль, поросль:

Խալաթ ասիական հացերի տե-սակներէն մէկն է, որ ուսուցները չեն թխում. ուրիշն լաւաշ բառը թարգ-մանել այն էլ **лепешка** բառով, որ բոլորովին ուրիշ բան է, անմիտ և անօգուտ է. ալ սղս դէպքում հար-կաւոր էր միայն բացատրել թէ լա-ւաշն ինչ է, և բաւական կը լինէր, մեր կարծիքով, լաւաշ բառի առջևը դնել **родъ хлѣба** կամ **хлѣбъ въ видѣ тонкаго листа**:—**խոլել** կը նշանակի լոյ բարով հաւատարացնել, հարթել, մինչդեռ **утромбовать** նշանակում է ամրացնել գետինը, հողը:—**խո** կամ լոսեր բոլորի մի ամբողջ ցեղի տնուն է, որի ուսուցներն է **водоросли** (Algae). բայց նոյն բառի առջև դնել և **поросль** բառը, որ նշանակում է ծա-ռի չորջր արմատներից բուսած բոդ-բոջ¹, անկարելի է:

10

խաշն—овца.

¹. Նախիջևանի գաւառում պարս-կահալերը բոդբոջ ասում են ցոռի. նոյնը Գողթանում կոչւում է չիպ:

խաւթութ—черная тута.

խարար—волосяной мѣшокъ.

խաւարծիլ—ревень.

խաւիծ—родъ каши изъ творога.

խիզան—одиндворецъ; бѣдный, без-земельный поселенивъ.

խով—рѣзакъ у плуга; сошникъ.

Խաշն բառը, ինչպէս բացատրւած է նաև «Առձեռն» բառարանի մէջ, նշանակում է «ոչխարների և աւծերի բազմութիւն», այսինքն հօտ, որ ուս-տերէն կը լինի **стадо** և ոչ թէ **овца** (ոչխար):—**խաւթութ** ամեն լեզվի մէջ մնում է **խաւթութ**, որովհետև **чер-ная тута** (սև թութ) ասելով չի նշանակի անպատճառ **խաւթութ**, ալ հասարակ թթի սև տեսակը (**Morus nigra**):—**խարար** բառը ուսուցները բացատրւած է մազէ տոպրակ (**воло-сяной мѣшокъ**), ալն ինչ **խարար** բառով գիւղացիք անւանում են մեծ տոպրակը, միևնոյնն է թէ նա գործ-ւած լինի մազից թէ ուրիշ նիւթից (բրդից, բամբակից):—**խաւարծիլ** բառը գուցէ և **ревень** նշանակի, չգիտենք, բայց արդ բառը «Նոր Բաղկիրք Հա-կաղեան լեզվի» բառարանի բացա-դրութեամբ **Rheum L.** բոյսի անունն է, որ դաւարիկ տեական բոյսերից է և Նախիջևանի գաւառում նրան ան-ւանում են շղուն¹):—**խաւիծ** **родъ** **каши изъ** **творога** (խաշիլ կամ չի-լալ կարւած թանից կամ կաթից) է, ալ ուրիշ կերակուր է, որ նկում են իւզի մէջ տապակած ալիւրից:

¹. Այս բոյսը գտնւում է Նախի-ջևանի գաւառի և Գարալաղեալի լեռներում: Գիւղացիք ուսում են նրա հիւթալից ցողունները, որոնք մի քիչ տտեպ և թթւաշ համ ունին:

Այս կերպուրը պատրաստում են միմիայն ծննդկանի համար և չափ-
նի է ամեն մի հալ կնոջ: Բառարանի
մէջ կարելի էր գնել խալժ բառի
առջև родъ купажія изъ муки и
масла բառերը, որ աւելի ճիշտ կը
լինէր քան թէ родъ каши изъ тво-
рога, որ մինչև անգամ նմանութիւն
չունի խալժին: Խնդան բառով հա-
լերը անւանում են բոլոր տնացոյց,
իսկ վրացիք ալն հողագործին, որ
մշակում է կալածատիրոջ հողը իւր-
եւ լաւիտեանական կապալառու, բաց
որոշ պայմաններով, որոնք վրաս-
տանի զանազան տեղերում գանա-
զան են: Խիզանական պայմանների
մի կէտն ալն է, որ խիզանի ձեռ-
քով մշակած ուրու կէտը դառնում
է նրա սեփականութիւն, Գիւղացին,
որ մշակում է հողը խիզանական ի-
րաւունքով (որէնսկրութեան մէջ ալս
իրաւունքը անւանւում է՝ хизанское
право), չի նշանակի, որ նա одно-
дворецъ ¹ է կամ бѣдный, безземель-
ный поселявинъ (խեղճ, անհող գիւղ-
ացի), քանի որ նա անհող չէ ²,—
խոփը գութանի ալն երկաթեալ մասն
է, որով հերկում են գետինը: Ռուս-

¹ Однодворецъ անունով գիւղա-
ցիք կոչկատւում չկան, ալ նրանք
գտնւում են Ռուսաստանում և իրանց
համարում են աղնական ցեղից ծա-
ղած: Օրէնքով նրանք ունին առան-
ձին հողալին իրաւունք, որ բոլորո-
վին նման չէ խիզանական իրաւուն-
քին:

² Հալերը ասում են, օրինակ,
խիզան աղջիկ, ալսինքն խեղճ աղ-
ջիկ: Խմբ.

ները նրան ասում են лемехъ, ալ
ոչ թէ рѣзакъ, որի հալերէն անունն
է ծեփչ, և ոչ էլ сошникъ, որի վրայ
հագցնում են խոփը (сошникъ Բոր-
չալուի դաւառում քուփ, իսկ միւս
տեղերում—шаштун):

Մ

Միտ—горный воробей.

Մորան—процѣженный, фильтрован-
ный (вода).

Մորել—сочиться, просачиваться.

Մփել—плескать, плескаться, волно-
ваться.

Горный воробей ծխերի առան-
ձին տեսակն է, իսկ ծիտ воробей.
Արեմն ալստեղ горный բառը բոլոր-
ովին աւելորդ է:—Մորան բառը
ածական անուն է և նշանակում է
նիւթի ափսոսի մի օրպիտութիւն, որ
լցնելու ժամանակ չի թափւում, ալ
ծորում է. օր. մեղրը, դոշարը և ալն
Գուցէ ծորան բառը չեղին և կի հառ-
կացողութեամբ նշանակում է про-
цѣженный, фильтрованный (և թէ во-
да, ալն ժամանակ процѣженная,
фильтрованная կը լինի) ալն ժամա-
նակ ծո ել բառը сочиться, проса-
чиваться. չի լինի, ալ կը լինի про-
пѣдить, фильтровать.—Մփել բառի
առջև բացի плескать, плескаться,
волноваться պէտք է մեր կարծիքով
չնել և сбивать բառը, որ զործ է
ածւում, օրինակ, ձուի համար (ձուն
ծփել):

Ո. Ձգնիկ

(Վերջը դալ համարում)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ՕՏՏՕ ԲԻՍՄԱՐԿ

Այժմ իշխան Բիսմարկը այլ ևս չի շնչում: Դարուս երկրորդ ձիսում ոչ մի քաղաքական անձի անուն այնքան բարձր չի թնդացել, որքան Բիսմարկինը, և երբ, անակնկալ կերպով, մարտին 1890 թ. Վիլհելմ II առաջացրեց Բիսմարկի հրաժարականը ու վերջինս թողեց իւր բոլոր պաշտօնները ու հեռացաւ իւր Ֆրիդրիխսուռ կալածքը, — նա շարունակեց լոկ իւր շնչով գործել թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութեան մէջ, թէև իբր ընդդիմադրող, բայց մի հեղինակութեամբ, որպէս մէկը, որը պետութիւնը իւր տունն է համարում:

Այս դարին վիճակեց տեսնել երկու վիթխարի հսկաներ, որոնց ոյժը թւում էր այնքան մեծ, որպէս բնութեան տարերային ոյժեր, — Նապոլէօն, դարուս առաջին մի ու կէս տասնեակում, և Բիսմարկ — դարուս երկրորդ կէսի մօտ երեք տասնեակներում: Բայց մինչդեռ Նապոլէօնը իշխեց տարածութեան մէջ, Բիսմարկը իշխեց խորութեան մէջ. մէկը կամեցաւ շատը, միւսը՝ հաստատը. մէկը ձրգտեց դէպի փառքը, դուրս գալով պատմականապէս կարևորի սահմաններից, միւսը իրականացրեց պատմականապէս անհրաժեշտը. մէկը թողեց առասպելական անուն, ազդող ոգիների ու երևակացութեան վրայ, որպէս պատմական շրջանակներից դուրս մի արխած, միւսը թողեց անուն պատմական գործիչի, որը իւր կնիքը դրեց ժամանակի պետական կեանքի վրայ և ոչ միայն իւր հաջրենիքում, այլ և ամբողջ Եւրոպական ցամաքում: Եւ մինչդեռ Նապոլէօնի գրական գործերը ու տաճ օգուտները նորա փառքին չեն ծառայում, բոլորովին այնպէս, ինչպէս մի բարիք, որ չարիքի հետ է կապած,

Բիսմարկի դրական գործերը, ընդհակառակը, ամբողջապէս մոռնում են նորա գործունէութեան ակտիւի մէջ, իսկ նորա յառաջացրած շարիքները գալիս են միայն նսեմացնելու, բայց ոչ ջնջելու նորա փառքը: Այդ շարիքները թէ մէկի և թէ միւսի մօտ բղխում էին անսահման էգոիզմից. բայց Նապոլէոնի էգոիզմը անձնական էր, և այդ էգոիզմին պիտի զոհ ըլլէր ոչ միայն աշխարհքը առհասարակ, այլ և սեփական հայրենիքը. Բիսմարկի էգոիզմը հայրենիքի ոյժի ու պատուի էգոիզմ էր, անսահման աւելի լայն և արդար քան Նապոլէոնինը, բայց և այնպէս միշտ էգոիզմ էր, որը չէր ձուլւում ընդհանուր մարդկութեան զգացմունքների հետ. բացառիկութիւնը Բիսմարկի բնաւորութեան խոշոր գիծն էր: Բայց այդ բացառիկութեան մէջ՝ նա հսկայ շինող էր, և իւր շէնքսի համար խորտակող ամեն դիմադրութիւն, լինի այդ ընդգիծութիւնը դահի կողմից, ժողովրդի ներկայացուցիչների կողմից թէ ժողովրդի և թէ ժամանակի հասարակական կարծիքի կողմից՝ ներսի թէ դրսի:

Բիսմարկը մի ամենախոշոր անձնաւորութիւն էր, ինչպիսին դարերի ընթացքում սակաւ է պատահում: Այդ խոշորութիւնը կայանում էր ժամանակի հանգամանքների ամենաարագ ըմբռնումի և ըստ այնմ գործելու կամքի հզօրութեան մէջ, համաձայն պատմականապէս կազմած տանգին: Բիսմարկը պատմական անձն էր, ոչ միայն որպէս ժամանակի խոշոր գործիչ, այլ և իւր մտածողութեան եղանակով: Նորա անձի մէջ միացած էր ամեն գերմանական բնորոշ աւանդութիւն. միջնադարեան սոմանտիզմը՝ նորա ոգուն նոյն քան ընտանի էր, որքան ժամանակիս արւեստագործութիւնը: Միայն թէ մի բան լինէր ժամանակի պատմականապէս անհրաժեշտը՝ նորա մեծ գործը Գերմանիայի միութիւնն էր: Գերմանական միութեան զաղափարը պատկանում էր թէ դարաւոր անցեալին և թէ մեր դարին: Նարուս պատմութիւնից յայտնի են Գերմանական թիւնները միացնելու փորձերը. կազմեց նոյն իսկ մի գերմանական ընդհանուր պարլամէնտ, Գրանկֆուրտում 1848 թ., և այդ պարլամէնտը չունեցաւ ոչ մի հեղինակութիւն և իւր անուշտ լինելովը միայն ծիծաղելի և ուտոպիական էր դարձնում միութեան գաղափարը: Բիսմարկը հասկացաւ, որ ուրեմն պէտք է ոյժի հեղի-

նակութեանը զիմել՝ կամ Աւստրիայի ոչժին, կամ Պրուսիայի ոչժին: Բայց նա հասկացաւ նաև որ Աւստրիայի գերիշխանութեան հետ կապւած են հին խարխուլ կայսերութեան աւանդութիւններ, որոնք ամուր միութեան իյեալ չեն կարող ծառայել. և աւելի դժւար էր Աւստրիայում աշխարհի աւանդութիւնները փոխել, քան Պրուսիան զօրեղացնել և դորա ոչժի վրայ հիմնելով՝ նոր կարգ ստեղծել: Նա ապաւինեց Պրուսիային և եռանդով պաշտպանեց իւր թագաւորի ծրագիրը՝ զինւորական ոչժը զօրեղացնելու նկատմամբ, ընդդէմ հասարակաց կարծիքի, ընդդէմ պրուսական պարլամէնտի: Այդ զինաւորման մէջ, որի պատճառով թագաւորը իւր մինիստրով մնաց բաժանւած պարլամէնտից և ազգից, Բիսմարկը որ և է նոր սկզբունք չէր մտցնում: Նա իրագործում էր ընդհանուր զինւորագրութեան այն սիստէմը, որ անհրաժեշտութիւն էր դառնել Պրուսիայում դեռ ևս Նապոլէօն I-ի աւերմունքներից յետոյ, մի սիստէմ, որը սակայն յետագայ տարիների ընթացքում աղաւաղման էր ենթարկւել:

Նշանաւոր երևոյթ. զինաւորման պատրաստութիւններ տեսնելուն համար ամենամեծ անժողովրդականութիւն վաչելողը՝ իւր յաղթութիւններով 1866-ին ընդդէմ Պրուսիայի ոսոխ Աւստրիայի, և իւր յաղթութիւններով 1870—1871-ին ընդդէմ Ֆրանսիայի—դառաւ ազգի ամենաժողովրդական մարդը, ազգի կուռքը:

Այդ իրողութիւնը գալիս է իւր տեղը բռնելու պատմագրութեան մէջ այնքան վիճւած խնդրում՝ անհատի նշանակութեան մասին պատմական անցքերի համար: Պրուսիայի զինաւորման նպատակը չէր կարող ծածկւած լինել ժամանակակիցներից, միւս կողմից ազգի և պարլամէնտի ընդդէմ լինելը Բիսմարկին 1862—64 թւականներին յայտնի իրողութիւն է. և երբ զինաւորման իսկական նպատակը իրագործւեց՝ պարլամէնտը օրինաւորացրեց ապօրինի կատարւածը—նա վաւերացրեց առանց պարլամէնտի համաձայնութեան նախօք կատարած զինաւորման ծախքերը, ոգևորեց յաղթութիւնների այն արդիւնքով, որ ապա ձեռք բերեց հակառակ իւր կամքի գործադրած միջոցներով: Իսկ ոգևորութիւնը յառաջացաւ ոչ թէ լոկ յաղթութեան համար ինքնըստինքեան, այլ որովհետև Պրուսիայի տարած յաղթութիւնների մէջ նախ ցո-

լաց և ապա մարմին առաւ գերմանական միութեան գաղափարը, այսինքն այն գաղափարը, որը, հարկաւ, ի սկզբանէ Բիսմարկինը չէր, այլ ամբողջ Գերմանիայինը: Բայց Պրուսիայի ձեռքով այդ գաղափարը իրականացնելը արդէն անշուշտ ամբողջ Գերմանիայի երազածը չէր, այլ Բիսմարկինն էր, որովհետեւ եթէ ազգը—և մի-միայն Պրուսականը—նոյնքան հաւատացած լինէր նախնական զինաւորումների նպատակայարմարութեանը, որպէս գորանում հաւատացած էր Բիսմարկը, ապա վերջինս չէր լինիլ այդ պատրաստողական տարիներում ամենատառած մարդը: Թէ որքան գաղափարը դեր կատարեց այդ ամենի մէջ, այդ երևում է արդէն այն բանից, որ յաղթութիւններից և միութիւնը իրագործելուց յետոյ Բիսմարկի առաջ խոնարհեց ոչ միայն պրուսացին, և ոչ միայն բաւարացին, և ոչ միայն այլ աւելի մանր ժողովուրդները, որոնք մտան միութեան կազմի մէջ, այլ և յաղթած և միութիւնից դուրս վանւած աւստրիացին, որին նա յետոյ բարեկամի ձեռք մեկնեց:

Անկասկած է, որ անհատները, նայած իրենց ոգեկան կարողութեան աստիճանին, տարբեր չափերով են մասնակցում պատմութեան ընթացքին: Բիսմարկի բաժինը եղաւ արտասովոր մեծ: Եւ այն, ինչ նա ստեղծեց՝ արկածախնդրական չէր. և այդ իսկ պատճառով նորա գործը տեղական պիտի համարւի և ոչ նապոլէօնի պէս անցողական:

Բիսմարկի մեծ գործը Գերմանիայի միութիւնն էր, բայց նորա կարեւորութիւնը միայն դորանով չի սպառւում: Նս երբէք չհանդէսեց իւր գափնինների վրայ. նորա գործելու եռանդը չնւազեց երբէք, և ոչ մի րոպէ: Մնալով անվիճելի հեղինակութիւն արտաքին քաղաքականութեան մէջ՝ նա իւր ձեռքն առաւ նաեւ իւր ստեղծած կայսրութեան ներքին քաղաքականութիւնը: —Վախճան պետութեան՝ եկեղեցու (Հռոմի) դէմ, հարկերի օրէնսդրութիւնը, կս իւր սացիալ-դեմոկրատիայի դէմ ու բանւորական օրէնսդրութիւնը և վերջապէս՝ գաղթական քաղաքականութիւնը—ահա այն մեծ առարկաները, որոնք զբաղեցրին Բիսմարկին՝ արտաքին քաղաքականութեան խընդիրների հետ ի միասին: Բիսմարկը ներքին խնդիրներում չունեցաւ նոյն յաջողութիւնը, որ նա ունեցաւ արտաքին քաղաքականութեան մէջ. բայց մեծ վարպետը երևայ նաեւ այդ խնդիրներում: Նորա

սուր միտքը ըմբռնեց թէ որոնք են ժամանակի մեծ խնդիրները: Եւ շօշափած խնդիրներով նա որոշեց թէ որոնք են ժամանակակից Եւրոպայի զբաղմունքների ամենամեծ առարկաները: Հէնց դորանով իսկ նա մի նոր ուղղութիւն տւեց ոչ միայն գերմանական, այլ և ընդհանրապէս եւրոպական քաղաքականութեան: Դորա-նում երևաց մեծ մարդը: Հռոմի խնդրի համար նա իւր կռիւը—որի մէջ սակայն նա մեծ տնձնական մասնակցութիւն ցոյց չտւեց—չարունակեց, որպէս զի կաթոլիկ զօրեղ կուսակցութեան կողմնակցութեամբ, 1878-ից սկսած կռիւ սկսի տնտեսական և սոցիալական ասպարէզի վրայ, որը նորան աւելի կարեւոր էր թւում: Կռիւը կաթոլիկ կղերի դէմ անցաւ սակայն Ֆրանսիա, ուր նա ունեցաւ կարեւոր հետեւանքներ: Բայց տնտեսականի համար Բիսմարկը պիտի իւր հակառակորդ ունենար հէնց այն կուսակցութիւնը—ազգային լիբերալ,—որը ամենից ջերմ օգնել էր Բիսմարկին ազգային միութեան գործում: Բիսմարկը տնտեսական և սոցիալական խնդիրներում դէմ հանդիման կացաւ. այն լիբերալ կուսակցութեան, որին արիւն, մարմին ու ոգի էր տւել 19-րդ դարի արեւստագործութիւնը, այն, որ ստեղծեց դարուս բուրժուազիան և, ղուգրնթաց դորա հետ, նաև տնտեսական գիտութիւնը, որը իւր թէօրիաներով կատարեալ համերաշխութիւն էր հաստատել ժամանակակից բուրժուազիայի հետ:

Ինչ էլ որ ասելու լինեն Բիսմարկի հակառակորդները, բայց սա զուտ ճշմարտութիւն է, որ պէտք էր լինել մի անսովոր անկախ մտածող և ուժեղ ոգի, որ Բիսմարկը հակառակ սկզբունքներով կռիւ սկսէր վաղուց արմատ առած տնտեսական և սոցիալական հայեացքների դէմ, որոնց պաշտպաններն էին իւր ժամանակում ամբողջ Եւրոպայում իշխող «մանչէստրեանները», այսինքն նոքա, որոնք չէին թոյլ տալիս որ պետութիւնը որ և է միջամտութիւն անէ ոչ տնտեսական և ոչ սոցիալական խնդիրներում: Բիսմարկը չունէր դժբախտականների սահմանափակ ոգին. մի յայտնի չափով նա ընդ առաջ եկաւ ազգային արեւստագործութեան շահերին՝ մոցնելով մաքսային հովանաւորող սխտէմը, միւս կողմից ընդ առաջ եկաւ բանւոր դասակարգի պահանջներին՝ բանւորական օրէնսդրութեան սկիզբը դնելով: Թէ մէկը և թէ միւսը կարեւոր նորութիւններ եղան Եւրոպայի

ամբողջ ցամաքի վրայ, և ամենաուրեք այդ նկատմամբ Վերմանիայի օրինակը հետևողներ գտաւ: Տնտեսական զարգացման նւիրած ուշադրութիւնը մեծ պտուղներ տւեց. այսօր Վերմանիան արւեստագործութեան մէջ Եւրոպայի ամենազարգացած երկիրների շարքումն է, և դրսի շուկաներում՝ Անգլիայից յետոյ՝ երկրորդը:

Սոցիալական խնդրում Բիսմարկը պարտութիւն կրեց, եթէ միայն նա կարծւում էր, որ բացառիկ օրէնքներով սոցիալիստների դէմ, կարող էր իսպառ ջնջել սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը: Բայց Բիսմարկը, այդ հալածանքի հետ ի միասին, ստեղծեց օրէնքներ, որոնք յամենայն դէպս բանւորների նիւթական ու բարոյական փրճակի բարւոյթմանը ծառայեցին (յոժբախտ դէպքերի համար վարձատրութիւն բանւորներին և ծերութեան հասակում՝ որոշ թոշակ): Այդ նոյն օրէնքները ստիպւած եղան ընդունել նաև միւս պետութիւնները, որոնք կատարելապէս գերի էին բուրժուազիայի փաշտացած հոյեացքներին: Բիսմարկը ազատեց թէ՛ Վերմանիան և թէ՛ ամբողջ եւրոպական ցամաքի կառավարիչ շրջանները այդ հոյեացքների գերութիւնից:

Յանձին Բիսմարկի սոցիալ-դեմոկրատիան ունեցաւ իւր ամենահարկու թշնամին. բայց այդ թշնամութիւնը ուղղած էր գլխաւորապէս այդ կուսակցութեան հակա-պետական տենդենցների և արտայայտութիւնների դէմ: Սոցիալ-դեմոկրատիան, երկաթի կանցլէրի ստեղծած բացառիկ օրէնքներով ջնջուեց, այլ այժմ աւելի նշանաւոր ոյժ է քան առաջ էր: Բայց մի բան որ չպէտք է ուրանալ, այդ այն է, որ ամբողջ Եւրոպայի ցամաքում սոցիալ-դեմոկրատիան այնքան օրինականութեան չի յարած, որքան Վերմանիայում: Կարգաւորւած սոցիալ դեմոկրատիայի երկիրը այսօր անարխիստներից աւելի զերծ երկիր է, քան որ և է ուրիշը եւրոպական ցամաքում, եթէ նաև հաշւի առնելու լինենք որ Վերմանիայի սոցիալ դեմոկրատիան իւր կարգաւորութիւնովն ու լրջութիւնովը բարոյական ազդեցութիւն է գործած նաև այլ երկիրների նոյնատուն կուսակցութեան վրայ, և այժմ էլ շարունակում է գործել: Թէև սոցիալ-դեմոկրատիային պատերազմ էր չաչաւարարած, բայց Բիսմարկին համակրող գերմանական բարձր մտաւոր ինտելլիգենցիան, չանձին ամենից առաջ գերմանական քաղաքատնտեսների, այն ին-

տեղիդեցիան էր, որը, եթէ բանւորների առաջնորդ չէր, բայց բանւորական խնդիրը ամենայն լրջութեամբ ուսումնասիրող հանդիսացաւ և զիտութիւնն էլ նոր հիմունքներով կերպարանափոխեց՝ ժամանակակից դրութիւնը և մօտագայ ապագայի խնդիրները իրենց պատմական արժէքով ըմբռնել տալու համար աճող սերունդներին և մօտաւոր ապագայի օրէնսդիրներին: Մինչդեռ այդ ժամանակները Գերմանիային հարեաւն երկիրներում, Բիսմարկի նախաձեռնութիւնից առաջ, ղեկավարող շրջաններում բանւորական խնդրից միմիայն սոսկալ և նոյն իսկ խնդրի գոյութիւնը հերքել զիտէին:

Վերջապէս գաղթական քաղականութիւնը: Բիսմարկը, որը ղեկավարն էր ոչ մի դաղթական երկիր չունեցող պետութեան, գերազանցօրէն ըմբռնեց գաղութների նշանակութիւնը, և ոչ միայն սկիզբ դրեց գերմանական գաղթական քաղաքականութեան, և ոչ միայն օժտեց իւր երկիրը մի քանի գաղութներով ու իւր երկրացիներին ձեռնարկութեան ոգի ներշնչեց, այլ և գործողութեան նոր եղանակ մոցրեց Եւրոպայի գաղթական քաղաքականութեան մէջ՝ յամենայն դէպս աւելի նպաստաւոր ընդհանուր խաղաղութեան համար և ազգերի համերաշխութեան տեսակէտից, քան առաջ էր: Բերլինում իւր նախագահութեամբ կայացրած Կոնգոսի կոնֆերենցը (1884 նոյեմբ. — 1885 փետր.) վերջացաւ Կոնգո՛ի պաշտօնապետութիւնով, որով Աֆրիկայի մի մեծ կտորը, ութ միլիոն քառակուսի կիլոմէտր տարածութեամբ, դուրս հանւեց եւրոպական ազգերի զինու մրցութիւնների ափերից, ընդհանուր համաձայնութեամբ որոշելով իւրաքանչիւր մասնակից պետութեան գործելու և սեփականութեան սահմանները:

Բիսմարկի անունը իւր ժամանակակիցները կապեցին ժամանակակից միլիտարիզմի հետ, որովհետեւ Գերմանիայի օրինակով Եւրոպայի ցամաքի բոլոր խոշոր պետութիւնները իրենց զինաւորումները հասցրին մինչև ամենածայրի կէտը: Բայց այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընդհանուր զինւորագրութեան անխուսափելի հետևանքը: Պէտք է կարծել, որ ընդհանուր զինւորագրութիւնը դասւելու է մարդկային յաստաշղիմութեան և ոչ յետաշղիմութեան երևոյթների շարքում: Ընդհանուր պարտադիր տարրական ուսման երկիրը չղացաւ և իրագործեց հաւ ընդհանուր զինւորագրութիւնը, այլ և

ասլացուցեց որ լաւագոյն կրթւածը նաև լաւագոյն զինւոր է, հա-
կառակ այլ երկիրներում միժամանակ և մասամբ այժմ էլ շատ տեղ
տիրող կարծիքին՝ թէ իբր տգիտութիւնը զինւոր պատրաստելու ան-
հրաժեշտ պայմանն է: Մինչև որ ընդհանուր Ֆեդերացիայի գաղափարը
կ'հասունանայ եւրոպական երկիրներում՝ ընդհանուր զինւորագրու-
թիւնը, որպէս մենք ենք կարծում, կայ և կը մնայ մի քաղաքական
անհրաժեշտութիւն: Զի կարելի մէկին և կամ մի երկիր մեղադրել,
թէ ինչու նա կատարելութեան է հասցրել մի հաստատութիւն,
երբ վերջինս պատմական անհրաժեշտութիւն է ճանաչել: Եւ աւել-
ի լաւ է կատարեալ զօրք, քան կասկածիլի արժանաւորութիւննե-
րով զօրք և զինւորական վարչութիւն, ինչպէս այդ կար Ռիսմար-
կից և Մոլակէից առաջ թէ Պրուսիայում և թէ նորա հարեան մեծ
պետութիւններում:

Բիսմարկը ոչ միայն միացրեց Գերմանիան, այլ և բարձրացրեց
այս պետութիւնը մինչև առաջին տեղը մեծ պետութիւնների մէջ
և այսպիսով զերծ պահեց նորահաստատ պետութիւնը թէ զրսի և
թէ ներսի վրիժառութեան փորձերից, կամ այն յարձակումներից,
որ կարող էր ծագեցնել նախանձը: Հոգսը ձեռք բերածը պահպա-
նելու և հաստատելու համար զրգեց Բիսմարկին դէպի խաղաղու-
թիւն պահպանելու քաղաքականութիւնը, դէպի զինակալցութիւնը
Աւստրո-Ունգարիայի և Իտալիայի հետ՝ փոխադարձ պաշտպանու-
թեան հիմունքներով: Այդ նոյն հոգան էր՝ ձեռք բերածը ամուր
պահպանելու՝ որ այնքան հեռու էր պահում նորան միջամտութիւ-
նից այն ամեն զրսի գործերին, ուր Գերմանիան անմիջական շահ
չունէր, բայց գործեր, որոնք կարող կ'լինէին զինու միջամտութիւն
պահանջել, այդ կողմից հակառակը ներկայացնելով այն դրութեան,
երբ Եւրոպայում գերիշխանութիւնը Նապոլէօն III-ին էր պատկա-
նում: Զօրեղ Գերմանիայի այդ ինքնապահպանութեան դիրքը և
Ֆրանսիայի անգօրութիւնը սեփական ոյժերով վերջացնել Գերմա-
նիայի հետ իւր հաշիւները Ելզաս-Լոթարինգիայի նկատմամբ՝
ստեղծեց այժմեան ռեւոլյուսիոն կոնցերտը՝ որը երևան է գալիս
միմիայն Եւրոպայի ներքին անհամբերաշխութիւնը ցոյց է տալու
համար:

Բիսմարկի քաղաքական հանճարի թերի կողմը այդ էր. Եւրո-

պական հեղեմոնիան իւր կողմը գրաւելով՝ նա չկարացաւ եւրոպական զերազոյն շահերի պաշտպանութեան համար—որոնք նաև մարդկութեան շահեր են—միահամուռ ոյժերով գործելու դրութիւն ստեղծել։ Գերմանիայի հեղեմոնիան նորս ձեռքում կարելիութիւն տուց նորան թէև շիտակ մակէր՝ մականունը ստեղծել ու իւր համար և ալք մականունով նոյն իսկ պարծենալ, բայց դորանում երևում էր մի ուղղութիւն, որը երբէմն սահմանում էր ցինիզմի։ Այդ արտապաշտեց Բոլզարիայի կոտորածների ժամանակ, երբ ամենակարող մինիստր էր, ալք արտապաշտեց հայկական կոտորածների ժամանակ և Կրետէի խնդրի մէջ—երբ նա մինիստր չէր, բայց շարունակում էր պատգամախօսի զեր կատարել իւր երկրում և Եւրոպայում։

Ա. ԱՐԱՍԻՈՆԵԱՆՑ

ԶԻՆԱԽՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Քաղաւոր Կայսրի Բարձրագոյն հրամանով արտաքին գործերի մինիստրը 12-ին ներկայ օգոստոսի յանձնեց Պետերբուրգում գտնւող օտարերկրեայ ներկայացուցիչներին հետեւեալ հաղորդագրութիւնը: Վնդհանուր խաղաղութեան պահպանութիւնը և բոլոր ազգերի վրայ ծանրացող չափազանց զինաւորումների կրճատումը իրերի ներկայ գրութեան մէջ մի նպատակ է ներկայանում: Դէպի որը պէտք է որ ուղղած լինեն բոլոր կառավարութիւնների ջանքերը: Այդ հայեացքը լիովին համապատասխանում է Նորին Կայսերական Մեծութեան իմ Օլոստափառ Քաղաւորի մարդասէր և մեծահոգի գիտաւորութիւններին: Համոզւած լինելով, որ մի այլեքան բարձր նպատակ համապատասխանում է բոլոր պետութիւնների էական պահանջներին և օրինական իղձերին, Կայսերական կառավարութիւնը կարծում է, թէ ներկայ ժամանակը խիստ բարեյաջող է, որ միջազգային քննութեան ճանապարհով որոնւեն ամենաիրական միջոցները բոլոր ազգերին ճշմարիտ և հաստատ խաղաղութիւն ապահովելու և, ամենից առաջ, ժամանակակից զինաւորումների միշտ աճող զարգացմանը սահման դնելու համար: Վերջին 20 տարիներում խաղաղասէր ձգտումները մանաւանդ ամուր հաստատուել են լուսաւորեալ ժողովուրդների գիտակցութեան մէջ: Խաղաղութիւն պահպանելը միջազգային քաղաքականութեան նպատակ էր դրւած. յանուն խաղաղութեան մեծ պետութիւնները միացել են կարող դաշնակցութիւններով. խաղաղութիւնը լաւապէս պաշտպանելու համար նոքա զարգացրել են մինչ այժմ չեղած չափերով իրենց պատերազմական ոյժերը և շարունակում են զարգացնել՝ կանգ չառնելով ոչ մի զոհաբերութեան առջև: Սակայն այդ ջանքերը առայժմ

չկարացան ցանկալի խաղաղացման բարերար հետևանքները առաջ բերել։ Ֆինանսական ծանրութիւնների միշտ աճող բեռը արմատի մէջ տատանում է հասարակաց բարօրութիւնը։ Ժողովուրդների ոգեկան և Ֆիզիկական ոյժերը, աշխատանքը և կապիտալը մեծ մասով խլած են իրենց բնական կոչումից և շռայլում են անարդիւնաբեր կերպով։ հարիւրաւոր միլիոններ մսխում են ջնջման զարհուրելի միջոցներ ձեռք բերելու համար, որոնք, այսօր գիտութեան վերջին խօսքը լինելով, վաղը պէտք է ամեն արժէք կորցնեն նոր գիւտերի շնորհիւ։ Ժողովրդի լուսաւորութիւնը և նորա բարօրութեան ու հարստութեան զարգացումը կտրոււմ են և ուղղւում դէպի ծուռ ճանապարհներ։ Այսպիսով, որքան աճում են ամեն մի պետութեան զինաւորումները, նորա աւելի ու աւելի քիչ են համապատասխանում կառավարութիւնների առաջադրած նպատակին։ Տնտեսական կազմի խանգարումները, որոնք յառաջանում են նշանաւոր չափով զինաւորումների չափազանցութիւնով, և այն մշտական վտանգը, որը կայանում է ռազմական միջոցների ահագին կուտակման մէջ, մեր օրերի զինւած խաղաղութիւնը դարձնում են ճնշող բեռ, որը ժողովուրդները աւելի ու աւելի դժւարութեամբ են տանում։ Այդ պատճառով ակնյայտնի է յառնում, որ եթէ այդպիսի դրութիւն շարունակւելու լինի, նա ճակատագրական կերպով կը հանգչէր նոյն այն թշւառութեան, որից ձգտում են խուսափել և որի սարսափների առջև սոսկում է մարդու միտքը։ Սահման դնել անընդհատ զինաւորուներին և միջոցներ որոնել ամբողջ աշխարհքին սպառնացող տեքախտութեան առաջն աւնելու.—այդ է ներկայումս բոլոր պետութիւնների գերագոյն պարտականութիւնը։ Խորապէս տողորւած այդ զգացմունքով, Թագաւոր Վաչսրը բարեհաճեց հրամայել՝ դիմել պետութիւնների կառավարութիւններին, որոնց ներկայացուցիչները յանձնարարւած են Բարձրագոյն Արքունիքում, առաջարկով որ կոնֆերենց գումարւի այս կարեւոր խնդիրը քննելու համար։ Օգնութեամբն Աստուծոյ այդ կոնֆերենցը կարող էր բարեգուշակ լինել առաջիկայ դարի համար։ Նա կարող միութեան կը բերէր բոլոր պետութիւնների ջանքերը, որոնք անկեղծօրէն ձգտում են այն բանին, որ ընդհանուր խաղաղութեան մեծ գաղափարը յաղթանակէր շփոթութեան և կռւի բնագաւառի վրայ։ Միև-

նոյն ժամանակ նա կ'ամրացնէր նոցահամաձայնութիւնը՝ երբ ամենքը միասին կ'ընդունեն իրաւունքի և արդարութեան սկզբունքները, որոնց վրայ հաստատուած է պետութիւնների ապահովութիւնը և ժողովուրդների բարգաւաճումը:

Ռուսաց կառավարութեան այս նշանաւոր առաջարկը հրատարակութեան տուեց օգոստ. 16-ին, օրը, երբ Մոսկւայում Նոցին կայս. Սեծութիւններ կայսր Նիկողայ II և կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնա հանդիսաւոր կերպով բացեցին Ալեքսանդր II-ի արձանը: Ամբողջ աշխարհքի մամուլը խօսեց այս առաջարկի մասին, մեծ մասամբ ոգևորիչ խօսքերով, թէև շատերը չեն ծածկում գործնական խոչնդոտները այդ առաջարկի իրագործման դէմ: Պետութիւնները, մեծ և փոքր, արդէն յայտնեւ են իրենց չօժարութիւնը մասնակցելու կոնֆերանցին:

ԴՐԷՅՖՈՒՍԻ ԳՈՐԾԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Դրէջֆուսի գործը նոր ֆազիսի մէջ է մտնում: Դրէջֆուսի դատելու ժամանակ, յունւարին 1894 թ., փոխ-գնդապետ Հանրին Դրէջֆուսի դէմ խօսող կարևոր վկաներից մէկն է եղել: Սրբ, այդ նոյն Հանրին, որը պատերազմական մինիստրութեան մէջ լրտեսութեան բւերօցում Պիքարին փոխարինողն եղաւ, նորերս խոստովանեց որ ինքն է կենդնել այն դոկումէնտը, որը պատերազմական մինիստր Կաւնենակ յիշեց իբր Դրէջֆուսի մեղաւորութեան ապացոյցներէց մէկը¹ և ուր տրւած է Դրէջֆուսի անունը: Հանրին ձերբակալեց ներկայ օգոստ. և բանտում նա ածելիով իւր կոկորդը կտրելով՝ իրեն սպանեց: Թէև խոստովանութիւնը վերաբերում է մի դոկումէնտի, որը դրւած է 1896 թւականին, ուրեմն կայ չունի այն վկայաթղթերի հետ, որոնք դատաւորներին հիմք են ծառայել Դրէջֆուսին դատաւարանելու համար, բայց որովհետև Հանրին նաև 1894 թ.ին կարևոր վկաներից մէկն է եղել ընդդէմ Դրէջֆուսի, ուստի կատարեալ հիմք կայ մտածելու, որ նաև 1894-ին նա կեղծ վկայութիւններ է տւել:

Այս դէպքը շատ կարևոր է: Յայտնի է որ Դրէջֆուսի գործի վերաքննութիւնը մինչև այժմ չէր կատարւում այն պատճառով, որ, օրէնքի հիման վրայ, մի դատարանական վերջնական վճիռ կարելի է վերաքննել միմիայն՝ երբ ցոյց տրւի մի հանգամանք, որը կարևորութիւն ունի գործի համար, բայց որը դատաւորները չէին նախատեսել: Այդ դէպքում վճիռը կորցնում է իւր բարոյական նշանակութիւնը, և օրէնքը թոյլ է տալիս պահանջել կառավարութիւնից և կամ կառավարութիւնը ինքը պարտաւոր է գործը վերաքննել:

¹ Տես Մուլճ № 6, էջ 870-871.

Յայտնի է որ Դրէշֆուսի պաշտպանները, նոցա մէջ և Էմիլ Զոլան, պահանջում էին Դրէշֆուսի գործի վերաքննութիւնը, ապացուցանելու համար որ Դրէշֆուսին վերագրած դաւաճանական գործերը զնդապետ Էստերհազին է կատարել: Բայց նոքա այդ բանի համար չէին ցոյց տալիս մի հանդամանք, որը կարողանար ջնջել կատարւած դատաւճիռը: Էմիլ Զոլան պնդում էր, նորա հետ նաև ուրիշներ, որ Դրէշֆուսին չէին ցոյց տւել այն գաղտնի դոկումէնտը, ուր գրւած է այդ կանալիա Դ..., մինչդեռ 1894 թւին, զինուորական դատարանը իբր թէ գլխաւորապէս այդ դոկումէնտի հիման վրայ է իւր համոզմունքը կազմել Դրէշֆուսի մեղաւորութեան մասին: Բայց Զոլայի այդ պնդումը բաւականաչափ հիմք չէր ընդունւում գործը վերաքննելու համար, որովհետև բնաւ ապացուցւած չէ, թէ 1894-ի դատաւորները գլխաւորապէս այդ դոկումէնտով էին ղեկավարել Դրէշֆուսին դատապարտելու համար: Եւ կառավարութիւնը մերժում էր Դրէշֆուսի գործը վերաքննել: Այդպէս էր մտածում Մելինի մինիստրութիւնը. այդպէս էր մտածում նաև Բրիտոնի ներկայ մինիստրութիւնը, այդպէս էին մտածում նաև Ֆրանսիայի ամենակարեւոր թերթերը, այդպէս էր մտածում նաև Ֆրանսիական պարլամենտի ահագին մեծամասնութիւնը:

Այժմ, սակայն, խնդիրը այլ ընթացք է ստանում: Հանրին նորերս խոստովանեց որ մի դոկումէնտի կեղծիք է կատարել 1896-ին ի վնաս Դրէշֆուսի. և այդ նոյն Հանրին 1894-ին Դրէշֆուսի դէմ դատարանում վկայութիւններ է տւել. պարզ է, որ ի վնաս Դրէշֆուսի դոկումէնտ կեղծողի վկայութիւնները բարոյական ոյժը կորցնում են. պարզ է, որ եթէ Դրէշֆուսին դատապարտելու դործում Հանրի վկայութիւնները դեր են կատարած, դատարանական վճիռն էլ արատաւորւում է: Դրէշֆուսի գործի վերաքննութիւնը դառնում է այժմ անհրաժեշտութիւն:

Թող բնաւ չկարծեն, թէ հասարակաց տրամադրութիւնները Ֆրանսիայում այդ իսկ պատճառով փոխւում են: Ֆրանսիան, որը այսօր պահանջում է արդէն գործի քննութիւնը, նոյն Ֆրանսիան է, որը երէկ Էմիլ Զոլայի ամբաստանութիւնները ապացոյցների տեղ չէր ընդունում: Ֆրանսիան վրդովւում էր անապացոյց ամբաստանութիւնների դէմ, վրդովւում էր դաւաճան ճանաչւածին սպիտակաջ-

նկու փորձերի դէմ վրդովւում էր, երբ պնդում էին թէ բարձր զինուորական վարչութիւնը հովանաւորում է մի ուրիշին (Եստերհազիին), զգիտեալով որ սա դաւաճան է: Յրանսիան պահանջում էր ապացոյց. և էմիլ Զոլան այդ ապացոյցը չէր տալիս:

Բայց այժմ հանդէս է գալիս մի ապացոյց, որ Ղրէյֆուսին դատաւարտող վճիռը արատաւոր է: Այդ ապացոյցը Հանրիի խոստովանութիւնն է: Եւ ո՞վ գտաւ այդ ապացոյցը? Յրանսիական կառավարութիւնը ինքը: Յրանսիական պատերազմական մինիստր Կաւենետակը, 1896 թւականին գրած մի ղոկումէնտի առիթով, որ հէնց ինքը յիշել էր իւր ճառում պատգամաւորների ժողովի առաջ, բայց որը կեղծ յայտարարեցին Ղրէյֆուսի պաշտպանները, խիստ հարցաքննութեան ենթարկեց Հանրիին, և կառավարութիւնը իւր խոստովանութիւնը այնտեղ հասցրեց, որ Հանրիին այլ բան չէր մտում, բայց և թէ խոստովանել իսկութիւնը: Եւ Հանրիին խոստովանեց որ ինքն է կեղծել, երբ արդէն մինիստրը նորան յայտնել էր թէ ինքը հէնց իրեն՝ Հանրիին՝ վրայ է կասկած տանում:

Այսպիսով Ղրէյֆուսի գործի վերաքննութիւնը դառնում է անհրաժեշտ: Մինիստր Կաւենետակ վերաքննութեան խնդրում հակառակ էր Բրիտոնի մինիստրութեան բոլոր մնացած անդամներին: Նորա կարծիքով՝ Հանրիի խոստովանութիւնը 1896 թւականի մի ղոկումէնտի մասին՝ հիմնական նշանակութիւն չունի 1894 ի յունւարին արւած դատավճռի նկատմամբ և պնդում է թէ՝ Ղրէյֆուսը այնուամենայնիւ մեղաւոր է: Բայց վերաքննութեան գործի համար Կաւենետակի համոզմունքը Ղրէյֆուսի մեղաւորութեան մասին նշանակութիւն չունի: Ղրէյֆուսը, եթէ իրօք մեղաւոր է, կ'դատաւարուի երկրորդ անգամ. բայց որ գործը պէտք է վերաքննուի — Հանրիի խոստովանութիւնից չետոյ այդ դառնում է անկասկած: Եւ այդպէս էլ մտածում է այժմ Յրանսիայի ոտաջաւոր մասը, Յրանսիայի կառավարութիւնը և հասարակաց կարծիքը:

Մուրճի ընթերցողներին լաւ յայտնի է, որ մենք, այս աշխարհաշառաչ խնդրում, կամեցել ենք Ֆակտերին կարեւորութիւն տալ և ոչ այս կամ այն անունին, կոչւի այդ անունը նոյն իսկ

Զօլա: Դեռ ևս Մուրճի № 1-ում, Զօլային առաջին անգամ դատելուց առաջ՝ մենք առում էինք՝

«Գովում ենք Զօլայի քաջութիւնը, եթէ նա ունի ապացոյցներ, որով նա կը հաստատի իւր մեղադրանքները: (Մուրճ № 1, էջ 150):

Եւ աւելցնում էինք.

«Բայց գովում ենք նաև Ֆրանսիական հասարակաց կարծիքը և Պարիզի ժողովուրդը, երբ սա, մինչեւ ապացոյցները երևան կը գան, իւր հաստատել շնորհում է իւր կառավարութեան օրգաններին և ոչ Զօլային:»

Եւ իրօք, այսօր, երբ գէթ մի հատ ապացոյց կայ որ Դրէյֆուսի մասին դատավճռի մէջ մի արատ կայ (Հանրիի վկայութիւնները) Ֆրանսիայի հասարակաց կարծիքը թեքել է յօգուտ գործի վերաքննութեան:

Յաղթում է այն կարծիքը, որ մենք յայտնել ենք Ֆրանսիայի հասարակաց կարծիքի մասին!

Վերջապէս մի երրորդ անգամ հարկ ենք համարում մեր սկզբի խօսքերը վերարտադրել այսպէղ.

«Մենք Ֆրանսիան ճանաչում ենք այնքան ազատ և լուսաւոր երկիր, որ կարող ենք հաւատ ունենալ թէ նորա հաստատութիւնների հովանու ներքոյ սուտն ու արդարութիւնը երևան կը գան նաև անկախ օտար ազգերի ձայների միջամտութեան, ազգերի, որոնցից շատերը դեռ միայն պիտի սովորեն Ֆրանսիայից լծէ ինչ է օրէնք, ինչ է արդարադատութիւն: (Մուրճ № 1, էջ 150-151, կրկնւած Մուրճում № 2-3, էջ 370-ի ծանօթութեան մէջ):

Եւ Դրէյֆուսի գործին տրւած այժմեան ընթացքը դալիս է կատարելապէս արդարացնելու մեր այդ հիմնական կարծիքը Դրէյֆուսի գործի առիթով:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԱԳԱԹ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Կօթի գիւղը, Ղազախի գաւառում

III

Աղջիկ երեխան:—Կին ծեծելը:—Նրբիսայ-աղջիկները իբր ամուսիններ:—Տնտեսութիւնը:—Գողութիւնները:—

Նախորդ նամակումս, ակնարկելով կանանց և տղամարդկանց փոխադարձ չարաբերութիւնների մասին, ասացի, որ վերջիններիս դրութիւնը անտանելի է: Խոստման համաձայն վերադառնալով այդ հարցին, այժմս միառմի կը թւեմ աւելի ընդհանրացած և աչքի ընկնող երևութները, խընդիրը լուսաբանելու և մի որոշ գաղափար կազմել տալու համար:

Նրբ կիներ լինում է երկունքի մէջ, ամբողջ տունը սպասում է տղայ թէ աղջիկ լինելուն. և թէ նորածինը աղջիկ է, իւր համար ամբախտութիւն է համարում գիւղացին, մանաւանդ երբ նորածինը ունի միայն քոյրեր: Պէտք է նկատած, որ տղայ կամ աղջիկ լինելը գիւղացոց կարծիքով կախումն ունի միմիայն կնոջից, հետեապէս սորան նախատում են, թէ ամուսինը, թէ սկեսայրը և թէ միւս ազգականները: Ահա նրանց սովորական խօսքերը, որ չեն խնայում շուռլել խեղճ կնոջը. «Ֆողեմ էդ շաշ գլուխդ, քանի էդ սև օձերը շարես, բա լա բոլ չէր, դու պոի քանդես սեղ քարը քես», և քու հօր տունը բրիչակ ըլէր գլխիդ, ան կնիկ, էդ ինչ ջինս ես էլէլ» և այլն: Պակաս չեն թողնում նաև նորածնի հասցէին. ամեն մի համեղ խեղճ երեխին խօսքով գետինն է կոխում ու ցանկանում նորա շուտափութ մահը, թէև համոզւած են, որ «աղջկալ գլուխը քարի պէս պինդ կը լինի, նրան գրողը չի տանի»: «Էհ, աղջիկ խիզան է, քարի տակն էլ դնես կ'ապրի» ասում են նրանք: Նւ ալս բոլորը արտասանում են տան միւս երեխաների ներկաութեամբ: Պէտք է տեսնել, թէ երեխաները որքան հետաքրքրութեամբ են հետևում այս բոլոր խօսակցութիւնը. իհարկէ

մատաղ հոգին իրանը կատարում է։ Սրանք, աղջիկ երեխաները, հենց աչքերը բանալու օրից զգում են իրանց ոչնչութիւնը, որ իրանք սև օձեր են, տնաքանդներ են, վերջապէս իրանց ծնողների համար մի անցանկալի իր։ հետևապէս սրանք լինում են աւելի վախկոտ, թուլամորթ, կասկածոտ և ստրուկ բնաւորութեամբ։ Թող չկարծւի թէ աղջիկ ունենալու համար գիւղացու վիշտը նորան ամուսնացնելու և ծախսի տակ ընկնելու հոգսն է։ Ընդհակառակը, աչտեղ ամուսնանում են բոլոր երիտասարդները, և սրանց թիւը շատ լինելով քան օրիորդներինը, տանը ոչ մի աղջիկ չէ մնում։ նոյն իսկ աղջկատէրը ոչ մի կուպէկ չի տալիս, ընդհակառակը դեռ մի բան էլ ստանում է փեսայի կողմից, նախելով պալմանին, 30—100 ռուբլի, որ տեղական բառով կոչւում է «տուժինք»։ Վշտի պատճառը այն է միայն, որ եթէ չլինէր աղջիկ, անշուշտ պէտք է տղա լինէր, որը հօրւ կ'օգնէր իւր բոլոր աշխատանքների մէջ։ տանը կ'աւելանար մի մշակ, որ ի հարկէ գիւղացու համար թանգ արժէ։ Աինք անդամ չէ համարւում տան մէջ։ նա բանւորի տեղ է բռնում ընտանիքում։ Ամենաշնչին դէպքի համար նա ծեծւում է և անպատուում, գլխաւորապէս ամուսնուց, և ծեծը ախքան է ընդհանրացած, որ գիւղում մի տեսակ օրէնք է դարձել, որ մարդը անպատճառ պէտք է կնոջը ծեծէ։ «Մարդը, որ կնոջը չծեծէ, նա էլ ինչ մարդ է։ կամ էն կինը որ մարդուց չէ ծեծել, նրա ձեռքի շորշոփը չի կերել՝ էլ ինչ կնոջութիւն կ'անի»։ Այսպէս ասում են իրանք գիւղացիք։ Նոյն իսկ իրանք կանայք ծեծը ընդունում են իբրև օրէնք և առանց ձաջն հանելու տանում են այդ տանջանքը։ Աինք իրաւունք չունի ձաջն հանելու մարդու առաջ, որքան էլ ինքը արդար լինի։ նա միայն կարող է աղաչել, որ իրան խղճան, խնայեն։ Երեւակայեցէք կատաղած մարդը կնոջը ծեծում է։ մազերից բռնած քարչ է տալիս չատակի վրայ, գոռում է, հայհոյում է, անպատուում է, և աչս բոլորը իւր հարազատ երեխաները տեսնում են։ Թէ ինչպէս իրանց մալըր արիւնշաղախ ընկած իրանց կատաղի հօր ոտքերի տակ, որպիսի սոսկալի տանջանքներ է կրում, ինչպէս լալադին ձաջնով աղաչում է, որ իրան խնայէ, որ ինքը մեղք չունի, որ ինքը կը մեռնի, որ գոնեայ իրա երեխաներին խղճալ։ իսկ երեխաները մի-մի պատի տակ կուչ եկած անձաջն լալիս են և միեւնոյն ժամանակ աչ ու սարսափից դողում։ նրանց մանկական դէմքը երկիւղ է արտապայտում ու ամբողջ մարմնով սոսկոյս են ու դողում։ միայն երբեմն ներքին լուր մուծելից, ինքնաբերաբար, նրանց մանկական բերանից դուրս է թուչում, «վաչ նանի ջան, վաչ» խօսքերը։ «Ձէնդ կտրիր, չան լակոտ, թէ չէ թիրքա թիրքա կ'անեմ», — գոռում է իսկոյն աչքերը չուելով կատաղած հալըր։ և աչսպէս կամայ ակամայ երեխաները առիթ ունենալով համարեա ամեն օր ներկայ լինելու աչսպիսի տեսարանների՝ ընտելանում են, և սովորական բան դառնալով՝ նրանց սիրտները դեռ մատաղ հասակում քարանում են։

մեռցնելով իրանց մէջ կարեկցութեան և ցաւակցութեան զգացմունքները. մանաւանդ տղա երեխան պատրաստուում է աւելի կատաղի ամուսին լինելու: Կնոջ ծեծը ընդհանուր է, բացառութիւնները քիչ. և ինչպէս ասացի, կինը տանում է առանց տրտունջի, համարելով ալդ իւր ճակատագիրը: Սակաւն կան և աջնպիսի ամուսիններ, որ իրանց կանանցը մինչև անգամ ծեծելով մեռցնում են: Ահա և ձեզ ֆակտեր: Խուղնանց Մուսին ամուսնանում է Օնանանց Գեօի աղջիկ 12 տարեկան Գարանի հետ: Համարեա պսակելու օրից շարունակ ամբողջ 6 տարի ամեն օր զաղանաբար կնոջը ծեծելիս է եղել, դանազան անհիմն պատճառներ որոնելով, — թէ խնչու էդ կաթսան ծուռն է դրած, թէ խնչու երեխան հագուստը պատռել է, խնչու թխած հացը անհամ է, և ալին: Մի քանի անգամ խեղճ կինը փախչում է իօր տունը, որպէս զի ազատւի մարդուց, բայց, սովորութեան համաձայն, միմիայն նախատիք վատտակելով, թէ իւր ծնողների և թէ շրջապատողների կողմից, ստիպւած է լինում դարձեալ գնալ մարդու մօտ, մինչև որ իւր կեանքին վերջ է դնում հետեւեալ պայմաններում: Մի օր Մուսին օդի է գնում և լանձնում է կնոջը, որ պահէ. կինը մի ժամից չետոյ նկատում է, որ գետինը թրջւել է օդից, տիկը ինչ-որ փչացած է եղել. իսկ ինքը ալդ բանը չի նկատել. ինչ ասել կ'ուզէ, որ խեղճը սաստիկ վախում է: Այժմ ահագին պատճառ կա՝ որ մարդը նրան կը սպանէ: Սա ուզում է մի տեղից օդի գնէ պակասը լրացնելու համար, որպէս զի մարդուց ազատւի. ուստի դիմում է իւր մօրը, քրոջը, դրացիներին, որ իրան մի ուրբի ձեռնափող տան. բայց գիւղացի կանանց մէջ փող հաղիւ է գտնւում, աջնպէս, որ ուր որ դիմում է՝ զուր է անցնում: Յուսահատւած անհամբեր սպասում է ճակատագրին, որը երկար չէ սպասեցնում: Մուսին իսկոյն նկատում է. ի հարկէ, կատաղութեանը էլ չափ ու սահման չէ լինում. թէ որպիսի տանջանքներ է տալիս խեղճ կնոջը — նկարագրել զժւարանում եմ, մինչև անգամ շիկացրած շամիուրներով սկսում է դադել թշառ և անպաշտպան կնոջը. վերջապէս հազիւ դրացիներին լաջողւում է ազատել կնոջը զաղանացած մարդու ճիրաններից: Մուսին իւր բաւականութիւնը ստանալով, գնում է իրա բանին. իսկ կինը, հազիւ ուշքի գալով, հաւաքում է երեսաներին իւր շուրջը, խնդրում է հարեաններին իրան միայնակ թողնել, երկար ժամանակ արտասւում է. միենոյն ժամանակ գուրգուրում է երեսաներին, համբուրում է նրանց, սեղմում է կրծքին. նալում է երկար ժամանակ նրանց երեսին, կարծես ուզենալով իւր վերջին փափազը լսեցնել. բայց չէ կշտանում, համբուրում է նորից, կրկին սեղմում է կրծքին, էլի նալում է անընդհատ, նորա սիրտը ալեկոծւում է. լուռ է նա, միայն նրա անմեղ ու պարզ աչքերից անընդհատ թափւում են արտասուքի վերջին կաթիլները. կշխանելը տխուր-տրտում նալում են իրանց մօրը. իւրաքանչիւրը իւր հերթում ցանկանալով մխիթարել մօրը, արտա-

սանում է իր միակ խօսքերը. «Հերիք է, նանի ջան, լաց մի՛ ըլիլ ապին էլ չի ծեծիլ քի».— «Բա ինչ անեմ, որ լաց չի լինիմ, ա՛յ անտէր քալէք ջան, խեղճ ու թշառ քալէք ջան, անտէր ու մոլոր քալէք ջան, հարաք ձեր հօր ձեռքից ձեր խորթ մօր ձեռքից ինչ սև օր պըտի քաշէք. ինձ հմար դարդ չանէք. որ մեծանաք իմ կորած ու բաթմիշ էլած գրեզմանս ման էկէք գտէք. ձեր խեղճ մօր մտներուցդ չզցէք. բարով մնաք, իմ խեղճ երեխէքս. Ռէւազ ջան, Մարէն ջան, թող աջն ու խաչը ըլի ձեզ վրաք»։ Կրկին ու կրկին համբուրում է երեխաներին, իսկ երեխաները ոչինչ չեն հասկանում. ալսչափ քնքշութիւն, ալսչափ վառ սէր նրանք չէին տեսել իրանց մօրից. երեխաները լուզում են, փաթաթւում մօրը. մէկը երեսն է համբուրում. միւսը ձեռքը երրորդը շորերը. «Նանի ջան, ջանի, էտ օր (ուր) ես գնում գու, օր, մեզ էլ քու հետ տար» ասում են երեխաները լաց լինելով. բաց մալը ալ կու չէ կարողանում մի բառ արտասանել, նրան արտասուքը խեղդում է, նա միայն գէտ է իւր վերջին մալրական հալեացքը լի անհուն սիրոյ և անդառնալի վշտի զրացմունքներով։ Ապա մի քանի անգամ երեսին խաչակնքում է. ճաշակում է հողով¹, ու արագութեամբ ցած է բերում պատից կախած ամուսնու հրացանը. ծալը ուղղում է կրծքին ու ոտովը հարւածում հրացանի զրսպանակին և ալսպիտով հանգստանում է ընդ միշտ մարդու բարբարոսութիւններից։ Երեխաների ճիշը, հրացանի ձայնը հաւաքում են դրացիներին. բաց արդէն բանը վերջացած է լինում։ Տանուտէրը ի հարկէ կալաւորում է Մուսնին, որ միւս օրը լանձնէ ուր հարկն է. սա էլ ալստեղ բտնտարած տեղումն է իւր կեանքին վերջ տալիս, կախելով, երևի երկիւղ կրելով իրան սպասող պատժից. դէպքը պատահեց 1890 թւին։

Ալարդկանց Պետին, Նունպէս ամենաչնչին պատճառներ որոնելով, ամենաանխիղճ կերպով միշտ ծեծելիս է եղել կնոջը և աչն աստիճան սաստիկ, որ տանելը ալ կու անհնարին է լինում։ Մի օր սաստիկ կսկծից և մարդու անողորմ ծեծից համարեալ խելագարութեան աստիճանին հասած, խեղճ կինը ալ կու ոչ մի ճար չը գտնելով, զետնոյն է տալիս իւր հարազատ միամեալ երեխին, միւս երեխին էլ թողնում է տանը անխնամ, և ինքը փախչում է անդառնալի կերպով թէ տնից և թէ ամբողջ գիւղից. ալսպիտով քաղցած ծարաւ թափառում է իրան բոլորովին անձանթ տեղերը. ի հարկէ ընկնում է զանազան չրջանների մէջ, և վերջը հեռանում է Գանձակ քաղաքը, և աչմս, ինչպէս ասում են, ալստեղ ապրում է մի թուրքի մօտ իբրև նորա կինը։ Որքան պէտք է կեանքը թունաւորած լինի մի պարկեշտ և ամօթխած գեղջկուհու համար, որ թողնէ իւր տունը

¹ Հողը ընդունում են անճարացած դէպքում իբրև ճաշակ, աչն հիման վրալ որ Աստուած մարդուս ստեղծեց հողից.

տեղը, մեռցնէ իւր ձեռքով իւր հարազատ երեխին, ընկնի իրան բոլորովին անչափ շրջաններ, աչտախոտով պատուի ամօթխածութեան և պարկեշտութեան քողը և ճարահատեալ ամուսնանալ մի թուրքի հետ: Որովհետև հալը նրան չի առնիլ, չէ որ նրա գազան մարդը դեռ կենդանի է: Թէ որքան տանջանք է կրել և գուցէ մինչև հիմա էլ կրում է խեղճ կինը,— սա աւելի սոսկալի է, քան կարելի է երևակայել:

Նոյնպէս և վերը ցիլլած ինքնասպանութեան դէպքը, որ առաջին անգամն է պատահում աչ գիւղում, գիւղացոյց վրալ սարսուռ է բերում: Բայց արի տես, որ գիւղացիք դեռ մեղադրում են զոհերին, թէ «նրանց արածը անդգամութիւն է, ի հարկէ մարդն է՝ կը ծեծէ էլ, աչքն կը հանէ. կինն է՝ պէտք է սուս կենալ և համբերող լինի»: Առհասարակ կանաչք շատ թշուառ դրութեան մէջ են, նրանք համարեա բանտարկւած են, ունեն ոչ մի չիտմն. միաչն դիւզի աղբւրն է նրանց միակ մխիթարանքը, ուր հանդիպում են միմեանց և պատմում են միմեանց իրանց սրտի թախիժն ու վիշտը: Կաշտալին բոլոր աշխատանքը նրանց համար խիտ արդելւած է. միաչն մարդուն հաւատար աշխատում են կալումը. դրանից զատ կանանց մնում է տան միւս մանր գործերն անել. աչն է՝ հաց թխել, կարել, կարկատել, իւղ-պանիր շինել:

Սակաչն տնտեսութեան կողմից շատ թուլ են. գիւղական հարստութիւններին, աչն է՝ կաթից, բրդից, բանջարեղէններից, տնալին թռչուններից օգտուելու եղանակը չը գիտեն. կաթը փոխարինելու գեղեցիկ սովորութեան մասին գաղափար անգամ չունին. թեւ-պանիր շինելը չը գիտեն. իւղ պատրաստում են միմիայն մածոնից: Լաւ ձեռագործներ նոյնպէս չը գիտեն. բացի գետնի գորդ և հորագործ բրդեալ շաւերից և մի քանի տեսակ կարպետներից ուրիշ ոչ մի ձեռագործ, մանաւանդ, ասեղնագործութիւն չը գիտեն: Աչնպէս որ, եթէ կանաչք գաղափար ունենալին գոնեալ ամենաբախտարար նրանց պաշտմանները աչքան ծանր են, որ առաջադիմելու փոխարէն զտաղիմում են: Այնը ինքնուրույն չէ, նա մարդու սրտով է, նրա մտաւոր պաշարը չնչին է, կեանքի մասին ոչ մի գաղափար, հաշեացք չունի: Մարդը միաչն երբեմն է իւր անելիքի մասին բարեհաճում չապտեղ կնոջը, աչն էլ ի գիտութիւն:

Եւ զարմանալու ոչինչ էլ չկալ. կինը աչքը բանտու օրից միշտ նախատինք ու տոգորութիւն է լսել իւր հասցէին, որովհետև ծնւել է աղջիկ. մանաւանդ, որ սովորութեան համեմատ ամուսնացնում են շատ փոքր հասակում, մեծամասնութիւնը 9—13 տարեկան: Պարզ է, որ աչտախոտ հասակում ամուսնացած երեխաները ապագայում լաւ ամուսին չեն կարող լինել. իսկ շատերը հէնց ամուսնութեան սկզբներում որոնում են զանազան

հիւանդութիւններ, մեծ մասամբ դառնում են անդամալուծ, բոլորովին զրկւում են ծննդաբերութիւնից, հետեապէս համարւում են մի ոչ ցանկալի անդամ տան համար։ Սակալն թող խօսեն ֆակտերը։

1. Հալնանց Փարսաղանը պսակւում է Սևի գիւղացի Գաւրի Սբաղեանցի 10 տարեկան աղջկայ Մազթաղի հետ անցեալ 1897 թ. փետրւարի 2-ին։ Ենթը Փարսաղանը աչրի է, աչն էլ 50 տարեկան, և իւր կնոջ տարիքով սղալ ունի իւր առաջի կնոջից։ Ուրեմն 10 տարեկան երեխան պէտք է ամուսին լինի 50 տարեկան մարդուն... Խեղճ երեխան փախչում է անտառներ, կորչում է. ետ են բերում, ծեծելով զօրով պահում են։

2. Ակոփանց Ակոփը պսակւում է Արզմանանց Արտէմի 11 տարեկան որբ աղջիկ Օսանի հետ, անցեալ տարւալ փետրւարի 7-ին։ Խեղճ երեխան չը կարողանալով տանել իւր 30 տարեկան ամուսնու պահանջները՝ փախչում է մի կերպ մօրը մօտ, որպէս զի ազատի զարհուրելի տանջանքներից, բաց իզուր. ամուսինը մի քանի օրից չեսող չարձակւում է գիշերով իւր զոնքանչի տան վրա և զօրով փախցնում է իւր երեխայ կնոջը և գիւղից հեռացնում է տանելով սարերը, որպէս զի երեխան ալ ես հնար չունենալ փախչելու մօր մօտ։

3. Մելքանց Ուհանէսը պսակւում է Բարանալ գիւղից 11 տարեկան որբ աղջկայ հետ 1893 թւին. ինքը Ուհանէսը 35 տարեկան աչրի է եղել։ Սա առաջին անգամ նոյնպէս ամուսնանում է երեխի հետ որ մի քանի տարի անդամալուծ մնալուց չեսող մեռնում է։

4. Տէր-Գրիգորեանց Խեչօն պսակւում է 1894 թ. Օսէփանց Ահալի 10 տարեկան աղջկայ հետ. ինքը Խեչօն նոյնպէս լինում է աչրի 30 տարեկան և 2 երեխաներով. մեծը 6 տարեկան։

5. Օսէփանց Ակոփը պսակւում է 1893 թւին Դովեչ գիւղացի 12 տարեկան մի որբ աղջկայ հետ. ինքը Ակոփը լինում է աչրի 37 տարեկան և 3 երեխաներով. մեծը 10 տարեկան։

6. Սեփիսանանց Մազարը պսակւում է 1892 թւին Թառկանց Օսէփի 12 տարեկան աղջկայ հետ, ինքը Մազարը լինում է աչրի 38 տարեկան։

7. Մեհրաբանց Աթին պսակւում է 1891 թւին Դլլաքանց Օսէփի 9 տարեկան աղջիկ Խալլուի հետ, որը մինչև ալժմա էլ տկար է։

8. Զաւնանց Ղիասը պսակւում է 1896 թւին Ալբեգանց Սաքօի 12 տարեկան աղջկայ հետ, ինքը Ղիասը լինում է աչրի 35 տարեկան։ Սա առաջին անգամ ամուսնանում է նոյնպէս 11 տարեկան երեխայի Սեփիսանանց Աթին աղջկայ հետ, 1890 թւին. խեղճ աղջիկը դառնում է անդամալուծ և ամբողջ 5 տարի տանջելուց չեսող 1895 թ. հոկտեմբերի 25-ին համարիա սպանում են, սոսկալի տանջանքներով, որի մանրամասնութիւնները աւելորդ չեմ համարում առաջ բերել նախօրօք ներողութիւն խնդրելով ընթերցողներիցս եթէ պատմածովս վրդովեմ նրանց։ Ինչպէս ստա-

ցի, սա դառնում է անդամալուծ, որ հազիւ է կարողանում փախի օգնութեամբ ման գալ. ի հարկէ որան՝ նախատում են ամեն մի քաղաքիսում տան բոլոր անդամները, ասելով չալ մեռնիս զու, պրծնենք, մեր ջանն էլ զինջանայ, քունն էլ. հալ քու ոտը կոտրէր, բալքի մեր տունը չը գալիր» և ալն: Բայց խեղճը ալսլափի նախատինքը տանում է լուռ և անտրտունջ: Վերջապէս վերը լիշւած օրը աղջկալ տեղրակինը չախնում է, որ ինքը մի ինչ որ դեղ է սովորել, որը միանգամից կը լաւացնի նրա ցաւերը: Միևնոցնը չախնում է աղջկալ հորեղբոր կնոջը, որին և հրաւիրում է իբրև իրան օգնական: (աղջիկը որք էր) Բժշկութիւնը սկսում է ալսպէս՝ նախ թորոնը վառում է և երբոր բաւականին տաքանում է, ապա մերկացնում է աղջկանը. ամբողջ մարմինը քսում է սովորական սպիտակ վառելու ճաւթով, ապա իսկոյններէ կանգնեցնում է տաքացած թորոնում, և թորոնի բերանն էլ ծածկում: Խեղճ աղջիկը մնում է նաւթից գոլացած զազուլ լի տաք թորոնի մէջ: Ի հարկէ, հէնց առաջին վալրկեանում ճաւթանում է որ վատանում է, շնչառութիւնը կտրւում է, գազը իրան խեղդում է: Ազաչում է, որ չը շարունակեն, բայց տեղրակինը լսել անգամ չէ ցանկանում: — Վալ ուշքս գնաց, աղաղակում է խեղճը թորոնի միջից: Լսող չը կալ: — Վալ մի գդալ ջուր: — Տուող չը կալ: — Վալ, նանի ջան, վալ մեռնում եմ, օգնեցէք, մեղք եմ, ինձ միք սպանել: Դարձեալ անտարբերութիւն և հեգնութիւն: — Չես մեռնիր, որ ջանդ էլ դուրս գալ՝ պիտի մնաս, քրտենո, ու լաւանաս, գոռում է վրան քարասիրտ տեղրակինը: Հօրեղբոր կինը ուզում է հանել թորոնից, կամ գոնեալ ջուր տալ. սա էլ է արգելում: Խեղճը մի քանի խուլ ձալն էլ հանում է — և ապա խեղդում, ու մնում է թորոնի մէջ, շատ թէ քիչ Աստուած գիտէ, միալն հանում են թորոնից անշնչացած դիակ, բոլորովին սեւացած ածուխ դարձած, ու զարհուրելի կերպարանքով: Այսպիսի տանջանքով վերջանում է առանց էն էլ տանջւած ու մաշւած թըւառ աղջկալ կեանքը 17 տարեկան հասակում: Ոմանք ասում են, դէպքը նախ մտածած ու դիտաւորութեամբ է կատարւած. ոմանք չը դիտութեան են վերագրում: Գործը քննութեան է տւած. հետեանքը դեռ չախնի չէ: Աւստիսը պարզ է, որ եթէ ոչ դիտաւորութեամբ, գոնէ ալնքան անտարբերութեամբ են վարել հիւանդի հետ որ նոյնն է թէ ցանկութեամբ կատարած լինի. մանաւանդ սրան նպաստում է և ալն, որ, լինչպէս տեսանք, Դիւսը 3 ամսից լետող պսակում է նորից: Ի՞նչ էք կարծում. ալս սարուփելի ոճիր դործողը միթէ տղերակինն է. ոչ, ալսպիսի դէպքերում ոճիրներ դործողը՝ երեխաներ պսակող տէրտէրներն են...: Եթէ ոչ իբրև օրէնք, եթէ ոչ իբրև անհրաժեշտութիւն, գոնէ պէտք է խղճալ երեխին իրեն, չամուսնացնել ալսպիսի հասակում. քանի քանի թշուառ երեխալ աղջիկներ հէնց պսակելու տարին մեռել են կամ անդամալուծ են դառել, հետապէս և զրկել ծննդաբերութիւնից. և, իրօք, վերը լիշւած

յանկում ևս ոչ մէկը երեխայ չունի, զրկած են ընդմիշտ ծննդաբերութիւնից, Գիւղացիք իրանք չեն հասկանում, նրանք և տղէտ են և աղքատ, և աղքատ տնտեսապէս փնասւած, որ համարեա իրանց կորցրել են. գէթ աչս գէպքում՝ օգնութիւնը դրսից է հարկաւոր խնդիրը լուրջ է, այս գէպքերը մի մի ոճիրներ են, որոնք աւելի սոսկալի են քան սովորական ոճիրները, երկու երեխաներ հէնց 1897-ին են պսակել Կոթի գիւղում և պսակող տէր տէրները առանց խղճահարելու տեսնում են իրանց զոհերին։ Նոյն ալ տարին մի անսովոր գէպք էլ պատահեց։ Ոսկեպառաւ գիւղացի Գրգալի տղայ Խէչօն գիշերով փախցնում է Զանւեղոնց որբաւորի հարսին, որը արդէն նշանւած էր։ Խնքը Խէչօն ունի կին և երեխայ, բալց հետեւելով թուրքերի օրէնքին և չվսելով մեծ մասամբ թուրքերի հետ, քէֆը ուզեցել է երկու կին ունենալ, և ամենայն հեշտութեամբ էլ ձեռք է բերում և աշխու էլ ապրում է, երկու կանանց հետ Ոսկեպառաւ հալոց գիւղում։ Մարմնաւոր իշխանութիւնը ժամանակին իւր քննութիւնն արաւ. նա հարցրեց կնոջը, թէ իւր կամքովն է գնացել, թէ Խէչօն ուժով է փախցրել. նա էլ վախից թէ Խէչօն կամ իւր ազգականները չը սպանեն, ճարահատեալ ասում է, թէ իւր կամքովն է գնացել, և սրանով էլ վերջանում է այս չը տեսնւած գէպքը։ Այժմ, ինչպէս երևում է, մի քանիների ախորժակունն էլ է նստել, որոնք չարմար առիթներ են որոնում նրան հետեւելու...

Աջալիսի գէպքէր սկզբում գիւղացիք պատուհասեն համարում, բայց չեսող սովորութիւն է դառնում նրանց մէջ երեխաներ ամուսնացնելը։ Ինչը պէտք է հանէ նրան այս դրութիւնից, շատ դժւար է որոշել ¹, եթէ ոչ միմիայն ուսումնարաններ չատացնելը գիւղերում, կրթիւ գիւղական երեխաներին, պատրաստելով նրանցից նոր սերունդ ապագայի համար։ Ի գէպ պէտք է ասել, որ գիւղը ունէր ուսումնարան ուր սովորում էին 80 երե-

¹ Թէ սխառմատիկական ծեծը ալսինքն ծեծը իւր սովորութիւն, թէ մանուկ աղջիկներին ամուսնացնելը՝ սրա բոլոր հակաընկերական, հակա-սոցիալական հետեանքներով՝ վերացնելու համար մեծ դեր ունի կատարելու արժնացած խիղճը՝ չանձին աղդի ինտելիգէնտ անդամների, որոնք, որպէս ներկայ չօղւածի հեղինակը՝ կատարւած գէպքերը իւր մի-մի հասարակական ոճիրներ՝ մամուլի միջոցով կը հասցնեն ի գիտութիւն ընդհանրութեան և ալսալիսով նկատւած ու աղդ ու անուճներով չլուծւած անձերին՝ կը դնեն հասարակաց դատաստանի ներքոյ։ Մենք այս գէպքերի հրատարակութեանը աւելի մեծ կարեւորութիւն ենք տալիս, քան, օրինակ, քահանայի մերժումը մանուկ աղջիկներին պսակել։ Վաչ են աղգին, որը աղքատ սոսկալի ոճիրների ու ախորժակի գէպ կուսելու պարտականութիւնը լոկ եկեղեցու պաշտօնեաների վրայ է դնում։ Հասարակաց խիղճը արժնացնել — ահա մեծ գործը, ահա և մեծ քիշիւր հասարակական չարիքների գէպ։ Եւ երբ մենք մեր պարտքը կը կատարենք ժողովրդի նկատմամբ՝ քահանան էլ կը լինի մեզ հետեւող ու նրա ձախն էլ ալ գործերում կ'ունենայ նշանակութիւն, իրրեւ հասարակաց խղճի մոյլ։

խաներ, բայց գողութիւն ունեցաւ միայն երեք տարի: փակւելով միւս հալոց դպրոցների հետ:

Վերջացնելով նամակս աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել տեղական պողոտիւնների մասին, որոնք որքան զնում ալիքան շատանում են. թող աղ ցոլց տան ֆաքտերը, որ ալստեղ աւելորդ չեմ համարում բերել: Օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը 1896 թւին, ալի է հինգ ամսաւ ընթացքում կատարւել են հետևեալ գողութիւնները.

- 1 Զալնանց Զալնիցը գողացել են. . . 2 կով, 3 ոչխար արօտատեղից:
- 2 Զալնանց Սերգօից " . . . 2 կով, 1 գոմէշ "
- 3 Զալնանց Ռեւազից " . . . 1 գոմէշ "
- 4 Սեփիսանց Ախիւից " . . . 1 եզ "
- 5 Բալրամանց Սաքօից " . . . 1 կով, 1 եզը "
- 6 Գանջալւանց Սաքօից " . . . 1 եզ, 7 ոչխար գոմերից:
- 7 Մեզնանց Օսէփից " . . . 1 գոմէշ բինից
- 8 Վերանց Սերգօից " . . . 1 գոմէշ գիւղից 2 վերստ հեռաւորութեան վրայ, մորթել են ու կաշին տարել, իսկ միւս գոմէշը գողացել են բինիցը:
- 9 Աբովանց Մոսից գողացել են. . . 1 կով, 1 եզ, իրանց բինից:
- 10 Լէզգոնց Արտէմից " . . . 1 եզ արօտատեղից:
- 11 Դարբնանց Սահկի " . . . 5 ոչխար արօտատեղից:
- 12 Դարբնանց Սևազից " . . . 1 կով և 3 ոչխար, տան դռնից:
- 13 Ղազնանց Աթնից " . . . 1 կով բինից, որին մի քանի վերստի վրայ քերթել են կաշին տարել:
- 14 Աթաբեգանց Աթնից գողացել են . . . 1 խոզ, տան դռնից:
- 15 Սալնանց Ուհանէսից " . . . 1 խոզ:
- 16 Բարանց Մարգրոսից " . . . 1 խոզ և 2 ոչխար:
- 17 Մանէսանց Խէօից " . . . 1 ձի, գոմիցը:
- 18 Մանէսանց Արուսթից " . . . 1 կով, որին նուազէս քերթել և կաշին տարել են:
- 19 Բարանց Գիգորից " . . . 1 եզ արօտատեղից:
- 20 Մամանց Օսէփից " . . . 1 գոմէշ արօտատեղից, ուր մորթել են մի քանի վերստի վրայ ու կաշին տարել:
- 21 Մանթաշանց Արմոնից գողացել են . . . 3 ոչխար իրանց գոմից:
- 22 Զուրաբանց Սահկից " . . . 1 եզ արօտատեղից:
- 23 Մանթաշանց Աթնի " . . . 4 ոչխար գոմից:
- 24 Դլլաքանց Ռեւազից " . . . 1 եզը, որին նուազէս քերթել և կաշին են տարել:
- 25 Վերանանց Սերգօից " . . . 1 գոմէշ, գոմիցը:

- 26 Պլլաքանց Ուհանէսից » . . . 1 եղ, տան ղոնից:
 27 Վլլաքանց Սահկից » . . . 1 ձի, տան ղոնից:
 28 Պետնանց տանից » . . . բոլոր հաւերը և տան կահկա-
 րասիքը:
 29 Տէր-Ստեփանանց Զանիից . . . 2 փետակ ճանճ:
 30 Մխիթարանց Աթնի » . . . հաւերը:
 31 Վերանանց Օսէփի տունը կոտրել կողոպտել են:
 32 Պետնանց Ուհանէսինը նուճպէս կոտրել կողոպտել են:

Ընդամենը գողացւած է՝ 9 կով, 8 եղ, 2 ձի, 7 գոմէշ, 27 ոչխար, 2 խոզ, 2 փետակ մեղրաճանճ, մօտ 40 հաւ. 3 տուն էլ կողոպտել են: Ահնայէս որ եթէ ամենուսարժան գնով էլ հաշուելու լինենք, բռնում է մօտաւորապէս 1.370 ռուբլի: Ուրեմն 5 ամսուայ ընթացքում գիւղացիին մի-միայն աւազակներին տւել են ալդալիսի մի գումար, որ մի սարսափելի բան է գիւղացիներին համար. եթէ հաշուելու լինինք ալդ ձեով՝ գիւղացիք մի տարում աւազակներին-գողերին տալիս են 3.280 ռ., ուրեմն արքունական հարկի գրեթէ կրկնակին: Ի հարկէ գիւղացու սպարուստը կախումն ունի իրա լծկաններից, չանկարծ նա զրկուում է նրանցից. իրան հարկատու է դետինը հերկել կամ կալը կալսել. բաց ինչպէս, նա ստիպւած դարձեալ դիմում է վաշխառուներին, դարձեալ դարձուրելի տոկոսներ և ալսպիսով փոքր ի չատէ բաւարար ապրող գիւղացին մեծ մասամբ դառնում է վերջին աղքատը: Նա իւր երեխաներին կերակրում է իւր միակ կովի կաթով, ամեն երեկու անհամբեր սպասում է կովը կթելուն, որ չոր գարու հացը թրջի կաթնի մէջ և ուտեն: Կովը հեռուից բառաչելով, կուրծը լի գալիս է. տան տիկինը ջան ասելով, գնում է ընդ առաջ. գուրգուրում է, փաղաքում է, կոմը էլ իրան հերթումը պակաս չէ թողնում. լիզում է տանտիկինը՝ ձեռքերը, իւր եղջիւրների ծայրերով խաղում է նորա հետ. և ալսպէս ուրախ դարձ տան տիկինը կթում է կովը. ապա ամբողջ տունը սպասում է անհամբեր կաթը տաքանալուն և անուշ ընթրիք է անում: Բաց սա երկար չէ տևում. մի երեկու էլ կովը ուշանում է: Տանտիկինը անհանգստանում է. ամբողջ տունը իրար է գցում, հոտաղը գալիս է տուն յալով ու յուսահատ.— Հը, ուր է կովը, իսկ նա, թէ՛ կովը աչքիս առաջիս կորաւ, մանդալով հոգիս դուրս եկաւ. ոչ մի տեղ չկալ:— Տան մարդիկ վազում են որոնելու, բաց իզուր. կովի գլուխը որ ազատ լինէր, իրա ժամանակից մի րոպէ չէր ուշանալու. խեղճ հորթը դուրսը կապած անընդհատ բառաչում է կանչում է մօրը, որի ձայնի հետ միանում է և տան տիկինը աղիողորմ լացի ձայնը...

Նրբ որ աւազակների մի խումբ մի գիւղում մարդ է սպանում կամ կողոպտում՝ ամբողջ աշխարհը թնդում է. ահ ինչ ալսպիսի գողութիւններ մնում են անպատռեան մէջ, չնախելով որ սորա հետեանքները սոսկալի են. մանաւանդ սա տարածւած լինելով բոլոր գիւղերում, կամաց կամաց ծծում է և արիւնքամ է անում հարիւր հազարաւոր գիւղացիներին: Պէտք է նկատած, որ աւազակալին խմբերը ալսպիսի գողութիւններ չեն անում. վերջիններս աւելի ընտանի գողերի գործեր են, որոնք դուրսը իրանց ցոյց են տալիս իբրև ազնիւ մարդիկ, ալսպէս որ ալս երկու կարգ աւազակների մէջ ահագին տարբերութիւն կալ, որի մասին կ'ալստեսմ վերադառնալ մի ալ անգամ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԸ բաղկացած է 246 երեսից:

ՄՈՒՐՃԻ ՏԱՍՆԱՄՆԱԿԻ №-ի համար (հոկտեմբերի) ստացել ենք պ. վ.

Փախազեանից «Դիտակ» զրուցը:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ: Մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում պ. Մաղաթ Պետրոսեանի ներկայ համարում տպւող «Կօթի գիւղը» մոնոգրաֆիայի վրայ, որը չարունակութիւն է այն ուսումնասիրութեան, որի մի մասը տպւեց չեռ. ես 1896 թ. № 9-ում, երկրորդը՝ 1897 № 5-ում: Ահա գիւղի և գիւղական ժողովրդի մի իսկական ուսումնասիրութիւն, ուր ղգացմունքը և միտքը դրւած են ոչ ֆրազների, այլ ֆակտերի մէջ: Բարեխիղճ ուսումնասիրութիւն՝ ըստ ամենայնի արժանի ուշադրութեան հալ ընթերցողների կողմից: Մեր մամուլի գոյութեան օրից ի վեր մենք չենք ճանաչում գիւղի ուսումնասիրութեան վերաբերեալ մի երկրորդը՝ իւր ներքին արժանիքներով զորան ոչ միայն հաւասարը, այլ և հեռաւորապէս նմանը:

ՊՐ. ԿԱՐ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ ՅՕԴԻԱԾԻ առիթով (Հիւսիսափայլը և Սմբ. Շահազիզեան) մենք ունինք գիտողութիւն անելու, որ վերապահում ենք լօղւածի վերջին:

ԱՐՁԱՆ ԿԱՅՍՐ ԱԼԼԷՔՍԱՆԴՐ II-ԻՆ: Օգոստոսի 16-ին Մոսկւայում Նոյնի Կալսերական Մեծութիւններ Կալսր Նիկիտայ II և Կալսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնա ժամանեցին Մոսկւա և ամենամեծ հանդիսաւորութեամբ բացին արձանը անմուտնալի Կալսր Ալէքսանդր II-ի, որը վերացրեց ճորտութիւնը Ռուսիայում, ներմուծեց զատաստանական և զեմսուպին ունեւորները: Մեծ հանդէսին հրաւիրւած էին ներկայ լինելու ամբողջ կալսրութիւնից ղեմատոնների, քաղաքային վարչութիւնների և դասակարգների ներկայացուցիչներ, այլ և ներկայ էին պետութիւնների ներկայացուցիչներ: Սրան հանդիսաւորութեան առանձին փալ տրւեց Կալսր Նիկիտայ II-ի հրամանով մեծ

պետութիւններին արտաքին դործերի մինիստր Մուրալիովի ուղղած նոտայի հրատարակութիւնով, որը առանձին հրատարակում ենք ներկայ համարում:

ՎԵՃ. ԿԱԹՈՂՈՍԿՈՍՈՒՆ, իւլիսի 26-ին Ս. Էջմիածնից դուրս գալով ուղևորւեց Տաթևի հաշակաւոր վանքը, ճանապարհին հանդիպելով Նոր. Բալագէդ, Շուշի, Ամարասի վանքը և Գեօրիս: Ճանապարհորդութիւնը տեւեց երեք շաբաթ:

ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱԻԼ ՆԻԿՈԼԱՅԻՉ, տեպտ. 17-ին ժամանեց Թիֆլիս, զօրահանդէսի և ընդունեց Թիֆլիս քաղաքից մեծ հանդիսաւորութեամբ: Մեծ խխանը, որը 18 սարի կողկասի փոխարքայ է եղած, թողել է անմուսնալի լիշատակներ երախտագէտ ժողովրդի սրտերում:

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ:

Զմիռնիայում կաթողիկ Զէրքէն եպիսկոպոսի հսկողութեան ներքոյ կար մի որբանոց հաջ աղջիկների համար: Մի քանի ամիս առաջ չալուց որ բռնաբարութիւն է կատարել մանկահաս մի-երկու աղջիկները վրայ. ոճիրը չալունեց չնորձիւ դիրք վալելոյ մի տիկնոջ, որի խնամքով փնտսւած աղջիկները զետեղւած էին ալդ որբանոցի մէջ: Այդ առիթով քննութիւն կատարուեց: Եպիսկոպոսը զուր աշխատեց արդարանալ, և անհետացաւ, ու որբանոցը ցրեց:

Պարսկաստանի Վալասար դիւղում (Սալմաստի դաւ.) հաստատւած գերմանական որբանոցի տնօրէն Բաղդասարեանի և գերմանական ընկերութեան վարչութեան միջև խոչըր ընդհարում է պատահել: Վարչութիւնը կամենում է ալդ որբանոցի տնօրէն հաստատել ոչ-հալ պատուր Բերդմանին, իսկ Բաղդասարեանը, որպէս պատմում է, ընդդիմանում է, ասելով որ որբերը հալերից են, ինքն է նոցա հաւաքել և չի կարող նոցա վրայ խնամքը չանձնել օտարազգիի, առանց համաձայնութեան հալոց ազգային վարչութեան, որի առջև ինքը պատասխանատու է: Հետաքրքիր է իմանալ, թէ ալդ որ ազգային վարչութեան առաջ է պատասխանատու պատուր Բաղդասարեանը, եթէ միայն ճիշտ է նորան վերադրածը: Մեզ համար, սակաւն, պարզ է, որ եթէ պատուր Բաղդասարեանը գերմանական ընկերութեան ծառայութեան մէջն է, նա պիտի առանց ալ և ալլութեան հպատակի ընկերութեան վարչութեան կարգադրութիւններին:

Կիպրոսի Նիկոսիա քաղաքում հիմնւած է հալոց որբանոց, որը առաջին տարւալ դործունէութեան տեղեկագրից երևում է որ ալդ տեղ խնամուում են 15 որբեր, որոնց տրւում է զպրօցական ուսում, ինքուններից՝ հալերէն, տաճկերէն, ֆրանսերէն և արեւստներ՝ դերձա-

կութիւն, կօշկակարութիւն, առաղձազործութիւն և շերամաբուծութիւն:

Որբանոցը իւր լուսը գնում է նւիրատուութիւնների վրայ:

Զմիռնիս: «Ներսէսեան որբանոց», հիմնւած 1897 թ. մարտ 30, ներկայումս խնամում է 36 որբ: Հիմնողներն են ալփ 28 հոգի. անդամները ընտրւում են քւէսով. գործադիր ժողովը բաղկացած է 9 հոգուց. գործադիր ժողովը ընտրւած է 10 խնամակալ տիկիներ, որոնց լանձնւած է որբանոցի մաքրութեան, հանգերձեղէնների և կերակրեղէնների հոգս. ընկերութիւնը որբերին կրթելուց չնտու, պիտի դարձնի իրենց հալորները:

—Մշակի թղթակիցը (թերթի № 148) Կ. Պոլսից ալս կերպ է նկարագրում եւրոպացիների և մանաւանդ գերմանացոց բացած որբանոցների դրոթիւնը... «արդարութեան պարտք մը կատարած պիտի լինիմք, երբ ըսեմք, թէ՛ նազ բացառութեամբ, եւրոպական ալդ կարգի հաստատութեանց մէջ, մանաւանդ գերմանական որբանոցներում, ալն որբեր՝ մանչ թէ աղջիկ, որ ազգաւ գերման չեն, կը խնամւին անպիտի բարբարոս եղանակաւ, որպէս թէ անոնք ալդ որբանոցներուն զանազան պէտքերը գոհացնելու համար գնւած կամ վարձւած ջորիներ, էշեր կամ եղներ եղած լինէին: Այո՛, ճիշդ անպէս, և մեր ըսածն հաստատող ապացույցներ բազմաթիւ են զժբայտաբար՝ Տեսած եմք տղաք, 9-10 տարեկան, որ չի կարենալով տոկալ իրենց վրա՛ դրած գործաւորական աշխատութեանց՝ իրենց կարողութեան անհատար ծանրութեամբ, քար, փայտ, հող կրելու տաժանակիր չարքաշութեանց, վիրաւոր երեւներով, ձեռքերով և ոտքերով թողած փախած են որբանոցներէն: Ունիմք նաև ալդ որբանոցներու մէջ խեղճ տղալոց կերած հացէն նմուշներ, մեր քով պահած, որոնց գոլն ածուխի նման սև, քարերու չափ կարծր են: Առանց ուրիշ սեռնողի, չատ անգամ, ալդ սչ-գերման փոքրիկներ անսւաղ (անօթի) կ'անցնեն օրն ի բունո՛ւ:

Նյութալէմի գերմանական որբանոցների մասին Մշակի՛ն նոյն թղթակիցը, նոյն գրութեան շարունակութեան մէջ ալս տեղեկութիւնն է տալիս. «Արժանահաւատ անձ մը, ոչ-երուսաղէմացի, կը գրէ մեզ Նյութալէմի՛ն՝ թէ տեղւոյն գերմանական որբանոցներն, ուր բազմութիւ հալ տղաք ալ կան իլմիտէն, Պարտիզակէն, Կ. Պոլսէն, Մարաշէն և ալլն, բացարձակաբար իրենց վարիչ մարմնոյն շահագործութեան առարկալ դարձած են: Ծնէլ անուշով գերմանացի մը, որ ասկից մէկ քանի տարի առաջ պարզ մահկանացու մէ եղեր՝ հաղիւ իր օրապահիկ հացն հալթալթող, ալսօր, Նյութալէմի մէջ՝ մէկ երկու փառաւոր տուններու տէր եղած է իր որբանոցին շնորհիւ: Նամակա-

ղերը կը նկարագրէ հոն գտնուող հոյ որբերուն սոսկալի վիճակը, վրան հողի չէ մնացեր: Բաւական գէլթունցիներ, մարաշցիներ և ուրիշներ՝ խելով ալք խեղճերուն թշառութիւնը, Նրուաղէմ երթալով՝ բռնութեամբ քաշած դուրս հանած են որբանոցէն զանոնք՝ ալնքան ողորմելի վիճակի մէջ, որ մարդ չի կրնար եղբոր, առանց արտասուքի, անոնց երեսը նալել, երեսը ալդ՝ 9-10 տարեկան անմեղներուն, որոնց վրալ մարդկալին գոչն, մանկական փափկութիւն, հալութեան տիպ չի տեսնիր եղբոր երբէք: Գոնէ իրենց տարած տաժանելի աշխատութեանց փոխարէն կանոնաւոր սնունդ մը առած լինէին ալք խեղճերը... Ինչ բարբարոսութիւն...

Այս տղերը մենք առաջ ենք բերում ամենայն վերապահութեամբ, չիշելով որ Մշակ'ը և իւր թղթակից «Գիրուկ»-ը ոչ մի խօսք են խնայում չորդորելաւ համար որ որբանոցների համար փող չը լանձնեն նաև... Հալոց պատրիարքարանին...

ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ:

Նկատելի ընդարից ուղարկած է մեզ «Հաշակչիւ զաղթական և տեղական աղքատների համար հաստատուած ձրի ճաշարանի 1877 թ. նոյեմբերի 19-ից մինչև 1898 թ. ապրիլի վերջը Նկատելի ընդար քաղաքում»: Մուտքը եղել է 1664 ո. 69 կ. (որից նւերներ 266 ո., պարք 89 ո. 65 կ., մնացածը բաժանորդներից), իսկ ելք՝ նոյնքան: Նւերի մէջ են՝ հացի 468 ո. 95 կ., մսի 196 ո. 80 կ., հիւանդների համար դեղ, սնունդ և բժշկի 67 ո. 73 կ., մեռածների թաղման ծախք 56 ո. 21 կ., պատահական աղքատների ճանապարհաւարձ 328 ո., բնակարանի 253 ո., վառելափալտի և նաւթի 155 ո. 30 կ., կահ-կարասիքի 21 ո. 65 կ., մնացածը ալ ծախքեր են: Զրի ճաշարանի նախաձեռնողներն են՝ Գարեգին ք. Բաղդասարեանց և Մկրտիչ Պաղարսուկեանց:

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ: Տաճկական-հալոց կոտորածները հետեանք ունեցան հալ-լուսաւորչական անւան նւաստացումը և մեծ թշառութիւնը հալ-լուսաւորչականների միջև: Զարհուրելի խնամանքի առջև օսմանան պետութեան կողմից՝ հալ-լուսաւորչականները պէտք է ընդունէին ամեն օգնութիւն որ զալիս էր դրսից: Իսկ ալդ գրսի օգնութիւնը զալիս էր զլիսաւորսպէս կրօնական նպատակներ ունեցող ընկերութիւններից—բողոքական և թէ կաթոլիկ: Դռքա ժողովարարութիւնների արին Ներդալում և թէ Ամբրիկալում, նպաստներ բաշխեցին կարօտեալներին, որքան իրենց միջոցները ներեցին, որբանոցներ հիմնեցին հալ որբերի համար, և ալսպիսով հալ-լուսաւորչական ժողովրդի կարօտեալների մի մեծ մասը զրին կրօնական ընկերութիւններից ակնկալելու դրութեան մէջ և

առհասարակ կրօնական ընկերութիւնների ոչ ժողովրդի աչքում բարձրացրին Թիւրքիայում: Թիւրքիան, անկասկած է որ, ոչ մի օգուտ չունի կաթոլիկ և բողոքական կղերների ազդեցութիւնը զօրեղացնելու իւր պետութեան մէջ. բայց իւր հալածանքը հալ-լու-սաւորչականների դէմ սկսելով՝ ակամա՛ւ ամրացրեց եւրոպական միա-բանութիւնների և առհասարակ կրօնական ընկերութիւնների ոչ ժողովրդ պետութեան սահմաններում: Թէ եւրոպացիների պահած որբերը ապագայում ինչ ազգութիւն, լեզու և կրօն են դառնելու—այդ դեռ սպասելու բան է, բայց արդէն շատ նշաններ կան, որոնք ցոյց են տալիս թէ մարդասիրութեան գործում մղիչ ուժը այդ ընկերութիւն-ների համար՝ կրօնական պրոպագանդան է:

Ներկայումս Տաճկաստանում կրօնափոխութեան դէպքերը արդէն հատ-հատ չեն, ալ ամբոխալին, մասսային: Վրնից դրում են Արեւելքին, թէ «կրօնափոխ հաւոյց թիւը, քաղքին և գիւղերուն մէջ, 5—600 տունի չափ կը հաշուէի Չմոռանանք սակալն աւելցնել որ այս թիւը հետզհետէ կը նւազի, երբ ցանքերը համին ու նպաստ-ները (միսիոնարների) վերջանան»։—«Ազգեստանի Արարուց եկեղեցիի թեմերէն Վլոր-Պաղ կոչւած խառն ազգաբնակ թաղին աղքատ աղ-գալիները, հարիւր տունի չափ, վերջերս կաթոլիկութիւն ընդունե-ցին: Ասոնց համար նոյն թաղին մէջ տուն մը վարձակով մատուռի վերածեցաւ: Եւ ասոնց հովուութիւնը իր վրա՛ւ առաւ տէրտէր մը,— երեք ամիս առաջ Սեան գիւղին վրա՛ ձեռնադրւած Անդղլի Արսէն քահանայն, որ ինքն ալ կաթոլիկ եղաւ և մատրան քահանայութեան հետ ոտանձնեց նաև հաւատափոխ աղգալիներուն հոգեւոր ներկայա-ցուցչի պաշտօնը»։ Այդ քահանայն, սակայն, ասում է թղթակիցը, դեռ իւր առաջին պատարագը չմատուցած՝ ուղիղի խանդարման իշխաններ ցոյց տուց, որ գնալով ալնքան ծանրացան, որ «հարկ եղաւ ձեռքը ոտքը կապելով կառքի մէջ փակել ու զրկել իր քնիկ գիւղը, ուր ողորմելի վիճակի մը մէջ կը գտնուի կ'ըսեն»։

Դէպքից չեսոյ, իւնիսի 28-ին առաջնորդական տեղապահ տէր Ստեփան վարդ. հաւատափոխներին կանչեց թաղական խորհրդի սե-նեակը, խորհրդներ արաւ, խոստացաւ նոցա նիւթական անձկութիւն-ները մեղմելու համար գիմել վաճաղ կուսակալին ու Ս. Պատրիարք Հօր Միւս կողմից, «ձերիտէի Շարգիէ» թուրք-հայկական թերթը հաղորդում է որ «կաթոլիկութիւն ընդունած են հաւ 15-ի չափ հազ գիւղեր և գրեթէ բոլոր ասորի գիւղերը, նմանապէս թուով 15»։ Կա-թոլիկ հաւոյց պատրիարք Ազարեանի հրամանով՝ Մուշի կաթոլիկ հաւոյց առաջնորդութեան վիճակից Ստեփաննոս վ. ճսահարեան վան եկաւ օգոստ. 5-ին և ստանձնեց վաճաղ կաթոլիկ հաւոյց հովուութիւնը:

ԲՈՒԹԱՅԻՍԻ ԼՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ նշանակած է զեներալ-մայոր Կեր-
շելման:

ՊՐ. ՊԵՐՃ ՊՈՇԵԱՆՑ, չափնի վիպասանը, որը միաժամանակ, առեր-
քան երեսուն տարիներից ի վեր, գործում է դպրոցական ասպարիզի
վրայ, թէ իրր նախկին տեսուչ ծխական դպրոցներում, թէ իրր
նախկին թեմական վերատեսուչ ծխական դպրոցների և թէ վերջին
տասնումկ տարիներում իրր ուսուցիչ Թիֆլիսի Ներսիսեան դպրա-
նոցում, ներկալ սեպտեմբերից իսպառ թողալ ուսուցչական պաշ-
տոնը, վաղելիւ չամար 600 ռուբլու տարեկան կենսաթոշակը,
որ վճ. կաթողիկոսի առաջադրութեամբ Ներսիսեան դպրանոցի
հոգաբարձութիւնը կապել է նորան ցմահ: Պ. Պոշեանցը ուսուցչա-
կան ասպարէզ մտել էր 1855 թականին, ուրիմ 43 տարի առաջ,
Գալ տարի ապրիլին լրանում է պ. Պոշեանցի նաև 40-ամեայ գրա-
կանական գործունէութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ:

«Արեւելք» և «Մասիս» — Արեւելք լրագիրը խախտելուց լստոյ
(14 սեպտ. 1896 և ոչ 1895-ին, որպէս չափնած էինք նախորդ հա-
մարում), Մասիս նախկին չաբաթաթերթի արտոնատէր պ. Կար.
Խեթիմեան չաճեց Արեւելքի վարչութեանը հրատարակել Մասիսը
իբր օրաթերթ, չարունակելով աչն չաճնարարութիւնները, որ
ստանձնած էր Արեւելքի համար: Այժմ երբ նորից թողատուած է
Արեւելք օրաթերթի հրատարակումը, կրկու թերթերի ընդհանուր
վարչութիւնը որոշած է Մասիսը նորից վերածել շաբաթաթերթի, որ-
պէս առաջ էր Արեւելքը վերակցեց հրատարակել օգոստոսի 1-ից:
Նախկին Մասիսի աշխատակիցներով՝ Հր. Առաքուն, Գր. Զոհրապ-
տ. Սիպիլ, Տիգրան Արփարեան, Արէտ, Զ. Կուսուֆեան և ուրիշներ:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ: Մեր ընթերցողների դատաւոտ-
նին ենք չանձնում մի պարոնի արարք, որը, իւր առանձնաւորուկ
պարագաներով և զրդիչ պատճառներով որքան տղիզ, նոչնքան էլ
եղակի է ոչ միաչն հալոց ալ և առհասարակ մեզ ծանօթ մամուլի
տարեցրութիւնների մէջ: Տասնեակ ամիսներ առաջ, մեզ մինչև ալ
անծանօթ մի պարոն, վասիլ վարդանեանց անունով, ներկայացրեց
մեզ մի գրածք Մուրճում տպագրելու համար: Եւ երբ ալ գրածքի
տէրը անձամբ ներկայացաւ մեզ, նա իրեն ցոյց տուց որպէս անձնու-
կան ընկեր վ. Լուսկիւնի, որի մասին, սակաւն, նա արդէն կարգա-
ցել էր կարծիքներ Մուրճի հէնց նոն ժամանակները լոյս տեսած
համարում, ուր առաջ էր բերած Русская Мысль ամսագրի մի շատ
աննպատակ արծիքը Լուսկիւնի մի գրքի մասին. (տ. Մուրճ, 1897,
№ 10): Մեզ հետ նոր ծանօթացողը մեզ չափնեց նաև իւր բարե-

կամ լինելը մի-երկու պարոնների հետ Մշակի խմբագրութիւնից: Թէ ինչ հարկաւոր էր ալդ տաղտկալի բաների հետ մեզ ծանօթացնելը— ալդ պիտի պարզէր միայն չետոյ: Միայն թէ ֆաքտը սա է, որ լինեալ չօղւածից չետոյ Մուրճի խմբագրութիւնը ալ ևս ոչ մի կապ չպահպանեց լինեալ անձի հետ: Մենք ոչ ղիմել ենք նորան Մուրճին աշխատակցելու համար, ոչ չափաւարել ենք նորա անունը իբր Մուրճի մշտական աշխատակցի: Ընդհակառակը, երբ զէպք եղաւ չափաւարել 1897 թւականի Մուրճի բովանդակութիւնը, ալդ անձի անունը մենք անպատշաճ համարեցինք փշատակել մեր մշտական աշխատակիցների շարքում, իբր հեղինակի մեզ համար պատահական մի չօղւածի: (Համեմատէք Մուրճի բաժանորդական չափաւարութիւնը Մուրճ 1897 № 11-12 և 1898 թ. № 1.): Մի հատ չօղւածի տպագրութեամբ վերջացաւ նաև Մուրճի յարաբերութիւնը ալդ անձի հետ, եթէ չհաշուել լինենք դորանից զէս երբեմն եղած փողոցի ճանդիպումները, որոնցից օգտուում էր ալդ անձը մեզ զբաղեցնելու մեծ մասամբ... դարձեալ իւր ընկերով: Յուսով ենք, ալդպիսի պատահական փողոցալին հանդիպումների համար մեզ ոչ ոք պատասխանատու չի անիլ:

Այս աչպէս լինելուց չետոյ՝ երեսակալեցէք մեր ապշութիւնը, երբ նորերս կարդում ենք Մշակում մի կարճ գրութիւն, որով ալդ անձը, ակնարկելով անցեալում տպած իւր մի չօղւածը, խրոխտաբար չափաւարում է թէ ալ ևս կտրուէ մեզ հետ իւր յարաբերութիւնները... չարաբերութիւններ, որոնք արդէն վաղուց չեն դուրս եկել փողոցալին պատահական հանդիպումների սահմանից... Եւ իբր մի պատճառ իւր չարաբերութիւնների «կտրելուն», առաջ է բերած մեր «կոպիտ և անվալել չարձակմունքները» Լոնկելիչի (ալսինքն իւր անձնական ընկերի) զէս: Մեր ընթերցողները գուշակում են անշուշտ թէ ալդ ինչ «կոպիտ չարձակումներ» են ակնարկւած. ալդ ալն նկատողութիւնն է, տպւած Մուրճ № 6-ում, ուր առաջ էին բերած «Նովոե Աբաղրենիե»ից վերջինիս աշխատակից պ. Տխորժեւսկու կարծիքները՝ Լոնկելիչի ըստ ամենալնի կոպիտ հալեացքների զէմ ընդհանուր կրթութեան և մասնագիտութիւնների մասին:

Խոստովանում ենք, սա մի վերին աստիճանի վատ վարձաարութիւն էր մեր կողմից վաւիլ Վարդանեանցին՝ սորա անձնական բարեկամի նկատմամբ: Բայց երկուսից մէկը. կամ ալն է որ ալդ պարոնը ինքնալորդոր կերպով Մուրճին մերձենալով՝ կամեցել էր իւր անձնական ծանօթութիւնովը Մուրճի խմբագրի հետ կաշտել Մուրճը իւր մի ընկերի վերաբերմամբ, և կամ նա հետեւել է ալնպիսի թելադրութիւնների, որոնց ղիմել են Մշակի խմբագրութեան մարդիկ, իրենց չտաահատ կուլի մէջ Մուրճի զէմ:

Այդ արարքն է, որ մենք մատնում ենք հասարակութեան զգուշներն: Յայտարարում ենք, որ Վասիլ Վարդանեանց անունով անձը չի եղած Մուրճի աշխատակցական խմբի մէջ երբէք, և Մուրճը աչս տարի չի ունեցել որ և է չարաբերութիւններ նորա հետ, հետեւապէս նաև ալդ պարոնը մոլորեցնել է կամեցել երբ, Մշակ'ում, իրեն ձեացրել է իբր Մուրճի հետ մինչև ալժմ չարաբերութիւններով մէջ գտնուող մի աշխատակից:

Մամուլի էթիկան ալդպիսի էքիւռքներ չի կարող ընդունել:

Իսկ ինչ վերաբերում է Զուլալի և Դրէլֆուսի խնդրին, որի նկատմամբ ալդ անձը մեր բռնած դիրքը «տարօրինակ» է գտնում, մենք կ'ասենք, որ մեր ալդ դիրքը կատարելապէս նոյնն է, ինչ բռնել է, օրինակ՝ Ֆրանսիայի ամենանշանաւոր և ամենամաքուր մի անձ՝ ինչպիսին է արմատական կոռուպցիոնիստ գլուխ՝ ամենքից չարգաւթ Բրիտոնը, պատգամաւորների ժողովի նախկին նախագահը, Ֆրանսիական միւնիստրութեան ալժմեան նախագահը: Ալդ մասին մենք մեր հաշիւը տալիս ենք մեր ընթերցողներին, բայց ոչ անպատճառ Վասիլ Վարդանեանցին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, Մենք ստացել ենք մեր աշխատակից պ. Գրիգոր Վարդանեանից հետեւեալ գրութիւնը:

«Յարգելի պ. խմբագիր:

«Այսու պատիւ ունիմ չափեցելու ի միամտութիւն Մուրճի ընթերցողների, որ նոքա «Վ. Վարդանեանց» անունով անձին, որ իրան Մշակում, № 162 (սեպտեմբեր 8) Մուրճի աշխատակից է ձեւացրել, չը շփոթեն իմ անուն հետ: Նամանաւանդ անհրաժեշտ եմ համարում ներկալ չայտարարութիւնս, որ Մշակ'ի նամակագրի չաւակնոտ հեղինակը լիակատար կերպով չէր ստորագրած իր անունը:

«Թող եմ տալիս ինձ աչս առիթով աւելացնելու նաև, որ ես և, չուսով եմ, Մուրճի աշխատակցական մեծ խմբի ամեն մի անդամ — երբէք մտքովս անգամ չեմ անցկացրել «Վ. Վարդանեանց» անունով մէկին Մուրճում համաշխատակից ճանաչելու:

«ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ»

9 Սեպտեմբերի

1998 թ. Թիֆլիս:»

ՄՇԱԿ'ԻՆ ՄԻ ԳԱՍ ԼՈԳԻԿԱՅԻՑ: Մշակ'ը երբ հաջողանքնիրով է զբաղւում Մուրճի նկատմամբ — նա կատարելապէս իւր ղերումն է. բայց երբ նա մեզ սովորեցնել է ուզում թէ ինչպէս պիտի վարենք իւր ասածների հետ — նա արդէն զուրս է դալիս իւր ղերից: Նա ուզում է հաւատացնել, որ մենք, «անդամահատելով» նորա մի «առաջնորդողի» նախադասութիւնը, իբր թէ դորանով արդէն խեղաթիւրել

ենք Նորա ասածը: Քանի-քանի տարի է որ Մուրճ'ը ֆակտերով ապացուցանում է որ Մշակ'ը փեշակ է չինել կեղծելը, խեղաթիւրելը. և այժմ, չանկարծ, Մշակ'ն է կամենում Մուրճ'ին դաս տալ թէ մենք ինչպէս պիտի վարենք գրւածների հետ: Եւ ահա նա մեղաւորուում է որ մենք տրամաբանութիւնը (լոգիկա) մեր ձեռքից բաց թողնենք: Կատարեալ Նորութիւն լինելով մի ազգային պահանջ և մի ազգային գանգատ Մուրճ'ի դէմ, մենք աւելորդ չենք համարում Մշակ'ի աղ կուրիոզի հետ ծանօթացնել մեր ընթերցողներին: Մշակ'ը, միշտ հետամուտ զիրքեր և հարցեր կեղծելու, գրել էր բառ առ բառ հետեւեալը.

«Հրատարակեց ամերիկո-իսպանական պատերազմը, և ամենքի համար հարց էր. միթէ անխելքութիւն չէ հանկինների (=Հիւս. Ամերիկայի) կողմից պատերազմի դաշտ նետուել կամաւոր զօրքերով, չունենալով մշտական, մարդած զօրքերի մի ստւար բազմութիւն, որ գոնէ հաւասար լինէր թշնամու (=իսպանիայի) բազմութեան»:

Ամենապարզ լոգիկայով ալ խօսքերից դուրս է գալիս թէ, երբ հրատարակեց ամերիկո-իսպանական պատերազմը, իբր թէ ամենքի համար հարց էր. մի՞թէ անխելքութիւն չէ Հ'ւս. Ամերիկայի կողմից ստտեբազմի դաշտ նետուել իսպանիայի դէմ:

Այժմ Մշակ'ը տուաչում է ալն լոգիկական եղբակացութիւնից, որ մենք դուրս ենք բերել իւր գրածից, և հաջողանքներով մեր դէմ կարծում է թէ կարող է ծածկել ընթերցողներից ալն աղաւաղումները, որոնց նա ենթարկում է նոյն իսկ մեր աչքի առջև կատարւող պատմական մեծ եղելութիւնները:

Իսկութիւնը սա է, որ երբ հրատարակեց ամերիկո-իսպանական պատերազմը, ոչ ոք չզարմացաւ որ Ամերիկան, թէկուզ ունենար միալն կամաւոր զօրքեր, պատերազմի դաշտ նետուեց... իսպանիայի դէմ: Բնդհակառակը, ամենքը, աշխարհքիս բոլոր թերթերը առանց երկբալելու չաւանեցին, որ Ամերիկան չաղթելու է, իսպանիան չաղթելու է:

ԿՐԻԼՈՎԻ ԱՌԱՆՆԵՐԻՑ: Навозну кучу разрывая, Пѣтухъ нашелъ жемчужное зерно, И говорить: на что оно, какая вещь пустая... (=Աքաղաղին մէկն աղբիւսր քրքրած ատեն, ինչպէս եղաւ՝ մարգրիտ մը գտաւ մէջէն: Գառնալ ինչ ըսէ աղէկ. «Հը, ինչ փուճ բան, նալեցէք: Մարդիկ որքան անխելք են, Որ սրբոր մեծ գին կը դնեն...»)

Եւ ահա մի ոմն նոյնպէս քրքրում է... և իւր համար «ուտելու» բան չի գտնում մեր կեանքում: «Գիտեցէք մեր հասարակութեան բոլոր խաւերը, բոլոր դասակարգերը, և դուք կը տեսնէք, որ

ամեն ասպարէզ դատարկ և զուրկ է անձնէր գործողից, անխոնջ աշխատատրից և բարեխիղճ՝ անձնաւորութիւններից: Մեր ընկերութիւններից ո՞ր մէկը ասպարէզ հանեց անձնէր և մաքուր գործիչի մի տիպար: Ինքնավարութիւններից ո՞ր մէկը առաջ բերեց մի ընդունակ ու բարեխիղճ գործող: Մեր աղքատ պարբերական գրականութիւնը մինչև այսօր մեզ չէ տուել մի տնողական և օրինաւոր ամսագիր:— Տպւած է... Մշակ'ում:

Միւս կողմից Մշակ'ը ամեն օր մի-մի գիտական, սոցիալական, ֆիլիսոֆական, և մինչև անգամ թւաբանական նորութիւններ է հաղորդում: Դատեցէք ինքներդ. ըստ Մշակ'ի (№ 153), ներկայ «օգոստ 25-ին Բաթումը քաղաքը տօնեց ռուսաց տիրապետութեան տակ ընկնելու քսանհինգամեակը»: Եւ ինչո՞ւ. որովհետեւ «ինչպէս չալտնի է, 1878 թւի օգոստոսի 25-ին, ռուսաց զօրքը մտաւ Բաթում և գրաւեց այդ քաղաքը»:

Այդքանը ըստ թւաբանական մասին: Աւելի պակաս չէ տնտեսագիտական-սոցիալականը. «Քաղաքատնտեսական գիտութեան ճայրը՝ Զոհն Ստիւարտ Միլլ իր հոչակաւոր «Քաղաքատնտեսութեան հիմունք» աշխատութեան մեջ»... (Մշակ, № 154, առաջնորդող):

Եւ չանկարծ՝ Զոհն Ստիւարտ Միլլը քաղաքատնտեսական գիտութեան հայր...

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ և ՂԱԶ. ԱՂԱՅԵԱՆ: Պր. Սեդրակ Մանդինեանը, ըստ երևութին, կամենում է շատ սրամիտ լինել... պ. Ղազարոս Աղալեանի հաշիւ. Մենք երբեք նւիրած չենք եղել աչն անձնական հաշիւներին, որ այդ երկու վաղուցալ գործիչներն իրար հետ ունին, և արդէն շատ ու շատ տարիներից ի վեր. բայց եթէ պ. Մանդինեանը միշտ աջնպիսի հաշիւներով է զբաղւել պ. Աղալեանի ու ալոց նկատմամբ, ինչպէս աչն, որին առիթ է տուել պ. Աղալեանի թարգմանութիւնը Սւրբատից՝ «Գուլիվէրի ճանապարհորդութիւնը»,—ասպա համարձակ կարող ենք ասել որ պ. Մանդինեանը զուր կորցրել է մի ամբողջ ...պոլեմիկական կեանք, առանց օգուտի որ և է մէկի համար չհաշւած աչն վնասը, որ առաջանում է վատ օրինակներից:

Յիշւած գրքի թարգմանութեան մէջ կալ մի կէս երես, որը ներկայացնում է մի զԱՅՏԻ-պաշտօնական գրութիւն: Այդ զԱՅՏԻ-պաշտօնական գրութիւնը պ. Աղալեանը թարգմանել է մի ձևով, որ պ. Մանդինեանը չի հաւանել (տ. «Արձագանք» 1897), իբր թէ ահա տեսէք թէ պ. Աղալեանը ինչ ծանր ու մուլթ իջելով է թարգմանում պաշտօնական գրութիւնները. և եթէ Աղալեանը այդպէս էլ ինչ սպասենք ուրիշներից!

Այդ առիթով Մուրճում, լիչեալ գրքի մասին գրախօսականի

մի ծանոթութեան մէջ մեր աշխատակից պ. Աղբալեանցը աւելորդ չհամարեց նկատել, որ պ. Մանդինեանը չի հասկացել ալդ կէս-երեսի նշանակութիւնը. ալդ կէս երես գրութեան մէջ Սևիֆտը դիտմամբ բանեցրել է ծանր և մութ լեզու՝ իւր ժամանակի (18-րդ դարի) պաշտօնական գրութիւնների խրթին լեզուն ծաղրելու նպատակով:

Պ. Մանդինեանը ոչ միայն չօգտեց Մուրճում տւած բացատրութիւնից, այլ և չարունակեց իւր չար ակնարկները պ. Աղբալեանի լեզւի նկատմամբ «Արարատ»-ում:

Պ. Աղբալեան, ի դիմաց ալդ անշարժի չար դիտաւորութեան, հարկ համարեց լրագրութեան մէջ ալն կէս երեսի թարգմանութեան ժամանակ բացատրութիւն տալ, ճիշդ ալն մտքով, ինչպէս ալդ կատարւած էր Մուրճում:

Բայց պ. Մանդինեանը չուսահատողներից չի երևում: Նա պ. Աղբալեանի տւած բացատրութիւնից էլ չօգտեց, ինչպէս չէր օգտել Մուրճի մէջ տւած մեր աշխատակցի նույն բացատրութիւնից: Եւ ինչու չօգտեց՝ Լսեցէք՝

«Մուրճի մէջ լուս տեսած Աղբալեանցի առարկութիւնը ևս անուշադիր թողեցի, որովհետև նա ձեր (==Աղբալեանի) դործած մեղքը բարդել էր Սևիֆտի վրայ, ինչպէս որ ալժամ դուք էլ (==Աղբալեան) ձեռնտու էք համարում ձեզ արդարացիներ»:

Եւ սակայն պ. Աղբալեանը և պ. Աղբալեանը տւել էին շատ համոզիչ բացատրութիւն իհարկէ նոցա համար, որոնք իրենց գլխով տրամաբանութիւն տւած բանից մի կտոր էլ է ունին: Նթէ Սևիֆտը դիտմամբ խրթին լեզուով է գրել ալն զԱՅՏԻ-պաշտօնականը, իւր ժամանակի պաշտօնական գրութիւնների ձեռ ծաղրելու համար, ինչու նորա հալ թարգմանիչը պիտի վարէր հեղինակի դիտաւորութեան հակառակ. սա էլ պէտք է ալդ խրթին ձեռ պահպանէր: Դա շատ պարզ է: Եւ դորա մէջ իրօք «աղ» կալ: Բայց տեսէք թէ պ. Մանդինեանը ինչպէս է ըմբռնել ուղում պ. Աղբալեանի բացատրութիւնը.

«Դուք (==Աղբալեան) ասում էք, թէ (. . .) երգիծաբանութիւնը որքան անճոռնի լեզուով թարգմանելի, ալնքան համով կ'լինի»:

Անշուշտ, ալսպէս աղաւղելով պ. Աղբալեանի տւած բացատրութիւնը, պ. Մանդինեանը ինքն իրեն մտածել է թէ շատ սրամիտ պոլեմիկական միջոցի է դիմում ինչպէս որ շատ սրամիտ են կարծում իրենց Մշակի խմբագիրները, երբ նույն զէնքով մեր դէմ են կուռում:

Եւ ապա Պր. Աղբալեանի գլթ ըստ երևութիւն շատ համոզիչ

բացատրութիւնը կարելի կը լինէր հերքել միմիայն մի բանով, եթէ պ. Մանդինեանը, անգլիերէն բնագիրը ձեռքին, ապացուցանէր, թէՍւրֆ-տը ինքը ահնարկած կէս երեսը բնաւ խրթին ոճով չէ գրած: Բայց այդ միակ ուղիղ ճանապարհը թողած, ինչ է անում Վէտրգեան ճեմարանում տրամաբանութեան ուսուցիչ պ. Մանդինեանը: (Գիմելով պ. Աղաչեանին):

«Բայց չիշեցնում եմ, որ մենք ունինք Սւրֆտի երկրորդ թարգմանութիւնն եւ: Նեղութիւն քաշեցէք և Զմիւռնիայի հին թարգմանութեան հետ համեմատեցէք ձերի հետ և տեսէք, թէ վիճելի կէս երեսը աչնտեղ ինչպէս է թարգմանւած»... (Կէտերը բնագրումն են. տես Նսր-Գար. № 155):

Փոխանակ բնագիրը ցոյց տալու, տեսէք թէ պ. Մանդինեանը ուր է աքսոր դրկում պ. Աղաչեանին:

Թէեւ աչս ամբողջ վէճը չարժէ կերպած ձուր կճեպին, ինչպէս ռուսը կ'ասէր, բայց քանի որ այդ կճեպով պ. Մանդինեանը զբաղեցրել է մինչև Խաչմ երեք թերթ՝ և Նախկին «Արձագանք», և «Արարատ» և ալժմ էլ «Նոր-Գար», ու դեռ ով գիտէ քանի-քանի անգամ է վերադառնալու այդ «խնդրին», — մենք աւելորդ չը համարեցինք դէթ մեր ընթերցողներին զազաւար տալու թէ մեր հին դործիչներից մէկը ինչով է զբաղւած:

ԲԱԶՄԱՎԷՊԻՆ: Անշուշտ միմիայն շնորհակալ պիտի լինեմ, երբ մի թերթ ամսէ-ամիս տպագրում է այլ թերթերի «բովանդակութիւնը», աւսինքն լօղւածներն ու սոցա հեղինակների անունները: Համոզւած ենք նաև, որ եթէ մի թերթ այդ ամենը հրատարակում է՝ այդ չի կատարում իւր պաշտօնակիցներից շնորհակալութիւններ վատտակելու, այլ միմիայն ծառայութիւն մատուցանելու համար իւր ընթերցողներին՝ ներկա և թէ ապագայ: «Բազմավէպը» 1896-ի դեկտեմբերից օգտակար միտք չլացաւ ամեն ամիս բոլոր այլ հանդէսների պարունակութիւնները տպագրել, որով ընթերցողին միջոց էր տալիս իմանալու՝ թէ ինչ գրածքներ են տպագրւում բոլոր հալ հանդէսների մէջ: Բազմավէպի լաւ օրինակին ապա հետեցին «Հանդէս Ամսօրեալ» և աչս տարւանից նաև ԼՂմիածնի «Արարատ»-ը: Բայց ահա «Բազմավէպ»-ը արդէն սկսել է չեղել իւր այդ չկատմամբ առաջադրած ծրագրից: Նա «Պարունակութիւն ազգային պարբերական թերթից» բաժնի մէջ սկսել է քմահաճութեամբ բանեցնել. աչսպէս օրինակ, Մարտ № 6-ի (լուսիսի գրքի) պարունակութիւնից, որ կազմում են 21 կտոր, (լօղւածներ, վէպեր, ռոմանտորներ) նա չի առնակել է միայն 8 հատը, իսկ մնացած 13-ը լուսթեան է տել Մենք ոչինչ չունինք աչն բանի դէմ, եթէ Բազմավէպը կամենար

հրատարակել միմիայն իւր կողմից կարեւոր դատածները, իսկ մնացածը անուշադրութեան մատնել, բազմ «Բաղմավէպ»-ը եթէ ազդ ծրագրով է շարժւում—նա ամեն անգամ պիտի ազդ մասին ծանուցանէր ընթերցողներին և իւր ազդ բաժնի խորագիրը փոխէր, որպէս զի ընթերցողները չ'ողորեն: Բազմ աշնպէս, ինչպէս Բաղմավէպին է հրատարակում ազգային թերթից պարունակութիւնները—նա օղորեցնում է իւր ընթերցողներին մեր հանգիստների պարունակութեան նկատմամբ:

ԿՏԱԿՆԵՐ ՆԻ ՆԻԷՐՆԵՐ:

Աւելիաններ (Թիֆլիս) չանձն են առած իրենց հաշուով մշտապէս հերթով ուղարկելու Գէորգեան ձեմարանից ելած երիտասարդ սարկաւազներին Ռուսիայի համալսարանները: Վեհ. Կաթողիկոսը ազդ հաշի առաջին անգամ ընտրեց Ներսէս սարկաւազ Տէր-Միքայէլեանցին:

ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՔԵՆՈՒԹԻՆ: Հին Նախիջևանի չաջորդ Կարեղ վարդ. խոշոր ղեղճումներ դտած լինելով, որ կատարել է տեղական հոգևոր կառավարութեան մի հին անգամ, Սինոդը ղրկել է աշնտեղ քննիչ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանին: Յաջորդ դառնալուց լիտով հետևանքների մասին կը հաղորդենք:

ՅՈՒՆԱԿԱՆ-ՄԻԱՅՆԱԼՆԵՐԸ ԽՈՒՄԵԱՆ-ՎԱՐՇԱՆԵԱՆ ԹԵՄԻ ՆՈՐ հրատարակած կանոններով նախկին չունադաւան-միացեալները (греко-уніа-ТЫ, ալիքն Նոքա, որոնք կաթողիկներ էին չունադաւան ձէսով, նման մեր հալ-կաթողիկներին, որոնք կաթողիկներ են հալկական ձէսով), 1875 թականին ընդունւած լինելով ռուսաց եկեղեցին, համարւում են ուղղափառներ (ռուսաց եկեղեցի). միացեալների (ունիատ) որդիքը, թէև մկրտած լինեն կաթողիկաց (հոռմալսկան-կաթողիկներին) եկեղեցիներում մինչև 1875 թ., նոյնպէս համարւում են ռուսաց ուղղափառներ. իսկ կաթողիկներին որդիքը, որոնք մըկըրտել են ունիաթների եկեղեցիներում, ուղղափառ չեն համարւում: Ունիաթների իստը ամուսնութիւնից մինչև 1875 թ. ծնւածները ընդունում են արուններ—հայրերի կրօնը, իղականները—մալրերի կրօնը: Խմբական խնդիրներ գլղական համալքներից և խմբերից դաւանութեան մասին չեն ընդունւում:

«ԳԱՎՏՆԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ»: Մի ինքն ըստ ինքեան անմեղ գործ մի առանձին ազգայնութիւն տտացաւ, չնորհիւ նախկին հալոց ծխական զարոյցների փակման: Թիֆլիսում, Ներսէսեան դպրանոցն աւարտած Արտէն Սիմոնեանց, նոյն աչս ամառը միջոց գտնելու համար որ իւր ուսումը շարունակի Գէորգեան ձեմարանում, հաւաքում է 30-ի չափ աշակերտներ, որոնց հետ սկսում է պարասիւկ հալոց լեզուից:

Թւաբանութիւնից և ռուսաց վալելչագրութիւնից: Աշակերտների մեծ մասը ալլ զպրոցները աշակերտներ էին և վերաքննութիւն ունէին ռուսաց լեզուից: Ոստիկանութիւնը հետամուտ լինելով, գտնում է որ դա՝ «գաղտնի հալոց զպրոց» է: Գործը քննւեց քաղաքի IV բաժնի հաշտարար դատարանում: Սիմոնեանցը չալտնեց թէ նա չգիտէր թէ ամառաւ ամիսներին երեխաների հետ պարապելու համար հարկաւոր է թողլտութիւն ունենալ, քանի որ նոյնն անում են գիմնազիստներն ու ուսանողները: Դատաւորը, ի նկատի ունենալով որ 10-ից աւելի երեխաների միատեղ ուսուցանելու համար թողլտութիւն է պահանջուում, որոշեց Արսէն Սիմոնեանցին և սորա եղբայր Վարչամ Սիմոնեանցին, որը օգնական էր առաջինն, ենթարկել 5-ական ռուբլի տուգանքի:

ԿԻՆԵԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄԸ ալս տարի ընդունեց նորերից 279 հոգի, որոնցից 10 հայ:

ԿԱՆԱՆՅ ԲԺՇԿ. ԴՊՐՈՑ ԿԻՆԵՈՒՄ. Կարմիր Խաչի Կիւելի ճիւղը հրաւէր է կարդում Կիւելի հասարակութեանը՝ նւէրներ ժողովել Կիւելում կահանաց բժշկական զպրոց հիմնելու համար: Հաւանական է որ Կիւելի նահանգի հասարակութիւնը կը ձաջնակցի այդ հրաւէրին, ի նկատի ունենալով նորա զգալնութիւնը կրթական գործերի համար առհասարակ: Յաջորդ է որ կանանց բժշկ. զպրոց Ռուսիայի մէջ կայ միայն Պետերբուրգում:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԱՆԴԻԺԱՆՈՒՄ: Առաջին և երկրորդ խումբ չանցատրները դատի մասին հաղորդեցինք անցեալ անգամ: Երկրորդ և չորրորդ խմբերի մէջ նշանակւած էին 162 մեղադրւածներ. դոցանից 8-ը արդարացան, 1-ը անչափահաս լինելով՝ դատապարտեց ուղղիչ ապաստարան տալու համար, իսկ մնացեալները դատապարտեցին մահւան՝ կախաղանով. դատարանը խնդրատու եղաւ Վալսեր մօտ 27 հոգու համար պատիժը թեթեացնելու. ընդհանուր նահանգապետն ևս խնդրատու եղաւ 19 հոգու համար: Թագաւոր Վալսը բարեհաճեց լիչեալ 146 հոգու պատիժը թեթեացնել, ալ և կեանք պարգեւել չորրորդ խմբից 3 հոգու: Յուլիսի 18 ին չորս հոգու (երրորդ խմբից) կախեցին Անդրեանում: մէկին Վալսը կեանք պարգեւեց թագուհու Վալսրուհու խնդրանքով: Երկրորդ խմբի 11 մահւան դատապարտւածներից երկուսին՝ Նոյնպէս կեանք չնորհեց՝ որոշելով դոցա համար 20 տարեալ տաժանակիր աշխատանք: (Նոյնամենը մահւան պատժի ենթարկւեցին 13 զլխաւորներ, տաժանակիր աշխատանքի ուղարկւեցին 350 հոգի):

Կառավարութիւնը, ապստամբութիւնը ճնշելուց լիտով իբրեւ պատիժ՝ նշանակեց պատերազմական տուգանք Ֆերդանեան երկրից

մի միլիոն ռուբլի: Թագաւոր Կալսրը տուգանքը իջեցրեց 300.000 ռուբլու:

Ապա երկրի ընդհանուր նահանգապետը դեն. Դուխովսկու չրջեց երկիրը. հազարաւոր ամբոխը խոնարհաբար խնդրեց թողութիւն: Ընդհանուր նահանգապետը չալտեց տուգանքի մասին, ալ և չալտարեց որ Մինտիւբէի մօտիկ տեղ պիտի տրւի՝ ապագայում ռուսաց զիւղ հաստատելու. ենթացում է հաստատել 200 տուն: Աղագաքնակութիւնը չալտեց իւր համաձայնութիւնը: Մեղադրւած տեղերը զրկեցին իրաւունքից աղ ու հաց առաջարկելու: 23 օգոստ. Անդրթանում շնորհակալական մաղթանք կատարեց, որից լետու չորրեւեցին Ա. Գէորգի խաչեր վաստակածներին: Հոգեհանգիստ կատարեց 22 սպանւած զինուորների եղբայրական գերեզմանի վաչ. վիրաւորեալներին տրեց 200-ական և 100-ական ռուբլի ամեն մէկին: Գրեց հիմք եկեղեցու կամ մատուռի իւրիշատակ խաղաղութան վերականգման:

ԱՆԳԼԻԱՑԻՔ և ԲԱՆԻՈՐՆԵՐԸ ԲԱՔԻՈՒՄ: Յունիսի 26-ից վիշաուի ալթմանգլիական ընկերութեան նախագահը (Բիբի-էլթաթ մասում) կրակ սկսեց, որը տեղեւ տառնեակ օր, պատճառելով մի միլիոն ռուբլու վնաս. աչւում էին երկու ֆոնտաններ: Հրդեհը պատճառեց նաև մարդկալին զոհեր բանտորներից. աչւածքներ ստացած 13 հոգուց մեռան տասը հոգի: Ալդ մասին հանքի կառավարիչ Շումախէր հեռագրեց Լոնդոն՝ ընկերութեան վարչութեանը, որից ոտացեց հետեւեալ հեռագիրը, որ առաջ ենք բերում իբր իւր տեսակում առաջինը կովկասում. «Վարչութիւնը չալտում է իւր խորին ցաւակցութիւնը հրդեհի ժամանակ տեղի ունեցած զոհերի համար և խնդրում է շուտով հաղորդել վախճանւածների և վնասւածների ընտանեկան դրութեան մասին: Թէպէտ մենք անզօր ենք օղնել նոցա ընտանիքների բարոյական վշտին, բայց նոցա նիւթական դրութիւնը կատարելապէս ապահովւած կը լինի»:

ԱՆԳԼԻԱՑԻՔ ԲԱՔԻՈՒՄ: Անցեալներում մենք հաղորդեցինք որ լուրերը անգլիացոց հաստատուելու մասին Բաքում հիմք ունին: Եւ իրօք, նորերս Բարձրագոյն թուլատրւած է, մինիստրների որոշման համաձայն, որ անգլիական երկրաքարտէրական ընկերութիւններ իրենց գործողութիւնները սկսեն Ռուսիայում, Բաքու, Նախիջևանի շահագործելու համար: Ալդ ընկերութիւններն են՝ 1) «Ընկերութիւն ռուսաց նաւթ և հեղուկ վառելիք արտադրելու համար ռահմանալիակ պատասխանատուութեամբ», ալդ ընկերութեան վարչութեան գլուխն է անգլիական պարլամէնտի անդամ Էլէլին Հուքարդ. ալդ ընկերութիւնը ձեռք է բերել Թաղիեւի հանքերը և ունի դրամագլուխ

1.200.000 ֆունտ ստերլինգ ($\equiv 12$ միլիոն ռուբ.) 2) «Բաքույի ռուսական նախկին ընկերությունը սահմանափակ պատասխանատվություն», 1.600.000 ֆունտ ստերլինգ զրամագլխով, աչդ ընկերության վարչության գլուխ են անցած պարլամենտի անդամներ Կիտսոն, բարոնէտ Հէնրի Գլադստոն և Չարլս Մուր. աչդ ընկերությունը գնել է նախաձեռնքերը «Գ. Ա. Արաֆելեան և ընկ.», «Եղբարք Բուդաղեանների» և «Եղբարք Յակոբ և Ակիմ Աղամեանների», 3) «Շիբանի նախագործակիւն ընկերություն», 1.125.000 ֆունտ ստերլինգ զրամագլխով, վարչության գլուխներն են լորդ Վէնլոկ, Ֆրեդերիկ Լէն, Գրիննէլ Միլկ. աչդ ընկերությունը չահագործում է ալն նախկին հանքերը, որոնք պատկանում են «Ընկերության ռուսաց հանքակիւն իւղեր և ալ քիմիական արդիւնքներ արտադրելու համար Ս. Մ. Շիրան և ընկ. ֆիրմային»:

ԿԱՐԿՈՒՏ ԴԱՆՁԱԿՈՒՄ: Օգոստ. 3-ին մեծ կարկուտ թակեց Գանձակի Չորի-բաղեր ալգիները. փխտը հաշւում են 400.000 ռուբլու:

ԵՐԿՐԱՇԱՐԺ: Յուլիսի 30-ից շէպի 31-ի գիշերը, և ապա նաև 31 ից դէպի 1-ն օգոստ. գիշերը Թիֆլիսում և շատ ալ տեղերում զգալի եղաներկրի ցնցումներ:

ԿԱԼԻԱՄԱՏՏԵՐԷՐԻ ՍԻՆԴԻԿԱՏ: վրացոց մէջ վերջին տարիներն նկատւում է ձգտումն տնտեսական ընկերակցութիւններով գործ բռնել: Նորերս հիմնեց նաև Գորույ դաւառի կալածատէրերի միութիւնը (սինդիկատ), որ երկաթուղու Գոմի կալարանում բաց է արել պահեստ, ուր թէ կալածատէրերը և թէ գրւղացիք ծախում են իրենց երկրագործական բերքերը լաւ գներով:

ՂԱՂԱՐԻ ԱՂԼՏԸ: Թերեք գետը, թումբերը զօրելով, չուլիսի 6-ից սկսած հեղեղեց Ղալար քաղաքի հաւոցի ալգիներից մինչ 120 հատ, սուգ պատճառելով ամբողջ քաղաքին: Ղալարցոց հարստութիւնը գլխաւորապէս նորա նշանաւոր ալգիներն են: Հանգամանքը սա է, որ գետը քաղաքից բարձր է, ալնպէս որ քաղաքը պաշտպանւած է գետից միմիայն թումբերով: Սա առաջին անգամը չէ որ Թերեքը պատուելով թումբերը՝ քաղաքը հեղեղում է, և ալնուամենայնիւ, վտանգը անցնելուց՝ քաղաքացիք ալ ևս անհոգութեամբ շարունակում են տանել եղած գրութիւնը:

ԴՈՒԽՈՒՐՆԵՐԻՅ: որոնք իրաւունք էին ստացել արտասահման տեղափոխել, թւով շուրջ 3000 հոգի ուղևորեցան Կիպրոս կղզին, ալնտեղ բնակելու:

ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ ԴՈՒԽՈՒՐՆԵՐՆ: ևս խնդիրք են տուել կառավարութեան արտասահման դադթելու թուլտուութեան համար:

«ՇՂԹԱՅ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԼԱԽԱՆՈՒՄ: Բալախանում, որպէս մեզ հաղորդում են, մի երկու տասնհակ հալ արհեստաւորներ ալս տարալ

սկզբից ընկերությունումը «Շղթա» անունով մի արհեստանոց են հիմնել՝ զործիրքներ շինելու, մեքենաներ նորոգելու և այլ վաճառագործակի՛ն և մեխանիկական աշխատությունների համար։ և, որպէս մեղտեղեկացնում են, արհեստանոցը մեծ չափողություն ունի, չնորհիւ իւր լաւ կառավարություն և պատէրների շիտակ կատարելուն։ Ամեն ընկեր սկզբում վար է զբէլ առնւաղն 200 ուսքլի, ալն պալմանով, որ երկու բաժնից սուլի ոչ ոք չունենալ։ Շնորհիւ արհեստանոցի մեծ չառաջդիմութեան՝ սկզբնական ժամանակքը ալժամ մի քանի պատիկ բարձրացել է։ Պատիւ մեր նորա բողոք արհեստանոց կրկնապարզութեան։

ՍԻՈՆԻՍՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԸ։ Սխմիտաների առաջին ժողովի մասին մենք զեկուցինք անցեալ տարւալ Մարտի 1-ին։ Երկրորդ ժողովը կապցաւ ներկալ օգոստոսին Զեկեքիւի Բաղէլ քաղաքում։ Սխմիտաներ, որպէս չարնի է, ցանկանում են Պալեստինան (հին Հրէաստանը) վերադառնելը հրէալ ժողովրդով։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։ Սաղարաւան Նախագահ միւնիստրութեան (Սաղարաւան) նորից Նշանակեց իմինը Սուլթան, որ Նոյն պաշտօնն ունէր Նաթէղղինի մամանակ, երկար տարիներ։

Թաւրիզ։ Հացի թանգութեան պատճառով պարսիկ կլին և տղալ ամբոխը լուլիսի վերջին օրերը ցուցեր ալաւ, զիմեղով ուստաց հիւպատոսարանը։ Կառավարութիւնը կարդաղրեց որ հացի լիւարը 2 հ կոպէկից իջեցնել 16-ի։ Գինը իջեցրին, բալց հացի պակասութիւն ևղաւ։ Թաղաժառանգը և Նահանգապետ Ամիր-Նիղամին բայցակալ էին։ Նոքա վերադարձան. Ամիր-Նիղամը նախարարուցաւ իմինը Սուլթանից, չահի անունից լիաղօր իրաւունք ստացաւ իւր հաւեղողութեամբ վարել ամբարառէրերի հետ, որոնք հողերականութիւնն ու վաճառականներն են։ Թաղաժառանգը իւր հաշի տկուց տալ օրական 500 թուման հաց գնելու համար։ Խռովութիւնը տեկց մինչև օգոստ. 2-ը. բալց օգոստ. 11-ին նորից պալթեց, աւելի մեծ ուժով, որովհետ հաց չէր ճարուալ։ Նահանգապետ Ամիր-Նիղամը ցորեն պահանջեց հարուստ կալաժառէր և բարձրատիճան հողերականներից, (որոնք կառավարութեան հասնելիք տասանորդների հատութիւնը ցածր դնով կապալով են վերցնում), որ ցորենը որոշ գնով վաճառեն կառավարութեան, մինչև նոր հունձի վերջանալը. բալց դոքա մերմեցին։ Ժողովուրդը զրգուեց, օգոստ. 12-ին հաղարաւոր մարդիկ խմբերով չարձալեցին Նիղամ-Իւլ-Ուլամա հարուստ հողերականի տպարանքի վրալ, որ պաշտպանւում էր հրացաններով՝ տան կտուրի վրալ զբաժ 7-8 սելեղներով, որոնք ամբոխից մինչև 20 հոգի տպանեցին։ Ամբոխը աղաւաղեցալիւ հեղից պաշարաժ պահեց ալգ մեծ տունը, որից գլչերով Նիղամ-Իւլ-Ուլաման, որդին և եղբայրները

կարացան վախճիլ թեհրան. վախճան նաև հրացանակիր սէլիդները, որոնք պաշտպանում էին տունը: Սղոտտ. 13-ին առաւօտը ամբողջ ներս խուժեց աչք ապարանքը և բոլոր հարստութիւնները թալանեց և նոյն իսկ ամբողջ տունը քանդեց. նոյնպէս թալանեց նաև նորա մերձ ազգականների տները. հասցրած վնասը անազին է: Յիշեալ Նիղամ-Իւլ-Ուլամա՛ն շատ մօտ է շահին. եղբայրը դեսպան է Կ. Պոլսում, եղբայրներն ու որդիները բարձր պաշտօնեաներ են թեհրանում և թաւրիդում:

Հաջ կահալք զիմեցին առաջնորդ Սահակ եպ. Արխատեանին, հաց ճարեւու. առաջնորդը զիմեց կառավարութեան և ոտաթիւանութիւնը օրական մինչև 70 լիտր սկսեց հաց զրկել Առաջնորդարանը: Կարգը վերահաստատեց օգոստ. 15-ին:

Պոսերողմսկան մինիստր նշանակած է շահի եղբայրը՝ Զիլի Սուլթան Մահմուդ-Միրզա:

ԺԱՆՏԱՍՏԸ. Պաշտօնապէս հաղորդեց որ ժանտախտը երեայել է նաև հարաւալին Հնդկատանում:

ԱՆԳԼԻԱՅԻՔ ՍՈՒԳԱՆՈՒՄ. Անգլո-հզիպտական զօրքը վերջապէս կոտրեց մահդիւ լաջորդի ուժը, առաւ Օմդուրմանը և զրաւեց խարտումը: Սա մի նշանաւոր չաղթութիւն է, որով վերացւում է երկրի երեսից խաւարի աջն պետութիւնը, որին ընդունակ եղաւ արարը մեր ժամանակներում: Իրողութիւնը հետեւեալն է. երբ անգլիացիք Արաբի փաշայի ապստամբութիւնը կոտրելու համար, 1882-ին, ներս մտան Նիլպոտոս՝ խոզիւի գահը պաշտպանելու, և, ապստամբութիւնը ընկճելուց չտույ, հաստատեցին Նիլպոտոսում, ստիպւած եղան պատերազմել աչք երկրի հարաւալին զաւառներում 1881-ից անսպառնալիկ և իրեն «Աստուծոց ուղարկւած մարդաբէ» ալլապէս՝ մտնող անւանող Ահմէդ-Սուլէյմանի Մահդին կարողացել էր Կորդոֆանի պետը դառնալ և իբրև ազգային իրեն ճանաչել տալ: Անգլիացիք մահդիւի գէմ սկսեցին կռւել, տակաջն, միայն 1883-ին, Բալց մահդին, որ կարողացել էր մեծ զօրք կազմակերպել, չաղթութիւններ սարաւ անգլո-հզիպտական զօրքերի վրա, 1883-ի հոկտեմբերին մահդին ջնջեց Հիքափաշայի զօրքը Էլ-Սթէլի տանող ճամբի վրա, դեկտեմբերին Սլատին փաշան գերի բռնեց, 1884-ի սկիզբները ջնջեց Բէքէր փաշայի զօրարանակը: Այդ ժամանակ Անգլիան կազմակերպեց նոր արշաւանք՝ գնեւրալ Գորդոնի զլիաւորութեամբ. Մահդին աչք միջոցին զրաւեց Բերքէրը և պաշարեց խարտումը, ուր փակւած մնաց Գորդոնը: Վերջինիս աղաւթելու համար Անգլիան նոր արշաւանք զրկեց դեներալ Ուոլթլէյի զլիաւորութեամբ: Նա աղաւթեց Նեղոսի վրա Գորդոնի արշաւանքին մասնակցող մի նաւ, որ «Հօր զիմադրել էր

մանդիականներին. բայց մինչև որ խարտում կը համէր՝ մանդիականները արդէն մի-երկու օր առաջ նոր տ. 26 չունարի 1885 թ. վերցրել էին խարտումը և սպանել Գորգոնին (Յունւար 1885 թ.) չնորհիւ եղիպտացի զօրքերի դաւաճանութեան: Ուստի՛ զօրավարը պարտութիւն կրելով հտ նահանգից Եգիպտոս: Մահդին մեռաւ Նոյն տարին և նորան չաջորդեց խալիֆ Աբդուլլահ: Մանդիականութիւնը մշտական սպառնալիք էր Եգիպտոսի համար, բայց պէտք էր նորա դէմ աւելի մեծ պատրաստութիւններով կռւիւ: Այդ կռիւը վերսկսեց միաջն անցեալ տարի. անգլո-եգիպտական զօրքերը, Կիչէնէր զօրավարի հրամանատարութեամբ, 1897-ին խլեցին մանդիականներից Գոնդուս (Նուբիաում, Նեղոսի երկու ափերին, որի կենտրոնը՝ Գոգուա-էլ-Օրդէ): Աւելի առաջ գնալու համար անգլիացիք սպանցին մի առժամանակ, և այս վերջին ամիսներս նորից առաջ գնացին. և այդ արշաւանքը սրակէնց կատարեալ չաղթութիւնով. օգոստ. — Կիչէնէրը վերցրեց Օմդուրմանը (քաղաք Նեղոսի ափին, խարտումի հանդէպ մի տեղ, ուր թաղած է Մահդին, ուխտատեղի), և, շուտով դորանից, օգոստ. — ին՝ խարտում քաղաքը. (խարտումը աչն կէտումն է, որ Սպիտակ և Կապուտ Նեղոսը իրար են խառնուում. մինչև Մահդիից նաճել. խարտումը նիստ էր եղիպտական ընդհանուր-նահանգապետի, եւրոպական հիւպատոսների, ելակէան էր ամեն տաւարական, գիտական, միտինէրական և նաճողական արշաւանքների դէպի վերին Նեղոսի երկիրները և ունէր շուրջ 50.000 բնակիչ):

խալիֆի զօրքերը (դերւիշները) մեծ քաջութիւն և անձնազոհութիւն ցոյց տւին, բայց անգլիական թնդանօթներից տեղացող կարկառին զինանալ չկարացան: Օմդուրմանի և խարտումի մօտ մահդիականների կորուստը հաշուում են 15.000, անգլիացոյցը 500 հոգի: խալիֆը չուսահատ կռւից՝ ստիպւած եղաւ փախչել դէպի Կորդոֆան, 140 մարդկանցով, ազատելով միաջն իւր հարէմը, թողնելով անգլիացոյց մօտ իւր զրօշակը: (Կորդոֆանը ահագին անապատ է Սպիտակ Նեղոսի արեւմուտքում, 1883-ից Մահդիի ձեռքում. գլխաւոր քաղաք՝ Էլ-Օբէիդ):

ԱՆԳԼԻԱՅԻ Նոր դեսպան Պետերբուրգում նշանակւած է Չարլս Սկոտտ, որին լանձնարարւած է բանակցութիւններ անել ռուսաց կառավարութեան հետ փոխադարձ շահերի մասին Չինաստանում:

ՉԻՆԱՍՏԱՆ. Անգլիան պահանջեց Լի-Շոնդ-Չանգի հեռացումը, որ և կատարեց (27 օգոստոսի):

Լի-Շոնդ-Չանգը գնում էր անգլիական շահերի հակառակ: Կարծր սկսել էր գնալ վերանորոգումների շաղով, խորհրդով Կան-

Իւմէջ ռեֆորմատորի Աղա Պեկին եկաւ Կապոնիալի արտաքին գործերի մինիստր և մինիստրութեան զլուս մարքիզ Նոս, որպէս կարծւում է, Չինաստանի հետ փոխադարձ պաշտպանութեան դաշն կապելու համար: Սեպտեմբերի միջերգին կալսրուհի մալրը ընդդէմ լինելով ռեֆորմներին ու Կապոնիալի չիչա՞ծ դիտաւորութեանը, կալսրութեան կեկը իւր ձեռքն առաւ, իսկ որդին հեռացւեց, ռեֆորմատոր Կան-Իւմէջը փախաւ Հոնգկոնգ և աղստատանեց անգլիական նաւը: Լի-Հոնգ-Չանգը, որպէս կարծում են, չորից պիտի կանչուի Անգլիան, որի դէմ կատարեց ալղ շարժումը, Վէլ-Խալ-Վէլից պատերազմական նաւեր դրկեց, առաջիմ անխաղ հրամաններով:

Չինաց կառավարութիւնը ընդունեց ռուսաց ներկայացուցիչ Պաւլովի բոլոր առաջարկները նիւ-չումեան երկաթուղու վերաբերմամբ:

ԴԵՐՄԱՆԻԱ՝ Վիլհելմ II կալսրը Վեստֆալիայում տրւած բանքետում ճառախօսեց և ասաց. «Ես յոյս ունեմ, որ հպերնական արեւտագործութեան բոլոր մեծ ճիւղերը կը միանան իրար հետ, և ալղ կարող է կատարել իրադադութեան հովանու ներքոյ, որը ոչնչով չի կարող աւելի լաւ ապահովել քան կուի պատրաստ գերմանական զօրքով: Տալ Աստուած, որ մեզ միշտ կարելի լինի պահպանել համաշխարհային խաղաղութիւնը այս սուր, լաւ պահպանւած զէնքի օգնութեամբ»:

ԿՐԵՏԷ՝ Յալտնի է որ Բ. Դուռը բողոքեց պետութիւնների կարգադրութան դէմ Կրետէի ժամանակաւոր կառավարութեան մասին: Թիւրքիւմն փորձեց նոր զինւորներ զրկել Կրետէ՝ իրենց ծառայութեան ժամանակը լրացրած զինւորների փոխարէն. ծովապետները ընդդիմացան. Ռուսիան և ապա միւս երեք պետութիւնները չալտնէին որ չեն թող տալու հների տեղ նոր զինւորներ զրկել: Թիւրքիւմն ապա չալտնեց որ չի ընդունում չորս պետութիւնների իրաւասութիւնը Կրետէի վերաբերմամբ, և որ կը վարւի միայն վեց պետութիւնների վճռի համաձայն (չուսալով որ Գերմանիան չի միանալ միւս պետութիւնների հետ): Ալղ զէպքերից չետո է որ Կրետէի Կանդիա քաղաքում ապստամբութիւն ծագեց:

Կանդիա ծովափնեալ քաղաքում, մահմեդական ազգաբնակութիւնը 27 օդոստ. զէնք բարձրացրեց Անգլիալի իշխանութիւնների դէմ, ներս խուփեց քրիստոնեաների թաղը, ուր կոտորած արու. կինդանի մնացածները ապաստանեցին անգլիական նաւը: Առիթը աչս էր, որ ծովապետների հրամանով՝ անգլիական իշխանութիւնները բւրօ հատատեցին՝ տատանորդի հարկը հաւաքելու համար, պաշտօնեաներ նշանակելով միայն քրիստոնեաներից, և քաղաքի գոների մօտ

զինւորական կարաուլ նշանակելին: Աստատմբաժնի մահմեդականները ալրեյին տներ, սպանեցին քրիստոնեաներից մինչ 600 հոգի, նաև մի քանի անգլիացի զինւորներ և անգլիական հիւպատոսին: Պատերազմական նաւը ուժեղացեց քաղաքը: Մահմեդականները շտուգ մով վերջին քաղաքային դռները: Շատ թիւրքեր սպանեցին: Կանգիւղի մէջ բազմաթիւ տներ ալրեյին: Անգլիացիք շարունակեցին հրացան գցել նաև լաջորդ օրերը: Մալտայից հասան 250 անգլիական նոր զինւորներ, որոնք չկարողացան քաղաք մտնել: Ուղարկուել են նոր օգնական զօրքեր:

ԿՈՐԻԱ: Պոտտալին վարչութեան մէջ նշանակուած է ֆրանսիացի խորհրդադատու:

ԱՆԱՐԻՍՏՆՆԵՐԻ ԴԷՄ: Աւստրիական Կալսերուհի Նեղիսաբէթի մահը խաւացի անարխիստ Լուկինիլի ձեռքից, ցնցեց ամբողջ Եւրոպան: Խաւաղական կառավարութիւնը ալդ դէպքից վետոյ իրեն դրդած տեսաւ զիմեղ բոլոր պետութիւններին՝ անարխիստների դէմ ընդհանուր ուժերով գործելու համար կոնգրէսի հրաւիրելու: Որպէս երևում է ալդ կոնգրէսը շուտով պիտի կապանայ:

ԿԱՅՍՐ ՖՐԱՆՑ-ՅՈՎԱԷՓ II-ի թագաւորութեան 50-ամեայ չօրելեանը, որ պիտի կատարէր ալ տարի, Կալսերուհի Նեղիսաբէթի ողբերգական մահի պատճառով չի կատարուելու:

ՖՐԱՆՍԻԱ: Նոր պաշտօնեաներ: Գնդապետ Անրիլի խոստովանութիւնը, թէ կեղծել է 1896 թւագրած դոկումէնտը, ուր լիակատար տրւած է Դրէպիուս անունը, և ալդ դէպքից վետոյ Դրէպիուսի գործի համար բացող նոր ընթացքը, հետեանք ունեցաւ հրաժարականը զինւորական գլխաւոր շտաբի պետ Բուանդէֆրիլի, ապա զինւորական մինիստր Կալենեակի, որի տեղը բռնեց գեներալ Յուրլինդէն (որը մինչև ալդ՝ Պարիզի հրապարակի կոմենդանտն էր՝ գեներալ Սոսիէից վետոյ): Վերջինս էլ համաձայն չլինելով Դրէպիուսի գործի վերաքննութեան՝ հակառակ մինիստրութեան խորհրդի անդամների մեծամասնութեան կարծիքին՝ — նույնպէս հրաժարական տուց և նորա տեղ զինւորական մինիստր եղաւ գեներալ Շանտուն:

Գնդապետ Հանրիլի խոստովանութիւնից վետոյ՝ Դրէպիուսի գործին նոր ընթացք տրւած լինելով՝ ֆրանսիական մինիստրութիւնը և կարեւորագոյն թերթերը, որ երէկ գործի վերաքննութեան դէմ էին, ալժմ վերաքննութիւնն են պահանջում: Մի կողմն են մնում միայն Ռոչֆոր, և Դերուլէդ ու Հանրիլ Դրիւմոն, որոնք ազիտացիա են տնում վերաքննութեան դէմ, աշխատելով ամբոխի վրայ ազդել թաց զօքա ֆրանսիացում մի անգամ արդէն չաղթած ու դատա-

պարտած բուլանժականութեան հերոսներն են, և անկարող կըլինեն հասարակաց կարծիքը տեսպէս չլիթելու:

Նոյն-գնդապետ Անրի'ի խոստովանութիւնից չհտոյ՝ թէ ինքն է կեղծել 1896 թ. հոկտեմբերի թւակիր զոհումէնտը, ուր Պրէֆօսի անունը լրիւ տրւած է, զինուորական գլխաւոր շտաբի պետ զենեքալ Բուադեֆր հրաժարական տւեց և նորա տեղ նշանակեց զենեքալ Ռենուար:

ԲՈՒԳԱՐԻԱ ԵՒ **ՉԵՐՆՈՎՈՐԻԱ**: Բռլզարիալի իշխան Ֆերզինանդ, Ռուսաց կայսեր ալցելութիւն անելուց և իւր երկիրը վերադառնալուց չհտոյ՝ եղաւ ալցելութեամբ Չերնոգորիալի իշխան Նիկոլայի մօտ, որը փառաւոր ընդունելութիւն արաւ (չուլիսի վերջը):

ԹԻԻՐԲԻԱ: 1877—78-ի պատերազմի համար Թիւրքիալի վրայ պատերազմական տուգանքից մնում է 472.000 Փունտ ստերլինգ, և զերիներին պահելու համար ևս 550.000 (Փունտ ստերլինգը = չուրջ 10 ռուբլու): Այժմ համաձայնութիւն է կապացրած թիւրքաց Ֆինանս. մինիստրութեան և Օսմանեան բանկի միջև, որով վերջինս պիտի վճարի առաջին գումարը երկու անգամներով՝ չուլիսի 1-ին 1899 և 1900 թ., իսկ երկրորդ գումարը դոցա չաջորդող չորս տարիներում:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ: Օգոստոսի 13-ին սկսեց խորհրդակցութիւնը Աւստրիալի և Ռւնդարիալի փոխադարձ համաձայնութեան մասին, որ 1867-ից զէս կաշանում է ամեն 10 տարին մի անգամ, որով որդուում են պիտութեան ալդ երկու մասերի փոխադարձ տնտեսական, մաքսալին չարաքերութիւնները:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ-ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Մուրճի անցեալ համարում հազորգածը Ամերիկալի պաշտանների մասին աչն են, ինչ որ իրօք առաջարկեց իսպանիալին: Յուլիսի 26-ին (օգ. 6) իսպանիալի կառավարութիւնը ստորագրեց հաշտութեան արձանագրութիւնը: Իսկ խաղաղութեան դաշն կապելու համար Ամերիկան և իսպանիան նշանակել են մասնաժողով՝ հաւասար թւով ներկայացուցիչներով, որոնք իրենց նիստը ունին Պարիզում: Զինադադարից առաջ՝ Ամերիկան արդէն զրաւել էր Պորտո-Ռիկօն, իսկ ծովակալ Դուէն, զինադադարի լուրը դեռ չստացած՝ ռաբակոծեց ու զրաւեց Մանիլան: Ֆիլիպպինան կղզիների ընդհ. նահանգապետ Աուգուստին փախաւ գերմանական նաւը և անցաւ Հոնկկոնգ: Հաշտութեան դաշն կուելը դեռ դանդաղում է: Իսպանիալում տիրում են տարաձայնութիւններ, որոնք կարող են խոշոր հետեանքներ ունենալ երկրի ներքին խաղաղութեան համար:

ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻՆ ՀՈՎԱՆԱՌՐԵՆՈՒ ԽՆԴԻՐԸ: Գերմանիալի կայսր վիլհելմ II-ի Պալէստին ուղեւորելու ծրագիրը կատարում էր Նաւ կայսեր

գիտաւորութեան հետ՝ արեւելեան քրիստոնեաների վրայ տարածել գերմանական հովանաւորութիւնը, մինչդեռ ալի հովանաւորութիւնը (կաթոլիկների վրայ) պատկանում է Ֆրանսիային: Պատը, իւր պատասխանի մէջ կարողնալ Լանժենիէօ'ին չարտնել է ալժմ, որ Ֆրանսիային կը մնալ ալի հովանաւորութիւնը ամեն տեղ, ուր ալ հատուած է: Գերմանիան, սակաւն, ժխտում է Ֆրանսիայի ալի իրատունքը գերմանացի հպատակ կաթոլիկների նկատմամբ:

† ԷՔԵՐՍ, Գէորգ, չարտնի եղբայրաբանը և վիպաոտանը հին եղբայրական կեանքից վախճանեց Բաւարիայում չուլիսի 27-ին, Ծնւած էր 1837-ին, Եղբայրոս, Նուբիա և Արարիա ճամբորդելուց վետոյ՝ նա հրաւիրեց Լաչպիդի համալսարանը իբր պրոֆէսոր եղբայրական լեզուի և հնութիւնների, Հռչակաւոր է ալն բժշկական պապիրուսը որ նա դտաւ և անւանեց Էքերսի անունով: 1876-ին կաթւածահար լինելով՝ թողեց պրոֆէսորութիւնը և նւիրեց պատմական վէպերի, որոնք մեծ չաջողութիւն դտան թէ Գերմանիայում և թէ ալ երկիրներիում, ուր Էքերսի ալի վէպերը թարգմանեցին և ալժմ էլ ամենատարածւած գրքերի շարքին ևն պատկանում («Փարաւանի աղջիկը» հրատարակեց 1864-ին, որին չաջողեցին «Ուարդա», «Մարդ ևմ», «Բողբո» «Ապուր», «Արախնէա», լիչւածներից առաջինը և երրորդը թարգմանւած ևն նաև հալերէն):

† ՉԵՐՆԵՍԵՆԻ, Միխայիլ, դեներալ, Թաշքենդի Նւաճողը և ապա Թուրքեստանի ընդհ. Նահանգապետ, 1875 ին դեներալ Սերբիայում, մարտնչող Աերբիայի անկախութեան համար ընդդէմ Թուրքիայի, 1882-ին նորից Թուրքեստանի գեներալ-Նահանգապետ և զօրքերի հրամանատար, Հանգուցեալը նշանաւոր գործիչ էր համալաւան ուղղութեամբ:

† ԹՈՒՐԵԱՆ, Գաւիթ, դերասան հայոց բեմի, տաղանդաւոր կոմիկ, Ծնւած էր 1840-ին, Կ. Պոլսում, վախճանեց Թիֆլիսում, օգոստոսի 20-ին, երկու շաբաթ մահից առաջ կաթւածահար լինելով: Իւր բեմական երկարատև գործունէութիւնը ամենամեծ մասով անցկացրեց Թիբլիսիում: Կովկաս եղաւ Նախ 1870-ին, ապա 1891—92-ին (Թիֆլիս) և վերջապէս 1897—98-ին (Բաքու):

† ԿԱՅՍՐՈՒՀԻ ԵՂԻՍԱՔԷԹ, Աւտորիայի կալարոհի Եղիսաբէթը օգոստ. 29-ին վախճանեց ժընեւում, անարխիստ Լուկիեզի'ի ձեռքից, որը խփեց կալարոհուն կօշկակարի մխաթով կէսօրին, Նաւամասուցի վրայ, Beau Rivage հիւրանոցի մօտ:

† ԱՆԻՐԷԱՍ ԱՐՆՐՈՒՆԻ, վախճանեց սեպտ. 10-ին, Գերմանիայում, 50 տարեկան անց հասակում: Հանգուցեալը Գերմանիայի Ախէն քաղաքի բաղմարեւտեան զարոյցում հանքարանութեան պրոֆէսոր էր, ուր նա հրաւիրեց շատ տարիներ առաջ Բրեւլաւից, ուր նա դո-

ցէնտ էր, առելի առաջ նա Բէրլինում միներայրորեական թանգարանի կուստտ էր լինելով Գրիգոր Աթորունու եղբայրը՝ հանդուցեալը ժամանակ առ ժամանակ թէ Գերմանիայից և թէ Կովկասում պահած կարճատև միջոցներին աշխատակցում էր իւր եղբոր հիմնած «Մշակ» լրագրին. ալի չօգտածներից նոքա, որոնք արդիւնք են նորա կատարած էքսկուրսիաների Կովկասում, բովանդակում են շահաւետ տեղեկութիւններ մեր երկրի հանքերի մասին։ Մի քանի տարի առաջ նա պաշտպանում էր Թիֆլիսում բազմաբնակեան բարձրագոյն դպրոց հիմնելու միտքը։ Շարունակելով իւր պաշտօնը Արշնում՝ նա, Սարիամ Մելիք-Աղամալեանի մահից չտույ, վերջինիս կուսակի համաձայն եղաւ «Մշակ» լրագրի հրատարակիչը։ Թաղւելու է Թիֆլիսի Խոջիվանքի հանգստարանում։

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԲԵՐ

(Ուր թւական չկայ—ներկայ տարւանն է)

- 1) ԱԻԵՏԻՔԵԱՆՑ-ԲԱՆԱՆՑՅՈՒՄ, Ստ.—Իրլանդիայի դատը, Հրատ. «Մ. Հ. Գ. Ը.» Բաքու, տպ. Արթուր. 80 կոպէկ։
 - 2) ԱՇԼՂ-ՋԻԻԱՆԻ.—Մելիք Շահի հեքիաթը հանդերձ երգերով, Փոխադրութիւն տաճկերէնից, Հրատարակ. Մ. Վարդանեանցի տպարանի Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 25 կոպէկ։
 - 3) ՄԱԼԽԱՍԵԱՆ, Յովհ.—Հօրտա-Մօրտա, պատկերներ իրական կեանքից Առաջին զինք, Թիֆլի, տպ. Մ. Ռօտինեանցի, 30 կոպէկ։
 - 4) ՍՈՒՈՎԵԱՆ, Յով.—Կոստանած սիրտ, վէպ, Մոսկուա, տպ. Բ. Բարիուդարեանցի, 40 կոպէկ։
- ՈՒՂՂԵԼԻՔ.—Մուրճ № 4-ում, նոր տապալած զրքերի կարգում, զիւրք № 16 սխալ է չափաբարւած. պէտք է ուղղել աւտիւս՝
- ՅԱՐՈՅ, Ն.—Նկարներ (Ծաղկաքաղ իմնամակներէից), 1898. Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 50 կոպէկ։

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ

Միւնիէն։ Պր. Շանթ.—«Իսթրադ» վէպիկը տապալած։
Թուրիզ։ Դոքտ. Փաշանեան—Ձեր չօգտած տապալած։
Յերելու։ Պր. Յակ. Մուրադեան։ Ստալանք չօգտած չարունակութիւնը։
Օնէ։ Ժնեւի մօտ. Պր. Տէր-Ղազարեան։ Նամակը տապալած։
Պատասխանը կ'ընդունէք շուտով։

ՎՐԻՊԱԿՆԵՐ. Մուրճ № 6:

Չանազան լուրերի մէջ, էջ 913, 2-րդ և 3-րդ տողերը չվրթ են տպւած. պէտք է կարդալ՝ պ. Արշակ Չոպանեան, «Ծաղիկ» հան-

դէսի Նախկին խմբագիրը (1895—1896), Մուրճի ընթերցողներին ծանօթ իւր լողածովը իրսէնի մասին և ներկայ համարում տպող լողածովը Հալնէի մասին, և այլն:

Պր. Զօպանեանի «Հանրի Հալնէ» լողածում:

Էջ 817 բողոք էր բարձր. էջ 818 բարեկարգութիւններէն. նոյն էջ՝ ամբողջութիւնը կատարեալ ըլլար. նոյն էջ՝ Բիւրղըր. էջ 819 փոփոխանութեան. 821 շլացած (ոչ՝ շլացած). էջ 822 արիւնոտիւր (ոչ՝ առաւօտիւր). 823 գրագէտները. (ոչ՝ գրագիրները). 823 վարդապետութիւնէն. նոյն էջ՝ փոքրագութիւն. նոյն էջ՝ կը նշատակէին. էջ 824 զուհագեղ. 825 զաւրագին. էջ 826՝ տարբադարձեան խմբումներով:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ	4 «. — 4.
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ	5 » — ,
«ՄՈՒՐՃ» 1891 թ. անկազմ	10 » — ,
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ	9 » — ,
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ	10 » — ,
«ՄՈՒՐՃ» 1894 թ. անկազմ	7 » — ,
«ՄՈՒՐՃ» 1895 թ. անկազմ	8 » — ,
«ՄՈՒՐՃ» 1896 թ. անկազմ	10 « — ,
«ՄՈՒՐՃ» 1897 թ. անկազմ	10 « — ,
ԲՈԼՈՐ Թ ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՄԻՆ անկազմ	65 » — ,
» » » » կազմով 14 հատոր	80 «. — ,

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ջանադարհաճախքի համար ուղարկւում է մի-մի ուրբի
ամեն տարւոյ համար:

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Ա. Արաւիւսեանի ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հին եգիպտական, փրւնիկական և ասորական գրութիւններով և
Արեւելքի հին պատմութիւնների քարտէզով:

281 երես, յոռաջարան եւ նիւթերի ցանկ

արագ է 800 օրինակ, փայլուն և գլխի վերայ

Դիմել է Ջանադարհաճախքով միասին 1 րուբլի

Պէտք է գիմել Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, և
սուսնարաններին անւում է 20% զիջում:

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՍՏԱԿԱՆ

1895 Մարտ 1-ին, Պոլիս, ՄԱՂԻԿ հանդէսին հրատարակութեան նպատակը բացատրելով, սա սոգերը կը գրէի. «ՄԱՂԻԿի խմբագրութիւնը խորապէս համոզած է թէ ցեղի մը հոգեկան զատարակութիւնը իր գրականութեամբը միայն կը կատարուի, սպասեալով որ ալլ գրականութիւնը մտածման և գեղեցկին մոռցանող և մեծցնող տարրերն ունենալ . . . ՄԱՂԻԿ ճամարիտ հանդէսի մը հանդամանքները պիտի ունենալ, ամբողջական ուսումնասիրութիւններ ներկայացնելով ու խնդիրները իրենց ընդհանրութեան մէջ նկատելով: Անիկա սահմանուած է մանաւանդ ընդարձակ և աշխատած գրականութեամբ»:

Միևնույն ծրագիրը, աւելի լալն սահմաններով, իրագործելու համար է որ այսօր կը ձևոնարկեմ ԱՆԱՀԻՏը հրատարակելու, սոգորած մանաւանդ ալն մտածմամբը թէ Պարիզէն՝ ալս տիեզերական կեդրոնէն՝ մեկնած գրական բաղմակողմանի հրատարակութիւն մը կրնալ տեսակ մը միջնորդ հանդիսանալ և բոլորական քաղաքակրթութեան ու մեր ժողովուրդին միջև, և միանգամայն՝ աշխարհի չորս կողմը ցրած Հալեբուն մէջ բարոյական կապ մը ձևացնել:

Ու է քաղաքական գործունէութենէ զերծ, ու է կուսակցութենէ անկախ, անձնական խնդիրներու բացարձակապէս անմասնելի, ԱՆԱՀԻՏ պիտի ըլլալ զուտ մտաւորական հրատարակութիւն մը: Ամէն տեսակ խընդիրներ, —նոյն իսկ ազգային և քաղաքական հարցերը, որոնց բաժին մը պիտի լատկայէր,—նկատողութեան պիտի աւնին ալս հանդէսին մէջ՝ գրադէտի անկողմնակալ քննական ոգիով, և երբեք գործիչ, ազանդաւորի կրքոտ ու նպատակաւոր ձգտումներով:

ԱՆԱՀԻՏ պիտի պարունակէ 1. Աւսումնասիրութիւններ հալ ժողովուրդին պատմութեան, գրականութեան, գեղարւեստին ու ընդուն վրայ, և տեսութիւններ անոր ներկալ բարոյական և նիւթական կացութեան մասին. 2. Աւսումնասիրութիւններ գեղարւեստական, գիտական և ընդհանրական ընդհանուր խնդիրներու վրայ. 3. Քարգմանութիւններ օտար հին և նոր մասնաւորութեանց ամենէն կարեւոր հրաշակերաններուն. 4. Վէպեր, վիպակներ և բանաստեղծութիւններ ազգային կամ առհասարակ արեւելեան կեանքէ. 5. Ոտանաւոր և արձակ գրութիւններ՝ գրական ամէն սեռէ. 5. Հրատարակութիւն և ուսումնասիրութիւն հին ու նոր հալ ժողովրդական բանաստեղծութեանց, աւանդութեանց և հէքեաթներու: ԱՆԱՀԻՏ պիտի ձգտի մասնաւորապէս սզգային գրականութիւնը զարգացնել զուտ հալ տարրերով:

Այս բաղմաղան ծրագրին իրականացման համար ուրախ եմ ծանուցանելու որ դրադէտներու, արւեստագէտներու և գիտնականներու խումբի մը աջակցութիւնն ապահոված եմ արդէն, և կը լուսամ գործակից ունենալ բոլոր այն հաշ մտքերը որոնք կը բաղձան մտաւորական լծակին միջոցով ազգին բարոյական մակարդակը բարձրացնել:

Եթէ ընդունելութիւնն գտնէ այս ձեռնարկը և միջոցները ներքին, մտադիր եմ հետզհետէ ճոխացնել հանդէսին գեղարւեստական մասը, պատկերներ, արւեստի հրաշակերտներու վերաբնակարարութիւններ, ինքնուրոյն զձագրութիւններ, հրատարակելով. իմ փափաքս է մանաւանդ հայկական վաղեմի զարդանկարչական արւեստին վերստնորոգում մը փորձել այլազան ձևերով: Այդ գաղափարին մէկ առաջին գործադրութիւնն է այս Ազգին ճակատանկարը զոր ծանօթ հաշ նկարիչը՝ Պ. Լ. Շահին չորինեց նմանօրութեամբ հին հաշ նկարագարդ ձեռագիրներու:

ԱՆԱՀԻՏ կոչեցի Հանդէսը, մեր հինաւորեց և լաւատնական աստածունհին անունով, որպէս զի Ոսկեծղին, Անարատը, բարութեանց Բաշխիչը, հաշ ցեղին հոգին պատկերող մալրական Դիցանուշը՝ այս ազգայն-դրական ձեռնարկը իր լուսաւոր թևերովը հովանաւորէ և զայն գեղեցկութեամբ ու կենդանութեամբ պաշտօնացնէ:

ԱՆԱՀԻՏԻ առաջին թիւը հրապարակ պիտի ելլէ լառաջիկայ Նոյեմբեր 1-ին: Բաժանորդագիրնը պիտի ըլլայ տարեկան 12 ֆրանք և վեցամսեայ 6 ֆրանք՝ օտար երկիրներու համար, 10 ֆրանք և 5 ֆրանք Ֆրանսայի համար:

Բաժանորդագրութիւնը բացւած է արդէն:

ԱՐՇԱՆ. ԶՊԱՆԵԱՆ

Պարիզ. Paris. 6, Place de l'Odéon

1 Յուլիս 1898


ՀԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԻ 1898 թիւ

Բաժանորդագրութիւնը

Լոյս է տեսել № 1. Իսկ № 2 լոյս կը տեսնի գեկտեմբերին:

Երկու գրքի բաժանորդագիրն է 3 սուրի

Դիմել՝ Ե. Лалаянъ. Семинарія Нерсисянъ. Тифлисъ.





ՓԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻՍԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 անգամ, կամ 30 ֆռանկ:
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիևսկայա փողոց, տուն № 6: Այլ բաղադրանք-
րից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧ“,
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“.

ԲԱԳԻՈՒՄ կարելի է գրել նաև պ. Ֆրիդոն Մարգարեանի մօտ (գրա-
սենեակ Ե. և Հ. Մելիքեանների):